
ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՌԱՋՄԻ ԵՎ ՋԻՆՎՈՐԻ ԵՐԳԵՐ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

АРМЯНСКИЕ НАРОДНЫЕ ВОЕННЫЕ И СОЛДАТСКИЕ ПЕСНИ

исследование, подготовка текстов и комментарии
А. С. ГАЗИЯН



ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН
1989

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՌԱՋՄԻ ԵՎ ՋԻՆՎՈՐԻ ԵՐԳԵՐ

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹՅԱՄԲ
Ա. Ս. ՊԱՋԻՅԱՆԻ



ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1989

ԳՄԴ 63.5(2Հ)
Հ 253

Տպագրվում է ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝
բանասիրական գիտությունների թեկնածու
Ա. Մ. Նազինյան

Գիրքը հրատարակության են երաշխավորել գրախոսներ՝
պատմական գիտությունների դոկտոր Վ. Ի. Բդոյանը
և
գիտ. խաչող Ռ. Ի. Գևորգյանը

Հայ ժողովրդական ռազմի և դինվորի երգեր / ՀՍՍՀ ԳԱ, Հ 253 Հնագիտ. և ազգագր. ին-տ Աշխատասիրությամբ Ա. Ս Զազիկյանի / Պատ. խմբ. Ա. Մ. Նազինյան]. Եր · ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1989—391 էջ· Նոտա.

Աշխատությունը բաղկացած է ներածությունից և երգարանից Ներածության մեջ քննարկվում են ռազմի և դինվորի երգերի ժանրային առանձնահատկությունները, գաղափարական բովանդակությունն ու գեղարվեստաարտահայտչական միջոցները

Երգարանը ընդգրկում են XIX—XX դդ. ռուս-սարսկական, ռուս-թուրքական պատերազմների, և հայոց ազգային-ազատագրական պայքարի շուրջ ստեղծված երգերը հնչակես նաև ավանդական ու մեր ժամանակների ռազմի և դինվորի երգերը Աշխատությունն ունի ծանոթագրություններ և նոտագրության նմուշներ Հասցեագրված է բանահավաններին ժողովրդական գեղանիրին և ընթերցող լայն շրջաններին

ԳՄԴ 63.5(2Հ)

Հ 0508000000
703(02)—89 — 35—89

ISBN 5—8080

© Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1989

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայկական բանահյուսության ասպարեզում XIX դարի 2-րդ կեսից ստեղծվում ու տարածվում են բազմաթիվ երգեր, որոնք անմիջականորեն առնչվում են հայ ժողովրդի կյանքում նշանակալից չափեր ընդունած ռազմական գործի ու զբաղմունքի հետ: Հիշյալ երգերն աչքի են ընկնում թեմատիկ ընդգրկման որոշակիությամբ, գեղարվեստաարտահայտչական միջոցների ինքնատիպությամբ ու կենցաղավարման յուրահատկություններով: Ելնելով այդ հանգամանքից, հիշյալ ինքնուրույն երգատեսակը կարելի է կոչել ռազմի և զինվորի երգեր:

XIX դարից սկսած ընդհուպ մինչև մեր ժամանակները ստեղծված ռազմի և զինվորի երգերը ընդգրկում են մի շարք պատմական ու ռազմական-քաղաքական իրադարձություններ: Ժամանակագրական առումով միջնադարյան Հայաստանի ռազմական իրադարձությունների մասնակի, հարևանցի հիշատակումներից հետո, առավել ուշագրավ են Անդրկովկասում տեղի ունեցած ռուս-պարսկական, ռուս-թուրքական պատերազմները, որոնցում հայերը գործուն մասնակցություն են ունեցել իբրև ռուսական զենքի հաջողությանը սատարող ուժ: Արմատական տեղ է գրավում այս էլ գատևսակի մեջ հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական դաժան բռնակալության դեմ: Այդ երգերում անդրադարձում են գտել նաև պարտադիր զինվորական ծառայությունը ցարական բանակում, սովետական իշխանության հաստատման համար մղված կռիվները, զինվորական ծառայությունը սովետական (կարմիր) բանակում և Հայրենական մեծ պատերազմը:

Ռազմի և զինվոլի երգերը պատմական երգեր են: Իրենց ստեղծագործական հենքով, կազմավորմամբ կապված լինելով պատմական անցուդարձերի ու նշանավոր անհատների դործո նեության հետ, դրանք այս կամ այն չափով արտացոլել են իրականությունը: Ռուս-պարսկական ու ռուս-թուրքական կռիվների, ազատագրական պայքարի ու առանձին հերոս անհատների վերաբերյալ երգերում պատմականությունն արտահայտված է շոշափելի, առարկայական եղանակով: Ընդ որում երգելի ճնշող մասը հորինվել է համազգային նշանակություն ունեցող անցքերի ու գործիչների անվան շուրջ, ավելի լայն պատմա-

ճանաչողական արժեք ու նշանակություն ստանալով, իսկ մյուս մասը շոշափվում են համեմատաբար նեղ, տեղական դեպքեր ու գործողություններ. դրանք տեղական-պատմական երգեր են, մատչելի ու հասկանալի աշխարհագրական սահմանափակ շրջանակներում:

Պատմական, ռազմաքաղաքական իրադարձությունների ու զինվորական գործիչների գնահատությունը ժողովրդական երգերում միշտ չէ, որ համընկնում է դրանց իրական դերին: XIX դ. Անդրկովկասում, մասնավորապես Հայաստանում, Ռուսաստանի մղած պատերազմները պարսկական, ապա թուրքական բռնակալության դեմ հայ ժողովրդական երգերում դիտվում են իբրև ազատագրական: Ռուսական բանակի հրամանատարներն անկախ ազգային պատկանելությունից գնահատվում են իբրև հայ ժողովրդի ազատարարներ: Բանն այն է, որ Ռուսաստանի քաղաքականությունն օբյեկտիվորեն նպաստում էր Անդրկովկասի ժողովուրդների, այդ թվում և հայ ժողովրդի ազատագրությանը: Այս պարագայում մեզ համար ուղենիշ կարող է ծառայել Կ. Մարքսի հայտնի ասույթը, որ Ռուսաստանը Արևելքի նկատմամբ կատարում էր առաջադիմական դեր[1]:

Ռազմական գործն ու զբաղմունքը խնդրո առարկա երգերում իմաստավորվում ու արժեքավորվում է ոչ միանշանակ: Միևնույն երևույթը մի դեպքում ընկալվում է դրականորեն, հարուցում խանդավառ, ոգևորիչ տրամադրություններ, մյուս դեպքում՝ հուսահատության հառնող տխրություն ու թախիծ: Առաջին յուրահատկությունը տեղ է գտել ռուս-պարսկական, ռուս-թուրքական պատերազմներին, ազատագրական պայքարին նվիրված ստեղծագործություններում, երկրորդը՝ պարտադիր զինվորական ծառայության շուրջ հորինված երգերում:

Նույն երևույթը դիտվում է նաև այլ ժողովուրդների բանահյուսության մեջ: Զինվորագրության վերաբերյալ ռուսական ժողովրդական ողբերգերը համեմատելով կազակային երգերի հետ, Վ. Ի. Լենինը վերջիններիս մասին գրում է. «Նույն ժողովուրդն է, բայց բոլորովին տարբեր երգեր են, լի քաջությամբ ու խիզախությամբ, խիզախ գործողություններ, խիզախ մտքեր»[2]: Ռուսական բանահյուսության մեջ այդ ողբերգերը հայտնի են իբրև սգո երգեր (причитания), իսկ կազակային երգերը հերոսական երգեր են: Հայ ժողովրդի բանահյուսական կենցաղում ռազմի երգերի ստեղծման հիմքը կազմող անցքերի ու զինվորական գործիչների գործունեության նպատակադրումը համահնչուն

---

[1] *К. Маркс, Ф. Энгельс*, Соч., том XXI, М., 1932, стр. 211

[2] *В. Д. Бонч-Бруевич*, В. И. Ленин об устном народном творчестве, («Советская этнография», 1954, № 4, стр. 120).

է եղել ժողովրդի ազգային, հասարակական շահախնդրություններին, համապատասխան նրա ձգտումներին: Խոսքը վերաբերում է հայրենիքի ազատագրությանը, որին մասնակցում էին կամովին: Զինվորի երկերի կազմավորման համար հենք հանդիսացող պարտադիր ծառայությունը ոչ միայն չի բխել ժողովրդի շահախնդրություններից, այլ եղել է հակառակ նրա ցանկություններին: Պարտադրության հանգամանքը, օտարումը հայրենիքից, բաժանումը հարազատներից, զինվորական կյանքի դժվարությունները, մղվող կռիվները, որոնց նպատակը անհարիր էր հայ ժողովրդին. ահա այն պատճառների հանրագումարը, որ զինվորի երգերում ծնում էին հոռետեսական տրամադրություններ:

Ռազմի և զինվորի երգերը իբրև երգատեսակ պատկանում են քնարական բանահյուսության ժանրին: Սակայն ժանրային հատկանիշները նրանցում դրսևորվում են տարբեր մակարդակներով: Ռուս-պարսկական, ռուս-թուրքական պատերազմների ու ազատագրական կռիվների վերաբերյալ երգերում գերակշռում է վիպականությունը: Դրանք առավելապես անդրադառնում են իրադարձությունների արտաքին կողմին, զորահրամանատարների, գործիչների հայրենիքի ազատագրությանը մատուցած ծառայություններին· Երգերի այս խմբում նշանակալից թիվ են կազմում գովքերը, քայլերգերը: Իսկ բուն զինվորի երգերում ավելի ակնառու է քնարականությունը: Դրանցում երեվույթները, ռազմական գործը դիտարկվում են նրանց՝ մարդու հուզաշխարհի, ճակատագրի վրա գործած ներգործության տեսանկյունից: Զինվորի երգերը մեծ մասամբ հորինված են առաջին դեմքով, մի հանգամանք, որն ավելի է սրում երգի ողբերգականությունը: Նոր շրջանի ռազմի ու զինվորի երգերում այս երկու հատկանիշները հանդես են գալիս զուգորդված:

Ռազմի և զինվորի երգերն աչքի են ընկնում իրենց հորինման ու գոյատևման յուրահատկությամբ: Ստեղծվելով պատմական դեպքերի ու անձերի գործունեության անմիջական ազդեցությամբ, դրանք բանահյուսական կենցաղից, ժողովրդի հիշողությունից դուրս են մղվում պատմական դեպքերի ու դեմքերի աստիճարեզից հեռանալու հետ միաժին: Երբ հին երևույթներին փոխարինում են միանման նոր երևույթները, երգերը ևս նորոգվում են ըստ հանգամանքների պահանջի: Ավանդները պահպանում են իրենց կենսունակությունը, մի բան, որն արտահայտվում է տարբեր ձևերով: Խնդրո առարկա երգերը չեն կարող կենցաղավարել ցանկացած միջավայրում: Դրա համար անհրաժեշտ է որոշակի հասարակական-քաղաքական միջավայր ու տրամադրություն: Որևէ ռազմի և զինվորի երգը կարող է կատարյալ, ամբող-

ջական ներգործություն ունենալ երգի, կենցաղավարման միջավայրի, ունկնդիրների տրամադրության ներդաշնակության դեպքում Ազատագրական պայքարի երգերի մի մասի կենսունակությունը բացատրվում է հայ ժողովրդի պատմաքաղաքական ճակատագրի յուրատուկ ընթացքով։ Գոյատևման ու կենցաղավարման ժամանակային ու աշխարհագրական սահմանափակությունը բացասաբար է անդրադարձել ռազմի և զինվորի երգերի գեղարվեստական կողմի վրա։

Ռազմի ու զինվորի երգերը հորինվել ու կազմավորվել են հայ ժողովրդական բանահյուսության հունի մեջ, ավանդական երգարվեստի մյուս տեսակների հետ փոխազդեցության պայմաններում Ռազմի երգերը հատկապես կրել են վիպական երգերի, իսկ զինվորի երգերը՝ սիրո, պանդխտության, հարսանեկան երգերի ազդեցությունը։ Ազատագրական պայքարի երգերի ստեղծման գործում նշանակալից է եղել գրական քնարերգության, աշուղական երգարվեստի դերը։

Ի մի բերելով ռազմի և զինվորի երգերի մեզ հասած ժառանգությունը, ելնելով թեմատիկ հենքից ու ժանրային հատկությունների դրսևորման աստիճանից, դրանք կարելի է բաժանել հետևյալ խմբերի. 1) ռազմի երգեր, 2) զինվորի երգեր և 3) սովետական շրջանի ռազմի ու զինվորի երգեր։ Առաջին խումբն ընդգրկում է ռուս-պարսկական, ռուս-թուրքական պատերազմների ու ազատագրական պայքարի շուրջ հյուսված ստեղծագործությունները, երկրորդ խումբը՝ պարտադիր զինվորական ծառայությանը վերաբերող երգերը։ Երրորդ խմբի մեջ մտնում են այն երգերը, որոնց ստեղծման համար իբրև պատմական ատաղձ են ծառայել սովետական կարգերի հաստատման համար մղված կռիվները, ծառայությունը սովետական բանակում և Հայրենական պատերազմի իրադարձությունները։

* * *

Հայ ժողովրդական ռազմի և զինվորի երգերը պատմամշակութային նոր երևույթ են, բայց նրանց հորինման ու կենցաղավարման ավանդները, ինչպես վկայում են մատենագրությունից հայտնի հայոց հին բանահյուսության նմուշները, պատմագրական երկերի, պաշտամունքների ու հավատալիքների վերաբերյալ տեղեկությունները դալիս են դարերի խորքից։ Դրանց գոյությունը վաղեմություն են հաստատում նաև միջնադարից մեզ հասած ռազմի երգերի նատուկենտ նմուշները, պատմական զրույցները ու դրանց վերաբերյալ վկայությունները։

«Վահնի երգը»[3] իր տարբերակներով ռազմի երգի նմուշ է։ Երգի հիմքում ընկած է Կիլիկյան Հայաստանի Լևոն արքայազնի գերևարության ու ազատվելու պատմությունը։ Դեպքը տեղի է ունեցել 1266 թվականին։ Ուշադրության են արժանի Լիպարիտ զորավարի գործունեության շուրջ ստեղծված բանահյուսական ստեղծագործությունները[4]։ Կիլիկյան Հայաստանի այդ նշանավոր զինվորականի սպանությունը կատարվել է 1370 թ. Տարսոնի թուրք ամիրապետի զորքերի հետ մղված կռիվների ժամանակ։ Լիպարիտ զորավարին նվիրված ստեղծագործությունների մեջ առանձնանում է «Տաղ քաջի Լիպարիտին» երգը։ «Տաղը» գովք է զորավարի քաջության, անձնազոհ հայրենասիրության և այլ արժանիքների։ «Տաղը», միաժամանակ սգո երգ է. գովերգելով Լիպարիտի առաքինությունները, այն ներկայացնում է նրա սպանության պատճառած վիշտը։

Հայրենասեր, քաջարի անհատների գովքը, փառաբանությունը իրականություն արտացոլելու գեղարվեստական հնարանք է, որը լայնորեն կիրառվել է ինչպես հին, այնպես էլ նոր ռազմի երգերում։ Ավանդները հարատևել են և յուրաքանչյուր ժամանակահատվածում, պատմաազգագրական միջավայրում դրսևորվել ըստ պահանջմունքի։ «Ագաթ-խանի Ըգիւլեաց չափմիշ արիլը» երգը[5], որը ստեղծվել է XVIII դարում Ագուլիսը պարսից Ագաթ-խանի կողմից գրավելու կապակցությամբ, արտահայտում է Ագուլիսի հայության վիճակի յուրահատկությունները։ Դավիթ բեկի, Արցախի մելիքների ու այլ լեռնագավառների մղած հերոսական կռիվները օտար զավթիչների դեմ չէին կարող չազդել ժողովրդի ստեղծագործական երևակայության վրա։ Կան բազմաթիվ վկայություններ այդ կռիվների շուրջ ստեղծված բանահյուսության, մասնավորապես ռազմական երգերի վերաբերյալ, ինչպես նաև դրանց որոշ նմուշներ՝ պահպանված գրավոր աղբյուրներում՝

* * *

Ռուս-պարսկական, ռուս-թուրքական պատերազմների շուրջ հորինված ռազմի երգերի մեջ առանձնանում է «Տաղ ի Ռոստոմ բեգ»

[3] Ղ. Ալիշան, *Հայոց երգք ռամկականք*, Վենետիկ, 1852, էջ 5—7։ Ա. Մնացականյան, *Միջնադարյան ժողովրդական երգեր*, Երևան, 1956, էջ 228—232։

[4] Ն. Ակինյան, *Քաջն Լիպարիտ պատմության, տաղերու և զրույցներու մեջ* («Հանդես ամսօրյա», 1933, էջ 129—138)։

[5] Ս. Սարգսյանց, *Ագուլեցոց բարբառը*, Մոսկվա, 1883, մ. 2, էջ 37—39։

[6] Խ. Աբովյան, *Երկերի լիակատար ժողովածու*, հ. VIII, Երևան, 1958, էջ 251, 260, 280 Գ. Սրվանձտյան, *Հնոց-Նորոց*, կ. Պոլիս, 1874, էջ 168—186։ Րաֆֆի, *Երկեր*, X Երևան, 1964, էջ 204։

ստեղծագործությունը. Երգի պատմական հիմքը հետևյալ ռազմաքաղաքական դեպքն է։ Ռոստոմ-բեկը՝ Արցախի նշանավոր մելիք-Աբովի ավագ որդին, իր զինված ջոկատով անցյալ դարի տկզբներին օգնություն էր ցույց տալիս ռուսական բանակին։ 1804 թվականին, երբ նա իր խմբով ու ռուս զինվորների ջոկատով փորձում էր ռազմամթերք հասցնել Երևանի մոտ գտնվող ռուսական բանակին, Փամբակի Ղարսալու կոչված վայրում շրջապատվեց պարսից՝ թվով գերազանց ուժերի կողմից։ Անհավասար կռվում Ռոստոմ-բեկի միացյալ ջոկատը գլխովին ոչնչանում է, ծանր վիրավոր Ռոստոմին գերում, տանում են Թավրիզ։ Թավրիզում նա մերժում է թագաժառանգ Աբաս-Միրզայի հավատափոխ լինելու առաջարկը և տանջամահ լինում բանտում[8]։

«Տաղը» իր հորինվածքով անհատական ստեղծագործություն է. ոմանք այն վերագրում են իրեն՝ գերված հերոսին, ոմանք՝ այդ օրերին Թավրիզում բանտարկված Դանիել կաթողիկոսին։ Անկախ այդ հանգամանքից, այն տարածված է եղել Թավրիզի հայության միջավայրում իբրև ժողովրդական երգ, բազմիցս հրատարակվել մասնակի խմբագրումներով։ Երգի առաջին հրատարակիչներից «Բազմավեպ» ամսագիրը գրում է. «Ազգային ռամկական երգերուն մեջ անոնք ավելի հարգելի ու ախորժելի են՝ որոնք որ պատմական հիշատակ մըն ալ ունին հետերնին, ասոնցմե մեկն ալ Ռոստոմ-բեկի երգն է»[9]։ «Տաղը» պատմական հիշատակի հետ միասին ունի հայրենասիրական ոգի, արտահայտում է անձնուրաց քաջություն ու տոկունություն։ Երգի հերոսը չի ընկճվում բանտից, կապանքներից, այլ ափսոսում է, որ մահը վրա չի հասել մարտի դաշտում, ինչպես վայել է ռազմիկին։

1826—27 թթ. ռուս-պարսկական իրադարձությունների շուրջ, ըստ մեծ լուսավորիչ Խ. Աբովյանի, ստեղծվել են բազմաթիվ երգեր. «Հարիր տեսակ խաղ հայերեն, թուրքերեն Երևանու բաղերն ու ձորերը լսում էին ու հինգ տարեկան երեխեն էլ էսօր ուրախ վախտը ձևը բերնին ա դնում ու ասում»[10]։ Նույնն է վկայում նաև ռուս ռազմական պատմաբան Վ. Պոտտոն[11]։ Սակայն այդ «հարիր տեսակ խաղից» մեզ են հասել միայն երկու նմուշ Խ. Աբովյանի գրառումների միջոցով. «Սար ու

---

[7] «Բազմավեպ», 1847, № 3, էջ 39—40։

[8] Րաֆֆի, Երկեր, հ. X, էջ 293—296։

[9] «Բազմավեպ», 1847, № 3, էջ 39։

[10] Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. III, Երևան, 1948, էջ 177։

[11] *В. Потто*, Кавказская война в отдельных очерках, эпизодах, легендах и биографиях, т IV, вып IV, С Петербург, 1888, стр 485.

Աոր սասանվիշ էլան, զարմացան»[12] *սկզբնատողով և «Հայ աշուղ Սե-Ֆի-Յուսուֆի ասած երգը Երևանի առման մասին» (թուրքերեն)*[13]:

Նշված երկու երգերում բացահայտված է հայ ժողովրդի անվեհատ հավատը Ռուսաստանի նկատմամբ, նրան օգնելու, աջակցելու պատրաստակամությունը.

Մենք քամակ քամակի կոտանք, վեր կկենանք,
Ռսին մեր աշխարքը, կյանքը ղուրբան կոտանք[14]:

Երգերում հիշատակված են Երևանի, Ղարաբաղի ու Սարդարաբադի համար մղված կռիվները, ռուսական քաղաքական ռազմական գործիչներ Ա. Կրասովսկին, Ի. Պասկևիչը, Կ. Բենկենդորֆը, հայազգի զորավար Վ. Մադաթովը, Ներսես Աշտարակեցին, Եփրեմ կաթողիկոսը, Երևանի սարդար Հուսեին-խանի եղբայր Հասան-խանը, Պարսից թագաժառանգ Աբաս-Միրզան:

1877—78 թթ. ռուս-թուրքական պատերազմի շրջանի ռազմի երդևրում ռազմական իրադարձություններն ու զորավարների գործունեությունն արտացոլելու ավանդական եղանակները մնում են անփոփոխ: Փոխվում են ժամանակներն ու գործիչների անունները: Պահպանվել են երգերի նմուշներ ռուսական բանակի Կովկասյան կորպուսի հրամանատար Մ. Լորիս-Մելիքովի, նշանավոր գեներալներ Ա. Տեր-Ղուկասովի, Հ. Լազարևի ղեկավարությամբ ու մասնակցությամբ տեղի ունեցած ռազմաքաղաքական անցքերի վերաբերյալ:

Մ. Լորիս-Մելիքովի զորաբանակի գործողությունները ծավալվել են գլխավորապես Կարսի շրջակայքում, Ալաջայի բարձունքներում («Սալդատ ելավ Ալաջեն»[15]*, «Լոռվա Մելիքի երգը»*[16]*, «Հորդոր»*[17]*):*

Թուրքական 4-րդ բանակը Մուխտար փաշայի հրամանատարությամբ, չնայած թվական գերազանցությանը, Ալաջայի բարձունքներում 1877 թ. ձմռանը պարտություն կրեց և քաշվեց Կարս: Այնուհետև ռուսական հաղթական զորքը գրավեց Կարսը: Այս անցքերը ընդհանուր պատկերներով արտացոլվեցին ժողովրդական երգերում, ըստ որում, ժողովրդի կարծիքով, հաջողությունները ձեռք բերվեցին շնորհիվ Մ Լորիս-Մելիքովի ռազմավարական տաղանդի:

---

[12] Ա. Աբովյան, նշվ. աշխ., էջ 177:

[13] Ե. Շահազիզ, *Դիվան Ա. Աբովյանի*, հ. I, Երևան, 1940, էջ 327—329:

[14] Ա. Աբովյան, նշվ. աշխ., էջ 177:

[15] *Հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվ (այսուհետև՝ ՀԱԻԲԱ), II, 8323:*

[16] *ՀԱԻԲԱ, Տ. Նավասարդյանի ֆոնդ, գրծ I, տ. 3, էջ 75:*

[17] *«Նոր քնար հայկական», Վառնա, 1897, էջ 151: «Վազգեն» երգարան (կազմեց Տ. Տերոյանց), Պոստըն, 1901, էջ 324:*

Հայտնի է, որ այս պատերազմի հետևանքով Կարսի մարզը միացվեց Ռուսաստանին, մի հանգամանք, որ դրական է գնահատվում երգում։

Սալդատն ելավ Ալաջեն,
Ազատվանք Օսմանլուի փաջեն[18]։

Կարսի առումն ընդհանրապես չափազանց մեծ տպավորություն է թողել ժողովրդի երևակայության վրա, արտացոլվել ժողովրդական խաղիկներում և այլ ժանրերի ստեղծագործություններում։

Գեներալ Ա. Տեր-Ղուկասովի գործունեությունը ծավալվել է հիմնականում Ալաշկերտի հովտում։ Նրա զորամասերը հասան մինչև Վանա լճի հյուսիսային ափերը։ «Գովեստ Արշակ Տեր-Ղուկասովին» երգում[20] *տեղ են գտել իրական անցքերի որոշ հիշողություններ, սակայն երգի վերնագիրն արդեն նշում է նրա բնույթը. հիմնականը երգում Տեր-Ղուկասովի գովքն է. նա է իրադարձությունների կ'ևնտրոնում, նրան են վերագրվում բոլոր հաջողությունները ու հաղթանակները։*

Գովքի երգեր են կենցաղավարել գեներալ Հ. Լազարևի մասին, որին ժողովուրդը մեծարել է «Կարսի հերոս», «Ալաջայի հերոս» տիտղոսներով։ Ցավոք, միայն հատվածներ ու հիշատակություններ են պահպանվել այդ երգերի գոյության մասին[21]։

Ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմների վերաբերյալ երգերի ստեղծման համար ազդակ են ծառայել երկու կարևոր գործոն. ա) հայերի մասնակցությունը պատերազմական գործողություններին և բ) հայ ժողովրդի անվերապահ դրական վերաբերմունքը Ռուսաստանի ազատագրական առաքելության նկատմամբ։

Հայ առաջին կամավոր զորախմբերը ռուսական բանակում գործել են տակավին XVIII դարի սկզբներին։ XIX դարում հայ զինվորականների թիվը ստվարանում է։ Բացի պաշտոնական ծառայության մեջ գտնվողները, պատերազմների ժամանակ կազմակերպված աշխարհազորայինները կարևոր ծառայություններ են մատուցել ռուսական բանակին։ Ռուս-պարսկական պատերազմի ժամանակ կամավոր աշխարհազորային գունդը սեփական դրոշով, հանդերձանքով մաս-

---

[18] *ՀԱՒԲԱ, FF II։ 8323։*

[19] *Ե. Չարենցի անվ. գրականության և արվեստի թանգարան (այսուհետև՝ ԳԱԹ), Մոսկվա, էջ 239։ Մ. Աբեղյան, Ժողովրդական խաղիկներ, Երևան, 1940, էջ 453։ ազգուտանտ Հովհաննես Դավիդիչ Լազարյան, Թիֆլիս, 1915, էջ 57։*

Կոմիտասի ֆոնդ, գ. 363, էջ 27։ «Լմինյան ազգագրական ժողովածու», հ. I, 1900,

[21] *«Փորձ», 1879, № 9, էջ 201։ Սալ-Ման, Դաղստանի և Կարսի հերոս գեներալ-*

[20] *Ա. Բուդյան, Ռամկական մրմունջներ, Ալեքսանդրապոլ, 1901, էջ 182*

նակցել է ռազմական գործողություններին Այս պատերազմում աչքի են ընկել Գ. Մանուչարյանի 500 հեծյալներից բաղկացած ջոկատը և ուրիշ այլ ջոկատներ ու խմբեր։ Իսկ 1877—78թթ. պատերազմին Կովկասյան ռազմաճակատում մասնակցել են 7 հայ գեներալներ, 500-ից ավելի սպաներ, որոնցից 70-ը սպանվել ու վիրավորվել են։ Համավոր շարքայինների թիվը ստույգ հայտնի չէ»[23]։

XIX դարում Անդրկովկասում մղվող պատերազմներով Ռուսաստանը ներկայանում էր հայ ժողովրդին իբրև փրկարար, ազատարար։ Այդ մտայնությունն ավելի ցայտուն արտահայտվեց Բուլղարիայի թուրքական լծից ազատագրվելուց հետո Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալուց հետո, Ռուսաստանի ազատագրական առաքելության հետ էր կապվում արևմտահայերի ազատագրության հարցը։ «Հորդոր» երգը հագեցված է այս տրամադրությամբ[24]։

Նման առարկա երգերը, ինչպես տեսանք, պատմական բնույթի ստեղծագործություններ են Սակայն երգերում ժողովուրդը գաղափարականացնում է պատմական անձերին, չափազանցում նրանց ծառայություններն ու պատմական իրադարձությունների նշանակությունը։ Միանգամայն պարզ է, որ ցարական Ռուսաստանը անդրկովկասյան պատերազմներում հետապնդում էր իր նեղ շահերը, սակայն երգերում դրանք դիտարկվում են իբրև քրիստոնյաներին մահմեդական լծից ազատագրելու համար մղվող պատերազմներ։

XIX դարի ռազմաքաղաքական իրադարձությունների շուրջ ստեղծված երգերում առկա է հայ վիպական բանահյուսության ավանդական հակամարտությունը՝ օտար նվաճողների և հայրենիքի պաշտպանների միջև։ Ըստ որում, հակամարտությունը մշտապես հարատևում է, փոխվում են անունները. Մի բևեռում հանդես են գալիս օտար նվաճողները (պարսկական ու թուրքական բռնապետության ներկայացուցիչները), մյուսում՝ հայ ժողովուրդը, նրա հայրենասեր գործիչները, հայոց պետի գինվորականները և ապա Ռուսաստանը, ռուսական բանակն ու ռուս նշանավոր զորահրամանատարները. Այդ հակամարտությունը բացահայտվում է ավանդական վիպական-գեղարվեստական հնարանքներով։ Թշնամին ձաղկվում է անարգվո մ, նսեմացվում է նրա գործողությունների նշանակությունը Մեծարվում յուրայինը՝ հայը, հայոց պաշտպան ռուսական բանակը, վառաբանվում նրանց ծառայությունները ու սխրագործությունները

---

[22] «Հայ ժողովրդի պատմություն», Հ V, Երևան, 1974, էջ 120—131, 143—149։

[23] Ա. Ներսիսյան, Հայերի մասնակցությունը 1877—78 թթ. ռուս-թուրքական պատերազմին, Երևան, 1958, էջ 93

[24] «Նոր քնար հայկական», էջ 151

Ռուս-պարսկական պատերազմի շուրջ ստեղծված երգերում անեծքի ու պարսավանքի են արժանացել պարսից բանակի ներկայացուցիչները՝ շահզադան (Աբաս-Միրզան), Հասան-խանը: Այդ երգերում որպես կանոն թշնամին կրում է զզլբաշ ընդհանուր անվանումը. («Զզլբաշն մուկ դառած, զվխին վայ տվեց»...)[25]: Ռուս-թուրքական 1877—78 թթ. պատերազմին վերաբերող երգերում թշնամու հավաքական կերպար է Մուխտար-փաշան, որին իր մարդկային, զինվորական արժանիքներով հակադրված է Մ. Լոռիս-Մելիքովը:

Ըստ էության վիպական-պատմական այս երգերի կառուցվածքում հանդես են գալիս կրկնվող տողեր, կրկնակներ, որոնք երգերին հաղորդում են հուզական շեշտվածություն: «Սար ու ձոր սասանմիշ էլան, զարմացան», «Հորդոր» երգերում այդ կրկնակները իրենց նշանակությամբ հիշեցնում են հայոց հին վիպական երգերը («Լևոնի երգը», «Մոկաց Միրզա» և այլն):

Առկա է նաև ուշագրավ մի այլ հանգամանք: Այս ժամանակաշրջանից մեզ հասած ռազմի և զինվորի մի շարք երգերում («Ա՛յ հավար, Բայազիտ վառեցին»[26], «Հասան-Ղալա»[27]) պատերազմը ընկալվում ու բացահայտվում է իբրև հակամարդկային երևույթ, չարիքի, ավերածությունների ու կոտորածների աղբյուր: Երկու երգն էլ հորինվել են հավանաբար 1877—78 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակաշրջանում, գուցե և ավելի վաղ: XIX դարում, 50 տարվա ընթացքում, նույն վայրերում երեք անգամ նույնընույթ դեպքեր են կատարվել:

Թե՛ «Ա՛յ հավար, Բայազիտ վառեցին», թե՛ «Հասան-Ղալան» բուն ժողովրդական ստեղծագործություններ են՝ հագնված խոր հուզականությամբ, որոնցում դրսևորվում է ներկայացվող իրադարձությունների ողբերգականությունը: Միաժամանակ երկու երգն էլ վիպական-քնարական ընդհանուր շնչով պատմում են որոշակի դեպքերի մասին:

«Ա՛յ հավար, Բայազիտ վառեցին» երգը հյուսված է Բայազետում տեղի ունեցած հայոց աշխարհազորայինների՝ «միլիցիայի» հինգ հարյուր հոգիանոց ջոկատի ոչնչացման, քաղաքի հայկական թաղերի ավերի ու կործանման մասին:

Էս ի՛նչ կրակ, ախր աստված,
Ա՛յ հավար, Բայազիտ վառեցին,

---

[25] Խ. Աբովյան, նշվ. աշխ., էջ 177:

[26] Տ. Նավասարդյան, Հայ ժողովրդական հեքիաթներ, գ. 6, Թիֆլիս, 1898, էջ 75:

[27] ՀԱԻԲԱ, ԳԱ V: 3211:

Մատղաշ ճժերն են էրած,
Ա՛յ հավար, սև խապար՝ էրնգին[28]։

«Հասան-Ղալան» ներկայացնում է ցարական բանակի հայ զինվորին պատերազմի դաշտում, նրա ճակատագրի վրա պատերազմի գործած ազդեցությունն ու մարտերի որոշ մանրամասներ։ Հասան-Ղալան Կարնո պաշտպանական գծի մեջ մտնող կարևոր բերդ-ամրություն էր, որի գրավման ժամանակ 1877—78 թթ. ձմռանը ցարական բանակը մեծաթիվ զոհեր կրեց, որոնց մեջ, պետք է ենթադրել, քիչ չէին նաև հայերը։

Երկու երգում էլ ավանդական վիպական երգերին բնորոշ եղանակով, ինչպես վերը նշվեց, օգտագործված են կրկնակներ։ Առաջինում այն արտահայտում է օգնության կանչ, ցավի ու ափսոսանքի զգացում դեպի կատարված ողբերգությունը («Ա՛խ ափսոս, վայ կըսկիծ», «Ա՛յ հավար, վա՛յ հասեք»), երկրորդում՝ նզովք ու դատապարտում («Վերան դառնա Հասան-Ղալան»)։

«Ա՛յ հավար, Բայազիտ վառեցին» երգը հայտնի է գրավոր ավանդմամբ, «Հասան-Ղալան»՝ և՛ գրավոր, և՛ բանավոր։ Առաջինը մատնվեց մոռացության, երկրորդը բանահյուսական երկար կյանք ունեցավ, նորոգվեց թե՛ I, թե՛ II համաշխարհային պատերազմների ժամանակաշրջանում։ Հատկապես բազմաթիվ տարբերակներով «Կերչի երգ» անվամբ վերատեղծվեց Հայրենական մեծ պատերազմի տարիներին։

Այսպիսով, քննարկված երգերում տեսնում ենք մի կողմից հաղթանակ, հայրենասիրություն, անձնվիրություն, խիզախություն, մյուս կողմից՝ պատերազմի ծնած աղետներ, զինվորական կյանքի դժվարություններ, սպանություններ, կոտորածներ, մի հանգամանք, որը պայմանավորված է երգերի ստեղծման համար հիմք ծառայող պատերազմական իրադարձությունների երկակի բնույթով։ Պատերազմները մի կողմից հայ ժողովրդի մեջ հույսեր են հարուցում արևմտահայության ազատագրման վերաբերյալ, նպաստում դրան, մյուս կողմից բազում չարիքներ պատճառում ժողովրդին։ Իրականությունը այն է, որ պատերազմական գործողությունների բացասական հետևանքները անհամեմատ մեծ էին դրական արդյունքներից։

Անդրկովկասի տարածքում Ռուսաստանի մղած պատերազմները արտացոլում գտան նաև ռուսական ժողովրդական երգերում։ Այդ երգերից մեզ համար հետաքրքրություն են ներկայացնում նրանք, որոնք առնչվում են հայոց կյանքին։ Երգեր են հորինվել Երևանի բերդի գրավման, կոմս Պասկևիչի, Մ. Լորիս-Մելիքովի գործունեության վե-

[28] Տ. Նավասարդյան, նշվ. աշխ., էջ 74։

բաբոյալ[29]: Իսկ Ա. Տեր-Ղուկասովի անվան շուրջ ստեղծված երգերի մասին Սալ-Մանը գրում է. «Ահա թե ինչու ոչ մի գեներալի մասին ռուս վիճվորները այս պատերազմում չէին կապել այնքան երգեր՝ լի ոգևորությամբ ու անկեղծ սիրով, որքան այդ տեսնում ենք մենք Տեր-Ղուկասովի վերաբերմամբ»[30]: Հայազգի գեներալին նվիրված ռուսական ժողովրդական երգերի գոյությյան փաստը մի անգամ ևս ցույց է տալիս, որ իսկական հերոսները, ինչ ազգի էլ պատկանելիս լինեն, պատկանում են բոլոր ժողովուրդներին:

* * *

Հայ ժողովրդական ռազմի երգերի նշանակալից բաժինը կազմում են ազատագրական պայքարի երգերը

Արևմտյան Հայաստանի ազատագրության հարցը XIX դարի վերջին տասնամյակներում և դարասկզբին կլանել էր ողջ Հայության ուշադրությունը: Հայ հասարակական, մշակութային կյանքը տոգորված էր արևմտահայության ազատագրության գաղափարներով: Բուն Արևմըտյան Հայաստանում ազատագրական պայքարն օրավուր լայն ծավալ էր ընդունում՝ ընդգրկելով գյուղացիությանն ու արհեստավորական խավերին:

Ազատագրական պայքարի երգերը, իբրև պատմական բնույթի ստեղծագործություններ, արտացոլել են բուն պայքարն իր յուրահատկություններով, իսկ այդ յուրահատկությունները բացահայտվում էին հետևյալ կերպ. պայքարի համազգային, միասնական կենտրոնի բացակայություն, հայրենասիրական կազմակերպությունների, անհատ կամավորների ու կամավորական ջոկատների գործունեություն, պարտիզանական կռիվներ, առանձին բնակավայրերի զինված ինքնապաշտպանական դիմադրություն և այդ պայքարին ուղեկցող բանտ ու աքսոր, ավեր ու կոտորած:

Խնդրո առարկա երգերը ստեղծվել ու կազմավորվել են տարբեր գեղարվեստական ու ոճական հենքերի վրա: Երգերի մի խումբը կազմավորվել է ավանդական-ժողովրդական, մյուսը՝ աշուղական երգարվեստի, երրորդը՝ գրական քնարերգության հենքի վրա: Թե՛ աշուղական, թե՛ գրական ծագում ունեցող ռազմի երգերը հայ ժողովրդի բա-

---

[29] «Արձագանք», 1894, № 80 В. Чичеров, Исторические песни, Л., 1956, стр 314 Песни казаков Кубани (сост П Варавва), Краснодар, 1966, стр 71

[30] Սալ-Ման, *Գեներալ-լեյտենանտ Ա Տեր-Ղուկասյան, Թիֆլիս, 1915, էջ 32:*

Ա. Տյուռակյան կենցաղում լայն տարածում են գտել ու ընկալվել իբրև ժողովրդական ստեղծագործություններ։ Դրան նպաստել են նրանց թեմատիկ ընդգրկումը, արտահայտած գաղափարները, մոտիվները, լեզվաոճական միջոցների համակարգը. դերն ու կիրառությունը։ Այս կապակցությամբ ուշագրավ է ռուս բանագետ Բոգատիրյովի հետևյալ միտքը. «Այլ բանաստեղծական միջավայրի ֆոնի վրա, այլ ավանդների ու գեղարվեստական արժեքների նկատմամբ այլ վերաբերմունքի պայմաններում, ստեղծագործությունը մեկնաբանվում է նորովի, և նույնիսկ այն ձևական ռիկվիզիտը, որն առաջին հայացքից պարզես թե պահպանվում է փոխառության ժամանակ, չպետք է դիտվի իբրև իր սկզբնօրինակի նույնությունը. այդ գեղարվեստական ձևվում կատարվում է... ֆունկցիաների տեղափոխություն։ Ֆունկցիոնալ առումով, առանց որի անհնարին է հասկանալ արվեստի փաստերը, գեղարվեստական ստեղծագործությունը բանահյուսությունից դուրս և նույն ստեղծագործությունը որդեգրված բանահյուսության կողմից, երկու միանգամայն տարբեր փաստեր են»[31]։ Գրականության և գրական լեզվի աղդեցությունը բանահյուսական միջավայրի վրա XIX դարի II կեսին հատկապես ուժեղանում են և ահա վերոհիշյալ երկերը ծնունդ են այդ հանգամանքների։ Նման երևույթը դիտվում է նաև այլ ժողովուրդների բանահյուսության մեջ։ Մեզանում բանահյուսության՝ գրականության վրա գործած ազդեցության հարցը լուսաբանվել է, սակայն հակառակ իմաստով խնդիրը գրեթե չի քննարկվել։

Ազատագրական պայքարի երգերը ծագել ու տարածվել են հայկական կյանքի հասարակական պահանջներով ու թեև գտնվել են հայ ժողովրդական երգարվեստի միասնական ընթացքի մեջ, սակայն առավելագույն չափով կրել են գրականության, գրական բանաստեղծության, մասնավորապես Ղ. Ալիշանի, Մ. Նալբանդյանի, Րաֆֆու, Ի. Պատկանյանի, Մ. Պեշիկթաշլյանի, Ա. Իսահակյանի քնարերգության ազդեցությունը։ Ավելորդ չէ նշել, որ հիշյալ հեղինակների որոշ բանաստեղծություններ հայտնի ու անհայտ երգահանների կողմից վեր էին ածվում երգերի, որոնք արագորեն տարածվում էին տպագիր ու ձեռագիր երգարանների միջոցով, երգվում իբրև ռազմի, ազատագրական պայքարի երգեր։ Բացի այդ, ղգալի է նաև պատմական նույն ճակատագիրն ունեցող ժողովուրդների՝ հույների, բուլղարների, հարավսլավացիների, հունգարների գրականության, ժողովրդական բանահյուսության ազդեցությունը, հատկապես երգերի այն շարքի վրա, որը մեզանում հայտնի է հայդուկային (ֆիդայիների) անվամբ։

---

[31] *П. Богатырев*, Вопросы теории народного искусства, М., 1971, стр. 377.

Ազատագրական պայքարի երգերը ըստ պատմական հենքի, կենցաղավարման տեղի ու ժամանակի, խմբավորվում են հետևյալ կերպ. 1) Զեյթունի երգեր, 2) առաջին կամավոր խմբերի ու հայրենասիրական կազմակերպությունների գործունեությանը նվիրված երգեր, 3) Մուշ-Սասունի ու Վասպուրական-Շատախի երգեր, 4) հայդուկային (ֆիդայիների) երգեր:

Զեյթունի երգերը ստեղծվել ու կենցաղավարել են Զեյթունում ու մերձակա գյուղերում: Դրանք հորինվել են տեղական աշուղ-երգիչների կողմից գլխավորապես թուրքերեն լեզվով, մասամբ էլ Զեյթունի բարբառով: Զեյթունը հայ ազատագրական շարժման օջախներից էր: Մինչև անցյալ դարի 60-ական թվականները Զեյթունը թուրքական կառավարությանը մի որոշ հարկ վճարելու պայմանով պահպանել էր իր կիսանկախ վիճակը: Սակայն թուրքական կառավարությունը ամեն կերպ ձգտում էր վերացնել Զեյթունի համեմատական անկախությունը և անընդհատ պատրվակ էր փնտրում ու արշավանքներ ձեռնարկում լեռնաքաղաքի վրա: Զեյթունցիները այս արշավանքներին դիմադրում էին հերոսաբար:

Խնդրո առարկա երգերը տեղական պատմական ստեղծագործություններ են, գերազանցապես վիպական բնույթի. դաստաններ, հորինված աշուղական երգարվեստի օրինաչափություններով: Նրանք զեյթունցիների հերոսական ինքնապաշտպանական կռիվների շուրջ մեկդարյա բանաստեղծական պատմություն են (1780—1895): Երգերն ընդհանուր, սակայն բնորոշ գծերով պատմում են զինված ընդհարումների, խիզախությամբ աչքի ընկած մասնակիցների մասին: Համեմատաբար շատ են անցյալ դարի վերջին քառորդում տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ ստեղծագործությունները: Զեյթունի երգերում՝ ավաչներում (էվեչ), նույնպես առկա է հայ վիպական բանահյուսության հիմնական հակամարտությունը՝ օտար նվաճողների ու հայրենիքի պաշտպանների միջև: Որպես նվաճուներ ներկայացված են թուրքական իշխանությունների ներկայացուցիչները, զորահրամանատարները, քոչվոր ավազակաբարո աշիրեթապետերը: Հայրենիքի պաշտպաններին մարմնավորում են Զեյթունի չորս թաղապետ-իշխանները, հայրենասեր ու արի հոգևորականները, Զեյթունի խիզախ բնակիչները: Ըստ որում, այս երգերում ևս թշնամին ենթարկվում է անարդանքի, նսեմացման, իսկ հայրենիքի պաշտպանները գաղափարականացվում են, մեծարվում ու փառաբանվում. Ընդհանրապես Զեյթունում սիրված են եղել գովքի երգերը. «քաջերու անվան ձոնյալ ավաչները», որոնք կատարվել են թե՛ խաղաղ օրերին, թե՛ մարտի դաշտում:

Ավաչներ են հորինվել Պապիկ և Եղիա Ենիտունյանների, Փանոս Զո-
ւոպյանի, Հայտնի Քացախ-Պինպաշի մականունով և մի շարք այլ քա-
ւոպի ռազմիկների, հրամանատարների սխրագործությունների մասին:

Փաստերը վկայում են, որ Զեյթունի ավաչները սովորական երգե-
րի եղանակով չեն երգվել: Դրանք խաղաղ օրերին կատարվել են հայ-
րերի սխրանքների հիշատակները վառ պահելու համար: Կռվի դաշ-
տում այդ երգերը ոգևորել ու հաղթանակի են առաջնորդել զեյթուն-
ցիներին: Զեյթունն ունեցել է իր «ավաչ ասողները»: Ընդունված է եղել,
ի լուր թշնամու, բարձր ձայնով երգել, թե որ քաջն է կռվողը, ինչ հե-
րոսական արարքներ է նա գործել: Թե որքան կարևոր էր ավաչ ասող-
ների դերը մարտի ժամանակ, վկայում է հետևյալ փաստը: 1895—
96 թթ. թուրքական արշավանքի ժամանակ Զեյթունի ռազմական հրա-
մանատարությունը ընտրում է 120 հոգի «ավաչ ասողներ», որոնք միա-
ժամանակ քաջ մարտիկներ էին և ուղարկում վտանգավոր դիրքերից
մեկը՝ Շուղրի կամուրջը պաշտպանելու: Ավաչներ հորինվել են նույնիսկ
մարտերի ժամանակ: Այս հանգամանքով է պայմանավորվում երգերի
եղանակը, որը պետք է որ ռազմաշունչ լիներ: «Ամբողջ ճա՛ապարհի
ընթացքում նրանց երկար ու զիլ «վոյ-վոյները»,—ինչպես վկայում է
հիշատակարանը,—անընդհատ հնչում էին մինչև Աղջէդաղի սարերը»[32],
գրում է «Մուրճի» հոդվածագիրը: Հավանաբար ավաչները բարձր ձայ-
նով «կանչել են» և ոչ թե երգել սովորական եղանակով, մի հանգա-
մանք, որ հիշեցնում է վիպասանքի դարաշրջանի «թիվ ասելը»:

Անցյալ դարի վերջին քառորդում Զեյթունի ազատագրական հե-
րոսամարտերի շուրջ ստեղծվում են նոր երգեր, որոնք տարբերվում
էին վերը քննարկված երգերից: Հայոց հասարակական-քաղաքական
կյանքում կատարված տեղաշարժերը իրենց դրոշմն են դնում այդ եր-
գերի բնույթի ու կենցաղավարման հանգամանքների վրա:

Երգերի պատմական հենքը մնում է դարձյալ Զեյթունի ազատա-
գրական պայքարը, որի նշանակությունը դուրս էր եկել զուտ տեղա-
կան շրջանակներից և ձեռք բերել համազգային հնչողություն: Այս
իրողությունն իր հերթին անդրադառնում է նոր երգերի վրա, որոնք
ստեղծվում էին բացառապես հայերենով, տարածվում Հայաստանի բո-
լոր շրջաններում, բավարարելով առաջին հերթին ազգային հստակ
ինքնագիտակցության հասած ու ազատագրական պայքարի գաղա-
փարներով համակված խավերի հասարակական-գեղարվեստական
պահանջները:

---

[32] «Մուրճ», 1901, № 11, էջ 865:

Երգերի հիմնական կորիզը հայտնի է հետևյալ վերնագրերով. «Երգ Զեյթունի»[33] («Արևն էլավ, զեյթունցիներ»), «Երգ զեյթունցվոց»[34] («Զեյթունցի ենք, ժայռի ձագ ենք»), «Զեյթունցիք»[35] («Զեյթունցի ենք մենք քաջալունք»): Նշված երգերն ունեն նաև տարբերակներ, սակայն բոլորը հավանաբար սերում են «Արևն էլավ, զեյթունցիներ» և «Զեյթունցի ենք, ժայռի ձագ ենք» սկզբնատողով երգերից, որոնց հեղինակը զեյթունցի Հարություն Չագրյանն է, Զեյթունի կռիվների մասնակից, ըմբոստ մի անձնավորություն, հայտնի Զոլագ-վարժապետ մականունով: Զեյթունի մղած ազատագրական երկարամյա պայքարը ոգևշնչել է ոչ միայն նշանավոր բանաստեղծների, այլև ժողովրդական երգիչ-երգահանների, անհայտ ու հայտնի հեղինակների, որոնց երգեր դարձած բանաստեղծությունները տարածվել ու երգվել են ժողովրդի բանահյուսական կենցաղում իբրև ժողովրդական ստեղծագործություններ[36]: Ի տարբերություն «ավաչների», այս երգերը մեզ են հասել թե՛ դրավոր, թե՛ բանավոր ավանդությամբ:

Թվարկված երգերը վիպական-հերոսական ստեղծագործություններ են, իսկ սի փունջն ունի շեշտված քայլերգային բնավորություն:

Զեյթունի երգերում տեղ են գտել գովքի մոտիվներ: Ըստ որում, գովքի առարկան հերոսական արծվաբույնն է, ապա զեյթունցին, որը տվյալ պարագաներում ոչ թե որոշակի պատմական անձնավորություն է, այլ քաջության, ազատագրական պայքարի նվիրյալի, հայրենասերի խորհրդանիշ.

Կեցցե՛ Զեյթուն, ապրի՛ Զեյթուն,
Թող չտեսնե ստրկություն.
Քանի ունի ձեզ պես որդիք,
Կեցցե՛ Զեյթուն, ապրի՛ Զեյթուն[37],

Երգերում տեղ են գտել զեյթունցիների սպարտական կյանքի որոշ մանրամասներ, հայ հասարակական կյանքում գոյություն ունեցող որոշ սրամտություններ:

Ազատագրական պայքարի երգերի մի խումբն իր պատմական հիմքով կապվում է 1880-ական ու 90-ական թվականներին ասպարեզ

---

[33] Զեյթունցի, *Զեյթունի անցյալն և ներկայեն*, մ Ր, Փարիզ, 1903, էջ 79—80:

[34] «Նոր քնար հայկական», էջ 129—130:

[35] «Տաղարակ Տարոնո», Թիֆլիս, 1910, էջ 204:

[36] «Նոր քնար հայկական», էջ 181, 193: «Զեյթունի պատմագիրք», Բուենոս Այրես, 1960, էջ 802: «Երոխ Ջահրատի ողբերն ու հառաչները կամ նորա բեկբեկ քնարի տխուր արձագանքը», Ալեքսոլ, 1907, էջ 51—53 և այլն:

[37] «Վազգեն» էրփարան, Պոստըն, 1901, էջ 256: Զեյթունցի, նշվ. աշխ., մ Ի, էջ 79: «Տաղարակ Տարոնո», էջ 204:

Մտած հայրենասիրական կազմակերպությունների ու կամավոր խմբերի գործունեության հետ. Հիասթափված Բեռլինի կոնգրեսի արդյունքներից, հայ ժողովրդի լայն խավերի շրջանում ծնունդ առավ ազատական ուժերով, զինված պայքարի միջոցով ազատություն ձեռք բերելու մտայնություն: Այդ նպատակն էին հետապնդում ինչպես առանձին անհատներ, այնպես էլ հայրենասիրական կազմակերպությունները, որոնք նախ և առաջ ձգտում էին լուսավորել ժողովրդին, նպաստել ազգային ինքնագիտակցությունն ու ինքնապաշտպանությունը, ազգովին համախմբվելու ձգտումները: Այդ տեսակետից բնորոշ է Վարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպության գործունեությունը[38]. Չնայած կարճատև գոյությանը, «Պաշտպանը» նշանակալից ազդեցություն է գործել արևմտահայ ազատագրական շարժման ընթացքի ու հայ ազատագրական մտքի վրա ընդհանրապես:

«Ձայն մը հնչեց էրզրումի հայոց լեռներեն»[39] սկզբնատողով երգը նվիրված է «Պաշտպանի» գործունեությանը: Երգի տարբերակները, տարբեր ծավալներով ու տների տարբեր դասավորությամբ այսօր էլ կենդանի են ժողովրդի բանահյուսական կենցաղում:

*«Ձայն մը հնչեց» սկզբնատողով երգը հորինվել է կազմակերպության սկզբնական շրջանում և ըստ էության նրա ծրագրի բանաստեղծական արտահայտությունն է: Հայրենիքի ազատագրության հարցը թվում էր լուծելի և այդ կապակցությամբ ծնված ռոմանտիկ պատրանքները համակել էին կազմակերպության բոլոր անդամներին: Ըստ երգի տրամաբանության, արևմտահայությունը և վերջինիս միացած արևելահայ հատվածը կազմ ու պատրաստ սպասում են բաղձալի ազդանշանին, որը պետք է գնչի էրզրումից, ուր գտնվում էր «Պաշտպան հայրենյացը»: Էականը երգի մեջ համախմբվելու կոչն է և զինված **պայքարի ելնելու հորդորը.***

Ուսումն ու լույս-ազատություն, արդ քեզ են ընկեր,
Սուր, հրացան, եռանդ ռազմի պաշտպան անվեհեր[40]:

Կազմակերպության հայտնաբերումն ու նրա անդամների բանտարկությունն ինչ-որ չափով ազդում է երգի տարբերակների վրա, փոփոխություն են կրում նույնիսկ վերնագրերը՝ «Կարնո բանտարկյալներուն»[41]:

---

[38] Ի. Հովհաննիսյան, *Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները և Վարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը, Երևան, 1965:*

[39] *«Սոխակ», Լիակատար երգարան, Մոսկվա, 1890, էջ 220:* Ա. Բռուտյան, *Համկական մրմունջներ, 1898, էջ 82, 1901, էջ 96:* *«Նոր քնար հայկական», էջ 98 և ն:*

[40] Նույն տեղում:

[41] *«Սոխակ Հայաստանի», Մոսկվա, 1895, էջ 266:*

Արևմտյան Հայաստանի հայաշատ գավառներում անցյալ դարի 80—90-ական թվականներին իրենց գործունեությունն էին ծավալել նորաստեղծ հայդուկային խմբեր։ Այդ խմբերը կռվի բռնվելով անհամեմատ ուժեղ թշնամու՝ ոստիկանության, կանոնավոր զորքերի հետ, սովորաբար պարտվում էին, իսկ խմբի անդամները բանտարկվում ու դաժանորեն պատժվում։ Ա. Գոլոշյանին, Հ. Ագրիպպասյանին, Ս. Կուկունյանին, Չելլոյին նվիրված երգերում արտացոլվել են ազատագրական պայքարի վերը նշված առանձնահատկությունները։

Ա. Գոլոշյանը արևմտահայության ազատագրության գործի առաջին նվիրյալներից է։ 1883 թվականին նա թողնում է տուն, ընտանիք, կրթություն և Թիֆլիսից մեկնում Պարսկաստան, պարապում ուսուցչությամբ, այդ ճանապարհով փորձում լուսավորել, զենքի կոչել արևմըտահայերին։ Նրա հետ համագործակցել է վանեցի Հ. Ագրիպպասյանը։ Երկու երիտասարդներն էլ ոգեշնչված են եղել Րաֆֆու գաղափարներով. առաջինը նույնիսկ իրեն վերանվանել է Վարդան («Խենթ»)։ Ա. Գոլոշյանը, Հ. Ագրիպպասյանը և մի երրորդ անձ՝ վանեցի Կ. Գուլուքսըզյանը 1889 թ. Պարսկաստանից Մշո դաշտ անցնելիս՝ Սարկավագի հայդուկային խմբին միանալու նպատակով, Ջուխ-Կյատուկ լեռնանցքում կռվի են բռնվում. առաջին երկուսը էղոհվում են, Կ. Գուլուքսըզյանին հաջողվում է փախչել[42]։ Այս դեպքը հիմք է տվել «Ջուխ-Կյատուկ»[43] երգի ստեղծմանը, որի բնագիրը վերագրվում է ազատագրական շարժման մասնակից, վանեցի Տ. Տերոյանին։ «Ջուխ-Կյատուկը» բազմիցս հրատարակվել է, հայտնի է նաև բանավոր ավանդությամբ։ Այն հորինվել է վանի բարբառով։ Հերոսների գործունեությունը երգում գրեթե չի արտացոլվել։ Պահպանելով սգո երգերի մոտիվները, արտահայտչամիջոցները, երգը ներկայացնում է հերոսների սպանության մանրամասները, դրվատում նրանց քաջությունը.

Ջուխա—Կյատուկ չայիր-չիման,
Ջուխում կորիճ ընտեղ մեռան.
Մեկն Օհաննես, մեկն ի Վարդան,
Հայու սրտիկն արին վերան[44]։

Այս շարքի երգերի մեջ հատկանշական են Սարգիս Կուկունյանին նվիրված ստեղծագործությունները. «Մնաք բարյավ, սուր-հրացան»[45].

---

[42] Լեո. Հայ հերոսներ, Երևան, 1920, էջ 41—72։

[43] «Վաղգեն» երգարան, էջ 16։ «Տատրակ Տարոնո», էջ 185—186։

[44] «Վաղգեն» երգարան, էջ 16.

[45] «Կուկունյան խմբի արշավանքը», Վիեննա, 1894, էջ 30—31։

Երկ ալևկոծ ծովի վրա»[46] *սկսվածքներով, ապա «Կուկունյանի երգը»*[47], *որոնք հայտնի են մեզ հասած գրավոր և բանավոր խմբագրումներով ու տարբերակներով: Երկրորդ երգի բնագրի սկզբնօրինակի հեղինակն է վարպետորեն բանաստեղծ Քրիստափոր Թադևոսյանը*[48]: *Ս. Կուկունյանին նվիրված երգերի լայն տարածումը մինչև մեր ժամանակները և ժողովրդի հիշողության մեջ մնալը պետք է բացատրել այն հիշատակներով, որ ունեն երգերը:*

Ս. Կուկունյանը, թողնելով Պետերբուրգի համալսարանը, 1890 թ. իր համախոհների հետ գալիս է Ալեքսանդրապոլ: Այստեղ նա 100 ռուբլանոց խումբ է հավաքում, զինավարժություններ անում, ծրագրեր մշակում արևմտահայության ազատագրության վերաբերյալ: 1890 թվականի սեպտեմբերին նա իր զինված խմբով փորձում է մտնել Ալաշկերտի հովիտը: Թուրք սահմանապահները նախազգուշացված են լինում արշավանքի մասին ու դիմավորում են խմբին կրակով: Հետարձի ճանապարհը փակում են ռուս սահմանապահները: Խումբը ստիպված է լինում պաշտպանվել: Երկուստեք լինում են սպանվածներ ու վիրավորներ: Ոմանք փախուստի են դիմում, շատերը բանտարկվում են ու դատապարտվում աքսորի ու տաժանակիր աշխատանքի: Կուկունյանը դատապարտվում է 20 տարվա տաժանակիր աշխատանքի: Հեռավոր Արևելքից նա վերադառնում է հայրենիք 1907 թ. ռուսական առաջին հեղափոխությունից հետո: Հակացարական գործունեության համար նա նորից բանտարկվում է: Մահանում է Օրյոլի բանտում, 1913 թ.[49]:

Ս. Կուկունյանին նվիրված երգերը չեն անդրադառնում նրա ազգամաքառաքական կարճատև ու ողբերգական գործունեությանը: Երգերը քնարական բնույթ ունեն. դրանց բանաստեղծական հերոսի հետևում են պայքարն ու մաքառումը: Նա անարգված է ու շղթայված, սակայն նրա հոգին տոգորված է աննկուն հավատով դեպի իր գործի արդարությունը, նա լի է իր գործի վեհության, ազնվության գիտակցությամբ: Եվ եթե նորից ազատություն ստանա, կշարունակի իր պայքարը: Դժվար չէ նկատել, որ երգը իր գաղափարներով սերում է «Տաղ ի Ռոստոմ-բեգից»: Հետագա տարիներին ազատագրական պայքարի երգերում բանտի, աքսորի, կախաղանի մոտիվները, հրաժեշտի, վերստին

---

[46] «Վազգեն» երգարան, էջ 478—479:

[47] «Արյան ձայներ», երգարան, Թիֆլիս, 1906, էջ 83:

[48] «Քր. Թադևոսյանի բանաստեղծությունները», Մոսկվա, 1899, էջ 45:

[49] Ս. Կուկունյան, Վերջին օրերս Սախալինում, Բաքու, 1910: Վ. Պարսամյան, Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, Երևան, 1967, էջ 329: «Հայ ժողովրդի պատմություն», հ VI, Երևան, 1981, էջ 235, 236:

կռվի պաշտ ժամերու, վիրաւին հայրենիքի ազատագրութեանը նվիրվելու արտասպրութեանները ավելի շեշտված են դրսևորվում «Կուկունդանի երգը» ստանվում է երգի հերոսի կյանքի հաչորդ փուլին՝ աքսորին, տաժանակիր աշխատանքին և իր վրա ակնհայտորեն կրում է «Կուկունդ» երգի ազդեցությունը։

Տաժանակիր խաբերի գործունեության հիմնական շրջաններից Մշո դաշտը, Սասունն ու Վասպուրականն էին։ «Մուշ, ա՛խ իմ հայրենիք»[50], «Ես Կարապետն եմ մշեցի»[51], «Ողբ»[52], «Քամին էկավ էրան-էրան»[53] ակրնատողերով երգերի հորինման նախապատմությունը Մուշում Մշո դաշտում ծավալված ազատագրական դրիվների մասնակիցների մատնության, բանտարկության, դատապարտության դեպքերն են. 1892—93 թթ. նման փաստեր հայտնի են։ Թվարկված երգերը վիպական որոշ գծերով օժտված քնարական ժողովրդական ստեղծագործություններ են՝ հորինված Մշո բարբառով։ Տպագիր աղբյուրներում դրանք ներկայացված են իբրև «ողբեր», «կոծեր»։ Նման բնութագրության համար հիմք են ծառայել երգերի թե՛ ձևը, թե՛ բովանդակությունը, որը հիրավի ողբերգական է։ Ընդհանուր գծերով ներկայացվում է Մշո հայության քաղաքական-տնտեսական իրավիճակն ու դրանից բխող եզրակացությունը. «Քանց գերի ապրել, լավ է մեզի մահ»։

Սասնո ու Սասնո հայության ճակատագիրը հար և նման է Զեյթունի ու Մշո հայության ճակատագրին։ Սասունն էլ ունեցել է իր հերոսական ռազմական երգերը՝ հորինված տեղական երգիչների կողմից, տեղական բարբառով, երբեմն նաև քրդերեն։ Այդ երգերը Սասունում, ինչպես Մշո դաշտում, կոչվել են շեր, հորինելը՝ «շեր կապել», մի երևույթ, որը գալիս է դարերի խորքից և որի վերաբերյալ հիշատակություն ունի VII դարի պատմիչ Հ. Մամիկոնյանը[54]։ Սասունում ընդունված է եղել շեր կապել հատկապես քաջությամբ աչքի ընկած, հայրենիքի համար զոհված հերոսների մասին։ Նման ստեղծագործությունների որոշ նմուշներ հայտնի են գրավոր աղբյուրներից[55]։ Այսպես մեզ հասած մի երգ պատմում է XIX դ. առաջին կեսին Սասունում ինքնապաշտպանողական կռիվների մասնակիցներ, կազմակերպիչներ, իրենց խիզախությամբ աչքի ընկած Միր-Սասոյի, Միր-Գալեի, Տեր-Քաջեի մասին։

---

50 «Արձագանք», 1893, № 133։

51 Նույն տեղում։

52 «Արձագանք», 1894, № 49։

53 «Արարատ», 1896, № 12, էջ 556։

54 Հովհան Մամիկոնյան, Պատմություն Տարոնո, երևան, 1941, էջ 247։

55 «Մուրճ», 1895, № 2, էջ 247։

Սասնո հայութիւնը դարեր շարունակ ինքնապաշտպանական կռիվներ է մղել թուրքական իշխանութիւնների և թշնամի քոչվոր ցեղերի դեմ։ Մինչև 1892—93 թթ. նա պահպանել է իր համեմատաբար անկախ դրութիւնը։ Ըմբոստ սասունցիները դիմադրութիւնը շարունակում էին, ճիշտ է, ոչ նախկին չափերով, մինչև 1915 թ.։

XIX դ. և դարասկզբին Սասունում տեղի ունեցած ռազմաքաղաքական անցքերի շուրջ ստեղծվել ու մեզ են հասել, մասամբ գրավոր աղբյուրներից, մասամբ էլ բանավոր ավանդութիւնով, մի շարք երգեր. «Ախու երգը»[56], «Տալվորիկցի կտրիճ»[57], «Չէն օր գլուխն հողու հավասար էլ դրուկ»[58], «Խիանցիք, ընկավ հավար»[59], «Կտրիճ սասունցիք»[60], «Սասունցոց գանգատը»[61], «Սասունի պատերազմը»[62], «Սասունցոց երգը»[63] և այլն։

Սասնո երգերը տեղական պատմական երգեր են։ Ստեղծված լինելով գերազանցապես 1890—94 թթ. Սասնո աբյունահեղ կռիվների ազդեցութիւնով, նրանք բնութագրում են Սասնո հայերի ընդհանուր քաղաքական ու տնտեսական կացութիւնը, արտացոլում են այդ կռիվների մի շարք էական կողմերը, այս կամ այն չափով անդրադառնում կռիվների դրդապատճառներին ու հետևանքներին։

Սասնո հայութեան և թուրք կառավարական զորքի ու քրդական ցեղերի 1890—94 թթ. ընդհարումները հավաստի գծերով են ներկայացված «Սասունի պատերազմը» ժողովրդական վիպական երգում։ Ճիշ է այն, որ կառավարական զորքերը հարձակումները սկսում են ամռանը, երբ պետք է հավաքվեր բերքը՝ սասունցիներին սովի մատնելու նպատակով, և՛ դենքի պակասութիւնը, սասունցիները կռվում էին տեղական արտադրութեան զենքերով, քարերով ու փայտերով, չունեին զինամթերք, և՛ այն, որ նրանց դրսից օգնութիւն խոստացան և ոչ մի օգնութիւն չհասավ, և՛ վերջապես խաղաղ բնակչութեան կոտորածը, շեն գյուղերի թալանն ու ավերումը։ «Սասունի պատերազմը» երգում արտահայտված է անցյալ դարի 90-ական թվականներին հայկական որոշ

---

[56] Ա. Բուռյան, նշվ. աշխ., 1898, էջ 137։ Ա. Մխիթարյան, Տաղեր և խաղեր, Ալեքսոլ, 1900, էջ 95—97

[57] «Արձագանք», 1893, № 133, 1894, № 108։ Ա. Բուռյան, նշվ. աշխ., 1898, էջ 99—101։

[58] «Մուրճ», 1895, № 2, էջ 263

[59] «Արձագանք», 1894, № 150։

[60] Ա. Բուռյան, նշվ. աշխ., 1898, էջ 87—88։

[61] Նույն տեղում, 1898, էջ 194։

[62] Նույն տեղում, 1898, էջ 85—87։

[63] «Բազմավէպ», 1901, էջ 132։

շրջաններում առկա այն մտայնությունը, թե քրիստոնյա պետություններ՝ «Ջանպարտելի Ռուսն ու Անգլիան», օգնության ձեռք են մեկնելու հայերին։

Սասնո երգերում հիշատակված են մի շարք անհատների անուններ, որոնք աչքի են ընկել այն ողբերգական ժամանակներում, իրենց կյանքը չեն խնայել հանուն հայրենի լեռնաշխարհի ազատության ու անկախության. Գելու իշխան Պետոն, Գրգեն, Գրգեի հարս Շաքեն, Սասունում գործող գործիչներ Միհրան Տամատյանը, Համբարձում Բոյաճյանը։ Սասնո ռազմի երգերը վիպական-հերոսական երգեր են։

Հայրենիքի պաշտպանները երգերում ներկայացվում են իբրև անձնազոհ, խիզախ, արիասիրտ հերոս անհատներ։ Ըստ որում այդ անհատները կոչվում են ուղղակի սասունցի, ներկայացնում են ավելի շատ սասունցու հավաքական, ազգագրական կերպար, քան որևէ իրական պատմական անձնավորության։ Այդ առումով ուշագրավ է «Տալվորիկցի կտրիճ»[64] երգը։ Երգի սկզբնօրինակի հեղինակը վերը նշված Մ. Տամատյանն է։ Ի տարբերություն արդեն քննարկված Սասնո տեղական ռազմի երգերի, այս ստեղծագործությունն ունեցել է համազգային գործածություն և ընդհանուր պատմական հիմք Երգի լեզուն արևմտահայ գրականն է, համեմված Սասնո բարբառին հատուկ որոշ արտահայտություններով Երգի վերնագրի ընտրությունը՝ «Տալվորիկցի կտրիճ», պատահական չէ. Տալվորիկ սարը Սասնո լեռներից ամենաանառիկն է, տալվորիկցիները՝ ամենաքմբոստներն ու ամենաքաջը՝ սասունցիների մեջ։ Վտանգի պահին Տալվորիկի անմատչելի այրերում էին ապաստան գտնում սասունցիները։

«Տալվորիկցի կտրիճը» քաջության, հերոսության ու ազատության հիմն է։ Երգը ներկայացնում է այն բնական, հասարակական ու կենցաղային պայմանները, որոնցում ծնվում, անվում ու հասակ է առնում տալվորիկցի կտրիճը, որոնք նպաստում են նրա՝ իբրև կտրիճ տղամարդու, անհատի կազմավորմանը։ Տալվորիկցին սովոր է չարքաշ կյանքի, նրա համար հարստությունն ու վայելքները արժեք չունեն։ Նա ազատիկ է մանկուց, ղենք գործածել սովորելը նրա համար ինքնանպատակ չէ, ազատ ապրել, ազատ մեռնել, ահա տալվորիկցու բաղձանքը։

Երբոր բացի աչքս այս աշխարհ,
Ազատ տեսա մեր սար ու քար.
Մինչև փակեմ աչքս ի խավար,
Պիտի չկոխե հոս ոտք օտար[65]։

---

[64] Ա. Բռւտյան, նշվ. աշխ., 1898, էջ 194։

[65] Ա. Բռւտյան, նշվ. աշխ , էջ 194։

Երգի մի շարք տարբերակներն ունեն կրկնվող տուն, որը կոչվում է հորդորակ և որն արտահայտում է պայքարի հորդոր, համախմբվելու կոչ.

Հայ աղբըրտիք, վայ աղբըրտիք,
Տալվորիկի զավակ եմ քաջ,
Ազատության սիրույն համար
Եկեք դեպ ինձ, հառա՜ջ, հառա՜ջ[66],

Որոշ տարբերակներում առկա Զեյթունին վերաբերող տողերը բացահայտում են սասունցիների համերաշխությունը Զեյթունի հետ իբրև ազգային-ազատագրական պայքարի օջախի։

Վասպուրականում ու Շատախում 80—90-ական թվականներին տեղի ունեցած ինքնապաշտպանական, պարտիզանական կռիվների, զինված ընդհարումների վերաբերյալ հորինվել են մի շարք երգեր. «Ջոա-Կյատուկ»[67], «Վարագա սար բացվե սուսուն»[68], «Շատախու սարեր անուշ զոզան»[69], «Վանեցոց երդ»[70], «Խաբար տարեք Հարին, Մարին»[71], «Կռվեցեք, տղերք, կռվեցեք քաջ-քաջ»[72], «Խանասոր»[73] և այլն։

Թվարկված երգերը բուն ժողովրդական ստեղծագործություններ են (բացի վերջին երկուսից)՝ հորինված Վանի բարբառով։ Դրանք տեղական պատմական երգեր են, վիպական բնույթի, օժտված վիպական երգերին հատուկ հուզական շեշտված լիցքերով տոգորված կրկնակներով։ Նրանցում ներկայացվում է ոչ այնքան այս կամ այն զինված ընդհարումը, այլ ընդհարման հետևանքը, որը մշտապես ողբերգական է լինում։ Հիշատակվում են զոհված «կաչաղների» անունները, նրանց սպանության որոշ մանրամասները և դրանց ազդեցությունը շրջապատի վրա։ Այս երգերում հատկապես ընդգծվում է Վասպուրականի ու Շատախի հայոց քաղաքական, տնտեսական դժնի կացությունը։ Եվ ապա համիդիե զորքի վայրագությունները և միամտաբար այն միտքն են արտահայտում, թե հայոց կաթողիկոսը կարող է փրկել դրությունը։

Երգերում նուրբ համադրությամբ զուգակցվում են ազգային կյանքից վերցված արյունոտ պատկերները բնության պատկերներին.

---

[66] «Նոր քնար հայկական», էջ 14։
[67] «Վազգեն» երգարան, էջ 574։
[68] «Արձագանք», 1897, № 3։
[69] Նույն տեղում։
[70] Ա. Բուռատյան, նշվ. աշխ., 1904 էջ 79։
[71] «Արձագանք», 1895, № 14։
[72] «Վազգեն» երգարան, էջ 531։
[73] Նույն տեղում, էջ 484։

Տոնյա-գյալին ոլոր-մոլոր,
Ութ հատ կաչաղ արին բյուլոր,
Արևն առե խալ պատուխան,
Ակո, քյո չալագներ եկան[74]։

«Կովեցեք, տղերք, կովեցեք քաջ-քաջ» և «Խանասոր» երգերի հիմքում նույնպես ընկած են տեղական՝ Վասպուրականում տեղի ունեցած արյունալի ընդհարումները, սակայն դրանցում ևս պատմականությունը դրսևորվում է ընդհանուր գծերով։ Երկու երգն էլ ունեցել են համազգային կենցաղավարում, որին նպաստել են ինչպես երգերի լեզուն՝ արևելահայ գրականը, այնպես էլ երգերի հենքը կազմող դնպքերի համազգային արձագանքները։

«Կովեցեք, տղերք...»-ը քայլերգային հերոսական ստեղծագործություն է։ Այն կոչում է պայքարի, քաջությամբ, արիությամբ ազատությունը նվաճելու և պաշտպանելու, իսկ եթե վիճակված է մեռնել, ապա մեռնելու կռվի դաշտում՝ ազնիվ մահով։

1895—96 թվականներին Վանի ինքնապաշտպանական կռիվների մի խումբ մասնակիցներ, ապավինած եվրոպական հյուպատոսների երաշխավորությանը, 1896 թ. ամռանը թողնում են Վանը, որպեսզի անցնեն Պարսկաստան։ Ճանապարհին նրանք պավտդաբար շրջապատվում են քրդական մարդիկ ցեղի կողմից Առնաուլ-Խանասոր կոչված վայրում, տեղի է ունենում մարտ, բոլոր հայ հերոսամարտիկները զոհվում են։ Առաջին երգը ստեղծվել է այս ողբերգական անցքի կապակցությամբ իսկ «Խանասոր» երգում հիշատակված դինված ընդհարումը տեղի է ունեցել 1897 թ. ամռանը, դարձյալ Խանասոր վայրում Այս անգամ նախահարձակ են լինում հայերը։ «Խանասորը» դինված ընդհարումը պատկերում է իրրև արդեն ավարտված իրողություն, որում հաղթանակը հայ ֆիդայիների կողմն էր Անտարակույս, երգում դնպքի իրական նշանակությունը չափազանցված է, ինչպես և ընդունված է վիպական երգերում ընդհանրապես

* * *

Ազատագրական պայքարի երգերի մի ամբողջ շարքին հայ ժողովրդի բանահյուսական կենցաղում հայտնի է «Ղարաքուշին (Ֆիդայիների) երգեր ընդհանուր անվամբ

Հայդուկ բառը նախնական կյանք ունի ոչ թե դարձից անցյալ դարի վերջին առանձնյակներում, Թուրքական դաժան լծի դեմ պայքարի ելած

---

[74] Նույն տեղում

մտրակ նշանակությամբ։ Այն փոխ է առնված բալկանյան ժողովուրդների պատմական փորձից, բառը նույն իմաստով գործածական է, հատկապես Բուլղարիայում, Հարավսլավիայում։ Հայդուկ գրական փոխաոուցյանը դուզահեռ հայկական կյանքում գործ են ածվել «կաչաղ», Ինչպի ժողովրդական մտածողությամբ իմաստավորված բառերը, որոնք ծագում են ավազակ, ապստամբ, անձնազոհ բառերից։ Թուրքական տիրապետության դեմ ոտքի ելած հունական ժողովրդական վրիժառուներին նույնպես կլեֆտ՝ ավազակ, էին անվանում։ Մեծանուն վիպասան Րաֆֆին մտադիր է եղել «Կայծերը» վերնագրել «Հայդուկանի», և վեպի 1-ին տպագրության սկզբում տեղադրել է մի փոքրածավալ, բայց ուշագրավ առաջաբան «Հայդուկներ» վերնագրով, որը հայ իրականության մեջ տվյալ պատմաքաղաքական երևույթի վերաբերմամբ խոր և բնորոշ գնահատականն էր։ «Հայդուկը բնական արտահայտությունն է բռնակալության լծի տակ ճնշված, հարստահարությունից տանջված և յուր մարդկային բոլոր իրավունքները կոլցրած ժողովրդի կյանքի,— գրում է Րաֆֆին։— Հայդուկը ստրուկի բողոքն է իշխողի դարբաոության դեմ... Հայդուկը հասարակ ավազակից որոշվում է ալեհավորապես նրանով, որ նա ոչ թե հափշտակության ագահությունից դրդված կամ հանգամանքներից ստիպված է գործադրում իր արտանահել արհեստը—այլ նրա սրտի հետ կապված է խորին ազգային ոգայնունք և աղատության բաղձանք»[73]։

Համամիկ տպագիր աղբյուրներում, հատկապես մասնայան գործածության համար նախատեսված ևրկարաններում հայդուկաբար եղելին նշանակալից տեղ հատկացնելը, նրանց՝ որոշակի ռազմական իրագործություններում օգտագործելու մասին վկայությունները և ապա ժողովրդի բանահյուսական ևրկացանկում ահնչ մեր ժամանակները գնդատելը խոսում են հայդուկային ևրգերի կենցաղավարման համազգային շրջանակների մասին։

Հայդուկային ևրգերի գեղարվեստական մասը ստեղծվել է զրկանաց հոգեվիճակում։ Դրանց հեղինակները մեծ մասամբ աղատագրական շարժման ճնշված կանգնած անհատներ են, հաճախ ոչ պրոֆեսիոնալ բանաստեղծներ, անհայտ աշուղ-ևրգահաններ։ Բուն ևրգերի ընագրերը չեն էլ բանասիրական կատարելությունից զրանք արժեք են ստանում և իրենցով, ևլ աժշտական ու կիրառման միասնության մեջ։ Ըստ էրության հատկապես նշանակալից ևրգերի կիլոտական կողմը ևրգերի նպատակն է եղել ոտքի հանել, պայքարի կոչել ժողովրդին՝ թոթափելու բռնակալի լուծը։ Եվ եթե դիտելու լիներ

---

[73] Րաֆֆի, Երկեր հ. IX, Երևան, 1964, էջ 316։

պատմամշակութային հայեցակետով հայդուկային երգերը բանահյուսական ստեղծագործություններ են հենց խոսքային, երաժշտական ու կիրառական միասնությամբ։

Հայդուկային երգերը հերոսական հայրենասիրական երգեր են։ Հայտնի և անհայտ հայդուկների գործունեությունը երգերում գնահատվում, իմաստ է ստանում հայրենիքի, մայր ժողովրդի ազատության մատուցված ծառայության, նպաստի տեսակետից։ Պովքի ու փառաբանության են արժանանում հայդուկների քաջությունը, անձնազոհությունը, տոկունությունը, ռազմական հմտությունը, հատկանիշներ, որոնք իր սպաս են դրվում հայրենիքի ազատության գործին։

Հայդուկային երգերը պատմական երգեր են, թեև դրանց հերոսը որոշակի անհատ չէ, կամ չի զգացվում նրա այդպիսին լինելը։ Երգերի այս շարքը ուղղակի ազատագրական պայքարի ամբողջական ընթացքի ծնունդն է։

Հայդուկային երգերի մեջ մեծ թիվ են կազմում առանձին նշանավոր հայդուկների գործունեության ու սպանության շուրջ հորինված ստեղծագործությունները։ Ուշագրավ են «Արաբոյի երգը»[76], «Աղբյուրջան»[77], «Սևրոբ-փաշի հիշատակին»[78], «Աղբյուր»[79], «Սոսեի երգը»[80], «Գևորգ Ջավուշի երգը»[81], «Անդրանիկին»[82] և այլն։ Թվարկած երգերի հերոսները իրենց անձնական կյանքով, հայրենասիրական գործունեությամբ վայելել են ինչպես իրենց զինակից-ընկերների, այնպես էլ հայ ժողովրդի լայն խավերի սերն ու հարգանքը, բարոյական ու նյութական աջակցությունը, ներշնչանքի աղբյուր դարձել թե՛ նշանավոր ստեղծագործողների, թե՛ ժողովրդական երգիչ-երգահանների համար։ Երջանիկ զուգադիպությամբ ժողովրդական վիպական հերոսի գաղափարական պատկերացումները համընկել են պատմական իրողությունների հետ։

Արաբոյին, Սևրոբին, Գևորգ-Ջավուշին, Անդրանիկին և այլ հերոսներին նվիրված երգերը գովքի երգեր են։ Որոշակի փաստերի, դեպքերի հենքի վրա, որոնք տրվում են ընդհանուր գծերով, արժեքավորվում է հերոսների գործունեությունը, իսկ չափանիշը ազատագրական

---

[76] Ա. Բրուտյան, նշվ. աշխ., 1898, էջ 95—96։ Ա. Մխիթարյան, նշվ. աշխ., էջ 39—40։

[77] «Վազգեն» երգարան, էջ 253—254։

[78] «Արյան ձայներ», էջ 74—75։ ՀԱԻԲԱ, FF, IV։ 1465։

[79] «Վազգեն» երգարան, էջ 422։

[80] ՀԱԻԲԱ, FF, V։ 2008։

[81] «Արյան ձայներ», էջ 124։

[82] Հեղինակի անձնական արխիվ։

պայքարին նրանց բերած նպաստն է, հայրենիքին մատուցած ծառայությունը. նրանց մարդկային առաքինությունները իմաստավորվում են այդ չափանիշով։ Երգերում Անդրանիկը անվանվում է «հայրենիքի տեր ու պաշտպան», իսկ Սերոբի մասին ասվում է.

Քաղցր հայրենիքդ
Բնավ չթողիր.
Մինչև վերջին շունչ,
Աղբյուր ջան,
Պատերազմեցիր[83]։

Սա մի մոտեցում է, մի գիծ, որ գալիս է հնուց, որի առկայությունը դիտվեց կիպարիտ զորավարին նվիրված տաղում, ավելի ցայտուն դրսևորվեց Մ. Լոռիս-Մելիքովի, Ա. Տեր-Ղուկասովի և ապա ազատագրական շարժման մասնակից ժողովրդական հերոսների անվան շուրջ ստեղծված բանահյուսական ստեղծագործություններում, մասնավորապես երգերում։

Գովքի երգերում ընդգծվում, փառաբանվում են հերոսների արտաքին բարեմասնությունները և ապա քաջությունը, նվիրվածությունը, ընկերասիրությունը, պատվասիրությունը, նրանց ընդունակությունը կռվի կոչելու, ոտքի հանելու ժողովրդին և Սերոբին տրված «Աղբյուր» մականունը հավանաբար հենց այդ հանգամանքով է պայմանավորված։

Բոլոր աշխարհ-ում.
Լավեց քո անուն,
Առյուծ քաջարի
Աղբյուր ջան
Հայոց աշխարհի[84]։

Նա է «խեղճ ժողովրդին հոգի ու հույս տվել», «քնած սրտեր է բորբոքել», «երիտասարդների համար դռներ բացել»։ Հերոսները երգերում ներկայանում են իբրև պատվախնդիր, ազգային արժանապատվության գիտակցությամբ լի, ազատասեր, հպարտ - անհատներ։

Այս հինգ դար է մեզ կսպանեն,
Բռնի կրոնքեն կհանեն,
Մեր կին, աղջիկները կըտանեն,
Պատիվ ունեցողը թող գա[85]։

---

[83] «Վազգեն» երգարան, էջ 253։

[84] Նույն տեղում։

[85] «Արյան ձայներ», էջ 38։

Թուրքական դաժան լուծը թոթափելու մղած ելքը նրանք գտնում են զինված պայքարի մեջ.

Կամ կռվենք, պարպենք վերջանանք,
Կամ զենքով փրկություն ստանանք[86],

երկտողը իրեն հորդոր, կոչ, հանդես է դալիս «Հայրենասերի կոչ» վերնագրով երգի բոլոր տարբերակներում, որը նվիրված է եղել Սերոբին, հետագայում կապվել է Անդրանիկի անվան հետ։

Նկրբող-երգերում հիշատակություններ, արձագանքներ են պահպանվել հերոսների մղած կռիվների, նրանց անօրինակ քաջագործությունների, ռազմական համագործակցության մասին։ Վիպական գունավորումով են ներկայացվում Սերոբի ու նրա կնոջ, մարտական ընկերուհու՝ Սոսեի համատեղ կռիվները, Սերոբի և Անդրանիկի բարեկամությունը։

Դե՛, հասիր, Անդրանիկ, շուտ հասիր օգնության,
Սերոբ կզոհվի ի սեր ազգության,
Դե՛, հասիր, վրեժ առ չար թշնամուց դաժան,
Որ ազատ ապրի մեր մայր Հայաստան[87]։

Հերոսների ռազմական հմտության, զինվորական ատաղձի ու քարոյական բարձր արժանիքների գնահատությունը ժողովուրդը տալիս է նրանց մեծարելով փաշա տիտղոսով։ Նշենք, որ Զեյթունի հերոս-հրամանատարները ևս կրում էին նույն տիտղոսը։ Այդ օտարածին բառը կարծես թե սպառիչ կերպով ամբողջացնում է հերոսների դնահատականը ու գործածական է նաև մեր օրերում։ Ուշադրավ է Սերոբի կարծիքը իրեն տրված փաշա անվան առթիվ. «Մենք փաշաներուն ու աղաներուն դեմ կկռվենք, այժմ ես փաշա՞ ըլլամ»[88]։

Հերոսներին օժտելով իրական ու վիպական առաքինություններով, երգերը կարծես թե ավելի ազդեցիկ են դարձնում նրանց մարդ ավելի են մեծացնում կորստի չափն ու նրա պատճառած ժողովրդական ցավն ու վիշտը։ Իրական հանգամանքները դասավորվում են այնպես, որ Սերոբը, Գևորգ-Ջավուշը, մյուսները զոհ են դնում մատնության. նրանց թունավորում են, խփում են թիկունքից։ Բայց դա հատապատասխանում է ժողովրդի վիպական հայացքին. հերոսները չեն մեռնում բնական մահով։ Երգերում արտացոլվել են հերոսների վախճանի

---

[86] Հեղինակի անձնական արխիվ։

[87] Նո յն տեղում։

[88] Ե. եպ. Չիլինկարյան, *Փնջիկ բարոյական առածներու և հիշատակ առակներդութեանս, Երուսաղեմ, 1928, էջ 101։*

Նետ կապված որոշ անցքեր։ «Գլուխդ Բաղեշ և մարմինդ ի Մուշ»[89], ասվում է Աղբյուր Սերոբի ողբերգական մահվան շուրջ հյուսված երգում։ Ինչպես հայտնի է, Սերոբին թունավորում են Սասնո Գեղաշեն գյուղի բնակիչ Ավոն ու իր եղբայրը, որոնց տանը 1899 թ. ապաստանել էր Սերոբը իր խմբով։ Թունավորված Սերոբին ու իր խմբին, հանգամանքներին նախապես տեղյակ, թշնամին պաշարում է։ Սերոբը, ուժասպառ ու թուլացած, անկարող է լինում որևէ դիմադրություն ցույց տալ։ Խմբին պաշարող քրդերի ցեղապետ Բշարե-Խալիլը կտրում է սպանված հերոսի գլուխն ու ուղարկում Բաղեշի վալուն։ Բաղեշի առաջնորդ Ե. եպ. Չիլինկարյանը Սերոբի գլուխը թաղում է տեղի Ս. Կարմրակ Եկեղեցու բակում, որը ուխտատեղի է դառնում տեղի հայության համար[90]։ Այսպիսով նրա մարմինը մնում է Մուշում (Սասունում), իսկ գլուխը թաղվում Բաղեշում։ Անձնական վրեժխնդրության զոհ է գնում և մյուս հերոսը՝ Գևորգ Չավուշը։ Ըստ մի վարկածի, նա զոհ է գնում իր իսկ ջոկատի զինվոր Մուքոյի գնդակին[91]։ Դեպքը տեղի է ունեցել 1907 թվականին։

Երգերը տեղեկություններ են պահպանել նաև Բշարե-Խալիլի ճակատագրի վերաբերյալ։ Ըստ դեպքերի տրամաբանության, նա պետք է որ պատժվեր։ «Ալեր եկան Ճովռալեն»[92] երգում ասվում է հետևյալը.

Գավառա սար բացվավ ներգիզ,
Պարոն կտրեց Խալիլի վիզ։

1899 թ. աշնանը Անդրանիկը ի կատար է ածում ֆիգայիների դատավճիռը. կտրում է Բշաբե-Խալիլի գլուխը՝ դրանով լուծելով ավազ ընկերոջ ու մարտական բարեկամի վրեժը։

Հայդուկային երգերի մի այլ խումբ թեև պատմական հենքի վրա է կազմավորվել, սակայն չունի նախորդների որոշակիություն։ Նույնիսկ այն դեպքերում, երբ այս կամ այն երգը ծագել է որևէ դեպքի հիմքի վրա, նվիրված է եղել այս կամ այն աո՞ատին, հետագա գործածության ժամանակ այդ հանգամանքը մատնվել է մոռացության, սթագնվել է, ինչպես որ այդ տեղի է ունեցել Արաբոյին նվիրված երգի հետ։ Երգի կրած փոփոխությունները դրսևորվել են նաև վերնագրերում. «Արաբոյի երգ»[93], «Քաջ Արաբոյի երգ»[94], «Մշեցու երգ»[95],

89 «Արյան ձայներ», էջ 74։

90 Ե. եպ. Չիլինկարյան, նշվ. աշխ., էջ 65—110։

91 Հեղինակի անձնական արխիվ։

92 ՀԱԻԲԱ, FF, V։ 2018։

93 Ա. Բռուտյան, նշվ. աշխ , 1898, էջ 95—96։

94 Ա. Մխիթարյան, նշվ. աշխ., էջ 39—40։

95 «Վազգեն» հրգարան, էջ 316։

«Զարթիր լաո»[96] և այլն։ Երգի սկզբնօրինակի հեղինակն է Ֆահրատը։ Երգի հերոսը՝ Արաբոն, որը հայտնի հայդուկ էր ու ազդեցիկ խումբ ուներ, չի գիտակցվում այլևս իբրև իրական պատմական անհատ, այլ հանդես է գալիս իբրև ազատամարտիկի խորհրդանիշ։ Արաբոյի խմբի գործունեության ասպարեզը Մշո դաշտն էր, Սասունը։ 1893 թվականին Արաբոն Կովկասից վերադառնալիս հանկարծակի իր խմբով շրջապատվում է Բուլանըխի Գյալեռաշ ձորում. անհավասար կռվի մեջ բոլորը զոհվում են[97]։

«Արաբոյի երգը» հորինված է ավանդական օրորների նմանությամբ, միայն հակառակ նպատակադրմամբ՝ արթնացնել, ոտքի հանել լաոյին, զենքի կոչել։ Օրորում կենտրոնական դեմքը մայրն է. նա որդուն պատմում է հայության թշվառ վիճակի մասին ու առաջարկում զենքի դիմել, կշտամբում նրան սին հույսերով տարվելու ու պատեհ առիթը բաց թողնելու համար.

Սասունա սար փչե ուր հով,
Ջուր ե՞ք քնիս երազներով...[98]

Մայրը մատնացույց է անում Արաբոյին, հորդորում որդուն՝ հետևելու Արաբոյի օրինակին՝ զինվորագրվել հայրենիքի ազատագրության գործին.

Դեն իրիշկե՛, գալող ո՞րն է,
Քաջ Արաբո բաղդավորն է[99]*,*
Կարմիր իրիցանց զինվորն է...

Երգի հիմնական տրամադրությունը բացահայտված է «զարթիր լաո, մեռնիմ քըզի» կրկնակի միջոցով, որը պայքարի ելնելու կոչ է՝ ուղղված ողջ հայությանը։ Խնդրո առարկա երգը առավել տարածված, բազմաթիվ տարբերակներով գոյատևած ստեղծագործություններից է, որ կենդանի է նաև մեր օրերում։

Պատմական ընդհանուր բնավորությամբ հայդուկային երգերը թերևս նպատակահարմար է քննել ու մեկնաբանել ամբողջությամբ վերցրած։ Այդ ամբողջական զանգվածը հնարավորություն է ընձեռում

---

[96] «Ծաղկեփունջ» երգարան, Թիֆլիս, 1907, էջ 141։

[97] «Մուրճ», 1895, № 7, 1017—1018։ «Հայ ժողովրդի պատմություն», հ. VI, էջ 238—240։

[98] Ա. Բռուտյան, նշվ. աշխ., 1898, էջ 96։

[99] Նույն տեղում։

մտովի ստեղծելու հայրենիքի ազատագրության գործին նվիրված մարտիկի կերպարը, հետևելու նրա կյանքի տարբեր փուլերին, նրա հոգեվիճակներին. հրաժեշտի պահին, կռվի դաշտ մեկնելիս, իր եղբայրներին զենքի կոչելիս, բանտում, կախաղանի դեմ, մարտի դաշտում, վիրավոր ու սպանված։

«Ի զեն», «Մենք պետք է կռվենք», «Հրավեր ազատության», «Մարտի կոչ», «Ի մարտ», «Հորդոր» և այլ նման վերնագրերը հուշում են, որ խոսքը զենքի դիմելու, պայքարի ելնելու մասին է։ Ըստ որում կոչը, հորդորը ուղղված է առաջին հերթին «վախուկի» մեջ ընդարմացած հայ երիտասարդներին։ Նշված վերնագրերով ստեղծագործություններում որոշակիորեն այն միտքն է ընդգծվում, որ արևմտահայության վիճակը թելադրում է միայն մի ելք՝ կռվել, այլ ուղիներ չկան

Լացով չենք կարող փրկել Հայաստան,
Մայրիկ, ինձ պետք է ձի, սուր, հրացան,
Ջեռներս ծալած չեմ կարող նստել,
Ես կուզեմ կռվել, ես կուզեմ մեռնել[100]։

Հայդուկային երգերում առկա են հրաժեշտի մոտիվները։ Վճիռը կայացված է. երիտասարդը մեկնում է կռվի դաշտ, մեկնում է իր գործի արդարության գիտակցությամբ, վճռական ու հաստատակամ պահի իր ընտրած ճանապարհը։ Սակայն հայդուկն էլ ունի մարդկային թուլություններ. բաժանումը նրա հոգում թախիծ է ծնում, մանավանդ ապագան անորոշ է ու վտանգներով հղի։

Հայրենիքի ազատագրության գործի նվիրյալը, ինչպես և ամեն մի պինվոր ունի իր ուխտը, իր երդումը։ Հայդուկներն, իրոք, ունեցել են իրենց երդումը, որը մշակել է Անդրանիկը և որը հետագայում լույս տեսավ նրա «Մարտական հրահանգներում»[101]։ «Հայ զինվորի երդումը», «Հայդուկի վերջին ուխտը» և այլ երգերում արտացոլվում է հայ պինվորի երդման էությունը, որի նշանաբանն է եղել «Մահ կամ ազատություն» արտահայտությունը։

Երգերում այս կամ այն չափով տեղ են գտել հայդուկների տագնապալից, չարքաշ պարտիզանական կյանքի պատկերները։ Հայդուկը լանոնավոր բանակի զինվոր չէ. նա զուրկ է օթևանից, զենքի, հագուստի ու ուտելիքի հոգսը նա ինքն է քաշում։ Նրա կյանքն անցնում է բնության գրկում, նա պատսպարվում է անմատչելի այրերում ու անտառներում։

---

[100] «Արյան ձայներ», էջ 63։

[101] Անդրանիկ, Մարտական հրահանգներ, Ժնև, 1907։

Իմ եղբայրս է իմ մաուզեր,
Եվ իմ զարդս են փամփուշտները,
Իմ սիրելիս՝ իմ սարերս են,
Եվ իմ ընկերս՝ իմ մոսին[102]*։*

Մարտի դաշտում, զրկանքներով ու տագնապներով լի կյանքում հայդուկը կարիք է զգում հոգեկան նեցուկի, տրամադրությունը խթանող երգի, և ոչ միայն հայդուկը։ Հայդուկային քայլերգերը մարտական ոգի են ներարկել ունկնդրին, զինվոր լինի նա, թե սովորական մարդ։ «Քայլերգ»[103]*, «Լո, լո, լո—Սիփանա սեգ սարի վրա»*[104]*, «Քայլերգ մարտական»*[105] *ստեղծագործությունները ծառայել են վերոհիշյալ նպատակին։ «Լո, լո, լո—Սիփանա սեգ սարի վրան» հաղթական ներքող է ու կարող է միայն ոգեշնչում հարուցել, իսկ «Քայլերգը» չհուսահատվելու, տոկունորեն իր պարտքը կատարելու հորդոր է.*

Ահա բացվեց աղոթարան,
Վատահ, ընկեր, առաջ քալենք,
Զինվոր ենք մենք արդարության,
Եվ անփորձ տեղ կհասանենք[106]*։*

Եվ վերջապես երգերի մի խումբ ներկայացնում է հայդուկի կյանքի ողբերգական վախճանը։ Երգերում նա մերթ վիրավոր ընկած է մարտի դաշտում, թշնամիներով պաշարված, մերթ արյունաքամ ու ապանված։ Եվ բոլոր դեպքերում հայդուկը պատրաստ է տանել ամեն տեսակի փորձություն, միայն թե կատարվեր նրա նվիրական իղձը. «Հայրենիքիս ազատություն տեսնեմ ու մեռնեմ»—ասում է նա «Նպատակիս գեթ մի մասը կատարվեր» երգում[107]*։*

Նախորդ էջերում առիթ եղավ խոսելու բանտի, աքսորի ու կախաղանի մասին, երևույթներ, որ տեղ են գտել այս երգերում։

Հայդուկային երգերի մինչ այժմ քննարկած խմբերը հորինված են առաջին դեմքով՝ հայդուկի անունից։ Մի ուշագրավ խումբ երգեր հորինվել են հայդուկի մոր, կնոջ, քրոջ, սիրած աղջկա անունից։ Ըստ որում երգերի նպատակադրումը, երևույթների արժեքավորումը դարձյալ տրված է հայրենիքի, հայ ժողովրդի ազատագրության գործի շահերի ելակետից։ Երգերի այս խումբը քնարական բնույթ ունի, մեծ

---

102 *«Արյան ձայներ», էջ 101։*

103 *«Արյան ձայներ», էջ 8։*

104 **Ս. Բուռնյան**, *նշվ. աշխ., 1898, էջ 78—79։*

105 *«Նոր քնար», էջ 223։*

106 *«Վազգեն» երգարան, էջ 438։*

107 *«Արյան ձայներ», էջ 112։*

մասամբ արտացոլում են հայդուկի կյանքի սկզբնական շրջանը և ողբերգական վախճանը։ Այդ տրամադրություններն են արտահայտվում «Մշեցի մոր աղաչանքը»[108], «Զինվորի մոր խոսքը»[109], «Պարզիր, աղբյուր»[110], «Ալ ու ալվան ես հագել»[111] և այլ ստեղծագործություններում։

«Մայրն իր որդուն»[112], «Նահատակներու հիշատակին»[113], «Այրիին ողբը»[114] և մի շարք այլ երգեր նվիրված են հայդուկի եղերական վախճանին։ Ըստ որում ոչ թե ներկայացվում է սպանության փաստը, այլ այն, թե ինչ ազդեցություն է գործում այդ փաստը հայդուկի սիրած կնոջ, հարազատների հոգեկան աշխարհի վրա, ինչի է նրանց մղում, ինչ ապրումներ է հարուցում։ Այսպես, հայդուկի կինը, առնելով սիրած ամուսնու զոհվելու լուրը, արդար վրիժառության զգացումներ է պատվաստում որդու հոգում։

Հայդուկային երգերում, չնայած նրանց պատմական հենքի ընդհանուր բնույթին, պահպանված է թե՛ ժամանակաշրջանի, թե՛ աշխարհագրական միջավայրի հավաստիությունը։ Երգերում տեղ են գտել հպանցիկ հիշողություններ այս կամ այն հայդուկի կյանքի ինչ-ինչ դրվագների վերաբերյալ։ Հաճախ հիշատակվում է Անդրանիկի անունը. նա մնում է ուշադրության կենտրոնում իբրև ազատագրական կռիվների կազմակերպիչ ու հրամանատար։

Ազատագրական պայքարի երգերը կյանքի կոչեցին որոշակի գաղափարական միտվածություն ունեցող այնպիսի պատմական հերոսների, ինչպիսիք են Վարդան Մամիկոնյանն ու Վասակ Սյունեցին։ Ակնարկների միջոցով կարծես թե վերակենդանանում է V դարի փորձություններով լի ճակատագրական ժամանակաշրջանը, նժարի վրա դրվում օրհասական, անհավասար գոտեմարտի ելած նվիրյալների ու տաքուկ անկյուններում պատսպարված անհատների մարդկային, քաղաքացիական արժանիքները։ Ստեղծվում են նոր երգեր Վարդանին նվիրված՝ «Իմ հայրենյաց հոգի Վարդան». որոշակի ենթատեքստով, աչքի առաջ ունենալով Վարդան մականունով գործող նորօրյա հերոս հայորդիներին։ Որոշակի նպատակադրմամբ էր երգվում «Աղասին և ընկերք յուր», երգը (հեղինակ՝ Ղ. Փիրղալեմյան)։ Բաֆֆին Աղասու

---

108 «Վազգեն» երգարան, էջ 390։

109 Նույն տեղում։

110 «Տատրակ Տարոնո», էջ 195—197։

111 «Ազգային ընդարձակ երգարան», էջ 94։

112 «Վազգեն» երգարան, էջ 476—477։

113 «Հայուն երգարան», հ. Ա, Կ. Պոլիս, 1911, էջ 192։

114 Նույն տեղում, էջ 191։

գործունեությունը համարում է հայդուկային շարժման բնորոշ օրինակ, իսկ Աբովյանին՝ առաջին հայ գրողը, որ գրական հերոս է դարձրել հայդուկին։

Ազատագրական շարժման շուրջ ստեղծված երգերը, մասնավորապես հայդուկային երգերը, բանահյուսական կյանք պարգևեցին նոր վիպական հերոսների՝ օժտված ժողովրդական մտածողությամբ, աշխարհընկալման նոր, ժամանակակից մակարդակին հատուկ գծերով։ Վիպական նոր հերոսների կերպարները ամբողջանում են նրանց մասին ստեղծված բանահյուսական այլ ժանրերի ընձեռած հնարավորություններով։ Մեր աչքի առաջ ստեղծվում են վիպական փնջեր, որոնք խմբավորվում են այս կամ այն հերոսի շուրջ ոչ թե իրական հիմքով, այլ ժողովրդի բանաստեղծական մտածողությամբ ու երևակայությամբ։

Ազատագրական պայքարին նվիրված երգերի լեզուն միատարր չէ. տարբերակվում են հետևյալ խմբերը. բարբառով հորինված ստեղծագործություններ, արևելահայ գրականին և արևմտահայ գրականին մոտ ստեղծագործություններ։ Բարբառով հորինված ռազմի երգերում լայնորեն օգտագործվել են ավանդական երգարվեստի արտահայտչամիջոցները, խորհրդանիշները, կառուցվածքային առանձնահատկությունները։ Մինչդեռ մյուս երգերի լեզուն չի փայլում հղկվածությամբ։

* * *

Ռազմի երգերի հաջորդ խումբը ծնունդ է առել ու կազմավորվել I համաշխարհային պատերազմի տարիներին։ Հայտնի է, որ այս անգամ էլ հայերը գործուն մասնակցություն ցուցաբերեցին պատերազմի ռուս-թուրքական ռազմաճակատում։ Կովկասյան բանակի շարքերում հազարավոր հայ զինվորների հետ միասին կռվում էին մի քանի կամավորական գնդեր (շուրջ 10 հազար մարդ) տեղանքին քաջածանոթ, փորձառու, հայդուկային կռիվներում թրծված հրամանատարների գլխավորությամբ։ Այս պատերազմում ևս հայ ժողովրդին առաջնորդում էր Արևմտյան Հայաստանի ազատագրության գաղափարը.

«Հազար ինը հարյուր տասներկու թվին»[115], «Վաղարշակի երգը»[116], «Ալաշկերտցիք բարձան գացին»[117], «Սիփանա չորս կողմ սար էր»[118],

---

[115] ՀԱԻԲԱ, Ե. Լալայանի ֆոնդ, FA IV։ 3229—3231։

[116] Նույն տեղում, 3225—3227։

[117] Ս. Մելիքյան, Հայ ժողովրդական երգեր և պարեր, հ. I, Երևան, 1949, էջ 241։

[118] ՀԱԻԲԱ, FF VII։ 5625.

«Բայբուրդ»[119], «Ղարաբաղի մեջ ինքս ծնվեցի»[120] ստեղծագործությունների պատմական հենքը ռուս-թուրքական ռազմաճակատում տեղի ունեցած կռիվներն են, հայ ժողովրդի արևմտյան հատվածի զանգվածային կոտորածները, հայկական բնակավայրերի կողոպուտն ու ավերումը: Ըստ որում երգերի մի մասը գրի է առնվել պատերազմի օրերին, մի մասը՝ հետագա տարիներին, որոշ տարբերակներ ժողովրդի հիշողության մեջ մնացել ու հասել են մեր օրերը: Հորինված լինելով գնալքերի անմիջական ազդեցությամբ, երգերն ունեցել են աշխարհապրական ու ժամանակագրական առումով սահմանափակ գործածություն: Նրբերը վիպական ընդգծված հատկանիշներով, պատմական ստեղծագործություններ են և շարունակում են նախորդ շրջանների նմանատիպ երգերի ավանդները թե՛ ձևի, թե՛ բովանդակության տեսակետից:

Այս շրջանի երգերում ռազմական գործողությունների, ընդհարումների պատկերները միահյուսված են ավերի, կոտորածի, թալանի պատկերների հետ: Դրանց առկայությունը դիտվեց նաև նախորդ շրջանների ռազմի երգերում, սակայն այս խմբում այդ երևույթը գերակշռում է ու դառնում երգերի հիմնական ատաղձը: Եվ ապա, հուսապրող, ոգեշունչ տրամադրությունները խնդրո առարկա երգերում իսպառ բացակայում են: Բուն ռազմաքաղաքական իրադրությունը նման տրամադրությունների համար սնունդ չի տվել: Հիշատակության է արժանի 1918—19 թթ. ֆրանսիական բանակի կազմում գործող կամավորների միջավայրում վերաիմաստավորված ու նույն միջավայրում կենցաղավարող «Կամավորներուն երգը»[121]: Պահպանվել են երգերի նմուշներ, հորինված ժողովրդի սիրելի հերոսների սպանության կապակցությամբ, ինչպես օրինակ Ա. Սուքյասնի[122], Քեռու հիշատակին[123] նվիրված ստեղծագործությունները. վերջին երգը կենցաղավարում է նաև մեր օրերում:

Այս շարքում ուշագրավ է Մազմանովին նվիրված երգը[124]: 1920 թվականի աշնանը Հայաստանի հանրապետության կառավարությունը առանց փոքր-ինչ դիմադրության թուրքական բանակին հանձնեց Կարսը: Կարսը կարևոր ռազմաստրատեգիական ամրություն էր, և Կարսի

---

[119] Նույն տեղում, FF *VII 8196*: FF *IV: 5561*:

[120] Նույն տեղում, FF *VI: 7573*:

[121] S. Պոյաճյան, *Հայկական լեգիոն, Ուսերթատուն, 1965, էջ 116—126*:

[122] *Հեղինակի անձնական արխիվ*:

[123] *ՀԱԻԲԱ*, FF *IV: 5543*:

[124] *Հեղինակի անձնական արխիվ*:

անկումը հայրենասեր զինվորականությունը դիտում էր իբրև ազգային խայտառակություն ու նվաստացնող գործողություն։ Այդ մտայնությանն էր հարում և փնդապետ Մազմանովը, որը Կարսի հանձնման օրը ինքնասպանություն գործեց[120]։ Երգը ներկայացնում է հայ-թուրքական հարաբերությունները 1920 թ., քաղաքական իրադրությունը և այդ ֆոնի վրա Մազմանովի ինքնասպանությունը։ Երգի համակրանքը անվերապահորեն Մազմանովի կողմն է։

* * *

1887 թվականի պարտադիր զինվորական ծառայության վերաբերյալ օրենքի կիրառության կապակցությամբ հայոց մեջ ծնունդ առան բազմաթիվ քնարական երգեր, որոնք ժողովրդի բանահյուսական կենցաղում հայտնի են սալդաթի (որոշ դեպքերում՝ ասքյարի) խաղեր անվամբ, որոնց անվանում ենք զինվորի երգեր։

Զինվորի երգերը պատմական-քնարական երգեր են։ Նրանք նույնպես հորինվում ու կենցաղավարում են որոշակի ռազմաքաղաքական իրադարձությունների շուրջ։ Սակայն այդ հատկանիշը նրանցում դրսևորվում է ընդհանուր գծերով։ Զինվորի երգերը արտացոլում են ոչ թե բուն իրադարձությունները, այլ վերջիններիս ազդեցության հետևանքները զինվորի ու զինվորի հարազատների ներքնաշխարհի վրա, այն տրամադրությունները, որոնք հարուցում է զինվորական ծառայությունը։

Նախասովետական շրջանի զինվորի երգերի մեր ձեռքի տակ եղած բոլոր նմուշները համակված են թախծոտ տրամադրությամբ, դժգոհությամբ, բացասական վերաբերմունքով դեպի ցարական բանակն ու զինվորական ծառայությունը։ Անվանի բանագետ Մ. Աբեղյանը գրում է. «Երկար դարերի ընթացքում զինվորական ծառայություն չկատարած ժողովրդի համար դա համարվում էր մի աղետ, որը և անդրադարձել է գյուղական սիրո երգի մեջ»[126] (խոսքը խաղիկների մասին է)։

Հայկական ժողովրդական զինվորի երգերը, երբ համեմատում ենք ռուսական նմանատիպ երգերի հետ, դիտվում են որոշակի ընդհանրություններ։ Միատեսակ երևույթները ծնում են միանման ապրումներ ու տրամադրություններ։ Զինվորական ծառայության նկատմամբ բա-

---

[125] Ա. Մնացականյան, *Հոկտեմբերը և Հայաստանը* («Հայրենիքի ձայն», 1967, № 42)։

[126] Մ. Աբեղյան, *Խաղիկներ*, Երևան, 1940, էջ 18։

յասական վերաբերմունքը թե՛ հայ, թե՛ ռուս ժողովուրդների կյանքում ուներ իր պատճառները։ Երկարատև զինվորական պարհակը իր ողջ ծանրությամբ ընկած է եղել աշխատավոր գյուղացիության ուսերին։ Ռուսական ժողովրդական զինվորի երգերի մի ստվարաթիվ խումբ վշտոտ տրամադրություններ արտահայտող ստեղծագործություններ են, իսկ ողբի երգերի մի ենթատեսակը կոչվում է ռեկրուտյան (рекрутские причитания). «Հարկադիր ամուսնությունը, ամուսնու, հոր կամ եղբոր բանակ ճանապարհելը, հարազատ մարդու մահը, ահա այն երեք կարևոր վշտալի իրադարձությունները, որոնք անցյալում տարել է գեղջկուհին և որոնք հիմնովին քեկել են նրա ողջ կյանքը»,— գրում է ռուս ժողովրդագետ Կ. Չիստովը[127], ռուսական ողբերգերը քննելիս։ Ամբողջ խնդիրն այն է, որ ժողովուրդներն իրենց կամքից անկախ ներգրավվում էին իրենց շահախնդրություններին անհարիր ռազմաքաղաքական իրադարձությունների ոլորտները։

Մինչ Ալեքսանդր III ցարի զինապարտության օրենքի հրատարակությունը (1887 թ.) հայկական կյանքում զինվորական ծառայության որոշակի ավանդներ ու փորձ գոյություն ուներ։ Սակայն օրենքի կիրառությունը հանդիպեց դիմադրության։ Դատելով մամուլի տեղեկություններից՝ եղել են զինված ընդդիմության փորձեր, խուսս տալու՝ «զաչաղ ընկնելու» դեպքեր[128]։ Նոր-Նախիջևանի հայությունը նույնիսկ փորձեց արքունիքում պաշտպանել Եկատերինա II-ի կողմից իրեն տրված առանձնաշնորհումները, որն անցավ ապարդյուն[129]։ Բոլոր դեպքերում զինվորագրության օրենքի գործադրությունը բերում էր իր հետ էական ոչ-դրական փոփոխություններ հայ ժողովրդի տնտեսական-հասարակական կյանքում, ընտանեկան-բարոյական հարաբերությունների մեջ։ Եվ ապա ինքը՝ ապագա զինվորը, մուտք էր գործում մի խորթ ու անծանոթ միջավայր։ Զինվորական առօրյան, կենցաղը, լեզուն օտար ու դժվարամատչելի էր նահապետական գեղջուկ միջավայրից դուրս եկած հայ երիտասարդի համար։

Զինվորի երգերը հորինվել ու տարածվել են մեծ մասամբ Արևելյան Հայաստանում ու Անդրկովկասի հայաբնակ վայրերում։ Թուրքական կայսրության մեջ ապրող հայերը զրկված էին բանակում ծառայելու իրավունքից. փոխարենը հարկ էին վճարում (37,5 ղուրուշ)։

---

[127] «Причитания» (подготовка текста Б. Чистовой и К. Чистова), Л., 1960, стр 6.

[128] *«Արձագանք», 1888, № 27, 1892, № 85, 1894, № 4։*

[129] Ե. Շահազիզ, *Նոր Նախիջևանը և նորնախիջևանցիք («Ազգագրական հանդես», գ. IX, էջ 78)։*

երիտթուրքական հեղափոխությունից հետո հայերը ևս ընդգրկվեցին զինվորական ծառայության մեջ, որը տևեց մի կարճ ժամանակամիջոց։ Արևմտահայերի բանահյուսական կենցաղում էլ կազմավորվեցին զինվորի երգեր, որոնցից մի քանի նմուշ պահպանվել է։

Զինվորի երգերում զինվորական ծառայությունը դիտվում է իբրև հայ ժողովրդի ազգային ու բարոյական հիմքերը քայքայող, վնասակար երևույթ։ 90-ական թվականներին ստեղծված զինվորի երգերում զինապարտության օրենքի գործադրման մեջ մեղավոր է ճանաչվում Ամենայն հայոց կաթողիկոսը՝ Մակարը։ Այս իրողությունը երգերում ներկայացվում է զուգորդված քաղաքական նշանակություն ունեցող մի այլ իրողության՝ հայկական դպրոցները փակելու հետ։

Զինվորի երգերն ամբողջությամբ վերցրած անդրադառնում են զինվորագրությանն ու զինվորական կյանքին իր բոլոր փուլերով ու յուրահատկություններով։

Զինվորի երգերի մի խումբը հայտնի է վիճակի (վիճակահանության) անունով։ Դրանցում տեղ են գտել զինվորագրության սկզբնական շրջանին առնչվող ինչ-ինչ պաշտոնական արարողություններ, մասնավորապես վիճակահանությունը, որով կատարվում է ապագա զինվորի ընտրությունը։

Մտա եկեղեցին, վառի մոմերը,
Ձեռքս դցի, հանի տվի նոմերը,
Կերթամ, կերթամ, սալդաթ եմ կերթամ[130]։

Երգերում որոշակի հակակրանքով հիշատակվում են «կանցիլարը», «մետրիկականը», «այլուն-փայլուն թղթերը» ու դրանց ձևակերպումները։ Վիճակահանությանը հաջորդում է ֆիզիկական պիտանիության հաստատում՝ ըստ ընդունված չափերի։ Զինվորի երգերը պահպանել են որոշ հիշողություններ այդ գործողությունների վերաբերյալ, հավանաբար ապագա զինվորի հոգեբանության վրա այդ գործողություններն ազդել են իրենց արտասովորությամբ.

Տարին ստանոք խոթեցին,
Լանքերս, բոյերս չափեցին...[131]

Նույնը վերաբերում է նաև զինվորական համազգեստին, ուտելիքին, որոնք խորթ են եղել հայ երիտասարդի ճաշակին։

Զինվորի երգերի հիմնական մոտիվներից է հրաժեշտի մոտիվը։ Զինվորը հեռանում է իր հարազատ միջավայրից, ընտանիքից ու հայրե-

---

[130] ՀԱԻՄԱ, FF VII։ 5617։

[131] «Ազգագրական հանդես», գ. IX, էջ 79։

նիրից մի քանի տարով, երբեմն և ընդմիշտ։ Բնականաբար, նրա հրաժեշտն էլ համակված է տխուր տրամադրությամբ, հաճախ նաև անհուսությամբ։ Հրաժեշտի մոտիվների առանցքում զինվորի մայրն է, նրան է ուղղված զինվորի վերջին խոսքը. «Մայրիկ, ես գնում եմ, դուն կեցիր բարով...»[132] և ավանդական սովորությամբ խնդրանքը՝ «հալալ անել» իրեն տված կաթը։ Վերհիշյալ տողը իմաստային աննշան տարբերակումներով մտնում է մի շարք զինվորի երգերի կառուցվածքը։ Հրաժեշտի մոտիվներում մյուս անձնավորությունը, որին ուղղված է զինվորի խոսքը, սիրած կինն է, սիրած աղջիկը։ Զինվորի հիմնական պատվիրանը վերաբերում է իր «ձեռքը ծոցում», «անճար» յարին։

Մայրիկ ջան, մայրիկ,
Ինչի՞ բերեցիր,
Բալու էրեցիր,
Ասքար ղրկեցիր։
Լավ պահե յարս,
Մինչի իմ գալս[133]*,*

Սիրո մոտիվները զինվորի երգերում հանդես են գալիս հրաժեշտի մոտիվների հետ միահյուսված։ Այդ մոտիվները արտահայտում են իրական կյանքը իր բազմազան դրսևորումներով, արտացոլում որոշակի հոգեվիճակներ, զգացումներ։

Նորակոչիկների անունից հորինված երգերում սիրո մոտիվի էությունը բնորոշվում է անկատար մնացած ապրումներով ու չվայելած սիրո տվայտանքներով.

Սամավարը բերեք օդեն,
Նոր եմ եկե յարիս մոտեն,
Ջեմ կշտանա անուշ հոտեն[134]*։*

Զինվորի երգերում բացակայում են ռազմի թոհուբոհի պատկերները, մարտաշունչ, քայլերգային տրամադրությունները։ Բանակային կյանքը, պատերազմական իրադարձությունները ներկայացվում են անհատի հուզաշխարհում բեկված, իմաստավորվում մարդկային ճակատագրի վրա թողած ազդեցության տեսակետից։ Ըստ որում կացության անելանելիությունը, սեփական կյանքը տնօրինելու անզորությունր իր կնիքն է դնում երգերի վրա։ Այդ առումով առանձնանում են

---

[132] Կոմիտաս, *Ազգագրական ժողովածու, Հայ ժողովրդական երգեր ու պարերգեր, I, Երևան, 1950, էջ 126։*

[133] *ՀԱԻԲԱ, FA V։ 3598—3599։*

[134] *ՀԱԻԲԱ, FA V։ 3599։*

«Հասան Ղալա» երգի նոր՝ 1 համաշխարհային պատերազմի տարիներին առաջացած բազմաթիվ տարբերակները:

«Հասան Ղալան» պատկերում է զինվորի ճակատային կյանքի տարբեր իրավիճակները, դրանցից բխող հոգեվիճակները, ըստ որում զուգորդված հուզական նույնաբնույթ շերտեր կրող բնապատկերների հետ: Մարտի դաշտի պատկերը տրված է տիպական գծերով.

Հասան Ղալեն քար ու քրա,
Գյուլլեն մեջը կը ֆրոֆրա[135]:

Երգի տարբերակներում զինվորը մերթ հրացանը ձեռքին մարտընչում է, մերթ վիրավոր է, արյունաքամ, մերթ սրտից խոցված՝ սպանված, մերթ գերի.

Ես Օսեփն եմ արմըտլեցի,
Հասանղալու քով զարկվեցի,
Ջահել կյանքես շուտ զրկվեցի,
Մնաք բարով, ես գնում եմ[136]:

Զինվորի երգերում տեղ են գտել որոշ սոցիալական մոտիվներ. սոցիալական անհավասարության ու բողոքի տրամադրություններ: Զինվորագրության հիմնական ծանրությունը կրում էր աշխատավոր ժողովուրդը, հարուստները կարողանում էին ազատվել ծառայությունից անգամ դրամական հատուցումով[137]: Դարասկզբին հորինված «Սրև պիպավ Կողբա սարին» երգի տարբերակներում նորակոչիկը դժգոհում է.

Մեր արևը շատ կանանչ է,
Նաչալնիկը մեզ կը կանչե,
Քյասիբ տղին հեչ չի ճանչե[138]:

Սոցիալական անհավասարության գիտակցությունն ավելի է խորանում մեր դարի 10-ական թվականներին: Զինվորի երգերն են մուտք գործում «գլավնի», «պրիստավ», «սուդիա», «նաչալնիկ» և այլ նման նոր հասկացություններ: Իսկ պատերազմների ժամանակ մեծ չափերի հասնող զորահավաքները քայքայիչ ազդեցություն են գործում ժողովրդի տնտեսական կացության վրա. ցավով, ափսոսանքով են հիշա-

---

135 ՀԱԻԲԱ, FA V: 3211:

136 Գ. Հակոբյան, *Ներքին Բասենի ազգագրությունն ու բանահյուսությունը*, Երևան, 1974, էջ 343:

137 Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 19:

138 Ա. Բուռյան, նշվ. աշխ., 1901, էջ 225:

տակվում անավարտ մնացած աշխատանքները, վարն ու ցանքը, հունձն ու կալը։

Ասածներից հետևում է, որ գինվորի երգերում տեղ գտած բոլոր մոտիվների բովանդակությունը, տրամադրությունների ելակետը պատերազմի հակաբնական, հակամարդկային էության ժողովրդական մերժումն է։ Հայ ժողովուրդն իր պատմական ճակատագրի բերումով առավել սրությամբ է զգացել խաղաղության պահանջը։ Իր ամենօրյա ապրելակերպում հայ մարդը մաղթել է «թագավորներին հաշտություն, աշխարհին խաղաղություն, հացին էժանություն, ցավին-չոռին թանգություն»... Ազգային-ժողովրդական կերտվածքն օգնում է հասկանալու գինվորի երգերի խաղաղատիրական տրամադրությունները։ Ժողովրդական մտածողությամբ երգերում անեծքի ու անարգանքի են արժանանում պատերազմ հրահրողները՝ «գերմանը», «թուրքը»։ Նո՛յն եղանակով նզովվում են մեծամեծ զոհեր խլած բնակավայրերը, ինչպես օրինակ՝ Հասան-Գալեն. «Վերան դառնաս, Հասան-Գալա» և այլն։

Հատուկ ուշադրության է արժանի գինվորի երգերի մայրապաշտական մոտիվը, որի ակունքը ևս ազգային-ժողովրդական հոգեբանությունն է։ Երգերում, իր դժվարին կյանքի ոլորաններում, կռվի դաշտում, վիրավոր թե սպանված, գինվորը մտովին մոր հետ է։ Մայրը հաղորդակից է ու կարեկից նրա ցավերին։ Որդին էլ իր հերթին մի մտահոգություն ունի՝ իր մասին տխուր լուրեր հաղորդելով չվշտացնել հարազատներին, հատկապես մորը.

Ոչինչ չասեք անբախտ մորս,
Թաբար չտաք պառավ հորս,
Ծածուկ կասեք մեծ ախպորս[139]։

պատվիրում է իր երգ-նամակում։

Գինվորի երգերում պահպանվել են ինչ-ինչ արձագանքներ գինվորական գործիչների գործունեության, հիշատակություններ ռազմական գործողություններին առնչվող տեղավայրերի ու կռիվների վերաբերյալ. «Վարշավու դուզ», «Կարպատի լեռներ», «Գերմանու ֆռոնտ», «Թուրքի գրանից», Կարս, Օլթի, Մամա-խաթուն, Սարիղամիշ, Ռևանդուզ, Նիկոլայ թագավոր, Անդրանիկ, գեներալ Բարաթով, Էնվեր փաշա և այլն։

Գինվորի երգերն անդրադարձել են հայ ժողովրդի համազգային ողնաին, երգի ընձեռած շրջանակներում ճշմարտացի լուսաբանել I համաշխարհային պատերազմի դերը հայ ժողովրդի ճակատագրում։

---

[139] ՀԱԻԲԱ, FF II։ 6197։

* * *

Զինվորի երգերը մեծ մասամբ բարբառային-խոսակցական հայերենով հորինված ստեղծագործություններ են։ Ռազմական զբաղմունքն ու զինվորությունը սերտորեն առնչվում է ռուսական միջավայրին· երգերում տեղ են գտել ռազմական տեխնիկային ու զինվորական կյանքին բնորոշ բազմաթիվ ռուսերեն բառեր՝ հայերեն քերականական ձևերով։ Ուշադրության արժանի է սալդաթ բառը, որով բնութագրվում է ցարական բանակում պարտադիր ծառայության մեջ գտնվող զինվորը, իսկ երգերը՝ սալդաթի, մասամբ ասքյարի խաղեր, ի տարբերություն հայդուկի, ֆիդայու և հայդուկային երգերի։ Սահմանազատումը դիտվում է նաև կենցաղավարման շրջանակներում։

Նախասովետական շրջանի զինվորի երգերը ստեղծվել ու կազմավորվել են հայ ժողովրդական քնարական երգերի կայուն արտահայտչամիջոցների, խորհրդանիշների, կառուցվածքային ու բանաստեղծական տողերի հանգավորման եղանակների ու ձևերի օգտագործմամբ։ Զինվորի երգը ժողովրդական քնարական ավանդական երգի հարատևման մի փուլն է, նրա՝ նոր ժամանակների պահանջմունքների համեմատ նորոգված դրսևորումը։

Զինվորի երգերի ստեղծման ընթացքի վրա նշանակալից է հատկապես սիրո, պանդխտության ու հարսանեկան հրաժեշտի երգերի ազդեցությունը։ Զինվորը սիրած էակին գովերգում է սիրո երգերից փոխառնված մակդիրներով ու ամբողջական տողերով, հատվածներով։ Հնգեբանական հիմքի նմանությունը ծնում է նման արտահայտչամիջոցներ։ Նույնը վերաբերում է պանդխտության ու զինվորի երգերի աղերսին։ Երկու դեպքում էլ տեղի է ունենում քնարական հերոսի օտարում հարազատ միջավայրից։ Պանդխտության երգերում առկա պանդուխտ բառը զինվոր (սալդաթ) բառով փոխարինելով ստեղծվում է նոր՝ զինվորի, երգ։ Զինվորի երգերում հաճախ հանդես է գալիս պանդխտության բանաստեղծական խորհրդանիշ հանդիսացող կռունկը։ Զինվորի երգերում առկա հրաժեշտի մոտիվները կազմավորվել են պանդխտության ու հարսանեկան երգերի նույն մոտիվների ազդեցությամբ. այստեղ ևս որոշիչը մոտիվների հոգեբանական հիմքն է։ Հարսնացուն հայրական տանը հրաժեշտ է տալիս հետևյալ տողերով.

Մի լար, մայրիկ, մի լար,
Լալելուն ես եմ,
Կերթամ զարիպ-դուրբաթ,
Կորնչուն ես եմ[140]։

[140] Ա. Միխթարյան, նշվ. աշխ., էջ 118։

Նույն եղանակով, բայց ողբերգական շեշտվածությամբ հրաժեշտ է տալիս հարազատներին զինվորը.

Մի լար, մայրիկ, մի լար,
Լալողը ես եմ,
Կարմիր գյուլլի դեմ
Կայնողը ես եմ[141]։

Նախասովետական շրջանի զինվորի երգերը ժողովրդի բանահյուսական կենցաղում կենդանի էին նաև 20—30-ական թվականներին. այդ են վկայում այդ տարիներին կատարված գրառումները Հայաստանում ու Անդրկովկասի հայաբնակ վայրերում։ Այնուհանդերձ դրանք կենսունակություն չունեին, նրանք այդ և հետագա ժամանակաշրջանում վերամշակվեցին, նորոգվեցին իբրև զինվորի նոր երգեր։

* * *

1920-ական թվականներին Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո, նախորդ շրջանների ռազմի և զինվորի երգերին զուգընթաց, հորինվեցին ու ժողովրդի բանահյուսական կենցաղ մտան ռազմի ու զինվորի նոր երգեր։

Այս երգերի պատմական հիմքը սովետական իշխանության հաստատման համար մղվող կռիվներն են, ծառայությունը սովետական բանակում և ապա Հայրենական պատերազմի իրադարձությունները։ Սովետական շրջանի ռազմի ու զինվորի երգերը նոր պատմական հենքի վրա համադրում են նախորդ շրջանների ռազմի ու զինվորի երգերի ավանդները, օգտագործում դրանց ձևակառուցվածքային, լեզվաարտահայտչական միջոցները։ Ռազմական գործն ու զբաղմունքը, ծառայությունը բանակում իմաստավորվում են նորովի, դիտվում իբրև Հայրենիքի հանդեպ ունեցած քաղաքացիական պարտքի հատուցում։ Երգերը տոգորված են նոր հասարակական-քաղաքական բովանդակությամբ, հայրենասիրությամբ։

Ռազմի նոր երգերը նույնպես պատմական երգեր են։ Ինչպես նախորդ ժամանակաշրջաններում ստեղծված երգերը, սրանցում ևս վիպական, քնարական հատկանիշները դրսևորվում են ոչ համաչափ ու միանման. Սովետական շրջանի ռազմի ու զինվորի երգերի մեզ հասած ժառանգության մեջ դիտվում է երեք փունջ, որոնք հորինվել են հետևյալ իրադարձությունների շուրջ. քաղաքացիական կռիվներ ու սովետական

---

[141] ՀԱԻԲԱ, FF II։ 0007։

կարգերի հաստատում, կարմիր բանակ ու զինվորական ծառայություն, Հայրենական մեծ պատերազմ։

«Պուլեմոտներ կրակեցին բրանևիկից»[142], «Ղուկաս Ղուկասյան»[148], «Աղստաֆայից բերեցին լուրը»[144], «Ջախմախվից անցավ զորքը»[145], «Օրդուն էկավ սարի փեշեն»[146], «Ռուբենի երգը»[147] և այլ ստեղծագործություններ արտացոլում են Հայաստանի համար բախտորոշ նշանակություն ունեցող շուրջ մեկ տարում տեղի ունեցած ռազմաքաղաքական դեպքերը։ Այդ երգերում ընդհանուր գծերով ներկայացվում է Հայաստանի քաղաքական դրությունը 1920 թ. Մայիսյան ապստամբության նախօրյակին, ապստամբության ընթացքն ու իրադարձությունները, XI բանակի մուտքը Հայաստան և դրան հաջորդող ռազմաքաղաքական իրադարձությունները՝ փետրվարյան ավանտյուրան և նրա ճնշումը և այլն։ Այս շրջանում հորինվել ու կենցաղավարել են նաև որոշ քայլերգային բնույթի ստեղծագործություններ։ Վերը թվարկված երգերում բացահայտված հակամարտությունը էությամբ տարբերվում է հայ վիպական բանահյուսությանը բնորոշ հակամարտությունից։ Այստեղ այն ունի քաղաքական բովանդակություն, որը ներկայացնում են մի կողմից դաշնակ խմբապետները, դաշնակցական կառավարությունը, մյուս կողմից՝ աշխատավորական լայն խավերն ու նրանց պաշտպան բոլշևիկները, կարմիր բանակը։ Ըստ որում ժողովրդի համակրանքը կարմիր բանակի ու բոլշևիկների կողմն է։ Առաջինները արժանանում են ծաղրի ու անեծքի, երկրորդները՝ մեծարվում ու փառաբանվում են. նրանց սպանության պատճառած վիշտը պատկերվում է իբրև համաժողովրդական վիշտ.

Գործըդ ու անունըդ
Կապրի հավիտյան.
Կարմիր նահատակ՝
Անմահ Ղուկասյան[148]։

Նույն ելակետից երգերը արժեքավորում են Լենինի գործունեությունը։ Լենինի կերպարը, լենինյան թեման հայ բանահյուսության մեջ լուսաբանվել է բազմակողմանիորեն։ Նշենք, որ կան երգեր, որոնցում արտացոլվել է Լենինի ռազմաքաղաքական գործունեությունը, ինչպես

---

142 ՀԱԻԲԱ, FF I։ 2443։

143 «Հայկական խորհրդային ֆոլկլոր», Երևան, 1938, էջ 69։

144 ՀԱԻԲԱ, FF I։ 2601։

145 Նույն տեղում, 2502։

143 «Հայկական խորհրդային ֆոլկլոր», էջ 65։

147 Նույն տեղում, FF I։ 1839։

148 «Հայկական խորհրդային ֆոլկլոր», էջ 69։

օրինակ «Լենինի խաղը»[149] ստեղծագործության մեջ։ Ըստ երգերի Լենինն է կարմիր բանակի կազմակերպիչն ու զորահրամանատարը, նրա անմիջական ցուցումներով է կարմիր բանակը ազատագրել հայ ժողովրդին դաշնակ-մաուզերիստների տիրապետությունից։

Լենինին նվիրված ռազմի երգերում հիշատակվում են հավատարիմ լենինյաններ Լուկաշինի, Մյասնիկյանի, Կասյանի անունները։

1920—30-ական թվականներին ստեղծվում են մի շարք երգեր, որոնցում զինվորական ծառայությունը դիտվում ու գնահատվում է իբրև պատվի գործ, բանակը՝ իբրև ֆիզիկական ու մտավոր ընդունակությունների, դաստիարակման դպրոց։ Նման մոտեցումը տակավին ուկա էր նախորդ երգերում, այս դեպքում այն ավելի է խորանում, իմաստավորվում («Լենինական»[150], «Կարմիր բանակ յարս»[151] և այլն)։ Հին գովքի երգերի ավանդներով նոր գովքի երգեր են ստեղծվում՝ նվիրված կարմիր բանակի զորավարներ Բուդյոննուն[152], Վորոշիլովին[153]։ 20—30-ական թվականներին լայն ժողովրդականություն վայելող զորահրամանատարների ռազմական գործունեությունը այս ստեղծագործություններում գնահատվում է քաղաքական-տնտեսական նոր չափանիշներով, նրանք ներկայացվում են իբրև ունեզուրկ, աշխատավոր ժողովրդի զավակներ ու նույն խավի պաշտպաններ։

Սովետական շրջանի ռազմի և զինվորի երգերի գերակշիռ մասը վերաբերում է Հայրենական մեծ պատերազմին։ Երգերն ընդգրկում են պատերազմի ողջ ընթացքը՝ սկզբնական շրջանից մինչև հաղթական ավարտը։ Խնդրո առարկա զինվորի երգերը մասամբ այսօր էլ երգվում են։

Հայրենական պատերազմի սկզբնական շրջանի երգերը հայտնի են երկու հիմնական ցիկլով. «Կերչի երգը» («Կերչի հողը քար ու քոսա» սկզբնատողով) և «Սև ծովի ափին» սկզբնատողով։ Այս երկու վերնագրերի շուրջ խմբավորվում են մի քանի տասնյակի հասնող տարբերակներ՝ տարածված Հայաստանի գրեթե բոլոր շրջաններում ու Անդրկովկասի հայաբնակ վայրերում։ Երկու երգն էլ ստեղծվել են Կերչի, Սև ծովի, Սևաստոպոլի շրջաններում մղվող կռիվների հենքի վրա։

---

149 «Լենինը հայ ֆոլկլորի մեջ», Երևան, 1936, էջ 107։

150 «Էջմիածնի և Աշտարակի բանահյուսությունից», գրի առավ Ա. Նազարյան, «Հայ ազգագրություն և բանահյուսություն» (նյութեր և ուսումնասիրություններ), պր. 9, Երևան, 1978, էջ 115։

151 «Հայկական խորհրդային ֆոլկլոր», էջ 128։

152 ՀԱԻԲԱ, FF VII։ 5583։

153 ՀԱԻԲԱ, FF I։ 3699։

Երգերում հիշատակված վերոհիշյալ տեղավայրերում 1941—43 թթ. հայկական ազգային նորաստեղծ զորամիավորումները Սովետական Միության եղբայրական ժողովուրդների զավակների հետ կենաց ու մահու կռիվ էին մղում ֆաշիստական հորդաների դեմ: Այս առումով կերչյան և սևծովյան երգերը պատմական ստեղծագործություններ են, մի հանգամանք, որն արտահայտվում է ազոտ կերպով: Երգերը զերծ են ռազմապատմական անցքերի, առանձին անհատների գործունեության վերաբերյալ որևէ որոշակի, շոշափելի արտահայտությունից: Դրանք քնարական բնույթի երգեր են և ներկայացնում են պատերազմական իրադարձությունների գործած ազդեցությունը, բացահայտում այն ողբերգությունը, որ բխում է պատերազմից, տվյալ դեպքում այն կռիվներից, որոնց անդրադառնում են երգերը:

Երգերը համակված են թախծոտ տրամադրությամբ, մի հանգամանք, որը պայմանավորված է երգերի ստեղծման համար հող հանդիսացող հանգամանքներով: 1941—42 թթ. ձմռանը, կլիմայական չափազանց դժվարին պայմաններում, սովետական բանակի զորամասերը, անցնելով Կերչի նեղուցը, գրավեցին Կերչն ու Թեոդոսիան ու մտան Ղրիմի թերակղզին: Սակայն 1942 թ. մայիսին ստիպված եղան թողնել Ղրիմն ու ծանր կորուստներով վերադառնալ Սև ծովի կովկասյան ափերը: Նույն գործողությունը կրկնվեց 1943 թ. աշնանը, սակայն այս անգամ այն ավարտվեց հաջողությամբ: Երկու անգամն էլ ռազմական գործողություններին մասնակցում էին հայկական զորամասերը, որոնք նույնպես բազմաթիվ զոհեր կրեցին: Այսպիսով, ռազմաճակատի ընդհանուր անբարենպաստ դրությունը՝ պատերազմի սկզբնական շրջանն էր, աննախադեպ ավերածությունները, մարդկային զանգվածային կորուստները ստեղծեցին այն հասարակական, հոգեբանական միջավայրը, որում ձևավորվեցին կերչյան ու սևծովյան ցիկլերի ստեղծագործությունները.

Կերչյան երգերի հիմնական մոտիվները ուղղակիորեն սերում են «Հասան Ղալա»-ից: Հին երգից ամբողջական տներ, որոշ բառերի փոփոխությամբ մտել են նորի կառուցվածքը: Նոր և հին երգերում սիրո, կորստի, մահվան, մայրապաշտական, հրաժեշտի, խաղաղասիրական մոտիվների առաջացման մարդկային-հոգեբանական պայմանները նույնն են: Ինչպես և հին երգերում, կերչյան երգերի կենտրոնում ևս դինվորն է. նրա բնկալմամբ, արժեքավորմամբ են երգերում ներկայացվում բոլոր երևույթները:

Կերչյան և սևծովյան երգերի հիմնական մոտիվներից է հրաժեշտի մոտիվը: Կռվի դաշտ մեկնող դինվորի հրաժեշտը համակված է ցավով ու սխրությամբ:

Մի լար, մայրիկ, մի լար քույրիկ,
Հացողը ես եմ,
Գերմանացու թուխի առաջ
Գնացողը ես եմ[154],

Այդ տրամադրությանը զուգընթաց հանդես են գալիս նոր տրամադրություններ, հայրենասիրական ենթաիմաստ ունեցող երանգներով.

Ես վրեժն եմ բաշօղլեցի,
Կըռվելով առաջ գնացի,
Հայրենիքի զոյ գնացի,
Խապեք, մորըս, վիրավոր եմ[155].

Մարտի դաշտում զինվորը մտահոգվում է ոչ այնքան իր, այլ ընտանիքի, հարազատների ճակատագրով։

Մայրս թողի թունդրա բոցին,
Սիրած յարիս ձեռքը ծոցին,
Ազիզ բալես օրորոցին...[156]

Կերչյան և սևծովյան երգերում զինվորը հայտնվում է զուտ ռազմական տարբեր իրավիճակներում, որոնք նույնպես պատկերված են զինվորի հուզաշխարհի մեջ բեկված։ Զինվորի երգերի սևծովյան շարքում առավելապես գերակշռում է ծով նետվելու պատկերը։ «Ծովը նետվելը» սոսկ գեղարվեստական հնարանք չէ, այլ բազմաթիվ իրական փաստերի խտացված արտահայտություն։

Կերչյան ու սևծովյան շարքի երգերում զինվորը զոհվում է թշնամու դիրքերը գրոհելիս, իր մարտական պարտքը կատարելիս.

Կերչի ճակատում վիրավորվեցի,
Հրացանս ձեռքս առա, նորից կռվեցի...[157]

Ենդրո առարկա երգերում պահպանվել են պատերազմական անցքերի որոշ կցկտուր հիշողություններ։ Վիպական բնույթ ունեցող այդ հատվածներն ըստ էության ճշմարտապատում են ու համապատասխանում են պատմական դեպքերի ընդհանուր ոգուն։ Այսպես, հավասարի են կերչյան գործողություններին հայերի մասնակցության, ծովային դեսանտի, մարդկային մեծ կորուստների վերաբերյալ հիշատակությունները.

---

154 *ՀԱԻԲԱ*, FF *II։ 0501։*
155 *ՀԱԻԲԱ*, FF *IV։ 8041։*
156 *ՀԱԻԲԱ*, FF *II։ 0547։*
157 *ՀԱԻԲԱ*, FF *II։ 0457։*

Պարախոսը լցրին զորքը,
Ճամփա չկար անցներ խորքը,
Իզուր կորավ չահել զորքը...[158]

Բնական-աշխարհագրական միջավայրը կերչյան և սևծովյան երգերում ներկայացված է ավանդական հնարանքներով. տեղի ունեցող դեպքերին զուգորդված։ Ուշագրավ ու նոր է սևծովյան շարքում ծովի պատկերը։ Այն բնանկար չէ, թեև ստեղծում է որոշակի աշխարհագրական միջավայր։ Ծովը բանաստեղծական խորհրդանիշ է, որով բացահայտվում են իրադարձությունների հուզական-զգացմունքային յուրահատկությունները. ծովը արյան մեծ լիճ է, ծովի ափին փրփուր չի բռնում, ծաղիկ չի բուսնում, ծովում իր վերջին հանգրվանն է գտնում զինվորը։

Կերչյան և սևծովյան շարքերում հրաժեշտի, սիրո, կարոտի, մայրապաշտական, խաղաղասիրական և այլ մոտիվների շարքում կարևոր են հայրենասիրական մոտիվները։ Հայրենի տան, խաղաղ աշխատանքի, հարազատների կարոտը զինվորի գիտակցության մեջ մշտապես առնչվում է հայրենիք հասկացության հետ, իսկ երգերի զգալի մասը տոգորված է կարոտով, հայրենաբաղձությամբ։ Երգերում արտահայտվում են մինչև արյան վերջին կաթիլը մարտնչելու, հայրենիքի նկատմամբ ունեցած պարտքը հատուցելու, սեփական արժանապատվության գիտակցությամբ, դեպի հաղթանակն ունեցած հավատով կռվելու տրամադրություններ, որոնցով այս երգերը հիմնովին տարբերվում են զինվորի հին երգերից։ Այս տրամադրություններն ավելի ընդգծված ու խտացված են «Օրհնիր Ճանապարհս»[159]*, «Դու պինդ մնա»*[160] *և այլ երգերում։*

Դու պինդ մնա, մայրիկ ջան,
Իմ գնալը կորած տեղ չի,
Հայրենյաց համար կռվելը,
Մահանալը կորած տեղ չի[161]*։*

Կերչյան, սևծովյան երգերը հորինված են առաջին դեմքով, նամակաձև՝ հայ ժողովրդական երգարվեստում տարածված մի հնարանք, որը հատկապես կիրառվել է ռազմի և զինվորի երգերում։ Նամակերգը պարտադրում է որոշակի կառուցվածք, որը պիտվում է խնդրո

---

158 *ՀԱԻԲԱ, FF II։ 0443։*

159 *ՀԱԻԲԱ, FF II։ 0427։*

160 *ՀԱԻԲԱ, FF II։ 429։*

161 *Նույն տեղում։*

առարկա երգերում։ «Պատմիր, նամակ, վիրավոր եմ», իբրև կրկնակ բնորոշ է կերչյան շարքի մի ամբողջ փունջ երգերին։

Հայրենական պատերազմի շրջանի զինվորի երգերում շարունակում է հարատևել հակամարտությունն օտար զավթիչների և հայրենիքի պաշտպանների միջև. մի բևեռում ֆաշիստական զավթիչներ, մյուսում՝ հայրենիքի՝ Սովետական Միության քաջարի պաշտպաններ։ Այդ առումով ուշագրավ են Հայրենական պատերազմի տարիներին ստեղծված խաղիկները, գովքի երգերը, որոնք նվիրված են սովետական ականավոր զորավար Հ. Բաղրամյանին, Սովետական Միության Հերոսներ, ռազմաճակատում զոհված Ն. Ստեփանյանին, Հ. Ավետիսյանին։ Պահպանվել ու մեզ են հասել զինվորի երգեր, որոնցում պատմվում է առանձին բնակավայրերում տեղի ունեցած մարտերի մասին, ինչպես օրինակ, «Մոզդոկ»[162], «Գիշերով անցա Դոն գետի»[163], «Սամբեկի դերան»[164] և այլն։

Հայրենական պատերազմի իրադարձությունների, զինվորի մասին երգեր ու խաղիկներ են հորինվել թիկունքում։ «Հայրիկս բանակ դնաց»[165], «Կաղնի ծառ ես»[166], «Նամակ ըստացա»[167] և այլ երգերը, խաղիկները ստեղծվել են առաջին դեմքով՝ զինվորի հարազատների (պավակներ, մայր, սիրած կին) անունից։ Նրանցում փառաբանվում, մեծարվում են սովետական բանակի զինվորներն ու զորավարները, նզովվում, անխնա ծաղրվում թշնամին՝ Հիտլերն ու նրա համախոհները, հպարտությամբ, գորովանքով ներկայացվում որդու, հոր, ամուսնու, եղբոր քաջությունը, արտահայտում անսահման նվիրվածություն դևպի հայրենիքն ու նրա ազատության համար մարտնչող մարտիկը։ Հաղթանակի ցնծություն, կորուստների ցավ, որդուն դիմավորող մոր ուրջանկություն, արդար հաղթանակի հպարտություն. ահա այս տրամադրություններով են համակված պատերազմի ավարտն ու զինվորների տունդարձը պատկերող երգերը։

Սովետական շրջանի ռազմի և զինվորի երգերի լեզուն միատարր չէ. կան բարբառով հորինված ստեղծագործություններ, կիսագրական-

---

162 ՀԱԻԲԱ, Թ. Գևորգյանի նյութեր։

163 ՀԱԻԲԱ, Վ. Բդոյանի ֆոնդ, տ. № 16։

164 Խ. Փորֆչեյան, Նոր Նախիջևանի հայ ժողովրդական բանահյուսությունը, «Հայ ազգագրություն և բանահյուսություն» (Նյութեր և ուսումնասիրություններ), պր. 2, Երևան, 1971, էջ 42։

165 ՀԱԻԲԱ, FF II։ 0455։

166 «Հայ աշուղներն ու հորինողները Հայրենական պատերազմի օրերին», կազմեց և խմբագրեց՝ Ա. Վշտունի, Երևան, 1943, էջ 57։

167 ՀԱԻԲԱ, FF IV։ 5585։

կիսաբարբառային և արևելահայ գրականով հորինված ստեղծագործություններ: Սովետական շրջանի ռազմի և ղինվորի երգերը պարզ ու անպաճույճ ստեղծագործություններ են: Իրենց կազմավորմամբ ու կենցաղավարմամբ այդ երգերը գտնվում են հայ ժողովրդական բանահյուսության, մասնավորապես երգարվեստի ավանդական հունի մեջ: Սակայն նրանք իրենց պատմական բնավորության պատճառով բանահյուսական կարճատև կյանք ունեցան և պակաս չափով ենթարկվեցին մշակման ու հղկման: Հայրենական պատերազմի երգերի որոշ նմուշներ (Կերչյան շարքը, «Աղվանի երգը») այսօր էլ կենդանի է ժողովրդի հիշողության մեջ:

Ղինվորագրության, սովետական բանակում ծառայության վերաբերյալ երգեր են ստեղծվում նաև մեր օրերում, որոնք կատարվում են մեծ մասամբ բանակ ճանապարհելու առթիվ կազմակերպված խնջույք-հավաքույթներում: Ի դեպ, այդ երևույթը ձևոք է բերել ընդհանուր ճանաչում և ներկայումս ունի ազգագրական արժեք: Նոր երգերը շարունակում են հին նմանատիպ երգերի ավանդները հասարակական-քաղաքական նոր պայմաններում («Լոռվա վագոն»[168], «Հանդի լալա»[169], «Նամակ»[170] և այլն):

---

[168] ՀԱԻԲԱ, Ա. Ղազիյանի 1976 թ. գործուղում:

[169] ՀԱԻԲԱ, Թ. Գևորգյանի 1964 թ. գործուղում:

[170] ՀԱԻԲԱ, FF IV: 4638:

ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՌԱՋՄԻ ԵՐԳԵՐ

1 (1). ա) Ի ԼԵՒՈՆ ՈՐԴԻ ՀԵԹՄՈՅ Ա

Ասա՛ղ զգվէոնն ասեմ,
Որ տաճկաց դուռն ընկել գերի։
Իմ լուս, իմ լուս, ու սուրբ կոյս,
Սուրբ խաչն օգնական՝ Լէոնիս ու ամենուս։
Սուլդանն ի մօյտան ելել,
Իր ոսկի գունտն կու խաղայ։
Իմ լուս, իմ լուս, ու սուրբ կոյս,
Սուրբ խաչն օգնական՝ Լէոնիս ու ամենուս։
Խաղաց ի Լէոնն երետ.
«Ա՛ռ, խաղա ու տուր տատայիդ»։
Իմ լուս, իմ լուս, ու սուրբ կոյս,
Սուրբ խաչն օգնական՝ Լէոնիս ու ամենուս։
«Լէո՛ն, դու տաճիկ լինիս,
Ես ու իմ տատաս քէ գերի»։
Իմ լուս, իմ լուս, ու սուրբ կոյս,
Սուրբ խաչն օգնական՝ Լէոնիս ու ամենուս։
Լէոնն ի բերդին նստել,
Դաստռակն աչիցն ու կու լար.
«Քէրվա՛նտ որ ի Սիս կէրթաս,
Դուն խապար տանիս պապայիս»։
Ինց որ պապան ալ զան լսեց,
Շատ հեծել քաշեց երամով,
Էկաւ ի սուլդանն ելաւ,
Շատ գետեր էհան արընեց։
Իաւ ղիր Լէոն որդին,
Ու հասաւ սըրտին մուրատին։
Իմ լուս, իմ լուս, ու սուրբ կոյս,
Սուրբ խաչն օգնական՝ Լէոնիս ու ամենուս։

ԲՆԱԳՐԵՐ

բ) ԱԻԱ՜Խ, ԸԶԼԷՈՆՆ ԱՍԵՄ

Ասա՜խ, ըզվէոնն ասեմ,
Ասա՜խ, ըզվէոնն ասեմ,
Որ տաճկաց ձեռք ընկել նա գերի։
Իմ լոյս ու սուրբ կոյս,
Սուրբ խաչն օգնական կենայ
Վէոնիս, ամէ՜ն, տէր Յիսուս։
Սուլթան ի մետան ելել,
Սուլթան ի մետան ելել,
Իր ոսկի գունտն կու խաղայ։
Իմ լոյս ու սուրբ կոյս,
Սուրբ խաչն օգնական կենայ
Վէոնիս, ամէ՜ն, տէր Յիսուս։
Խաղաց, իր ընկերն երետ,
Խաղաց, իր ընկերն երետ.
— Ա՛ռ խաղայ ու տուր տատայիդ։
Իմ լոյս ու սուրբ կոյս,
Սուրբ խաչն օգնական կենայ
Վէոնիս, ամէ՜ն, տէր Յիսուս։
— Խաղայ, խաղըն քեզ վայել,
Խաղայ, խաղըն քեզ վայել.
Ես ու իմ տատան քեզ գերի։
Իմ լոյս ու սուրբ կոյս,
Սուրբ խաչն օգնական կենայ
Վէոնիս, ամէ՜ն, տէր Յիսուս։
— Վէոն, դու տաճիկ լինիս,
Վէոն, դու տաճիկ լինիս,
Ջքեզ անեմ տաճկաց թագավոր։
Իմ լոյս ու սուրբ կոյս,
Սուրբ խաչն օգնական կենայ
Վէոնիս, ամէ՜ն, տէր Յիսուս.
Վէոն ի քերթին նստել,
Վէոն ի քերթին նստել,
Դըստըրակն՝ աչիշ ու կու լայ։
Իմ լոյս ու սուրբ կոյս,
Սուրբ խաչն օգնական կենայ
Վէոնիս, ամէ՜ն, տէր Յիսուս։

— Քէրվան, որ ի Սիս կերթայ,
Քէրվան, որ ի Սիս կերթայ,
Դուք զապար տանիք պապայիս։
Իմ լոյս ու սուրբ կոյս,
Սուրբ խաչն օգնական կենայ
Լէոնիս, ամէ՛ն, տէր Յիսուս։
Ինց որ պապան ալ զայն լըսեց,
Ինց որ պապան ալ զայն լըսեց,
Շատ հեծել քաշեց երամով։
Իմ լոյս ու սուրբ կոյս,
Սուրբ խաչն օգնական կենայ
Լէոնիս, ամէ՛ն, տէր Յիսուս։
Եկաւ, ի սուլթան ելաւ,
Եկաւ, ի սուլթան ելաւ.
Շատ գետեր էհան յարինէ։
Իմ լոյս ու սուրբ կոյս,
Սուրբ խաչն օգնական կենայ
Լէոնիս, ամէ՛ն, տէր Յիսուս։
Իյաո զիր Լէոն որդին,
Իյաո զիր Լէոն որդին,
Ու հասաւ սըրտին մուրատին։
Իմ լոյս ու սուրբ կոյս,
Սուրբ խաչն օգնական կենայ
Լէոնիս, ամէ՛ն, տէր Յիսուս։

գ) ԼԵՒՈՆ Գ–Ի ՎՐԱՅ

Լեոնն ի բերդին նըստել,
Դաստառակն աչերն ու կու լայր,
— Քերվա՛նտ, որ ի Սիս կերթաս,
Դուն խապար տանիս պապայիս։
Եկաւ, ի Սուլթանն ելաւ,
Շատ գետեր-եհան արընից.
Իաո զիրն Լեոն որդին
Ու հասաւ սրտին մուրատին։

2 (2). ՍՋԱՏ–ԽԱՆԻ ԸԳՒՒԼԱՅ ՋԱՓՄԻՇ ԱՐԻԼԸ

Ադատ-ճոճը բնհալ փօյլը,
Ղօշունն ակալ Դանիրին սօյլը.

Ո՞ւվ նելիլ Ըգ֊ուլաց տայրը.
Նօտիլ ըք կլօլակը ... մայրը։
Ղօշունն ակալ Ըգուլաց վարան,
Խմեն գինիս, տառահըս կարան,
Ըխչկերաց, կնանաց համման,
Ուրը կտարան, ուրն ալ տարան։
Զիավուրն ակալ Սէֆից սօրը,
Զըքընարին սօր սօր թօրը.
Մոահալ ալ ըրխան մօրը.
Նո՞ւր այ ըլելաց միր ճօրը։
Ա՜յ տղօյ՝ տահիքյ ունչ հարայ այ.
Ադատ֊խունը հէս ակալ այ.
Գինդարու սօրը միզ զալայ այ.
Վա՜յ եմ ըրխաք, վա՜յ էմ քալայ։
Ակալ այ Հուռին գլուհը,
Թվանգյ զխկել՝ արալ ծօհր,
Միր մաջ ընգել այ պահ֊պօհը.
Անգեղ յրմահաք միր մօհը։
Կարմունջը լցվել այ քալլօվ,
Գիտը նարկվալ կարմիր ըրնօվ,
Ըխչկերքը տարան սուրուօվ,
Քշեն համման մոյն դամչիով։
Միր գօռբագօռ փիս մելիքյը,
Առաջ տվել չի ասկիքյը,
Օր կտարան միր մարդիքյը,
Հանալ էխտը ըրթօվա լիքյը։
Խունն Ըգուլաց հայփ այ ակալ,
Ըռտասունքը սրբել, ահալ՝
«Ի՞մ չիս մոյնր տվել հալալ,
Վիցը քիզ հատի պահալ»։
Զխկել շուն պես ստըկցահալ,
Յետով տարան գօռավ արալ.
Միր սաբաբը նօ այ դաւռալ,
Օր ական Ըգուլիս քանդալ։

I. ՌՈՒՍ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ԵՎ ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ՇՈՒՐՋ ՀՅՈՒՍՎԱԾ ԵՐԳԵՐ

2 (3). ՏԱՂ Ի ՌՈՍՏՈՄ-ԲԵԳ

Մունետիկն ի ձայն բարձր աղաղակէ,
Թանտ դահիճն սուր ի ձեռին անհագ սրէ,
Վազեր հանգոյն զիմ կենաց թել կտրել խնդրէ,
Ի կախաղան և կամ ի սպանդ,—ո՞ւր զիս տանէ։
Պաղաքս համայն մահմեդական, աստ խուռն գան, զիմ մահ սգան,
Դառնագին լան զիս Աբովյան՝ քաջ ախոհան։
Մի՞թե չիք ոք աստ քրիստոնեայ, զիս փրկեսցէ,
Ցայս ամեհի և մահագուժ վայրագ դահճէ։
Նուիրական զենման իմոյ լերուք վկայ։
Ալր հայրենյաց ի թշնամեաց ձեռս մատնեաց,—ուրախ մեռայց,
Ու դասեցայց ընդ դիւցազանց իմոց նախնեաց։
Փշրանք մնացեալ եմ սիրելի հայոց ազգի,
Որք, գոտանիք ի ձեռս պարսից յայս քաղաքի,
Մի՛ մոռասջիք պատմել և զայս յորդւոց յորդի,
Թէ քաջն Ռոստոմ վասն հայրենեաց ի սպանդ վարի։
Թէպէտ ցաւիմ զի չմեռանիմ ի մարտ ընդդեմ թշնամեաց իմ,
Այլ յօժարիմ, զի զոհ լինիմ այսպես վսեմ։
Այս քաջ բազուկք յարեաց պարսից հսկայ հզօրս,
Տապաստ արկին ի բազում նուագս հարիւրաւորս.
Աւա՛ղ, կնատ անգութ դահճի եղէ ես որս,
Պատմեսջի՛ք զայս վեհ դիւցազին՝ զառամյալ հօրս,
Քաջ նահատակ որդիդ միակ ի ձեռս վայրագ պարսից էանկ,
Իւր յաղթական մահ դժնդակ էառ պսակ։
Մեծդ յարեաց, արքայորդիդ Աբաս Միրզա.
Սուր ի ձեռին դահիճն հէգ առ ընթեր կայ,
Զիս թշնամիս քոյոյ ազգի պատրաստ ի մահ.
Զի՞րդ կամիս սպանանել՝ շուտ հրամայեա՛,
Միայն սգամ, զի կապեալ կամ, թէ միւս անգամ հրացան, սուր իմ
Ի ձեռս ունիմ,—զբազուկս իմ ձեզ ցուցանեմ...

2 (4). ՀԱՅ ԱՇՈՒՂ ՍԵՖԻ-ՅՈՒՍՈՒՖԻ ԱՍԱԾ ԵՐԿ ԵՐՎԱՆԻ ԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ

Նիկոլա Պավլովիչի՝ գահին ու թագին մատաղ,
Նրա ամեն թագավորից զորով առած հարկին մատաղ,
Ներսես հայրապետի[2] արած օգնության մատաղ.
Էջմիածնում աղոթք արեց, նրա սուրբ աջին մատաղ։
Յոթ օր ժամանակ տվեց, ոտքն Երևան դրեց,
Թնդանոթ և ռումբ կապեց, տունուտեղ կրակ մատնեց։
Բռնեցին Հասան խանին[3], երեսին սև քաշեցին,
Երկարհասակ սարվազների մեջ պարձյալ հարայ-հրոցըն ընկավ։
Թափվեց խոլ ասանը.—«Վայ, Մելիք՝, մի ճար արա».
Կոտորեց մուշտայիդներին, իմամի սերունդ չթողեց։
Նիկոլա Պավլովիչի գահին ու թագին մատաղ,
Նրա ամեն թագավորից զորով առած հարկին մատաղ,
Ներսես հայրապետի արած օգնության մատաղ.
Էջմիածնում աղոթք արեց, նրա սուրբ աջին մատաղ։
Թնդանոթ և ռումբ կապեց, Սարդարաբադը հողի հետ մեկ արեց,
Ե՛վ մորուքավոր, և՛ անմորուք սարվազներին բռնեց։
Հասան-խանը վերկացավ փախավ, հետևից գնաց ռուսը,
Աղերսեց Պասկևիչին՝,—ազատի՛ր, խաչիդ մատաղ։
Պասկևիչի նման սարդար ո՞վ է տեսել այս աշխարհում.
Հաղթեց շահին, շահզադային, հարստությունն ու ստացվածքը ոչնչացրեց,
Այս ասող Սեֆի Յուսուֆի ընչի՞ն է պետք հարստությունն այս աշխարհում։
Նիկոլա Պավլովիչի գահին ու թագին մատաղ,
Նրա ամեն թագավորից զորով առած հարկին մատաղ,
Ներսես հայրապետի արած օգնության մատաղ.
Էջմիածնում աղոթք արեց, նրա սուրբ աջին մատաղ։

3 (5). «ՍԱՐ ՈՒ ՁՈՐ ԱՍԱՍԱՆՄԻՇ ԷԼԱՆ, ՁԱՐՄԱՑԱՆ»

Սար ու ձոր ասասանմիշ էլան, զարմացան,
Պասքովիչ՝ սարդարին ոտի տակն ընկան.
Մեր Մասիսն, Ալագյազն փիանդազ էլան.
Անիրավ՝ էս բաղին բաղմանչի ունի։
Անիրավ՝ էս բաղին բաղմանչի ունի,
Յարալու սրտիս էդ քարը մի քցի։
Մատաթովն[2] Ղարաբաղ առավ՝ ազատեց,

Կրասովսկին[3] Աբարան ոտնատակ տվեց,
Սաղ Իրանն Պասքովիչին չոքեց, ծունր դրեց.
Ղզլբաշն մուկ դառած, գլխին վայ տվեց.
Բեկենդորֆն[4] սարդարին չախըփուրթ արեց.
Ասլանի գլուխն արծվին Ռուսն մատաղ արեց.
Անիրավ՝ էս բաղին բաղմանչի ունի։
Անիրավ՝ էս բաղին բաղմանչի ունի,
Յարալու սրտիս էդ քարը մի քցի։

Սրբազան Ներսեսի[5] խաչին դուրբան գնամ,
Հոգևոր Եփրեմ[6] տիրոջն ղուլ դառնամ,
Սուրբ Գեղարդն մեռոնի զորքն մալում էյան.
Թշնամին քոռացավ. Հայքն ուրախացան.
Հայ ազգի աղոթքն երկինքը հասաւ,
Անաստված՝ հայից ձեռք քաշի կորի։
Անիրավ՝ հայերի արինն մի խամի,
Միտք արա՝ էս բաղին բաղմանչի ունի,
Յարալու սրտիս էդ քարը մի քցի։

Մենք քամակ քամակի կտանք, վեր կկենանք,
Ռսին մեր աշխարքը, կյանքն դուրբան կտանք։
Հասան-խանն կատվի պես քարեքար ընկավ,
Շահզադի դոշունը ցիր ու ցան էլավ.
Մեր խաչին՝ անհավատ՝ արի, ճանաչի,
Անաստված՝ հայից ձեռք քաշի, կորի։
Անիրավ՝ հայերի արինն մի խամի,
Միտք արա՝ էս բաղին բաղմանչի ունի,
Յարալու սրտիս էդ քարը մի քցի։

4 (6). «ՄՈՍԿՈՎԸ ՀԱՍԱՎ ԷՐՉՐՈՒՄԻՆ»

Մոսկովը* հասավ էրզրումին,
վայը եկավ հայոց գլխիս,
Սաստիկ հրամանը վեզիրի
Քունը կտրեց մեր աչքերի.
Գնանք խրամը, խրամը։
Ձմեռ գուգա բուք ու բորան,
Մեր ընտանյաց հալն է յաման,
Թողինք գործերս ցիրուցան,
Եկանք հասանք 'ի Սուրբ Նշան.

* «Մոսկովը» բառից հետո փակագծերում՝ ռուսք (Ծ. Կ.)

Փորենք խրամը, խրամը,
Բահ, թի, փետատներ՝ դիզվեցան,
Մեծ ու փոքր հիվանդացան,
*Թե չլիներ սուրբ օրհնութիւն**
Ամենքին էլ հալն էր զուրս.
Փորենք խրամը, խրամը։
Արի, եղբայր, փորենք խրամ։
Հիմի կուգա Ղելիբ փաշան[1],
Թող, ի՞նչ ես մտածում այդքան,
Աստված կլինի մեր պահապան.
Գնանք խրամը, խրամը։
Փետատը զարկինք ապառաժին,
Ջուր հանեցինք քարի միջին,
Բայց ձագուկներս մորը կշտին
Կարոտ մնացին ցամաք հացին.
Գնանք խրամը, խրամը։
Հայր սուրբ[2] *ահա հեծած յուր ձին*
Կուգա, եղբայրք, երթանք աջին,
Նորա օրհնութիւնը մեր գլխին,
Աստված պահե կյանքն յուր անգին.
Գնանք խրամը, խրամը։
Հող ու մոխրում թավալգլոր,
Միտք ու ուշքերս եղավ մոլոր,
Յաման, Հայր սուրբ, ղուրբան քեզի,
Մեր ընտանյաց հոգսը քաշի.
Գնանք խրամը, խրամը։
Մոսկովն եկավ շարան շարան,
*Յա օխտնանում** *քեզի ղուրբան,*
Խնամք արա հայոց վերան,
Ջմնաց մեր վրա չգան.
Գնանք խրամը, խրամը։

5 (7). «ՈՏՍ ԴՐԻ ՁիՈՒ ՂԱՇԻՆ»

Ոտս դրի ձիու ղաշին, լոյ լոյ,
Ուշս կալա ղզլբաշին, լոյ-լոյ,
Ռուսն էկավ ղալեն պատեց, լոյ-լոյ,

---

* «Օրհնութիւն» բառից հետո փակագծերում՝ եպիսկոպոսի (Ծ. Կ.)։

** Փակագծերում՝ Ս. Կարապետ (Ծ. Կ.)։

Օրդին էկավ հուրհուրատեց, լոյ-լոյ,
Եկեք քնանք ներքի թաղը, լոյ-լոյ,
Մլվլալա մտնենք բաղը, լոյ-լոյ։

6 (8). ՀՈՐԴՈՐ

Ռուսական պետութիւն, հայե՛ր, լսավ աշխարհի,
Բա՛վ է քրիստոնեից հայե՛ր, ըլլալ խեղճ գերի.
Բացեց խիստ պատերազմ, հայե՛ր, ընդդեմ թուրք ազգի,
Ափսո՜ս, այն ազգակիցք, հայե՛ր, որ զոհ գացին։

Ռուսական բանակը, հայե՛ր, մըտավ Հայաստան,
Օսմանյան զորքերըն, հայե՛ր, դեմ դեմի ելան,
Հըրացան, թնդանո՛թ՝ հայե՛ր, գոռալ ըսկըսան,
Ափսո՜ս, այն ազգակիցք, հայե՛ր, որ զոհ գացին։

Հայկազըն Մելիքոֆ[1], հայե՛ր, ժեներալ ուսաց,
Կարսը շըրջապատեց, հայե՛ր, վըրան ռումբ տեղաց,
Ռումբերըն այրեցին, հայե՛ր, մըզկիթներ թըրքաց։
Ափսո՜ս, այն ազգակիցք, հայե՛ր, որ զոհ գացին։

Տաճկաց մի լուր ղըրկեց՝ հայե՛ր, Լորիս[2] ծերունին,
Հայոց մայրաքաղաք, հայե՛ր, պիտ՝ լինի Կարին,
Եթե շուտ չհասնիք, հայե՛ր, ժամեր կորընչին,
Ափսո՜ս, այն ազգակիցք, հայե՛ր, որ զոհ գացին։

7 (9). ԼՈՌՎԱ–ՄԵԼԻՔԻ ԵՐԳԸ

Ես Մելիքն[1] եմ լոռեցի,
Մուխտար փաշին[2] զոռեցի,
Մուխտարի գլխի ֆասը,
Մելիքի ծոցի թասը։

Մուխտարը գլուխը քորեց,
Մելիքը ղոշունը քաշեց,
Մելիքի դոշի խաչը,
Մուխտարի ղաչաղաչը։

Մելիքի ձեռաց թուրը,
Մուխտարի թուքումուրը,
Հարվա քամին փչեր կե,
Մելիքն աստված կանչեր կե։

Ղարսա ջուրը տառել էր,

Մելիքը Ղարսն առել էր,
Մուխտարն աղվես դառել էր,
Ձիու էգյան առել էր։
Ես Մելիքն եմ էրմանի,
Մուխտարն է իմ թշնամի,
Մելիքի ձևռաց թուրը,
Մուխտարի թուքումուրը։
Ես Մելիքն եմ հայ տղա,
Մուխտարն ետ կ՚ խաղա։
Մելիքի ձիու հալը,
Մուխտարի փիս ահվալը։
Մելիքը ուռա քաշեց,
Մուխտարի սիրտը մաշեց։
Ալաջա սարի դոշեն,
Մուխտարը քաշվեց քոշեն։
Խաբարը բերեց բոշեն,
Տվեր էր պարկի լոշեն։
Արազի հուն սառել էր,
Մուխտարը աղվես դառել էր։
Փախավ սառցի վրիցը,
Փրցավ վարար ջրիցը։
Ղարսա ջուրը սառել էր,
Մելիքը Ղարսն առել էր։
Ղարսա բերդը ամուր էր,
Մելիքի սիրտը դամուր էր։
Մելիքի ձևռաց շվին,
Մուխտարը փախավ Ջվին։
Մելիքի քելքով ո...,
Մուխտարի հիմար զոռը։
Մուխտար [քաշվեց] Արզրում,
Մելիքն երգեց «այ գյուլում»։

8 (10). «ՍԱԼԴԱՏԸ ԵԼԱՎ ԱԼԱՋԵՆ»

Սալդատը ելավ Ալաջեն[1],
Ազատվանք օսմանլուի փաջեն.
Հաստատ մնաս Հայ Լորից[2]
Ազնիվ Հորից ու մորից։

Ղոշունլուղը էկել է,
Խեղճ հայերուս փրկել է,
Լորիցն հրաման էրից՝
Սալդատն Ալաջեն հանից,
Հաստատ մնաս ջան Լորից,
Ազնիվ մորից, քաջ հորից։
Լորից Քյուփրու—Քյոյ խլեց,
Մոսխտար փաշին ետ քշեց.
Մուխտար փախավ Արզրում,
Ըսավ. Լորիցն է գուլում։
Հաստատ մնաս ջան Լորից,
Ազնիվ մորից, քաջ հորից։
Հայի պարծանք քաջ Լորից,
Սիրած մարդն ես բոլորիս։
Գալդ բարի Մելիքով,
Հաստատ մնաս քու ազգուկ,
Հաստատ մնաս քու ազգով.
Ազգ ու տակով, երամով։

9 (11). ԳՈՎՔՍՏ ԳԵՆԵՐԱԼ ԱՐՇԱԿ ՏԵՐ-ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Էկավ հասավ Վանա ծովուն,
Ուրախութիյուն քերեց հայուն,
Ուրախութիյուն Տեր-Ղուկասով,
Դրախտական Տեր-Ղուկասով։
Օրդուն քաշեց սարի հովին,
Դուշմանի հետ քցեց դավին,
Դեպ օսմանցուն էկավ պատեց,
Ջաբախանի ճամբեն փակեց։
Հայն էրեսին հանեց խաչը,
Կանչեց Լուսավորչա աջը,
Ջարկեց ջարդեց առյուծ քաջը,
Դրախտական Տեր-Ղուկասով։
Քրդեր լսին Արշակ անուն,
Փախուստ տվին կռվի պահուն,
Հաստատ մնա էնոր անուն,
Փրկեց մեզի սիրով անհուն։

10 (12). Ա՛Յ ՀԱՎԱՐ, ԲԱՅԱԶԻՏ ՎԱՌԵՑԻՆ

Էս ի՛նչ կրակ, տեր-աստված,
Ա՛յ հավար, Բայազիտ վառեցին,
Մատղաշ ճժերն են էրած,
Ա՛յ հավար, սև խապար՝ էրեցին։
Ճելոքն էկան ամպի պես,
Ա՛յ հավար, սև խապար զալմներ։
Գյուլլեն թափեն կարկտի պես,
Ա՛յ հավար, Բայազիտ կտրեցին։
Մեր զմանուկ կ'ուրանա,
Ա՛յ հավար, սև օրեր, սև հողեր.
Արյուն առվի պես կ'երթա,
Ո՛վ աստված, ա՛յ հավար, վառեցին։
Բոցեր կ'ելլեն վեր ու վեր,
Ա՛յ հավար, սև խապար միլիցին.
Ձեներն երկինք է լցվեր,
Ա՛յ հավար, միլիցին վառեցին։
Ա՛խ, հինգ հարյուր էլ քաջ կտրիճ,
Ա՛յ հավար, վա՛յ հասե՛ք, վառեցին,
Ամենքն իննկած քաջ կտրիճ,
Ա՛խ ափսո՛ս, վա՛յ կսկիծ, վառեցին։
Ամենքն մնացին անդագաղ,
Էս ի՛նչ կրակ, էս ի՛նչ բոց,
Ջինար պոյին ձեր մատաղ,
Ա՛յ հավար, սև օրեր, սև հողեր։
Ձեր սգավոր մայր մեռներ,
Էս սև օրեր չ'տեսներ,
Ա՛յ հավար, սև օրեր, վառեցին,
Էնոնց սրտեր կոտրտվեր,
Ա՛յ հավար, միլիցին գյուլլեցին,
Ա՛խ աստված, սելմորներ կտրեցին։

II. ԱԶԳԱՑԻՆ – ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԵՐԳԵՐ

ա) ԶԵՅԹՈՒՆԻ, ՎԱՆ-ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ, ՄՇՈ ԵՎ ՍԱՍՆՈ ԵՐԳԵՐ

1 (13). ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՐԱԽՈՒՅՍՆ ԱՌ ԶԵՅԹՈՒՆՑԻՍ

Հըրաբուխ մը ժայթքեց Զեյթուն իր վեհ կողերեն,
Սրբեց մուրը նախատինքի հայ ճակատներեն։
Քաջ զեյթունցիք ձըգեցին տուն և հպարտ ու վեհ
Ջարկին թրքաց վատ խուժանը առյուծներու պես։
Հոն կանգնեցին սուրբ դըրոշակ, արյամբ ներկեցին,
Անոր վըրա ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ կամ ՄԱՀ գրեցին.
Եվ Հայաստան վեց դարերու քնեն արթնցած
Ծնելասեր հայ մայրերու, «Մի լաք» որոտաց։
«Ահա ես եմ, Մայր մայրերու, տերն իմ զավակաց,
Ես՝ որ դարեր իրենց համար լացած, արտասված։
Մահն ամեն տեղ մեկ է, տղե՛րք, վայ որ վատանամ,
Մեռեք հոժար, որ փրկության օրը մոտենա։
Մևեր պատած իմ հովիտներս, լեռներս ու ձորեր,
Ձեր արյունով թող ներկվին վարդ-վարդ կարմիրներ։
Որ մահիկի պատրուտված անարգ ցնցոտին
Ըլլա հետին պատանքն աղտոտ, հոտած Սուլթանին։
Հապո՛ն, ի զե՛ն, զեյթունցիներս, ձեզ հետ թո՛ղ ըլլան,
Մեծ խաչակրին աչքն ու թևեր ձեզ պատսպարան»։

2 (14). ԶԵՅԹՈՒՆ ԱՆԿԱԽ

Զեյթուն, անկախ դու աշխարհիկ,
Քո սար ու ձոր են անառիկ,
Ամեն մի քար և անկյունդ,
Շաղախել է քո արյունդ։
*Հեյլե՛, հեյլե՛, հեյլե՛, հեյլե՛, հեյլե՛**։

---

* *Տողը կրկնվում է յուրաքանչյուր տան վերջում (Ծ. Կ.)։*

Դեռևս քո զորեղ բազկում,
Ռուբինյանց արյունն է շարժում։
Հիշատակ նախնի դյուցազանց,
Պատկերն է քո քաջ զավակաց։
Մղրախն է ունեցած կայքդ։
Քո ապրուստն է և քո կայքն,
Բռնության լուծը թյուրք մարդո-
էդ զենքով ես թոթափել դո-
Կեցցե գրիգորյան հավատը,
Հայ պահել է իր ժողովուրդը,
Ոչ մի կրոն աշխարհիս վրա,
Ջունի ազատ ոգին սորա։

3 (15). ԵՐԳ ՄԸ ՉԵՅԹՈՒՆԻ ԼԵՉՎՈՎ

Բերդիզ չոյը ծիծվիցոնք, իկոնք ղըշլեն կեխիցոնք,
Էսկերնին եսիր առոնք, մեր պայրոխը տրնկիցոնք։
Փեշեն լսից կատղիցով, իկիվ Ջիրմոկ բնակիցով,
Սանատոխը հետվուս ծիծվիցով, ի բեզուլ էղեով քեշվիցով։
Բարդողիմեոս վարդապիտ, էռեչ գնոց չիմընոց յիտ,
Թիֆոնք բեճը, թուրը մեչքը, կըռվիլո համար էր պարպիտ։
Տերտիրնեն Յարոխվյուրըն, տերացուք թիֆոնք վյուրըն,
Հելվյուրնին շոտ գուվիցին, կնկտեքնե ուրախ վյուրըն։
Գեղացըք մըտոն փուսըն, կպեցըք տեղեք, ասըն,
Թուրք լեշը շոտ կը փըռվեր. մի խըմըշեք հեչ չասըն։
Ենկի Տյունո, Շովր օղլու, Սյուրեն օղլու, Եաղպ օղլու,
Ջյուրսը մեկ բիրոն էղոն, փեշեն եղով ղայպ օղլու։
Գեղացըն ղըշլեն առով, էսկերը թեմալլոն էրեով,
Խեչ պայրոխը տրնկեցին, թշնամին անիծեցին։
Աշըխ իմ իս յուվաննո, գեղացըն կըտրըճ կունո,
Ասպոծ յուղյուրդ թուղ բիրե, տաիմո յուժեով մընու

4 (16). ա Չ Ե Յ Թ Ո Ւ Ն Ց Ի Ք

Չեյթունցի ենք մենք քաջազունք,
Ֆաճիկներեն վրեժ առնենք,
Մեր մայրերեն սուրբ կաթի տեղ,
Կաթիլ-կաթիլ արյուն քամենք։
Կեցցե՛ Չեյթուն, ապրի՛ Չեյթուն,

Թող չտեսնե՛ ստրկություն,
Քանի ունի ձեզ պես որդիք,
Կեցցե՛ Զեյթուն, ապրի՛ Զեյթուն։
Քանի թմրինք, բավ է, եղբարք,
Շրջենք աչերս աջ ու ահյակ.
Շատ ստրուկներ եղան ազատ,
Միայն մենք ենք հլու հպատակ։
Արյունծարավ զեյթունցիներ,
Ձենքեր ունինք դիմենք հառաջ.
Հերիք մինչ այժմ գլուխ ծռած,
Բռնապետին գերի ըլլանք։
Ամբողջ հինգ դար գերի ենք մենք,
Մենք մեր շղթայք պատրաստեր ենք.
Ինչու այժմ մենք չտիպենք,
Մեր գերողին կրելու ան։
Զեյթունցի ենք, մեր սփոփանք
Է պատերազմ և արշավանք.
Գնդակ, վառոդ, սուր, հրացան,
Նաղալիքն է մեզ հավիտյան։
Կեցցե՛ Զեյթուն, ապրի՛ Զեյթուն,
Թող չտեսնե՛ ստրկություն.
Քանի ունի ձեզ պես որդիք,
Կեցցե՛ Զեյթուն, ապրի՛ Զեյթուն։

բ) ՔԱՅԼԵՐԳ ԶԵՅԹՈՒՆԻ

Քանի՞ թմրինք, բավ է եղբարք,
Շրջենք աչերնիս աջ ու ահյակ,
Շատ ստրուկներ եղան ազատ,
Մինակ մենք մնանք թուրքին հնազանդ։
Բավ է եղբարք, որչափ կրեցինք գերություն,
Քիչ մ'ալ ելլենք, ցույց տանք նորանց քաջություն*։
Կեցցե Զեյթուն, ապրի Զեյթուն,
Թող չտեսնի ստրկություն,
Քանի ունի մեզ պես քաջեր,
Կեցցե Զեյթուն, ապրի Զեյթուն։

---

* Կրկնվում է յուրաքանչյուր տնից հետո (Ծ. Կ.)։

Զեյթունցի ենք, մեր զբոսանք,
է պատերազմ և արշավանք,
Սուր, թուր գնդակ և հրացան,
Մեր խաղալիքն են հավիտյան։
Արև ելավ, զեյթունցիներ,
Դե՛հ ձի հեծնենք, առնենք զենքեր,
Մեր զբոսանքն է պատերազմ,
Պատերազմ և արշավանք։
Զեյթունցի եմք, քաջեր ունիմք,
Տաճիկներեն մենք վախ չունինք,
Մեր մայրենի սուրբ կաթի հետ,
Կաթիլ-կաթիլ արյուն ունինք։

գ) ԵՐԳ ԶԵՅԹՈՒՆԻ

Արևն ելավ, զեյթունցիներ,
Դե՛հ ձի հեծնենք, առնենք զենքեր, դիմենք հառաչ,
Քանի՞ այսպես գըլուխ ծըռած,
Բըռնավորին մենք վիզ պարզած*։
Բավ է եղբարք, հերիք համբերենք,
Հերիք տաճկին լուծը կըրենք,
Քանի այսպես խեղճուկ ենք մենք,
Չենք ունենար թագ, խոսք, օրենք։
Զեյթունցիներ, մեր զբոսանք,
է պատերազմ և արշավանք,
Սուր, թուր, գնդակ և հրացան
Մեր խաղալիքն է հավիտյան։
Կեցցե Զեյթուն, ապրի Զեյթուն,
Թող չի տեսնե ըստրկություն,
Քանի ունի մեզ պես որդիք,
Կեցցե Զեյթուն, ապրի Զեյթուն։
Զեյթունցիներ, մենք քաջ ունինք,
Տաճիկներեն վըրեժ ունինք,
Մեր մայրենի սուրբ կաթի տեղ,
Կաթիլ-կաթիլ արյուն հոսին։
Կեցցե Զեյթուն, ապրի Զեյթուն,
Թագն ու պըսակ ամեն հայուն,

---

* Յուրաքանչյուր տան վերջին երկտողը կրկնվում է (Ծ. Բ.)։

Զեյթուն լինի մայրաքաղաք,
Եվ Կիլիկիա ազատ երկիր։

դ) ԶԵՅԹՈՒՆՑԻՆԵՐ

Արևն ելավ, զեյթունցիներ,
Դե՛հ, ձի հեծնենք, առնենք զենքեր,
Դիմենք առաջ,
Ինչո՞ւ, ինչո՞ւ գլուխ ծռենք,
Բռնավորին մեր վիզ պարզած։
Զեյթունցի ենք, մեր սփոփանք
Են պատերազմ և արշավանք.
Սուր, թուր, գնդակ և հրացան
Են խաղալիքն մեր հավիտյան։
Քանի թմբրինք, բավ է եղբարք,
Շրջենք աչերս աջ ու ահյակ,
Շատ ստրուկներ եղան ազատ,
Միայն մենք ենք հլու հպատակ։
Կեցցե Զեյթուն, ապրի Զեյթուն,
Թող չտեսնեն ստրկություն.
Քանի ունի մեզ պես որդիք,
Ապրի Զեյթուն, կեցցե Զեյթուն։
Ամբողջ հինգ դար գերի ենք մենք,
Մեր շղթայք մենք պատրաստեր ենք.
Ինչո՞ւ այժմեն մենք չստիպենք,
Մեր գերողին կրելու զայն։
Զեյթունցի ենք մենք քաջազունք,
Բռնավորեն վրեժ առնենք,
Մեր մայրերու սուրբ կաթի տեղ
Կաթիլ-կաթիլ արյուն քամենք...
Կեցցե Զեյթուն, ապրի Զեյթուն,
Թող չտեսնեն ստրկություն,
Քան ունի մեզ պես որդիք
Ապրի Զեյթուն, կեցցե Զեյթուն։

5 (17). ՉԻՆՎԱԾ, ՊԱՏՐԱՍՏՎԱԾ

Զինված, պատրաստված, Զեյթունի քաջեր,
Սուրբ ազատության վկայք անվեհեր.

Վրեժով լցված առյուծի նման,
Քայլ-քայլ կռվում են Թուրքի դեմ դաժան։
Կեցցե՛ք դուք միշտ, ղեկթունցիք,
Որ պիտ փրկեք հայրենիք,
Դուք Հայաստանի պարծանք,
Մեր կյանքից էլ ձեզ կը տանք*.
Մանուկն օրորոցում հանգիստ չէր պառկած,
Խնդրում եր մորից. «Բազուկներս բաց.
Ես չուզեմ մնալ այս օրորոցում
Մինչ իմ եղբայրներ լաց կոծ են անում...»
Ի՞նչ ես կաշկանդել, քանդիր ինձ, մայրիկ,
Ես կուզեմ կռվել Թուրքի դեմ ճարպիկ,
Տուր ինձ հրացան և մի սուր դաշույն,
Ես կուզեմ ծծել կաթի տեղ արյուն։

6 (18). ՉԵՅԹՈՒՆԻ ԵՐԳԸ

Խնդացեք վեհ բնության զարթեր,
Նախշուն քնքուշ ծաղիկներ,
Ուրախացե՛ք, սիրուն վարդեր,
Պայծառ երկնից աստղիկներ։
Անառիկ Ձեյթուն,
Յուր անհաղթ քաջերով,
Վրեժ է գոչում,
Անվախ առյուծներով**։
Երկինքը մեր գլխին պարզվեց,
Լացը փոխվեց հրճվանքի,
Ստրուկ հայը արդեն ցնցվեց,
Ձեռքը մեկնեց նա ղենքի։
Հորհրդավոր քնից զարթնեց,
Հայ պատանին քրտնաթոր.
Աչքը բացեց և ի՞նչ տեսավ
Նա. քաջերին զինավոր։
Ամեն մի հայ պարտք համարեց,
Յուր սուրբ դատը պաշտպանել։

---

* Կրկնվում է յուրաքանչյուր տնից հետո (Ծ. Կ.)։

** Կրկնվում է յուրաքանչյուր տնից հետո (Ծ. Կ.)։

Ազատ, անկախ ու անվեհեր,
Թշնամյաց դեմ մարտնչել։

7 (19). ՉԵՅԹՈՒՆՑԻ ԵՆՔ ՄԵՆՔ

Ո՛վ, մեծափառ սուլթան, մեզ հետ լավ վարվի,
Վախկոտ մարդկանցից չենք, զեյթունցի ենք մենք։

Թնդանոթներովդ մի մխիթարվիր,
Ձեռքիցդ կխլենք, զեյթունցի ենք մենք։

Մահից վախենալը մեզի համար չէ,
Մեռնելու սովոր ենք, զեյթունցի ենք մենք։

Քաղցած, անսիրտ, խուժան զորքերդ ետ տար,
Թե չէ սուր կքաշենք, զեյթունցի ենք մենք։

Դեռ քո Օսման պապը չէր եկել աշխարհ,
Մենք մեր երկրում կայինք, կանք ու կմնանք։

8 (20). ՉՈՒԽԱ-ԿՅԱՏՈՒԿ

Էլեք երթանք Ջուխա-Կյատուկ,
Խըտ մի տանինք ջուխտ մ' անտուկ.
Մըր ախպերներն են ահա պատկուկ,
Գրկենք, պաքենք, դնենք անտուկ։
Ջուխա-Կյատուկ չայիր-չիման,
Ջուխտ մ'կտրիճ ընտեղ մեռան.
Մեկն Օհաննես[1], մեկն ի Վարդան[2],
Հայու սրտիկն արին վերան։
Աստղերն էլան շարան-շարան,
Ջուխ-Կյատուկա վըրեն կայնան,
Վախեն սարեր կարմրցեր են,
Էրկնուց աստղեր շիվարեր են։
Արնոտ խալավ քաղաք բիրին,
Փաշի սարից վար կախեցին.
Խայու սրտիկ խորովեցին,
Ջիգյար փորին կտրտեցին։

Ա՜խ, իմ ախպեր, ես քի կուրպան,
Տաճի՞կն էրավ քի էտա բան.
Տաճի՜կ, տաճի՜կ տյու սատանա,
Մըր մուլք կըտես, քե ծեռ չըտա։
Տաճի՜կ, տաճի՜կ, էրա՜, էրա՜,
Աստված տըսնա քեկ փուճ տ'ենա.
Իմ խայ ախպոր տյու խեղճ էրիր։
Ես էլ տեսնի՜, տյու խեղճ էլնիր։

9 (20). ՉՈՒԱ ԿԵԱՏՈՒԿ

Վախ լե, լե, լե, առավտըման բարի լուսուն,
Ակո, Ավագու խերը—մեր ինկեր են անուշ քուն.
Մը՛լա մարե, մը՛լա մարե, մենք մենակ չենք,
Իսկի չեն ասե Ակոն, Ավագ մնացեր են քամպախ ուսին,
Մ՛ըլա մարե, մ՛ըլա մարե, մենք մենակ չենք։
Խապար տարեք քեսակածի Վան,
Չոռա Կեատուկի տակ մնացեր են սայսան՛վերկու չան.
Վաթսուն՛ վերկու Մախին ա, քսան խայ ա,
Մը՛լա մարե, մը՛լա մարե, մենք մենակ չենք։
Աստված քակեր Մամատանից Ռավոի տուն,
Որ Ակոն, Ավագ տարավ էլ չիպե տուն.
Խապար տարեք քակած Բաղեշ,
Որ Ակո, Ավագու խեր ու մեր չէլնեն սավտալի կեժ.
Մը՛լա մարե, մը՛լա, մարե, մենք մենակ չենք։
Չոռա Կեատուկ չայիր չիման,
Քեամին ելավ, արաց պուրան.
Վեր մե պիրեց սև ու տուման,
Մը՛լա մարե, մը՛լա մարե, մենք մենակ չենք։
Մեր տուն, ձեր տուն խանա-խանա,
Ծո տնավեր տերտեր, էլի.
Աստված կանչե, անձրև գա գետին.
Մը՛լա մարե, մը՛լա մարե, մենք մենակ չենք։
Չոռա Կեատուկ ավազ քար ա,
Վո՞վ ի տիսե ըսկնե մ՛տարի.
Մեչ մեկ տան երկու տեկերկին որբեվերնա,
Մը՛լա, մարե, մը՛լա մարե, մենք մենակ չենք։

Առավոտման բարե լուսուն
Ես կարոտ մնացի Ակո, Ավագու տիսուն.
Մը՛լա մարե, մը՛լա մարե, մենք մենակ չենք։

10 (22). «ԿՈՎԵՑԵ՛Ք, ՏՂԵՐՔ, ԿՈՎԵՑԵ՛Ք ՔԱՋ-ՔԱՋ»

Կովեցե՛ք, տղերք, կովեցե՛ք քաջ-քաջ,
Անվեհեր կանգնած թշնամուն առաջ.
Ցանկալի է մեզ միշտ ազնիվ մահը,
Հեռու մեզանից ոսոխին ահը.
Առաջ խիզախենք իբրև նահատակ,
Իզուր թող չանցնի մեզնից մի գնդակ։

Մեզ տոնախմբեն մեր նախնի քաջեր,
Մեզի կսպասեն մեր հնք եղբայրներ.
Չի ծնանք ազատ, գնի մեռնինք ազատ,
Մեր սիրտն ու հոգին պահենք անարատ.
Այս անգամին ալ ցույց տանք թշնամուն,
Թև ի՞նչ է հայու ուժն ու քաջությունն։

Ահա քյուրդերը փախան սարսափած,
Ահա դիակներ արյամբ շաղախված.
Կրակ տեղացեք, անդադար կրակ,
Փառք ժողովրդին, առատ է գնդակ.
Օ՜ն, կովի՛նք տղերք, մինչև շունչ վերջին,
Արժանի լինինք փառքի պսակին։

Մեռնինք հուսալով՝ մերն է ապագան,
Մեռնինք, բայց կեցցե՛, կեցցե՛ Հայաստան.
Այսպես հորդորեց ու ինկավ արին,
Թողլով մեզ անուն հիշատակ բարին.
Ահեղ կռվի մեջ մի փոքրիկ հերոս,
Անմոռանալի կտրիճ Մարտիրոս[1]։

11 (23). ա «ՇԱՏԽՈՒ ՍԱՐԵՐ ԱՆՈՒՇ ԶՈՉԱՆ»

Շատխու սարեր անուշ զոզան,
Մեջի քրդեր զըմեն գազան։
Շատխու սարեր բացվե սուսուն,
Մեջի խայեր զըմեն թոսուն։

Ա՜խ, ինչ անեմ, որ ձեռ դառատակ,
Զալըմի ձեռ ընկեր են կրտակ։
Շատխու սարեր շատ կոքով կեր,
Քյուրդ խայու ջան շատ կը մտրկեր։
Էն օր վեր մե սև պերեցին.
Որ քյուրդ ասկյար սախմնեցին։
Խեր չտեսնա էն օսմանցին,
Որ քյուրդի ձեռք չտեր այնալին։
Թաղա գլոխ աղբյուր չըռա,
Տայք-տաք արյուն մեջը կեռա։
Ազիզ, Ապրիկ չորս ընկերով,
Մանրիկ քընեն մեկ ծառի խով։
Շատխու սարեր չէր խալե ձյուն,
Արյուն-արտասյունք Շատախ լեցուն։
Խաբար արեք կաթաղկոսին,
Թող ճարմ'անի ինոր ազգին,
Աղթամարա կղզին կըռեճ,
Թե որ կղեր մ'էլներ մեր մեջ,
Ցա կը բերեր խայուն ֆարման,
Ծա չէ կաներ դարզին դարման։

Բ) ԱՊՐԻԿԻՆ ՑՈՆ

Շատխու սարեր անուշ զոզան,
Մեջի քրդեր զըմեն գազան.
Էն օր վեր մի սև պերեցին,
Որ քուրտ ասքար սահմընեցին։
Շատխու կյալին շատ կաքավ կեր,
Քուրդն հայու ջան կը մրկեր.
Խեր չը տեսներ այն օսմանլուն,
Որ քրդու ձեռ չդներ այնարուն։
Շատխու սարեր բացվի սուսուն,
Էնոր մեջի հայեր թռսուն.
Ա՜խ, ի՜նչ անեմ որ ձեռ դառտարկ,
Զուլմի ձեռ ինկեր են կըրակ։
Շատխու սարի ջրերն ին պաղ,
Շատխու հայեր արընճապաղ.
Սոնա պայնով չինարի պես,
Մահ կուգ տվին Աբելի պես։

Թաղի գըլուխ ախպյուր չըռա,
Տաք-տաք արուն մեջ կը եռա.
Լըցնեք շուշնեք էտա շարպաթ,
Ջորս նահատակ պիրեն արդար։
Շատխու սարեր չէր հալե ձյուն,
Արուն-արցունք Շատախ լեցուն.
Ջորիք բարձին կաթար-կաթար,
Ջոմ Ըստամպոլ ճամբեք թաթար։
Ազիզ, Ապրիկ ջուխտ մ'ընկերոջ,
Ծանրիկ քընեն կեռ ծառի խով.
Վարդեր բացվան ինոնց չում ծոց.
Շատուց հովցավ իրենց պարկ խոց։
Եղերովա ընցավ քարվան,
Շատխու հայեր էկած են վան.
Վանա խոջեն թող քեֆ անի,
Էն գանկըտից չէր ըռազի։
Աղթամարա կաթողիկոս.
Թող նա քընի, անուն ափսոս.
Պարե'մ ինոր արեք ակախ,
Թե ավերավ Մոկս ու Շատախ։
Աղթամարա կղզին կըռեճ,
Թե որ կըղերմ էլներ մեր մեջ.
Յա կր պեռեռ հայուն ֆարմանը,
Յա մեր ցավին կաներ դարմանը։

12 (24). ա) «ՎԱՐԱԳԱ ՍԱՐ ԲԱՑՎԵ ՍՈՒՍՈՒՆ»

Վարագա սար բացվե սուսուն,
Քյաֆիր մորթե չորս հատ թոսուն։
Վարագա սար բացվե կակաչ,
Խալիթ կտրե ութ հատ ականջ։
Տոնյա-գյալին ուլոր-մուլոր,
Ութ հատ կաշաղ արին բյուլոր,
Արևն առե խաչ պատուխան[1],
Ակո, քյո ջալադներ եկան։
Ակոն գյո էն վեր մեկ քյարին,
Ութ խատ խանչալ մեջ մեկ յարին։
Սելերն էկան ճովռալեն։
Մերերն եկան մըռմըռալեն։

Բ) ՎԱՆԵՑՈՑ ԵՐԳ

Արևն առեր մըջ բաղանին,
Մերիկ մեռներ ուր Վարդանին։
Արևն առեր մըջ խաչերաց,
Մերիկ մեռներ թուխ աչերաց։
Դոնյա-գյալին թափիր քամբակ,
Խալըթ կտրեց չորս հատ ջանդակ։
Վարագա սար բացվեր կակաչ,
Խալըթ կտրեց ութ հատ ականջ։
Վարագա սար բացվեր սուսուն,
Խալըթ կտրեց չորս հատ թոսուն։
Սելեր էկան ճրոճրոալեն,
Մերեր էկան մրոմրոալեն։
Ամմա՜ն, ամմա՜ն, խալըթ աղա,
Օրորոցին խաթր արա՜։

13 (25). «ԽԱԲԱՐ ՏԱՐԵՔ ՀԱՐԻՆ, ՄԱՐԻՆ»

Խաբար տարեք հարին, մարին,
Հակո սպանած կեմա սարին,
Գոռց ընկեր վանա քյարին։
Խաբար տարեք պյուղի ռեսին,
Թուղթ մ'ալ խրկեք կաթղակոսին։
Յաման, յաման դերիկո,
Շիվան, հաթի բերիկո,
Հակոն սպանած Գյադիկո...

14 (26). ԴԵՊԻ ՎԱՆ

Պատերազմի դաշտում դատը վերջացավ,
Մեր քաջ հայոց սրտեր հույսով լցվեցավ։
Արշավենք, սիրելի, դեպի սիրուն Վան,
Արշավենք, նազելի, դեպի անուշ Վան։*
Մեր հայկական մի խումբ Կոտոլեն անցավ,
Մեջքերնին պատրոնտաշ, ձեռքին հրացան։

---

* Կրկնվում է յուրաքանչյուր երկտող տնից հետո (Մ. Կ.)։

Հայդուկների ճամփան Թավրիզ-Հավթվան,
Կանցնեն կուռ շարքերով, կանցնեն դեպի Վան։

Առաջ գնանք անվախ, վառված սրտերով,
Թշնամուն հալածենք՝ խրոխտ շարքերով։

15 (27). Ո՛Հ, ՍՈԽԱԿ ԻՄ

Սոխակ, ինչո՞ւ այդպես տխուր երգում ես,
Որո՞ւ համար այդպես կուլաս, կարտասվես,
Քաջ Փոխիկի մահվա՞ն վրա սգում ես։

Ո՛հ, ո՞ւր երթամ, ո՛հ, ո՞ւր փնտրեմ քաջ Փոխիկ,
Ո՞ւր պիտ գտնեմ միշտ իր խմբից անբաժան,
—Կոտոլ ձորում[1] ընկած ճապաղ մեջ արյան։

—Կոտոլ ձորում ընկած է նա նահատակ։

Ո՛հ, սոխակ իմ, թռիր դեպի Շատախը,
Թաղի տղոց պատմիր Փոխիկի մահը.
Ինչպես ընկավ նա իր ընտիր խմբով։

16 (28). ԴԵՊԻ ՍԻՐՈՒՆ ՎԱՆ

Կանչեցեք, հայ տղեք,
Վառ-վառ երգերով,
Ճանապար կելնենք,
Քաջ ընկերներով։
Հալածենք թշնամուն,
Մուսին զենքերով,
Արշավեցեք տղեք,
Դեպի Հայաստան։
Արշավեցեք տղեք,
Դեպի սիրուն Վան,
Քաջ Ֆարամազ[1] կանչեք,
Վառ-վառ երգերով։
Էլի դուրս կգան,
Քաջ ընկերներով
Կջարդեն քուրդերին,
Փայլուն զենքերով։

1421

Դեհ ձեզի մեռնեմ,
Արշավեցեք հայ քաջեր
Դեպի սիրուն Վան։
Դեպի Հայաստան։

17 (29). ա) ԴԱԼՎՈՐԻԿՑԻ ԿՏՐԻՃ

Դալվորիկցի կտրիճ եմ խորթ,
Քաղքցու պես չեմ թուլամորթ.
Սարի զավակ, քարի որդի,
Հին քաջ Հայոց եմ մնացորդ։
Դալվորիկցի զավակ եմ քաջ,
Չեմ խոնարհիր թուրքի առաջ,
Խարոտ լեռանց ես ազատ լաճ,
Չեմ տեսեր ո՛չ արոր, ո՛չ մաճ։
Երբոր բացի աչքս այս աշխարհ,
Ազատ տեսա մեր սար ու քար,
Մինչև փակեմ աչքս ի խավար,
Պիտ չկոխե հոս ոտք օտար։
Իմ մամ ծնավ զիս պալու ծոց,
Ինձ ընկուզ կոճ մը եղավ օրրոց,
Տկլոզ ծնած, մենցած տկլոզ,
Դեմ արևու սաստիկ հողմոց։
Ոտքս բոբիկ, սիրտս միշտ բաց,
Ոնչ փուլթ թե քուլրս ալ մերկ մնաց,
Ինձ մոտ մեկ է արև, բուք, ցուրտ,
Բավ՝ չի իշխեր վրաս թուրք, քուրդ։
Իմ կյանքը խեղճ է և միշտ չարքաշ,
Փափուկ կյանքի վայելց չեմ վարժ,
Իմ բնակարանս է ապառաժ,
Գործս եղկաթի հետ, ես ալ միշտ քաջ։
Թող այլք քնակին հովիտ ու դաշտ
Վատ անդուխի հետ լինին հաշտ,
Ես պիտ մնամ միշտ աննվաճ,
Թե վրաս գա մի քսան վաշտ։
Ցորենի տեղ կուտեմ կորեկ,
Երկաթ ծեծեմ գիշեր-ցերեկ,
Շինեմ փետատ, խոպ, խաճրկաթ,
Ծանր է դատումս, բայց եմ ազատ։

Հարստություն, ուսում, հանճար,
Պատիվ և փառք չեն ինձ համար,
Բավ է՝ ունիմ ճաք, թուր, խանճար,
Բավ՝ չի խրոխտար վրաս օտար։
Զննքս է միակ իմ խաղալիկ,
Գատեմ հանդարտ կյանք խաղալիկ,
Կը սիրեմ որս, կռիվ, ավար,
Կը սպասեմ՝ երբ ընկնի հավար։
Կիշեր զննքս վրաս քնեմ,
Երազիս մեջ կռիվ կենեմ,
Կռվել ինձ մոտ խաղալ է,
Կռվով մեռնել ինձ հալալ է։
Կռվի մեջ մեռավ իմ պապ,
Այդ կերպ մահն է անուշ մրափ,
Ես ալ կուզեմ մահը մեջ կռվի,
Որ իմ անունս անմահ դրվի։
Այս սարերը անմատչելի՝
Իմ քաջ նախնիք երբ ընտրեցին,
Ըսին՝ ազատ որդոց որդի,
Քաջաց սերունդ թող հոս ապրի։
Եվ իմ խելոք ջոջապապ Հարե,
Աստված հոգին լուսավորե,
Ինձ կըսեր միշտ՝ աղքատ ապրե,
Բայց մի ծռե վիզ, հարկ մի վճարե։
Դալվորիկն է սև-սև սարեր,
Խոր, մութ ծործորք, սեպ-սեպ քարեր,
Վերև ջուխտակ ծեր Մարաթուն,
Հոգիս մատաղ մեր Մարաթուն։
Մեզմով պարծի այսօր Սասուն,
Մենք ենք խրախուս հայոց նկուն,
Դալվորիկ սար ժեռատ Ջելթուն
Տան իրարու ազատ ողջուն...

բ) ՏԱԼՎՈՐԻԿ

Տալվորիկի զավակ եմ ղորդ,
Քաղքըցու պես չեմ թուլամորթ,
Սարի զավակ, քարի որդի,
Հին քաջ հայոց եմ մնացորդ։

Տալվորիկի զավակ եմ քաջ,
Չեմ խոնարհիր թուրքին առաջ,
Քարոտ լերանց եմ ազատ լաճ,
Չեմ տեսել ոչ արոր, ոչ մաճ։
Հայ աղբըրտիք, վայ աղբըրտիք,
Տալվորիկի զավակ եմ քաջ,
Ազատության սիրույն համար
Եկեք դեպ ինձ, հառա՜ջ, հառա՜ջ*։
Երբ իմ աչքերս բացի հ՛աշխարհ,
Ազատ տեսա մեր սար ու քար,
Մինչ չփակեմ աչքս ի խավար,
Պիտի չկոխե հոս ոտք օտար։
Իմ մամ ծնավ զիս սարերու ծոց,
Ընկույզի կոճղ մ՛ինձ օրորոց,
Տըկլոզ ծընա, մեծցա տըկլոզ,
Կյանքիս բաժինն է կռիվ ու բոց։
Ոտքս բոպիկ, կուրծքս միշտ բաց,
Ինչ փույթ թե քուրս ալ մերկ մնաց,
Ինձ մոտ մեկ է արև, փուք, ցուրտ,
Բավ է չիշխե հոս թուրք կամ քուրդ։
Իմ կյանքս խիստ է և չարքաշ,
Փափուկ կյանքի թնավ չեմ վարժ,
Բնակարանս է ապառաժ,
Ընկերս՝ մրրիկ ու երկրաշարժ։
Հարստություն, ուսում, հանճար,
Փառք ու պատիվ չեն ինձ համար,
Բավ է ունիմ տեգ, թուր, խանչար,
Բնավ չի խրոխտար վրաս օտար։
Սիրած զենքերս չեմ ձգեր ձեռքես,
Աույծն անվախ չէ ինձի պես,
Կը սիրեմ որս, կռիվ, ավար,
Կը սպասեմ երբ ընկնի հավար։
Թող հայք բնակին հովիտ ու դաշտ
Վատ ազգին հետ չըլլինին հաշտ,
Ես պիտ մնամ միշտ աննվաճ,
Թեև վրաս գա քսան վաշտ։

---

* Քառատողը կրկնվում է յուրաքանչյուր երկու տնից հետո (Ս. Կ.)։

Ձորենի տեղ կուտեմ կորեկ,
Երկաթ ծեծեմ գիշեր-ցերեկ,
Շինեմ փետուր, խոփ, խաչերկաթ,
Ծանր է դատուս, բայց եմ ազատ։
Այծյամի պես կը ցատկոտեմ,
Առյուծի պես կը մռնչեմ,
Ծովի նման կը փրփրեմ
Կայծակի պես կը հարվածեմ։
Կռվո դաշտը բաղդն է կյանքին,
Երբ կը ծագի արշալույսը,
Կամ ավետիս տա դրոշակին,
Կամ պաղ տեսնե քու երեսը։
Հավար ինկնի, երթամ հառաջ,
Սասնո լերինք հանեն հա՞ռաչ,
Հառաչ հանեն և ներկվին,
Ցեւր կտրիճի արյունով քաջ։
Կտրճին սիրտ, կտրճին ձեռք,
Ինչ փույթ քաջին համար մեկ վերք,
Մեկ հարվածեն կուտաս հարյուր,
Ագռավին լեշ կանես հազեր։

գ) ՍԱՍՆՈ ԵՐԳԸ

Սասնո լեռներ որոտացին,
Լսեց խնդաց քաջ զեյթունցին,
Թե այս երկու Սև սարերեն,
Պիտ ազատի հայն յուր լուծեն։
Տալվորցի եմ կտրիճ մի խորթ,
Քաղքցու պես չեմ թուլամորթ,
Սարի զավակ, քարի որդի,
Հին քաջ հայոց եմ մնացորդ։
Մեր հարց արուն վրեժ կը գոչե,
Վրեժ կը գոռան շերմաց խորեն,
Հառա՛ջ, հառա՛ջ, օն եղբայրներ,
Հապն հառաջ, օն հայ քաջեր։

18 (30). ՍԱՍՈՒՆՑՈՑ ԵՐԳ

Առին տարան սըրտիս ճիղեր,
Մեռան կորան ըմեն ճըժեր։

Աչիդ մատաղ սուրբ Տիրամեր,
Մեռանք, կորանք, թողանք անտեր։
Սարեր լմեն կոծին կողբան,
Մըր բյուր ցավեր, մըր լմեն բան։
Տալվորիկցի ենք քաջ զավակ,
Մարենք լմեն շանթ ու կայծակ։
Վրկա եղնին մըր սար ու ժեռ,
Չեն խորտակի մըր քար ուժեր։

19 (31). «Մո՛ւշ, Ա՜խ ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔ»

Մո՛ւշ, ա՜խ իմ հայրենիք,
Դու մի՛ մշուշվիր,
Ես եմ մալուլվեր,
Եղբայրս են տարեր։
Վանքե՛ր, պետ ու մանտր սրբեր,
Դուք մի՛ք ապվորվիր,
Ես եմ սգալի,
Իմ հայրան են գերի։
Ո՛վ դուք, մեր սարեր,
Տավրոս ու Բյուրակ,
Եղերտուտ ու Տաղոնք,
Դուք միք մոռղվի,
Սև եմ սքողվի, սիրականս են տարի։
Ո՛վ դուք, մեր գետեր՝
Եփրատ ու Մեղրի,
Սիրուն առվակներ
Էլ մի՛ք քչքշա, սիրտս կըքլքլա,
Աչքիցս արյուն կկաթի։
Երկնից հավորիկք՝
Տատրակ, ծիծեռնակ,
Արագիլ ու կռունկ,
Դուք մի՛ք կղկղալ,
Ես եմ մղկտալու, իմ բունս են քանդի։
Արև՛, դու է՛լ մի փայլի,
Լուսի՛ն, դու ա՛լ չերևաս,
Աստղի՛կ, հորի՞ կը ցոլաս,
Լուցաս է խավարի, հայրենիքս աչքի։

20 (32) «ՊԱՏԱՒԻԿՆԵՐ»

Մի՛ լար, մայրիկ, զմեզ կը տանին,
Սուրբ հավատից զմեզ չըն հանին։
Մայրիկ, մայրիկ, մայրիկ,
Մայրիկի տարդերը սարերով,
Անո՛ւշ, գառնուկ, անուշ։
Ես Կարապետն եմ մշեցի,
Իմ նոր-հարսից կարոտ մանցի։
Արևն առավ Սաջկա դուրան,
Փոթկանց տներ սևավորան։
Ես Արշավիրն եմ վերին թաղցի,
Իմ ծնողքս էլ քեզ զոհեցի։
Ես Նազիկն եմ մեխանաչի,
Մեկ պուդ բախու հասրաթ մանցի։
Ես Մոզյան եմ իսթամպոլցի,
Մեկ չոր հացի կարոտ մանցի։
Ես Աղաբեգն եմ կարնեցի,
Դուր ու դրկից կարոտ մանցի։
Ես Արշակն եմ թիֆլիզեցի,
Իմ հողից մահրում մանցի։

21 (33). Ո Ղ Բ

Քամին եկավ էրան, էրան,
Եկավ հասավ Մշու բերան,
Մշու հավքեր թևավորան,
Դաշտ ու դուրան սևավորան։
Հայլո տլո, վայլո տլո,
Մենք ինչ ընենք, դուք ինչ ընեք,
Սարեր բուք է, շիվարեր ինք,
Իմտատ կուզինք, մարդ չերևա։
Մշու կտրիճներ բոլոր բռնվան,
Զդաշտի հայեր փաթթեց սև դուման,
Խիրաթ չմնաց, ժամեր թալնվան,
Զմեր առաջնորդ լև Բաղեշ տարան։

---

* Կրկնվում է յուրաքանչյուր երկտող տնից հետո (Ծ. Կ.)։
** Կրկնվում է յուրաքանչյուր տնից հետո (Ծ. Կ.)։

Հայություն տրորվավ, ազգություն կտրավ,
Տարոն ավերվավ, Մուշ խոպան դարձավ,
Մըր սուրբ կրոնքն ալ սաստիկ անարգվավ.
Ջամեն լե տարան, դանակ ոսկրին հասավ։
Ազգ՝ որբ, հոտ՝ անտեր, ժամք՝ այրի, անխունկ,
Սգավոր խաչեր թափեն արտասուք,
Կիլա Եղերտուդ, կիլան Ինն ակունք,
Արտասուք թափեն բերդ, սրբոց մասունք։
Տարոնո հարսներ և կուսանք փափուկ,
Երիտասարդներ սևեր են հագուկ,
Առաջնորդարան անտեր ու քանդուկ,
Շուկա, դպրոց, ժամ մտեր են սև սուգ։
Երբ չտմինք հանգիստ՝ ի՞նչ ընենք վաստակ,
Ինչ բանանք ժամեր՝ խաչն է ոտքի տակ,
Ի՞նչ արժե դպրոց, երբ ազգով կորանք,
Առաջնորդարանը՝ ի՞նչ ընենք դարդակ։
Մշու երկիր և սար պատեց մութ,
Չի գնաց մեր լույս, մեր հայր բարեգութ,
Սև ջոջ պաս բերավ փետրվար ութ,
Երկինք մեզ վրա արկեց սև կարկուտ։
Տարոնցին հանեց սրտեն կասկած, ահ,
Քանց գերի ապրել, լավ է մեզի մահ...

22 (34). «ՔԱՄԻՆ ԷԿԱՎ ԷՐԱՆ, ԷՐԱՆ»

Քամին էկավ էրան, էրան,
Մշու քաջեր սևավորան,
Տարան կիտան թուփի բերան,
Մայրըկա դարտեր սարերով էր.
Անո՜ւշ, անուշ, անուշ ջան։
Ես Իսակն եմ իստամպոլցին,
Օտներս ձեռներս քալամջեցին,
Դեպի Պոլիս հըղըրկեցին.
Մայրիկ, դարտեր սարերով էր.
Անու՜շ, անուշ, անուշ ջան։
Ես Արշակն եմ միխանաջի,
Փախա ելա սարեր մացի,
Ջարես կտրավ, նստա լացի,
Յոթն օր բոպիկ ձան վրա մացի.

Մայրիկ, մայրըկա դարտեր սարերով էր.
Անո՜ւշ, անուշ, անուշ ջան։
Աստված սպանե քոռ վարժապետ,
Քեավոր մատնեց, սանիկն ի հետ.
Ճամբես էլավ դեպի Պոլիս,
Թաժա նոր հարս տեղիս դրեց.
Մայրիկ, մայրըկա դարտեր սարերով էր.
Անո՜ւշ, անուշ, անուշ ջան։
Սուրբ Ծննդյան մեծի տոնին,
Մըզիկ հիշեք մեջ աղոթքին.
Ես գնացի ա՜խ ու վախով,
Զը՜զնե մացի խիստ կարոտով.
Մայրըկա դարտերն սարերով էր.
Անո՜ւշ, անուշ, անուշ ջան։

23 (35). «ԽԻԱՆՑԻ՛Ք, ԸՆԿԱՎ ՀԱՎԱՐ»

Խիանցի՛ք, ընկավ հավար,
Բաքրանցիք, ընկավ հավար,
Հայեր ժողվան Ֆրոֆրո քար.
Մելքո՜ն, զՔարակ[2] թալնեցին,
*Մուրատ[3], զՀարթիք վառեցին**։
Շեյխ Մահմատեն եկավ լուր,
Հայեր ժողվան Գոլի խոռ,
Ըսին զհայեր քաշեք սուր։
Շեյխ և սոֆիք հաչալով,
Սարե ի սար վազելով,
Ըսին զհայեր թալնելով։
Յոթ աշիրաթ մեկ էղավ,
Քուրդն ու ասքյար խռնվավ,
Տալվորկցուն օգնող չէղավ։

24 (36). «ԱՉՈՒ ԵՐԳԸ»

Ես ի՞նչ կենեմ կով ու կթան,
Որ մենք չունենք չութ ու փութան,

---

* Կրկնվում է յուրաքանչյուր տնից հետո (Ծ. Կ.)։

Ազի, ազի, ազի, ազի, ազի,
Ազու դարտերն էր սարերով,
Անուշ, անուշ, անուշ, անուշ,
Ջահել եմ, ջիվան եմ, չեմ էրթա, ազի ջան*։
Անարատ կաթ Աստվածածին,
Դու սաղ պահե նանի բալին։
Արևն ելավ կամար-կամար,
Էս լուրն էլավ մեզի համար։
Էլ մենք չունինք մխիթարանք,
Երկնուց գետին ընկանք-կորանք։
Սատունա սարերը փուս էր,
Խեղճ մշեցուն աչքի լուս էր։
Խաչը տարանը քցին ջուրը,
Նոր էկավ մեզի էս լուրը։
Էկան գրեցին ձիանր,
Տաճկից էղավ մեր զիանը։
Ղշերն էկան ծառին թառան,
Անուշ բաիս ձեռնես առան։
Էլ ֆիտանս մեր տուն չի գա,
Գիշերն աչքերս քուն չի գա։
Ալ քողքով հարս տուն մնաց,
Բալիս տարան՝ սիրտը գնաց։
Խապար արեք մեր Հայրիկին,
Մեկ ջուր լցնե էս կրակին։

25 (37). «ՋԷՆ ՕՐ ԳԼՈՒԽՆ ՀՈՂՈՒ ՀԱՎՍԱՐ ԻՐ ԴՐՈՒԿ»

Ջէն օր գլուխն հողու հավսար իր դրուկ,
Քրդու, թրքու անլաց աչերին իր էղուկ,
Հըմկա տարի վրեն խլած զուր վահան,
Պրին տիտե զալըմ քրդին, փահլվան։
Հայ լոլոլո, լոլոլո,
Ավե, Գալե, միր-Սատո։
Սատե ասեց մըրր հայերուն կիսամեռ.
«Մըզիք ավա խլեք նիզակ, ելեք լեռ,
Ջանուն հայուն կոխինք ճակատ Անատոքա,

---

* Քառատողը կրկնվում է ամեն երկտող տան վերջում (Ծ. Բ.)։

Իմըլ ուր էրէց Դավիթ, Մհեր մեր արքա...»
Հայ լոլոլո, լոլոլո,
Հակո, քաջե, Միր-Սասո։

26 (38). ՍԱՍՈՒՆ-ԳԱՎԱԼ

Սասուն գավառ բացվեր սուսուն,
խալիլ[1] կտրեց յոթ խատ թռուսուն,
Մի՛ լար մերիկ, ես մինակ չեմ,
Մի՛ լար քուրիկ, ես մինակ չեմ։
Սասուն գավառ բացվեր կակաչ,
խալիլ կտրեց յոթ խատ անկահճ։
Սելերն էկան ճրոավրռալեն,
Մերներն հետև մրոմրռալեն։
Սասուն գավառ բացվեր նարգիզ,
Հակոբ կտրեց խալիլի վիզ։
խալիլ փաշեն էն քոռ դադին,
Ջոյաբ տարեք շուն Համիդին,
Թո ճանչռնա քաջ ջանֆիտին,
էլ մե պետք չէ Մասաբատին։
Քամին էկավ էրան-էրան,
Գնաց խասավ Մըշու բերան,
Մըշու խավքեր թևավորան,
Էկան խալիլի լեշ կերան։

27(39). ա) ԵՍ ՄԵՆԱԿ ՉԵՄ

Մայրիկ, մի երթար փաշի սարեն,
Կը նորոգվի սըրտիս յարեն,
Մի՛ լար մայրիկ, ես մենակ չեմ,
*Մի՛ լար հոգիս, ես մենակ չեմ**։
Ժամու դռներն էր բոյալի,
Հակոբի[1] ձեռքն է սուրմալի,
Էլեր եկան գոռգոռալով,
Մայրեր եկան բոռբոռալով,
Սասնո սարեր բուսան կակաչ,
Գևորգ[2] կտրեց խալիլի[3] ականջ,

---

* Կրկնվում է յուրաքանչյուր երկտող տնից հետո (Ծ. Կ.)։

բ) «ՍԵԼԵՐ ԵԿԱՆ ՃՈՎՈՒԱԼԵՆ»

Սելեր էկան ճովռալեն,
Մայրս էկավ գոռգոռալեն,
Մի՛ լար մայրիկ, մի՛ լար քույրիկ,
*Մի՛ լար, հոգիս, ես մենակ չեմ**։
Գավառասար դարձավ Սասուն,
Պարոն կտրեց յոթ հարյուր թոսուն։
Գավառա սար բացվավ ներգիզ,
Պարոն կտրեց խալիլի վիզ։
Մայրեր, քույրեր կանչեք աստված,
Որ կատարվի մեր խնդրվածք։
Մայրիկ, մի էրթա փաշի սարեն,
Կթաժանա սրտիդ յարեն։

28 (40). ՍԱՍՈՒՆՑՈՑ ԲՈՂՈՔԸ

Է՛, աղբրտանք, վոլա թուլմուլ եք, վըղրծաք,
Մըք կտրեցինք ու կըտրվեցանք,
Դըք է՞ր կանաք ու շվարեցաք,
Կինաք շուրվա ապո՞ւր է կը գըգթաք։
Մըր աղբըրներ ու տիրացուներ,
Վրժապետներ ու վժաճետներ,
Ըզատ երկիրներ գինի կըխմեք,
Մեկ երկիր կը սուքեք, մեկ լե կավրեք,
Կը ծընծակ ու խնոտակ՝ արծիվ եք,
Թա վըր կռիվ տեսնեք՝ անծեղ էք,
Մընակ մըժլով Սասուն կազըտիք,
Ըղորտ ավրվավ մըր էրկիր ու սարեր,
Կտրեցին մըր քուլֆաթեն ու ճըժեր,
Տարան զհարաններ ու ջըհել աղջիկներ,
Ամմա է՛մլե մըք կանք ու կը կենանք,
Էմլե կապրինք ու կը մեռնինք,
Կը դուք վը՞ր օրվա եք, աղբըրտանք,
Մըր վրեն եկան քսան աշիրաթ,
Տասհազար լը ասքյար ու զապուխ,
Մըր բերդն էր Անդոք ու Կեփին,
Ցըռ-ֆըռ քար ու չուխտակ ծեր Մարաթին,

---

* Կրկնվում է յուրաքանչյուր երկտող տնից հետո (Ծ. Կ.)։

Դուշմնի ձեռք կըր այնալի սև կոթ,
Լը մըր ձեռք՝ չախմախլի պըռկոթ։
Մըք չունինք հըց, կերանք ալնի խոտ,
Ու ըպա՞ էս հալով ու խուդրաթով
Ջուզինք թուրքին հալել ու մաշել
Ու հեսրութեն ամեն օր քաշել,
Մըք մեռաք առոք ու փառոք,
Լը դուք մամոնի ձեռոք։

29 (41). «ՄԵՆՔ ՍՐՏՈՎ ԿՏՐԻՃ ՈՒ ԲՈՅՈՎ ՊԱՐԹԵՎ»

Մենք սրտով կտրիճ ու բոյով պարթև,
Ունինք հաստ-հաստ թև, կվազենք թեթև,
Ափսո՜ս, չմնանք եսիր, խղճալի,
Տվեք մեզ, հայեր, մեկ-մեկ այնալի։
Քար կհալցնենք, չուր դարձնենք պերկաթ,
Ափսո՜ս, չմնանք, ... տաճկին ըռիաթ,
Տաճիկ մեր հառչեն փախչի քանց կատու,
Ափսո՜ս, չմնանք տաճկին հարկատու։
Սրտներս չեն վատ, քաջեր ալ կան շատ,
Ունինք լույս հավատ, ինչո՞ւ չենք ազատ,
Բոբիկ, տկլոզ, բանի կարոտ չինք,
Միայն թե, հայեր, տվեք մեզի զենք։
Անոթի ծարավ, աղ լե չմնաց,
Արմատ կկրծինք, չենք ուզեր ձեր հաց,
Անոթի ծարավ, բանի կարոտ չենք,
Միայն թե, հայեր, տվեք մեզի ոնք.
Անտոք, Ծովասար, Խարդան, Մարաթուք
Կկանչին՝ չուր երբ մեռած մնաք դուք,
Հանդե կ'ելնենք ու առաջ վազենք,
Միայն թե հայեր, տվեք մեզի զենք։
Ջենք ուզեր մենք ձեր ոսկին ու արծաթ,
Լոկ միայն կուզենք մեկ-մեկ ծակ երկաթ,
Նրանով Սասուն ու Մուշ կազատենք,
Միայն թե, հայեր, տվեք մեզի զենք։

30 (42) ա) ԿՏՐԻՃ ՍԱՍՈՒՆՑԻ

Մընք սրտով կտրիճ ու բաժով պարթև,
Ունինք հաստ-հաստ թև ու վազինք թեթև.

Հեսուքենի մեջ մըր սիրտ կ'հալի,
Տվե՛ք մըզի, հայեր, մեկ-մեկ այնալի։
Մընք քար կը հալցունք, ջուր դարձունք զերկաթ,
Ափտոս չի՞նք մնանք վատ տաճկին ըռհաթ.
Հեսուքենի մեջ մըր սիրտ կհալի,
Տվե՛ք մըզի, հայեր, մեկ-մեկ այուրմալի։
Անտոք, Ծովասար, Կեփին, Մարաթուք,
Կանչին—հարի ե՞րբ մեռուկ մնանք դուք.
Բեզրանք նատելով, մընք կռիվ կուզենք,
Միայն թե, հայեր, տվե՛ք մըզի զենք։
Շիր մըր առջևեն փախնի քընց կատու,
Ափսոս չի՞նք մնանք տաճկին հարկատու,
Սրտերսի չեն վատ, քաջ տղեք կան շատ,
Ոմնինք լուս հավատ, հորի՞ չինք ազատ։
Մըր սուրբ Մարափեն էղնի ձեզ վկա,
Աշխարհք քընց մըզի կորիճ մարդ չկա.
Հանդե կը կանչինք ու հառաջ վազինք,
Շուտով մըր վզեն լուծ, շղթան խզինք։
Անոթի, ծարավ, աղ լե չմնաց,
Կուտինք չոր արմատ, չընք հուզի արծաթ,
Մենակ մընք կուզինք ձըզնե ծակ էրկաթ,
Ընտրով մընք Սասուն ու զՄուշ կազատինք։

բ) «ՄԵՆՔ ՍՐՏՈՎ ԿՏՐԻՃ ՈՒ ԲԱԺՈՎ ՊԱՐԹԵՎ»

Մենք սրտով կորիճ ու բաժով պարթև,
Հաստ, հաստ ունինք թև ու վազենք թեթև,
Բեզրանք նստելուց, մենք կռվել կուզենք,
Միայն թե, հայե՛ր, տվեք մեզի զենք։
Անոթի ծարավ, աղ լե չը մնաց,
Արմատ կը կրծինք, չենք ուզեր ձեր հաց,
Անոթի, ծարավ՝ բանի կարոտ չենք,
Լոկ միայն, հայե՛ր, տվեք մեզի զենք։
Մեր սուրբ Մըրըբեն եղնի մեզ վկա,
Աշխարհ քընզ մըզի կորիճ մարդ չկա,
Շեյխ մեր առջևեն փախնի քընզ կատու,
Ամոթ չէ՞ մնանք թուրքին հարկատու։

Զեզնե չընք ուզի ոսկի, ոչ արծաթ,
Տվեք մեզի, հայեր, մեկ-մեկ ծակ երկաթ,
Հանդե կը կայնենք ու առաջ վազենք,
Միայն, աղբըրտի՛ք, տվեք մեզի զենք։

31 (43). ՍԱՍՈՒՆԻ ՊԱՏԵՐԱԶՄ

Մանկո՛ւնք, երբոր հրացան բացվավ,
Գոռուն, գոչուն լեռներն ընկավ,
Զորք խոտի պես գետին թափվավ,
Խեղճ սասունցուն օգնող չեղավ։
Ահա վալին էկավ Բաղեշեն,
Զորք, թնդանոթ բերեց Մուշեն,
Եվ ուրին զորք չորս կողմերեն,
Խեղճ տալվորցուն չնչել կուզեն։
Խեղճ սասունցիք կանչին.—Աստված,
Անոթի ենք, տո՛ւր մըզի հաց,
Ամենքս մեկ և անկասկած,
Զարկինք, ջարդինք մինչ կատարած։
Հայեր՛, տեսաք քաջ Տամատյան[1],
Ի Տալվորիկ նստավ գրպան,
Մնավ Նորայր, Արամ, Տիգրան,
Կանգնել զանկուն զհինգդարյան։
Իրավ, հանկարծ այս փոթորիկ
Մագումն առավ ի Տալվորիկ,
Խեղճ տալվորցիք մերկ ու բոբիկ,
Հրացան վերցրին մարդ, ընտանիք։
Ահա ութ հազար զորք դուշմանին,
Հայոց միայն թվով ութսուն,
Դեմ հէլան բարի լուսուն,
Գասպար բոռաց[2].—Զարկեք դրան։
Անգութ քրդեր վերցին զբալան.
Գասպար բոռաց կորյան նման.—
Տղեկներ, դուք իք վարդան, վահան,
Առյուծի ձագ Մամիկոնյան։
Հանկարծ էրկինք, էրկիր ձայնեց.
Սարեր, ձորեր ձայն արձակեց,
Որոտաձայն գնդակ թափեց,
Քրտերու զորք խսպառ լափեց։
Հայնժամ կասե մեծն խումանատար.

— Էդ հայերուն դու ձեռք մի՛ տար,
Հայեր վառված ին չարաչար,
Ջմըզի կէնին ամոթահար։
Անդից վալին կասե.—Ավաթ,
Հայոց ազգն է թերահավատ,
Մըր պառեկն է հզոր Մահմատ,
Աղոնց հազար՝ ու մըր մեկ մարդ։
Վալուն կասե Գելու[3] իշխան.
— Հզոր Մահմատ ձըզի պաշտպան՝
Սուրբ Կարապետ մեզ օգնական,
Ջարկինք, ջնջինք զՏաճկաստան։
Վալին կատղած կըսե.—Օղուլ,
Մշու դաշտն է բիրինջի խոլ,
Կտրիմ զգլուխդ՝ խաղամ ի հոլ՝
Ջմարմինդ ճամբիմ էրթա Ստամբոլ։
Անվախ Պետոն[4] կասե վալուն.—
Ես նատեր իմ վըր էս սարուն,
Բռնիմ զքու ձեռք, զարկիմ քարուն,
Ստամբոլա գոլ լցվի արուն։
Կատղած վալին կասե.—Անգետ,
Քո ձեռք չըկա կտոր մի փետ,
Բռնիմ զքեզ, քերթիմ գլխեդ,
Քո մորթ կըլնամ կորեկ ու հերթ
Պետոն կասե վալուն.—Քելե՛,
Այս խոսք քեզնե շատ ավել է,
Ես առյուծ իմ, ձագերս գել է,
Քեզ կը պատռին, անտեր մարդ իս։
Վալին կատղած կասե խըշման.
—Ի՞նչ կը խոսաս, Գելու իշխան.
Ես տեր ունիմ Ալի-Օսման,
Սուլթան Աբդյուլ—Համիդ քաջ խան։
Պետոն կասե վալուն.—Գազան,
Մեզ աջակցեր է Եվրոպան,
Թողում ըսել զմերձեկան,
Ջանպարտելէ Ռուսն ու Անգլիան։

32 (44). ՍԱՍՈՒՆՑՈՑ ԳԱՆԳԱՏԸ

Սատուն վազեց արյան գետեր,
Ջենքեր չոմինք՝ առանք փետեր,

Խայեր, խայեր, խայեր, խայեր,
Մըր դարտը դուք հեչ չըք քաշեր,
Խայեր, խայեր, խայեր, խայեր,
Կու դիմնանք, կու մեռնինք,
Կու սպանինք, կու ջարդինք քրտերուն։*
Անգութ տաճիկ խըտ քրտերուն,
Ալիրնցին մըր տեղ ու տուն։
Մըր չիվանները տարան գերի,
Թորկին զմըր տներն անվերի։
Խարս ու աղջիկ բռնին թվանք,
Տըհով տեղով մընք քանդվանք։
Մեռան մամ, պապ, ճժեր մեռան,
Սովեն թև-թիկունքներս կեռան։
Սասուն ձեռնե գնաց, խասե՛ք,
Ջուր տեղ մարդու մի՛ բամբասեք։
Ջոր խաց տվե՛ք ու քանվիմ գենք,
Էլ ուրիշ բան ձըզնե չուզինք։
Քըզի մեռնինք, ստուրբ Տիրամեր,
Դու մի՛ թորկի զմըզիկ անտեր։
Խղճուկ խըլտաթ կանչե՛ ու լաց,
Բալքի քու ձեմ լսե աստված։

33 (45). «ՍԱՍՈՒՆ ՆՍՏԵՐ ԱՆՏԵՐ ԿՈՒ ԼԱՐ»

Սասուն նստեր անտեր կու լար
Հավքերն ալ մեջ կը սըգան.
Դուման թափեց մեր աշխարհ,
Երբ իմացանք սև խաբար։
... օսմանցին Սասուն աշեց,
Թուփեր տարավ վրան քաշեց.
Հա՛յ-վա՛խ, հա՛յ-վա՛խ գերի՛ Սասուն,
Ոչ մարդ մընաց, ոչ անասուն։
Սասնա լեռներ միշտ խորթուբորթ,
Սասնա լեռներ միշտ արտն-հոտ.
Հա՛յ-վա՛խ, հա՛յ-վա՛խ գերի՛ Սասուն,
Ոչ մարդ մընաց, ոչ անասուն։

---

* Հետևյալ բոլոր տները (երկտողերը) այս տան նման երգել (Ս. Բ.)։

34 (46). ՍԱՍՄԱՆ ՊՈՒՀԱՐ

Սասման պուղտր մանրիկ ուռ էր,
Սասման կռիվ շատ մրմուռ էր,
Հա՛յ վա՛խ, հա՛յ վա՛խ, հա՛յ վա՛խ Սասուն,
Նա մարթ մնաց, նա անասուն։

Հեսիր գնաց մինչև Ֆռանգստուն,
Կուս ախչիկներ էսիր տարան,
Թազա հարսներ կյերի կնացին,
Հա՛յ վա՛խ, հա՛յ վա՛խ, հա՛յ վա՛խ Սասուն։

Օսմանցին էկավ սև ամպի պես,
Գյուլլեն թափեց կարկտի պես,
Հա՛յ վա՛խ, հա՛յ վա՛խ, հա՛յ վա՛խ Սասուն,
Նա մարթ մնաց, նա անասուն։

35 (47). Ս Ա Ս Ո Ւ Ն

Սասմա պուղուր՝ չայիր-չիման,
Վեր Սասըման մըժ դումանն,
Հե՛յ-վա՛խ, հե՛յ-վա՛խ, խեղճ սասունցիք,
Զուլո՛մ, զուլո՛մ քաջ տասունցիք։

Քառասուն մանգաղ հոր փորնցին.
Մեր-մանուկներ մեջ լեցուցին,
Քառասուն մանվան ծիծ կտրեցին,
Մանուկների խետ թաղեցին։

Հե՛յ-վա՛խ, հե՛յ-վա՛խ, խեղճ սասունցիք,
Զուլո՛մ, զուլո՛մ քաջ սասունցիք։

Աշըղ Սարգիս էտիկ ասաց,
Թագավորից հրաման էկավ,
Սորա կրկոն առավ էկավ,
Հայոց երես ռանգ էկավ։

Հե՛յ-վա՛խ, հե՛յ-վա՛խ, խեղճ սասունցիք,
Զուլո՛մ, զուլո՛մ քաջ տասունցիք։

Ճրագկապոց թոնդիր վառին,
Ալ ու ալման զարդարեցին,
Հե՛յ-վա՛խ, հե՛յ-վա՛խ, խեղճ սասունցիք,
Զուլո՛մ, զուլո՛մ քաջ սասունցիք։

36 (48). ՍԱՍՈՒՆԱ ՍԱՐԻ ԵՐԳԸ

Առանց հացի, առանց ջրի,
Քաջերի բուն, Սասունա սար,
Քեզնից հրդեհ կպատահի,
Կրակի բուն, Սասունա սար։
Հայաստանը երբ կանաչեց,
Թշնամին տեսավ ամաչեց,
Եվրոպան քեզ նոր ճանաչեց։
Առար անուն, Սասունա սար։
Վալի փաշեն եկավ հպարտ,
Քեզանից նա կրեց մեծ ջարդ,
Բերքով, անտառներով առատ,
Անունով մեծ, Սասունա սար։
Քաջ Անդրանիկը երիտասարդ,
Թուրք ասկյարին տվեց մեծ ջարդ,
Ահեղ պատերազմ է, մենամարտ,
Կեցցես կանգուն, Սասունա սար։

37 (49). «ՔԱՅԼԱՄՈՒՐ ՀԵԳ ԲԱՆԱԿԸ»

Քայլամուրը հեգ բանակը,
Ջնջել ուզեց հրոսակը,
Վատին այս չար նպատակը
Ջը գտավ իր հաղթանակը։
Մուրադյանի քաջ խմբակը,
Սարսեցուց չորրորդ բանակը,
Քաջդ Մուրատ[1], առ դիտակը,
Տես Արմենակ[2] նահատակը,
Սեպուհն[3] ընկավ ժայռին տակը,
Նա էր խմբին հրեշտակը,
Բացվիր, բացվիր մերին բաղդը,
Բացվիր, բացվիր հայուն վարդը։
Երեք ընկեր գերի եղանք,
Լեռներ, ձորեր գնդակ տեղանք,
Բաֆֆի, շարժիր գրիչդ, բերան
Հաց խնդրեցինք, օգնող չեղանք։
Անվիճապարտ մյուշիր Զեքի,
Դու հայութեյան վատ թշնամի,

Վեց հազար զորք կոչեց զենքի,
Կռվիլ ընդդեմ տասնյոթ քաջի։
Գարուն լլլար ժուր առնեի,
Ձենք ի ձեռին դաշտ վազեի,
Բացվիր, բացվիր մերին բաղդը,
Բացվիր, բացվիր հայուն վարդ։

Բ) ՀԱՅԴՈՒԿԱՅԻՆ ԵՐԳԵՐ

1 (50). ՇԱՐԺՈՒՄ ՀԱՅՐԵՆՅԱՑ ԿԱՐՆՈ

Զայնը հնչեց Էրզրումի հայոց լեռներեն,
Թունդ-թումոզ եկան հայոց սրտեր զենքի շաչյամեն։
Հայ գյուղացին դարուց ի վեր ժուր, զենք չէր տեսած,
Դաշտը թողուց, ժուր, հրացան բահի տեղ առած։
Հայ ծերուկը ցուպն ի ձեռին լալով խնդրում է,
Հայրենիքի ազատություն տեսնել ու մեռնիլ։
Հայ տիկինը ստիպում է ամուսնուն գնալ,
Պատերազմի դաշտին վրա վերք տալ՝ ստանալ։
Քընքուշ կյանքը ծանր է թվում հայ օրիորդին,
Զեն ի ձեռին սիրտ է տալիս հայոց քաջերին։
Երիտասարդք թոթով լեզվով նամակ գրվել են,
Արարատա դաշտին վրա զինվոր խրմբել են։
Ալ բավ լացիր, Մայր Հայաստան, երկիրդ փառաց,
Քու զինվորներդ միշտ կտրիճ են, որշափ ալ քաղցած։
Առ ու գթվե այդ քաջերը քու սրտիդ վրա,
Որք կը թափեն յուրյանց արյուն ժուրք հողիդ վրա։
Անմխիթյուն, տումը քանդող հայոց խեղճ ազգին,
Հրաժարեցավ, տեղի տվավ միության ձայնին։
Լրաեց քյուրդը ու տառեցավ արյունը խեղճին,
Չէր երազել, հային տեսնել նա այդ վիճակին։
Եվրոպայի[ն] լուրը հասավ շարժմանն հայ գեղջկին,
Ուրախական ողջույն տվավ հայրենասերին։
Ցնծա, մայր մեր, տ՛ավ Հայաստան, որդիքդ միացան,
Ութը դարվան սուգ ու թախիծ մեզնից վերացան։
Ուսումն ու լույս—ազատություն՝ այդ քեզ են ընկեր,
Սուր, հրացան, եռանդ ազգի՝ պաշտպան անվեհեր։
Ուրախացավ մայր Հայաստան, ելավ կանգնեցավ,
Հինգ դարերի սուգ, տառապանք մի քիչ մեղմացավ։

2 (51). ա) ԽՐԱԽՈՒՅՍ ՀԱՅ ՆՈՐԱԿՈՉ ՉԻՆՎՈՐԻՆ

Զարթի՛ր, որդյակ, ո՛ւշ բեր, վե՛ր կաց,
Պատերազմի փող հնչեց.
Զարթի՛ր, կոչե ձայն հայրենյաց,
Կենաց, մահու ժամ հնչեց։
Պատրաստել եմ քո զենք, քո սուր,
Եվ քո գոտին ոսկեթել,
Եվ մի պատակ ոսկեփետուր,
Երկինք կանխավ պատրաստեր։
Հավաքել եմ քո զենքերդ,
Ահա գլխիդ վերև կանո,
Ինչպես երբեմն քո դրքերդ,
Երբ կերթայիր վարժարան։
Ելի՛ր, կապեմ սուր քո մեջքեդ,
Ասպար կախեմ քո ուսեդ,
Եվ մի դրոշակ ոսկեփետուր,
Թո՛ղ ծածանի աջ թևեդ։
Մի՞թե դու չես հիշեր, երբ որ
Գրիչ ու թուղթ տվի քեզ,
Փոխան դոցա,—ըսի,—մի օր,
Ուրիշ բան մ'ալ կոտտամ քեզ։
Ահա փոխան գրչի՝ քեզ սուր,
Փոխան թղթի՝ կռվի դաշտ.
Գնա, կյանք տուր կայսեր համար,
Մայրդ մեռնի երկինք հաշտ։

բ) ՉԻՆՎՈՐԻ ՄՈՐ ԵՐԳԸ

Զարթիր որդյակ, հուշ բեր, վեր կաց,
Պատերազմի փողն հնչեց,
Զարթիր, գոչեց ձայնն հայրենյաց.
Կենաց, մահու ժամ հընչեց։
Պատրաստեր եմ քո զենքերը,
Ահա գրլխիդ վերև կանո,
Ինչպես երբեմն քո գրքերը,
Երբ կերթայիր վարժարանս։
Ելիր, կապեմ սուրը մեջքիդ,
Ասպար կապեմ քո ոսեդ,

Եվ սուրբ դրոշակն հայրենիքիդ,
Թող ծածանի աջ թևեդ։
Փոխան գրքիդ ահա սուսեր,
Փոխան թղթի՝ կռվի դաշտ,
Գնա՛ մեռիր՝ ազգիդ համար,
Թող մայր-երկիրդ ապրի հաշտ։
Գըրչով ուսար ազգ, հայրենիք,
Գրնա սուրով փրկել զայն,
Մեր հայրենյաց վըշտաց հերիք,
Զըսավ աշխարհը համայն։
Մեր հայրենյաց թըշվառությյուն,
Երկրիս ազգաց մեկը չունի,
Մեր խեղճությյան կարեկցությյուն
Երկրիս վրա մարդ չունի։
Գնա՛, որդյակ, այդ սև չարիք,
Խեղդեց շունչը քո ազգի,
Գնա՛ փրկել քո հայրենիք,
Թե ոչ՝ ինչո՞ւ ծնա քեզ։
Քսան տարի կերակրեցի,
Մինչ հասակդ այդ առիր,
Բարձր հասակիդ մայրդ մեռնի,
Դուն ալ քո ազգիդ մեռիր։
Դու հայրենյաց սեղանին զոհ,
Մարտի՛ր, որդյակ, ժամ հասավ,
Երկինք ու ազգ, հայրդ մընան գոհ,
Մայրդ ալ վասն այդ քեզ ծընավ։
Հառա՛ջ, որդյակ, ահա կերթան,
Քու ընկերներդ բյուրավոր,
Որպես ընկեր պպրոցական,
Քաղցր է ընկեր կռվարար։
Հառա՛ջ, որդյակ, ի մարտ անմահ,
Տուր անվախ կուրծք ու ճակատ,
Հոգ չէ թե քեզ կը գտնե մահ,
Ջի հայնժամ է ազգն ազատ։

3 (52). «ՀԵՐԻՔ Է ՄԱՅՐԻԿ, ԴՈՒ ԻՆՁ ՓԱՅՓԱՅԵՍ»

Հերիք է, մայրիկ, դու ինձ փայփայես,
Հերիք է, մայրիկ, ինձ կրծքիդ սեղմես,

Ես կուզեմ չարդել շղթան բռնության,
Ես կուզեմ կռվել, ես կուզեմ մեռնել։
Հասակս քսան տարուց անց կացավ,
Սիրտս վրնժով լիքը լցվեցավ,
Չեմ ուզում տեսնել եղբայրս թշվառ,
Ես կուզեմ կռվել, ես կուզեմ մեռնել։
Լացով չեմ կարող փրկել հայրենիք,
Մայրիկ, ինձ պետք է ձի, սուր, հրացան,
Չեռներս ծալած չեմ կարող նստել,
Ես կուզեմ կռվել, ես կուզեմ մեռնել։
Համիդը ունի գործեր մեզի հետ,
Մեզ կոտորում են, մեզ թալանում են.
Հերի՛ք է մայր իմ, կարո՞ղ եմ լռել,
Ես կուզեմ կռվել, ես կուզեմ մեռնել։

4 (53). ա) ՀԱՅԴՈՒԿԻ ՀՐԱԺԵՇՏԸ

Մնաս բարյավ, քաղցր մայր իմ, ես պիտի գնամ,
Տուր մայրական վերջին համբույր, սիրտս զովանա,
Երկնքի երեսը գույն-գույն կամար է կապեր,
Կարծես հայ տղաների սիրտը խավար է պատեր։
Այ խըղճալի հայ ծնողներ, մի լաք իզուր տեղ,
Այլ խնդրեցեք աստվածանից ձեր վերջին մի դեղ,
Արդյոք կը լինի՞, որ կրկին կենդանի մնամ,
Ուրախ վարթ գամ հայրենիք, նոր կյանք առնամ։

բ) «ՄՆԱՍ ԲԱՐՅԱՎ ՔԱՂՑՐԻԿ ՄԱՅՐԻԿ»

Մնաս բարյավ քաղցրիկ մայրիկ.
Ես պիտի գնամ,
Օտար աշխարհ պիտի գնամ,
Գուցե ետ չգամ։
Երկնքի երեսին մայրիկ գունդ-գունդ
Կամար է կապել,
Կարծես հայ տղաների սիրտը
Խավար է պատել։
Արդյո՞ք կլինի, որ կրկին
Կենդանի ետ գամ,

Ուրախ զվարթ գամ Հայաստանդ,
Նոր կյանք ստանամ։
Ով սիրելի հայ ծնողներ,
Մի լաք մեզ համար,
Այլ խնդրեցեք աստվածանից
Ձեր վերքին մի դեղ։

5 (54). ՀԱՅԴՈՒԿԻ ԵՐԳԵՐԻՑ

Ես գնում եմ հեռու երկիր,
Իմ սիրելի թանկագին,
Բաժանվում եմ ես քեզանից,
Գուցե կրկին չը դառնամ։
Վեր կաց, սիրուն, քո ձեռքովդ,
Մեջքիս կապե սուր, նիզակ։
Պատերազմի փող հնչեցիր,
Պիտի մտնեմ ղենքի տակ։
Մնաս բարով, իմ սիրելի,
Իմ թանկագին բարեկամ,
Միշտ աղաչե աստվածածնից,
Որ կենդանի ետ դառնամ։
Հայրենիքի սիրո համար,
Աշուղ երգիչ եմ դառել.
Գերեզմանս մեկ քարի տակ,
Դուք պիտ ծածկեք սև հողով։

6 (55). ՆԵՐՔԻՆ ԲԱՍԵՆՅՈՒ ԽԱՂԸ

Արազափին ծնված տղա, բասենցի տղա,
Մորդ օրշնեքն ու ղենքը առ, շո՛ւտ կռիվ գնա,
Թե մեռար քաջի պես, կփրկես մեզի,
Սաղ Բասենը մոր պես կողքա քեզի։
Թե սաղ մնաս խաչի, սուրբ խաչ սարի զորքով,
Վրեդ խաղ կը կապենք ու դու կապրես փառքով,
Արազի ափի տղա, Բասենի կտրիճ տղա,
Առ էս թուրն ու դեմի՝ Սասնա տարը գնա։

7 (56) ա. ՀՈՒՅՍ

Ահա՛ կերթամ, սիրելի մայր,
Ազգիս համար մեռնելու,

Քաջ ընկերքս ես մխասին,
Անգութ թուրքերն ջարդելու։
Մի՛ լար, մայր իմ, մ'ողբայր, մայր իմ,
Վերադարձիս լսպասես,
Ազգիս հայոց ազատության
Տիվ և գիշեր աղոթե*։
Ահա՛ կերթամ, սիրելի քույր,
Նպատակըս է բարի,
Չենք դիմանար, մենք գերի ենք,
Իբր վեց հարյուր տարի։
Ահա՛ կերթամ, սիրելի հայր,
Մնաս բարյավ դու հիմա,
Այսքան ճրնշման տակ ինկած է,
Հայը ինչպես դիմանա...
Ահա՛ կերթամ, սիրելի կին,
Քու արտասուք չը հոսես,
Պատերազմի դաշտին վրա,
Իմ ընկերը կը սպասե։
Ո՛վ բարեկամք և ազգականք,
Թողեք մեզի, որ երթանք,
Պատերազմի դաշտին վրա,
Վերքեր տանք ու առանանք։
Թե հաջողիմ, ողջ կը դառնամ,
Այս ամենը կը մոռնաս,
Թե պսակվիմ ես սուրբ մահով,
Օր մը անշուշտ դուն կուգաս։
Գերեզմանիս քարին վրա,
Թափե արցունք, ո՛վ մայրիկ,
Թափե արցունք, ցանե ծաղիկ,
Երիտասարդ եմ, մայրիկ։
Սեբաստիա երբ կերթայի,
Երկու օրեն դառնայի,
Երկու օրս ալ կ'ըլլար տարի,
Ես քեզ շատ կարոտնայի։
Կէլեի լեռանը վրա,
Քար մը զարնեի գիտես,

---

* Կրկնվում է ամեն քառատող տնից հետո (Ծ. Կ.)։

Իմ գլխուս եկած ճյուններըը,
Մասյաց գագաթն ալ չկա։
Արդյոք այս մեր քաշածներըը
Պիտի՝ վերջացնե՞ս, ո՛վ աստված,
Գուցե ողջ ողջ պիտի տեսնենք
Հայ դրոշակը պարզած։

բ) ԵՒՊ ՌԱՄԿԱԿԱՆ

Ահա մայրիկ, ահա կ'երթաս,
Ազգիս համար մեռնելու.
Քաջ ընկերներով միասին,
Անգութ թուրքը ջարդելու։
Գերեզմանիս քարին վրա,
Թափե արցունք, հայր և մայր.
Թափե արցունք, ցանե ծաղիկ,
Դեռ պզտիկ եմ ես, մայրիկ։
Գերեզմանիս հողին վրա,
Թեթև քարեր դիզեցեք,
Ասկից վերջը, խեղճ աղքատներ,
Ձամբակներնիդ սիրեցեք։
Ես երբ Սեբաստիա կ'երթայի,
Երկու օրեն կուգայի.
Երկու օրը կ'ըլլար տարի,
Ես քեզ կը կարոտնայի։
Ելնեի լեռանը վրա,
Քար մը զարնեի գլխուս.
Իմ գլխուս եկած ճյուններն ալ,
Մասյաց գագաթն ալ չկա։
Պարտեզիս մեջ երկու ծառ կա,
Տեսնողին զարմանք կըտա.
Հայ քաջերուն արյուններովը,
Կարծես ներկած ճյուղեր կա։
Արդյոք այս մեր քաշածներըը,
Պիտի լսես, ո՛վ աստված.
Թե ողջ պիտի տեսնենք մենք,
Հայու դրոշակը պարզած։

գ) ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Ազատության սիրույն համար,
Շատ արցունքներ թափվեցան,
Անմեղ հայրեր ու զավակներ,
Եկան այստեղ թաղվեցան։
Ահա եղբարք, ես ալ կերթամ,
Ազգիս համար մեռնելու,
Ազատության սիրոյն համար,
Ամբողջ կյանքս զոհելու։
Գերեզմանիս հողին վրա,
Թափե արցունք, իմ մայրիկ,
Սրփուռ ծաղիկ բուրումնավետ,
Նահատակ եմ ես հավետ։
Ահա այսօր, հայ եղբայրներ,
Կուգան այստեղ ողբալու,
Նահատակաց հողին վրա,
Աղի արցունք թափելու։
Ո՛վ եղբայրներ, դուք ալ գնեք,
Գերեզմանի խորերեն,
Ուրախացեք և ցնծացեք,
Ազատությունն գոչելեն։

դ) ՄԵԿՆՈՒՄ

Մի հեծեր, մայր իմ, մի հեծեր,
Չէ թե կը մնանիս,
Տարիքս է քանի տարեկան,
Փափաքս չեմ առած։
Գոռաց փողը պատերազմին,
Ձենքեր թնդացին,
Հայ կտրիճներ ոտքը ի ձեռին,
Խումբ-խումբ քալեցին։
Տուր ձեռքերդ, մայրիկ, սիրեմ,
Կրկին համբուրեմ,
Հայոց թաղն է կռիվ, արյուն,
Պարտքըս կատարեմ։
Տուր ձենքերը... քաղցրիկ մայր իմ,

Ես պիտի երթամ,
Տուր ձեռքերդ մեյ մ'ալ սեղմեմ,
Գուցե չդառնամ։
Մի լար մայր իմ, մ'ողբար մայր իմ,
Սիրտս փղձկեցավ,
Բայց չեմ կարող ես մոռանալ,
Կռվի պիտ երթամ։
Հայրեր կուլան, մայրեր կողբան,
Սիրտ չի դիմանար,
Պատերազմի դաշտին վրա,
Զենքեր կը թնդան։
Կապույտ երկինք գույնզգույնով,
Կամար է պատեր,
Մեր հայ տղոց սիրտերըն ալ,
Խավար է պատեր։
Սրբիր աչերդ, աղնիվ մայր իմ,
Ինչո՞ւ կարտասվես,
Մի լար, մայր իմ, մ'ողբար, մայր իմ,
Ինչո՞ւ կարտասվես,
Մի լար մայր իմ, մ'ողբար մայր իմ
Թե զիս կը սիրես։
Տուր զենքերըս, քաղցրիկ մայր իմ,
Ես պիտի երթամ,
Տուր մայրական օրհնութիւնդդ,
Մի քիչ զորանամ։
Հաջողութիւն մեզ մաղթեցեք,
Ծերունի հայրեր,
Ձեզ կը թողում՝ իմ ագաի
Մայրեր և քույրեր։

ե) «ԱՀԱ՛, ՄԱՅՐԻԿ, ԵՍ ԳՆՈՒՄ ԵՄ»

Ահա՛, մայրիկ, ես գնում եմ,
Ազգիս համար զոհվելու,
Քաջ ընկերներով միասին՝
Ներդ թուշմանիդ չարտեյու։
Երբոր մայր իմ, Սասուն եկար,
Ինձի ո՞րտեղ փնտրեցիր,

Գերեզմանիս վերա գալով,
Ի՞նչ ասացիր ու լացիր։
Գերեզմանիս հողի վերա,
Ինչ անուշիկ հոտ կուգա,
Այսուհետև անուշ մայրիկ,
Ինձմեն քեզ օգուտ չկա։
Գերեզմանիս հողի վերա
Ցանե ծաղիկ, իմ մայրիկ,
Ցանե ծաղիկ, թափե արցունք,
Երիտասարդ եմ մայրիկ։
Գերեզմանիս քարի վերա,
Խոշոր տառով գրեցեք՝
Այսուհետև, հայ մանուկներ,
Ազատության զոհվեցեք։

զ) «ՄԱՅՐԻԿ, ԵՐԲ ՈՐ ՍԱՍՈՒՆ ԵԿԱՐ»

Մայրիկ, երբ որ Սասուն եկար,
Ինձի որտե՞ղ փնտրեցիր,
Գերեզմանիս վրա գալով,
Ի՞նչ ասացիր ու լացիր։
Գերեզմանիս մի կողմումը
Մայրս է նստած ու լալիս,
Իսկ մի կողմից ընկեր տղերք
Հող են լցնում շիրիմիս։
Գերեզմանիս հողի վրա
Ցանիր ծաղիկ, իմ մայրիկ,
Ցանիր ծաղիկ, թափիր արցունք,
Երիտասարդ եմ, մայրիկ։
Գերեզմանիս ծաղիկներից
Ի՞նչ անուշիկ հոտ կուգա,
Մնաս բարով, անբախտ մայրիկ,
Ինձանից քեզ խեր չկա։
Ես խնդրում եմ, անուշ մայրիկ,
Իմ մոտիցս հեռացիր,
Իմ վերքերիս մուգ արյունը
Արտասունքով լվացիր։
Ես խնդրում եմ, սուր-սուր զենքեր

Այլոց ազգի ձեռք չդցել,
Ես սիրում եմ հայ օրիորդներ,
Հայոց երկիր, հայոց հող։

8 (57). ՊԱՏԵՐԱԶՄԻ ԿՈՉ

Տուր ձեռքդ, եղբայր, ժամ է շարժելու,
Ժամ է, ժամանակ ոտքի կանգնելու,
Հասել է արդեն, հայերիս օրհաս,
Լինել, չլինել, մեզնից է կախված։
Տուր ձեռքդ, եղբայր, հերիք համբերենք,
Հերիք ուրիշից օգնություն հայցենք,
Մենք ենք տանջվողը, մենք չարչարվողը,
Մենք պետք է լինինք, մեզի փրկողը։
Մերն է հայրենիք դարերով ճնշված,
Դարեր շատ ու շատ արյունով ներկված·
Պահանջե մեզնից արյունը մաքրել,
Թշնամու արյամբ՝ լեռներ ու դաշտեր։
Շտապի՛ր եղբայր, առ, ահա քեզ զենք,
Սրանով մենք միայն փրկվելու ենք.
Այս է գործ ածում մեր դեմ թշնամին,
Այս պետք է լինի գործիք մեր ձեռքին։
Շտապիր, եղբայր ի դաշտ պատերազմ,
Սպասում է մեզ թշնամին ի կազմ.
Աշխարհի սկզբից ամբողջ մարդկություն
Այստեղ է գտել իր ազատություն։

9 (58). «ԹԻԿՈՒՆՔԴ ԼԱՅՆ, ԹԵՎԵՐԴ ՈՒԺԳԻՆ»

Թիկունքդ լայն, թևերդ ուժգին,
Կռներդ ուժեղ, պինդ պողպատ,
Սիրել գիտես, կռվել չիտես,
Դու անզգա երիտասարդ։
Քույրդ տանում են քյուրդերը,
Եղբորդ արյունն են ծծում.
Դու անտարբեր, սառն արյունով,
Հանգստություն ես փնտրում։
Ամո՛թ քեզի, հազար ամո՛թ,
Որ զենք չունես քո ձեռքին,

Քո եղբորդ կռվի դաշտում,
Տապալում է թշնամին։
Զեռքդ տո՛ւր ինձ, երդվենք այստեղ,
Թողնենք փառքը աշխարհի
Գնանք, կռվենք առյուծաբար,
Ի սեր ճնշված հայ ազգի։

10 (59). ա) ՄՇԵՑԻ ՄՈՐ ԱՂԱՋԱՆՔԸ

Թխփի՛, բո՛րան մութ գիշերին
Կը պատվի ֆեդայինն,
Պատռոնատաշին խաչփակ թաքած,
Զեռքին թվանք ու ավին։
Ա՛խ, ձեզ մատաղ, ջան՛ ֆեդայիք,
Ձեր մեր ձեզի թող մեռնի,
Մշու տուլթան տուրք կարապետ,
Ձեզի քոմակ թող էղնի։
Դուք վախցուցիք..... անօրենին,
Քշիք մեր սար ու ձորից,
Քաֆըր էլի աչք վախեցավ
Ջա՛ն ֆեդայու փուլուվից։
Ա՛խ, ֆեդայիք, ձեր սատաղեն,
Ձեր խետ տարեք զիմ տղեն,
Ձեր խետ մռնի, ձեր խետ ապրի,
Ազգի մատաղ զիմ տղեն։
Թող դեն թողնի խարտր ու մաճ,
Իմ մեկ ու ճար ազիզ լաճ,
Քի՛ թվանքի խետ թող խաղա,
Էլ թո՛ղ չըտա խալխին խարճ...

բ) Ֆ Ե Տ Ա

Թխփի, բորան մութ գիշերին,
Պըտըտում էր ֆետայինն.
Փամփուշտները խաչկապ կցած,
Հրացաններ ուսերնին։
Ա՛խ, ֆետայիններ, ջան՛ ֆետայիններ,
Ձեր մայրեր ձեզի ղուրպան,
Մշո Սուլթան Սուրբ Կարապետ,

Ձեղի լինի օգնական։
Ա՜խ, ֆետայինները, ջան ֆետայինները,
Ձեզ հետ տարեք իմ տղեն,
Ձեզ հետ ապրի, ձեզ հետ մեռնի,
Ազգին մատաղ իմ տղեն։
Թիկունքըդ լայն, թևերըդ պինդ,
Թևերըդ պինդ պողպատից,
Սիրել գիտես, կռվիլ գիտես,
Դու հակա երիտասարդ։
Քուչըդ տանտում են քյուրտերը,
Հորդ արյունն են ծծում,
Քու եղբայրն էլ կռվի դաշտում,
Կոտորում է թշնամուն.
Դաշտը թողի՛ր, արագ ու մաճ.
Իմ մեկ ու ճար ազիզ լաճ,
Մի քիչ խաղա հրացանի հետ.
Որ էլ չտանք քյուրդին խարճ։
Վերքերով լի ջանֆետա եմ,
Կը թափառի՞մ, տուն չունիմ,
Յարին փոխան ղենքս եմ գրկեր,
Գիշերները քուն չունիմ։

11 (60). ԿՏՐԻՃ ԱԽՊԵՐ

Կտրիճ ախպեր, պանդուխտ ախպեր,
Բարև քեզի, ի՞նչ կընես.
Քո աշխարհքեն նոր եմ եկեր,
Լուրեր ունիմ, կը լսե՞ս։
Ի՞նչ ես նստեր, կտրիճ ախպեր,
Այդ օտարին երկիրը.
Քո աշխարհը սև է հագեր,
Արյուն կտրեր գետերը։
Քո սիրելիք հոն թողուցիր,
Անգութ շունի բերնի մեջ.
Կերթամ, ատիր, օտար երկիր,
Ձեզ չեմ մոռնար մինչև վերջ։
Կերթամ ասիր, լացող հնկանդ,
Կերթամ նոր ուժ առներու,

Որ պաշտպանես Հայաստանդ,
Լաճերդ ազատ ընելու։
Բայց շուտ մոռցար քո խոստումներ,
Մոքեդ ելավ քո երդիք.
Կերևի քեզ շուտ են խաբեր,
Ծտար արևմ ու երկինք։
Կտրիճ ախպեր, ուշքի եկուր,
Քո հայրենիքն է կանչող.
Թուրքին, քյուրտին թվա քն ու թուր,
Հերիք անոր տան ահ-դող։
Կտրիճ ախպեր, ե՛լ, շուտ երթանք,
Մեր սիրելյաց օգնելու.
Ապա թե ոչ մի սև պատանք,
Մոտ է անոնք ծածկելու։

12 (61). ՄԵՆՔ ՊԵՏՔ Է ԿՈՎԵՆՔ

Մենք պետք է կռվենք և ոչ լաց լինենք,
Ազգի կորուստը զենքով ետ խլենք.
Այսքան՝ դար լացինք, ո՞վ է լսողը,
Մեզ ի՞նչ շահ բերեց արցունքի ծովը։
Այլևս չլանք և ոչ լաց լինենք,
Կրակված սրտով մեր գործը վարենք,
Անվեհեր քաջին այս է պատկանում,
Միշտ ազատ մեռնել կռվի լայն դաշտում։
Մոլի և երկչոտ տաճիկը թող լա,
Երբ հայ քաջի դեմ կռիվ դուրս կու գա,
Մենք վախեցող չենք մահից, տանջանքից,
Եվ ոչ էլ մահու դաժան գնդակից։
Անենք այն հորն չի մղում որդուն.
Որ ազգի սիրուն նա թափե արյուն,
Ամո՞թ այն հային և բյուր նախատինք,
Որ ազգի սիրուն չի զործած բարիք։

13 (62). ՉԱՅՆ ՏՈՒՐ, Ո՛Վ ՖԻՏԱ

Լուռ ու մունջ նստած երկար մտածում,
Չայն տուր, ո՛վ ֆիտա, ինչո՞ւ ես տրտում,

Ավա՜ղ, երկար մտածում,
Տխուր, երկար մտածում։
Շարժեցեք, տղերք, սրեր շողշողուն,
Թափեցեք կրակ թշնամյաց գլխուն,
Դազան թշնամյաց գլխուն,
Դաժան թշնամյաց գլխուն։
Թափենք մեր արյուն իբրև ախոյան,
Լինի առաջնորդ մեր ազատության,
Սիրուն, մեր ազատություն,
Անուշ, մեր ազատություն։
Շտապեցեք, ընկերք, խմբվել միատեղ,
Մեռաքսե դրոշակ ծածանի այնտեղ։
Թո՜ղ միշտ ծածանի այնտեղ,
Սիրուն, ծածանի այնտեղ։

14 (63). ՀԱՅԴԱԿՆԵՐ

Խաղաղ դաշտի որդիք, լեռները ելլենք,
Ակոր, գութան մոռնանք, հրացան առնենք.
Խեղդված մեր բողոքը հայտնենք զենքերով,
Եվ մեր արդար դատը ոթենք արյունով։
Մեր կյանք՝ մեր մահ թող լինի ազատ,
Ճնշված հայի որդիք հարազատ*։
Քան թե ամեն վայրկյան կենդանի մեռնիլ,
Ազատության վճռենք աներկյուղ զոհվիլ.
Փափուկ մահճում հանգիստ կյանքը վայել է,
Ով որ հայրենիքում ազատ ապրում է։
Ըստրկության շղթան խուլ շառաչում է.
Ազատության ճնշված ձայնը կոչում է.
Ազատ լեռներ թող լինի ապաստան,
Եվ ընդարձակ ձորեր՝ ազատ գերեզման։
Առաջ գնանք, անվախ զարնենք Համիտին,
Փրկենք հայ գյուղացին, հանենք վախուկին,
Իմաց տանք Սուլթանին անխիղճ բռնափոր,
Ծագեց հայ հրոսակաց համար պայծառ օր։

---

* Կրկնվում է յուրաքանչյուր տնից հետո (Ծ. Կ.)։

Ցրված խմբեր, Հաճըն, Զեյթուն, Սվետիա,
Շտապեն միանալ և կազմել գունդ հայկյան.
Հայի ազատության կանոնել մի պրոշակ,
Կյանքը մահով կապված կանոնել նրա տակ։

15 (64). Ի Չ Ե՛Ն

Ազատության այն վառ սերը
Թունդ որոտաց իմ սրտում,
Իմ հայրենյաց տուրը անուն
Ինձ պատուրազմ է կանչում։
Ելե՛ք, ելե՛ք Հայկազունք,
Ելե՛ք, Հայկա զավակունք,
Ելե՛ք, ելե՛ք, հայ եղբարք,
Առե՛ք ձեր սուրն ու նիզակ*։
Ահա՛ եղբարք, հայ եղբայրներ,
Առե՛ք զրահ, սուր, զենքեր,
Մահը դաշտում Շավարշանա,
Մեզ հրավեր կը կարդա։
Ա՛խ, հայրենիք, սուրը անունդդ,
Անշեջ վառվի մեր սրտում,
Մեր հայ եղբարց շիրիմները,
Իրանց գիրկն են մեզ կանչում։
Այս օրերը մեր քաջ կյանքին,
Նվիրական թո՛ղ լինին,
Ո՛վ սիրում է ազատություն,
Թո՛ղ չմոռանա հայ անուն։

16 (65). Ի Վ Ր Ե՛Ժ

Ի զե՛ն, ի վրե՛ժ գոռան, հայեր
Արյունաներկ Սասնո տարեր
Ի զե՛ն, ի վրե՛ժ, տան արձագանք,
Մշո լերինք, Տարոն սահանք։
Առյուծ Զեյթուն միշտ մոլեգին
Հոգեհատաչ մռնչե ուժգին.
«Իզեն, մի՛նչ ցերը մնանք գերի
Արյունարբու, վատ թուրքերիս»։

*Կրկնվում է յուրաքանչյուր տնից հետո (Ս. Կ.)։

Ի զե՜ն, հայեր, Վան և Բասեն,
Աղի արցունք, արյուն հոսեն.
Եփրատ, Տիգրիս, Երասխ և Կուր
Ի վրե՜ժ մնջեն աղեկտուր.
Կնձռե Մասիս ճակատն իր պերճ,
Կարին, Կովկաս ձայնեն անվերջ.
«Իզե՜ն, ալ բա՛վ ողբ, վայնասուն,
Հոգեվարքի մեջ է Սասուն»։
Ի զե՜ն, ի տո՜ւր, հինգ երկար դար
Բողոքեցինք երկնից արդար,
Մերժեց աստված աղոթքն հայուն,
Եվրոպ խուլ է մեր ողբերուն։
Մոռցավ տուլթան պարտք և օրենք,
Քարեր խոսին, թե լռենք մենք։
Կյանք և կամ մահ, որն ալ ուզենք,
Պետք է առնուլ վինու դեմ զենք։

17 (66). «ՄԵՆՔ ԱՆԿԵՂԾ ՋԻՆՎՈՐ ԵՆՔ ԱՒԱՆՁԻՆ ՎԻՃԱԿ»

Մենք անկեղծ զինվոր ենք առանձին վիճակ,
Պետք է տուրը ծառայենք երկար ժամանակ,
Պարսկաստանի խորքից եկել է նամակ,
Դնում ենք բարով, կուշանանք տարով,
Արյուն, տուր ու թուր,
Պատերազմի դաշտ կսպասեն մեզի։
Խուշմանը տվավ մեզ ջանֆիդա անուն,
Այդ անվան համաձայն տեսավ պորտւթյուն,
Մենք չենք սիրել ազատ կյանքի բռնություն,
Ուխտել ենք կռվել, այդ սիրով մեռնիլ,
Համոզված ենք, որ միայն զենքով կա հային փրկութ
Մոտ է գարունը, շուտով կբացվի,
Հայի խոսքը քաջ շուտով կլսվի,
Ամենեն առաջ Անդրանիկը քաջ,
Գոռում է, զոչում, գնում է առաջ։

18 (67). «ՄՈՒԹ ԳԻՇԵՐԻՆ ԱՆՎԱԽ ՖԻԴԱՆ»

Մութ գիշերին անվախ ֆիդան
Ազատորեն մանե կուգա.

Արի գնանք մայր-Հայաստան,
Անդրանիկը դեմ կուգա։
Հայերուս մեջ վառակներու,
Թիվը արդեն պակսում է,
Հայ պատանին տուրը ձեռքին,
Նոցա մաս-մաս մորթում է։
Անուշաբույր թարմ ծաղիկներ,
Հայ օրիորդը նվիրեց,
Շուն շեխերին ջարդել, փշրել,
Անդրանիկը վճռեց։

19 (68). ՀԱՅԴՈՒԿԻ ԵՐԳԸ

Ես պարծենալն ի՞նչ է, չիդեմ,
Եվ ուտում ալ ես չուենեմ,
Մխայն թե քաղցր՝ երգել պիտեմ,
Եվ զենք շարժել տուրբ արտով։
Բնակարանս է ամառաոներ,
Անկողինս է կանաչներ,
Իմ լապտերս է պարզ լուսնյակ,
Եվ ինձ ուրախացնողներն են ճնճղուկներ։
Իմ եղբայրս է իմ մառւզեր,
Եվ իմ զարդս են փամփուշտներ,
Իմ սիրելին՝ իմ տարերս են,
Եվ իմ ընկերս՝ իմ մոսին։

20 (69). ՋԻՆՎՈՐԻ ԵՐԳԸ

Փնաա հայ զինվոր,
Ուրախ անխոռով,
Դեպ այդ տուրբ հրավերն անուշ ջան,
Անվերկյուղ արտով,
Առ ձեռքդ հրացանն,
Կատարե պարտքդ։
Սուրբ հայրենյացդ անուշ ջան,
Մի խնայիր կյանքդ։
Դարեր են եկել, անցել պղտվել,
Ոչ ոք իրավունք, անուշ ջան
Հային չի տվել։
Ուրեմն անխոռով,

Այդ փոած գանձդ
Վերցրու պաշտպանեա անուշ ջանդ,
Հայրենիքդ ու անձդ։
Թող ամենքը տեսնեն անվհերությունդ
Ու ասեն հայն էլ ունի քաջություն։

21 (70). «ՂԱՐԱԲԱՂԻ ՄԵՋ ԻՆՔՍ ԾՆՎԵՑԻ»

Ղարաբաղի մեջ ինքս ծնվեցի,
Հայաստանում զինվոր գրվեցի,
Անունս Արամ, կոչվի սիրահար,
Հասիր, Լևոն ջան, Պանդուխտից լուր տար*։
Օգոստոս ամսին ելանք ճանապարհ,
Քաջ ընկերներով դեպի լեռ ու ժայռ,
Ուզեցի հերոս օգնություն ցույց տալ,
Հասիր Լևոն ջան, Պանդուխտից լուր տար։

22 (71). «ԱԼԻՔ–ԱԼԻՔ ԿՈՒ ԳԱ ՄԱՅՐԻԿ»

Ալիք-ալիք կու գա մայրիկ,
Աղբյուրի ջուրը,
Ինչ սաստիկ է կտրում մայրիկ,
Այլազգի սուրը։
Կաթիտ կերա մայրիկ,
Հալալ արա ինձ,
Կերթամ թշնամու դեմ մայրիկ,
Կապանեն և ինձ։
Ջրբաշխ ջրեր կու գա մայրիկ,
Գետերի ջուրը.
Կերթամ թշնամու դեմ մայրիկ,
Փրկեմ մեր տունը։

23 (72). ՀԱՅՐԵՆՅԱՑ ՍԻՐՈՒ ՀԱՄԱՐ

Հայրենյաց սիրու համար,
Խմբեր պատրաստված են քաջ.

---

* Վերջին երկտողերը կրկնվում են (Ծ. Կ.)։

Հրացանները ուսերին,
Փամփուշտները ձախ ու աջ։
Հնազանդ կարգով շարված,
Իրանք առյուծի պես քաջ,
Խմբապետը հրամանն տվեց,
Գնալ դեպ հառաջ, հառաջ...
Ոսկեզօծ բաշլուղներով
Լազի շորեր թանկագին,
Գնում էին դեպի Սասուն,
Օգնելու Անդրանիկին։
Հայ քաջերը դիրք մտան,
Թշնամուն պաշարեցին,
«Ամեն կողմից կրակ տվե՛ք,
Կոտորեցե՛ք» գոռացին....
Յամա՛ն, եկավ ջանֆիդան,
Սարսափ տիրեց բանակին.
Փախչում էին դեպի լեռներ,
Վախկոտ զորքի ամեն դին։

24 (73). ա) ԱԼ ՈՒ ԱԼՎԱՆ

Ալ ու ալվանն ես հագել,
Կարմիր լալա ես դառել,
Սուրտկի կլոր մեջքդ
Փամփուշտներով ես ծածկել։
Ալ ու ալվանն ես հագել
Ախպեր ջան, քեզ զուրբան,
Մեր գումանը դու ես, դու։
Ձեռքդ թվանք ես առել,
Դուշմանի դեմ ես կանգնել,
Ինձ ասա՝ գլխիդ մատաղ,
Բինիշդ ո՞վ է կարել։
Ձեռքդ թվանք ես առել,
Ախպեր ջան, քեզ զուրբան,
Մեր գյումանը դու ես, դու։
Առյուծի պես կանգնել ես,
Բեղերդ ոլորել ես,
Սև-թուխ բեղերուդ մատաղ,
Հաղթանակը տարել ես։

Առյուծի պես կանգնել ես,
Ախպեր ջան, քեզ պուրքան,
Մեր գյումանը դու ես, դու։
Սիրտս վրեժով լցիք,
Կրակով բորբոքեցիք,
Ազիզ քույր ու ախպոտանք,
Ահա թուրս արեցեք։
Սիրտս վրեժով լցիք,
Ախպեր ջան, քեզ պուրքան,
Մեր գյումանը դու ես, դու։

բ) ԱԼ ՈՒ ԱԼՎԱՆ

Ալ ու ալվան ես դառե,
Կարմիր լալա ես դառե,
Ինձ ասա, քեզի մատաղ,
Իշվիկդ ո՞վ է կարե։
Աղբեր ջան, ջան ֆխտա,
Դուն արի, իմ կյոսմանո*։
Ձեռքդ առել ես թուխանք,
Դուշմանի դեմ ես կանգնե,
Կոլորակ բարակ մեջքդ,
Փամփուշտաներով ես ծածկե։
Մեջքդ կապել ես խանչար,
Տոսթին նախշած է խալ-խալ,
Գոտիդ խանչարին մատաղ,
Կերածդ կաթը հալալ։
Առյուծի պես կանգնել ես,
Պեխերդ ոլորել ես,
Սև ու թուխ պեխիդ մատաղ,
Հաղթանակը տարել ես։

25 (74). ԽԱՐԲԵՐԴԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՐ

Ո՛վ հայ տղա, ջա՛ն տըղա,
Կենճուկ կըլլրիճ հայ տըղա.
Թուրը ձախիդ մի՛ կախեր,

---

* Երկտողը կրկնվում է յուրաքանչյուր տնից հետո (Ս. Կ.)։

Գլխիդ էռչիդ մի՛ կախեր։
Լե, լե լե, լե, լե, լե, լեվե, յե*։

Ո՛վ հայ տղա, ջան տըղա,
Դե՛, նըշան առ, հա՛յ տըղա.
Թե նըշանին չը զարնես,
Քու հետըդ ո՞վ կը խաղա։

Թե դուշմընին դեմն էլլաս,
Թուրըդ աջի՛դ քթող շողա.
Ու էգեր ձեռքըդ դողա՝
Քու հետըդ ո՞վ կը խաղա։

Թե դուշմընին դեմն էլլաս,
Կենճուկ կըլլրիճ հայ տըղա.
Թուրը ճախիդ մի՛ կախեր,
Մի՛ վախնար ու մի՛ փախչեր։

Ո՛վ հայ տղա, ջա՛նի տղա,
Պատվիդ մեռնեմ, հա՛յ տղա.
Թե նամոս չը պաշտպանես՝
Գլխուդ կըրակ քթող տեղա։

26 (75). ՔԱՅԼԵՐԳ ՄԱՐՏԱԿԱՆ

Հատաջ ընթանանք եղբայրներ,
Մարտի հրապներ կարդարով.
Հայրենյաց ազատությունը,
Գնենք մեր սուրբ արյունով։
Բավ է որքան տառապեցանք,
Բավ է որքան մենք լացինք,
Այսուհետև մարտի դաշտը
Կռիվ տալով պիտի մեռնինք.

27 (76). ՔԱՅԼԵՐԳ

Հոսպահատվիլ մեղք է, ընկեր,
Ախտացիր, ոտքի՛ եկ։

* Կրկնվում է յուրաքանչյուր տնից հետո (Ծ. Կ.)։

Նայիր փայլեց հեռվում լապտեր,
Մենք էլ կառնենք շուտ դադար։
Արիացիր, սիրտ առ, ընկեր,
Շարունակենք մեր ուղին.
Լսիր, կարծեմ թե զանգակներ,
Ղողանջեցինն սարերին։
Ահա բացվեց աղոթարան,
Վատահ, ընկեր, առաջ քալենք.
Ջինվոր ենք մենք արդարության,
Եվ անփորձ տեղ կը հասնենք.

28 (77). «ԼՈ, ԼՈ, ԼՈ,—ՍԻՓԱՆԱ ՍԵԳ ՍԱՐԻ ՎԵՐԱ»

Լո, լո, լո.—Սիփանա սեգ սարի վերա,
Կարմիճները շտապով գալիս են միանում,
Այնտեղ անվախ որդիք հսկա լերան վերա,
Ջենք ու զրահի են ընթանում*։
Ահա վառվում են՝ գինվում,
Սանձակոծ ձի հեծնում անհամբեր,
Արյունը նրանց բորբոք սրտի մեջ եռում,
Թռչում, անցնում անհամբեր,
Ջերթ Սիփանա պինդ քամին,
Սլանում են դեպի ցած,
Դաշտի միջին թշնամուն պատահում են,
Եվ մեծ վրեժ անմոռաց
Ահեղ կռվում նրանից առնում,
Հատու սուսերը հանում,
Ծեղապետին են սպանում,
Օվ զերթ կիզող հուր վառվում*։
Այժմ բոլոր ցեղն ոտի կանգնած
Թշնամու դեմ՝ մահաւիթ մարտի է կանչում—
Արյան մեծ վրեժը թշնամուց պահանջում.
Եվ թշնամին պարտված՝
Թողնում փախչում սարե սար՝
Ետ ձգելով մեծ ավար*։

---

* Նշված տողերը կրկնվում են (Ծ. Ի.)։

Արյուն թափեցին, արյունի փոխանակ,
Արյուն քամեց ծարավի տուսեր,
Նրան հագեցած՝ դրեցին պատյան,
Ելնում են ի լեռ—սեգ Սիփանն ի վեր,
Սեգ Սիփանոս կանանչ գլխին հաղթող
Ցեղն անուամ է, ո՜հ, մեծ խնդում,
Ամպերի թանձրությյան միջից,
Սիփանն ամբողջ է թնդում...
Էլ չե՜ն գալ մեզ մոտ թշնամիք,
Սուր տեսան մեր պողվատիք.

29 (78). ՆՊԱՏԱԿԻՍ ՀԱՍՆԵՄ ՄԻԱՅՆ

Նպատակիս հասնեմ միայն,
Թող գիս հանեն կախաղան,
Կախաղանեն խնդուկ ձայնով
Պիտի գոչեմ, ա՜խ Հայաստան։
Ա՜խ Հայաստան, սիրտս ու հոգիս,
Քեզ նվիրեմ՝ ընդունե,
Թե կարելի, թող ես մեռնեմ,
Քաք Հայաստան ոտքի ելնե։
Անոր սիրոն բանտն ալ մտնեմ,
Պարատ է այն ինձ համար,
Ոտք ու ձեռքս շղթայակապ,
Երջանկություն է ինձ համար։
Թե մինչև իսկ աքսորվեմ ալ,
Թափառական գտնե գիս բախտ,
Հայաստանի սիրույն համար,
Փշրուտ վայրեր կլան դրախտ։
Ա՜խ Հայաստան, դու սիրո ն վայր,
Մինչ ե՜րբ այսպես քո որդիք
Քեզնեն հեռի պիտ հառաչեն,
Իսկ դո՜ւք մինչ երբ թափառնք։
Ե՜րբ պիտի գա հայ թագավո՜ր,
Սուրը ձեռքին, զորք հետևեն,
Դրոշակները ծածան, ծածան
Արքայական թագը գլխին։
Ա՜խ, Հայաստան աչքդ դարձուտ
Քեզի փնտրող որբերուն,

Պես-պես ցավոք կը տանջվինն,
Դարման եղիր հայ քաջերուն։

30 (79). ՆՊԱՏԱԿԻՍ ԳԵԹ ՄԻ ՄԱՍԸ ԿԱՏԱՐՎԵՐ

Նպատակիս գեթ մի մասը կատարվեր,
Յարալի բլբուլ եմ.
Հայրենիքիս ազատությունը տեսնեմ ու մեռնեմ.
Յար արի՛, տուն արի՛, շուտ արի՛ բլբուլ,
Սարերի գյուլն եմ։
Ա՛խ, իմ դարդս շատացել է չեմ կարող.
Յարալի բլբուլ եմ,
Դարդի՛ ձեռքից ո՞ր ջուրն ընկնեմ,
ազատվեմ,
Տուն արի, շուտ արի, յարալի բլբուլ եմ,
Սարերի գյուլն եմ։
Ա՛խ, անբախտ հայդուկիս, տեր իմ,
դու խղճա,
Յարալի բլբուլ եմ.
Մի՛ թողնիր թուրքի գնդակով
զուր գնամ կորչեմ.
Յար արի՛, տուն արի՛, շուտ արի՛.
բլբուլ եմ.
Սարերի գյուլն եմ։

31 (80). ԳԱՂԱՏԻԱ ԿԱԽՎՈՂՆԵՐԵՆ ՄԻՈՅՆ ԵՐԳԸ

Կախաղանը պատրաստվեցավ,
Արի՛ք, երթանք, ո՛վ հայեր,
Թո՛ղ Սուլթանը հագեցընե,
Յուր անօրենն չար կիրքեր։
Մնա՛ք բարյավ, տ՛ուն ընկերներ,
Մնա՛ք բարյավ, ո՛վ հայեր,
Մի՛ մոռանաք ձեր եղբայրներ,
Անգթության լոկ զոհեր։
Օ՛ն, Հովհաննես և Մկրտիչ,
Կառաջնորդեմ ես ձեզի,
Մի՛ վհատիք, մի՛ վշտանաք,
Հետևեցե՛ք դուք ինծի։

Թո՛ղ նկատե վատ Սուլթանը,
Հայը մահեն չի վախնար,
Չի դադարիր պատերազմիլ,
Յուր ազատության համար։
Անհիշաչար ո՛վ աստվածք իմ,
Վրեժխնդիր դո՛ւ եղիր,
Մեր հայրերուն, մեր մայրերուն,
Մխիթարիչ դո՛ւ եղիր։

32 (81). ՅԱՎՈՏ ՕՐԵՐ

Դաման բռնեց մեր սարերը, նանննի ջան.
Սև սուգ պատեց մեր սրտերը,
յարալու եմ, նանի ջան։
Էս նեղ ճամբից ես գընացի,
Վաթանի սեր վառեց ինծի։
Հասիր մերիկ, կը մեռնիմ ես,
Սև ագռավներ կըռան վըրես,
Ա՛խ, իմ սրտեն արուն կուգա,
Ա՛խ, իմ աչքեն արցունք կուգա։

33 (82). ՊԱՐՉԻ՛Ր ԱՂԲՅՈՒՐ

Պարզի՛ր աղբյուր, խալխի տըղին ջուր տանեմ,
Պարզի՛ր, պարզի՛ր, բեկի տըղին ջուր տանեմ։
Աղբյուր, գիտե՞ս, բեկը մեզի ի՞նչ կանե,
Կը կողոպտե, կը հալածե, կը սպաննե։
Աչքըս բացի՝ տուք ու շիվան ես տեսա
Նամերդ բեկին, ո՛հ, զոհ գնաց իմ փեսա։
Կար ժամանակ, որ մենք ազատ էինք,
Մեր սեփական թագավորներ ունեինք։
Գահ ու փառքից, ազատ կյանքից զըրկվեցինք,
Արյունարբու թշնամու ձեռք մատնվեցինք։
Աղբյո՛ւր, հիմա տևմե է պատեր մեր աշխարհ,
Ջուրո՛ւմ, զուրո՛ւմ, ջարդ ու սարսափ ու խավար։
Դե՛հ, շուտ պարզի՛ր, բեկի տըղին ջուր տանեմ,
Պարզի՛ր, պարզի՛ր Խան Մուրադին ջուր տանեմ։

34 (83). ԱՌԱՎՕՏՅԱՆ ԱՐՇԱԼՈՒՅՍԻՆ

Առավոտյան արշալույսին ալ ձին քրտնած տուն եկավ,
Սիրուն կրծքից վերք ստացած ալ ձին քրտնած տուն եկավ։
Դու ինձ ասա, իմ սիրուն ձի, որտե՞ղ թողիր իմ յարին,
Ո՞ր խոր ձորում, ո՞ր թփի տակ, անտեր թողիր իմ յարին։
Իմ հայրենյաց բարձր լեռներ, ձեր վրայով, ձեր լանջով,
Յարաբ յարս չի անց կացե՞լ, մնաւտ բարով չի ասե՞լ։
Թողեք փարվեմ ես ձեր լանջին, համբույր տամ անցած ճամփին,
Թողեք ես լամ, ես արտասվեմ, ճամփորդ յարիս կարոտն առնի։
Մտա բաղը, բիլբուլ երգեց, դիպավ սրտիս լարերին,
Հոսող Արազ, ինձ ճամփա տուր, գնամ հասնեմ իմ յարին։

35 (84). ԱՅՐԻՆ ՈՂԲԸ

Արշալույսը նորեն բացվավ,
Ամպ ու զամպեն թոն կուգա,
Ալ ձին եկավ, անտեր եկավ,
Ա՜խ, իմ յարը տուն չեկավ։
Լույսը բացվավ, ցուրտը բացվավ,
Ալ ձին քրտնած ներս խնկավ,
Սիրուն կրծքին վերք ստացած,
Արյունթաթախ ներս խնկավ։
Ա՜խ, սիրուն ձի, դու ինձ ասա,
Ո՞րտեղ թողիր իմ յարը,
Ո՞ր ձորի մեջ, ո՞ր քարի տակ,
Անտեր թողիր իմ յարը։
Ամպեր եկան, մութը պատեց,
Մինակ նստած կուլամ ես,
Սիրելիես, կորած յարես,
Սուգ ու շիվան կանեմ ես։

36 (85) ա. ՄԱՅՐԸ ԻՐ ՈՐԴՈՒՆ

Այն քաջ մարդու շապիկն է,
Որ իմ ձեռքովս կարեցի.
Արյունոտ է, կարմիր ներկած,
Արտասուքով լվացի։

Դա շապիկն է այն քաջ մարդուն,
Որ քեզի հայր կոչվում է։
Վրե՛ժ, վրե՛ժ չար ոստիից
Գերեզմանից կանչում է։
Դե՛հ մեծացիր, իմ նազելի,
Ջարփ արյունը խմե.
Քո մոր սրտին միխիթարանք,
Որսախտիդ պարգևե։

բ) ՕՐՈՐ, ԲԱԼԱ ՋԱՆ

Դա շապիկն է այն քաջ մարդուն, բալա ջան,
Որ քեզ հայր նա կոչվում էր, օրոր, օրոր,
բալա ջան։
Առավոտյան ժամը յոթին, բալա ջան,
Պատերազմում հայրդ սպանվեց, օրոր, օրոր,
բալա ջան։
Նա գոհ գնաց վատի սրրին, բալա ջան,
Դու հայրապուրկ՝ որբ մնացիր, օրոր, օրոր,
բալա ջան։
Կաթըս քեզի կանեմ հալալ, բալա ջան,
Երբ քաջի պես կռվիլ սորվիս, օրոր, օրոր,
բալա ջան։
Դե՛հ մեծացիր, շուտ բոյ քաշիր, բալա ջան,
Վատի արյուն քամել սորվիր, օրոր, օրոր,
բալա ջան
Վրե՛ժ, վրե՛ժ, չար ոստիից, բալա ջան,
Խանատորդ քեզ կանչում է, օրոր, օրոր,
բալա ջան։

37 (86). ՋԻՆՎՈՐԻ ՇԱՊԻԿԸ

Գետի ափին լվաց[ք] անում,
Սևը գլխին մի հարսիկ,
Լվաց[ք] անում, լաց է լինում,
Սարի շարմաղ մի աղջիկ։
Ջուրը զովալ՝ հարսի ափում.
Արյուն կտրած, լալ ու վարդ,

Վաշվշելով արցունք թափում,
Ափին է ծեծում իր զվարճ։
Հարսի ափում՝ կովից եկած,
Շապիկն է տուրբ իր յարի,
Ալ ու փթիթ արնով ներկած,
Կարմիր արնով ջիգյարի։
Ու իր յարի շապկի վրա,
Հարսն է լալիս, մռմնջում,
Ջուրը զովալ՝ արյունկվա,
Հետը տխուր վշվշում։

38 87). ԵՐԳԻՉՆԵՐ

Շաղ նատեր է թիեռուն,
Կու ցոլա ինչոր մարջան,
Խորոտն ի նե ման կուգա,
Թևն ընցուցած ապրջան։
Նազկտալով դունդունաց,
Դարձավ ուր բոլորն իշեց,
Լելեի պուչ բաց թորկեց,
Բլբուլ ձենն ուրան քշեց։
Կտուցն ի բաց խեղճ հայվանն,
Ճղան նստած կիրիշկեր,
Խորոտի ձենն ուր հոգին,
Տեղնուտեղը կու քամեր։
Խորոտ շատ լաց-մղկտաց։
Գովաց Սատունն ու Խնուս,
Կորիճներուն միտ բերեց,
Ախ-վախ քաշեց չուրի լուս։
Բլբուլի սիրտ կտրտավ,
Հոգին տեղեն կու փախեր,
Գովք մ'էլ ինք եբոր լսեց
Լսողի սիրտ կու խաղեր։
Էրկուս ձեն ձենի տվին,
Վառին, թորկվին լամենուն,
Յարին ու վարդին մոռցան,
Գովացին մըր քաջերուն։
Գովքն անուշ էր ու մալուլ,
Ինչոր ժամու մեղեդին,

Նետի պես ծակեր կրնցներ
Կէրթեր հասներ չուր հոգին։
Երբոր գովացին պրծան,
Պապիկ առան մեկ մեկուց,
Բլբուլ թռավ դիպա դաշտ,
Խորտան հեռեցավ հոնկուց։

39 (88) ՀԱՅ ԿԱՄԱՎՈՐՆԵՐ

Հայ կամավորներ,
Ազատ որդիներ,
Կայնած թուրքի դեմ,
Աույծի նման։
Մենք պետք է կռվենք,
Ի սեր ազգութեան,
Ծընինք հայ գինվոր
Սուրբ ազատութեան*։
Այսքան դար լացինք
Ո՞վ է լսողը,
Մեզ ի՞նչ շահ բերեց
Արցունքի ցողը։

40 (89). ԿԱՄԱՎՈՐՆԵՐՈՒ ԵՐԳԸ

Կամավոր հայ գինվոր ենք,
Պատերազմի կը վազենք,
Վրեժի մեջ մկրտված,
Թուրքի ..... ենք ծարաված։
Կեցցե քաջ Անդրանիկ և ընկերներ,
Կեցցե միշտ հայ կամավոր,
Միշտ կեցցեն, միշտ կեցցեն հերոսներ*։
Թող թուրքերը իմանան,
Բանակները հայկական,
Կը կոտորենք աջ ու ձախ
Կամավոր ենք, չունինք վախ։

---

* Կրկնել յուրաքանչյուր տնից հետո (Ծ. Կ.)։
** Կրկնել յուրաքանչյուր տնից հետո (Ծ. Կ.)։

Երթանք դեպի Հայաստան,
Պարզենք դրոշը հայկական,
Որուն տեսքեն պանծալի
Թող վատ թուրքը տարսափի։

41 (9). ԱՌԱՔԵԼՈՑ ՎԱՆՔԻ ԿՈՒԽՎԸ

Պաշարման մեջ է թարգմանչած տուրբ վանք,
Որ գնա պատեց թուրք զորաց փաղանգ,
Ահա կը լսվի որբոց աղաղակ,
Ահա օգնության կոչ է մեզ զանգակ։
Պաշարված են հոն Անդրանիկ, Գևորգ,
Վաթսուն որբերով անտեր և անօք,
Ելեք, ո՜հ, հայեր, մի մնաք չեզոք,
Ձգանդեն գվանք թուրքեր անողոք։
Ձանգակի հնչյուն հասավ մինչ Սասուն,
Օգնության կանչեց գքաջ Հարություն,
Որ յուր հետ առավ զկալեցի Ղազար
Ձայնեց Համբարձման՝ ելիր, ո՜հ եղբայր։
Ավազ, այն ատեն չկար Համբարձում,
Կնքած էր յուր կյանք, ննջած ի շիրմում,
Մի փոքրիկ խումբով հեվ ի հեվ ելան,
Գագաթ Սիմ սարին, անդր վար իջան։
Ձայնեց վանքի մեջ պաշարյալ եղբայր.
Քաջ եղեք, ահա կօգնեե ձեզ աստված,
Քաջինն հրացան զորաց ի բարձունս,
Դեպի վանք դիմեց հետ յուր ընկերաց։
Պատահեցան հոն զորաց շղթային,
Երեք զորք մեկեն գլորին գետին,
Ցրվեցան զորքեր, մոտեցան վանքին,
Բայց վիրավորված հասան փափագին։
Ինկավ և նույնպես կալեցի Ղազար,
Անատոքա քաջեր ունկնդիր եղբարք,
Բայց վանքի կողմեն տեղացուց գնդակ,
Ցիրուցան ըրավ թշնամու բանակ։
Հաղթություն, գոչեց, առինք հաղթանակ,
Հայի փրկության կանգնեել դրոշակ,
Կամ մեռնինք, չըլլանք մենք ազգին ծանակ,
Կամ հաղթենք, լինինք հայ ազգին պարծանք։

42 (91). ՍԻՓԱՆԱ ՉՈՐՍ ԿՈՂՄ

Սիփանա չորս կողմ տարր էր,
Ձալըմ թուփչին նշնդար էր,
Այնքան զարկեր, մարդ կվատնր,
Ձուլում-զուլում դատաստան էր*։
Ոչ հալ ունենք, էվել հավատ,
Քար կհալինք, դարձանք երկաթ,
Էդ ... թուրքերուն չեղնինք ռայաթ։
Ձևոքեր ժաժիմ՝ հրացան չկա,
Մեջքս նայիմ՝ պատրոն չկա,
Ձար թշնամին հետևես կուգա,
Վերև նայիմ՝ աստղ կփիլա,
Գետին նայիմ՝ ջուր ու տիլ ա,
Մեր, երխու տեր նստի գիլա։
Արև ելավ, մինչև մտավ,
Երիտասարդի ջանդակ ընկավ,
Հայ գերութենեն չազատվավ,
Ձուլում-զուլում դատաստան էր,
Էդ ... տաճիկ մարդատպան էր։

43 (92). ՂԱՐսԻՑ ԴՈՒՐՍ ԵԿԱՆ

Ղարսից դուրս եկան, Թաղբուր ժողվեցան,
Նույն գյուղի մեջ կարդով շարվեցան,
Գիշերվա ժամի զանգերը ղողանջեցին,
Քաջերը սուրբ հաղորդությունն ստացան։
Քաջ Թումանը[1] խնդրեց թշնամյաց—
Չլսեցին հերոսին, զոհվեցան միասին**։
Քաջերը կանգնեցին սուրբ սեղանի առաջ,
Երդվեցին միասին սուրբ դրոշը բռնած,
Քաջ խմբապետ Թումանը առաջն էր կանգնած,
Ձայն տվեց, եղբայրք, գնանք դեպ առաջ։
Շտապով գիշերը գյուղից դուրս եկան,
Արշալույսը բացվեց Բուրիկ աղբյուր հասան,
Անպիտան թշնամիները շուտով տեսան,
Երկու կողմից օգնություն հասան։

---

* Վերջին տողը կրկնվում է II, III, IV տների վերջում (Ծ. Կ.)։

** Կրկնվում է յուրաքանչյուր տնից հետո (Ծ. Կ.)։

Ղալա-Բողազից անշուշտ նկատեցին,
Թշնամիքը քաջերին պաշարեցին,
Օգնող չեղավ, անօգնական մնացին,
Հույսները կտրեցին ու այնպես զոհվեցին։
Քաջ Որսորդ Գևորգը չկտրեց հույսը,
Սուրբ դրոշակը պարզեց տաճնապետ Պետրոսը,
Գնդակով թաղում էին թշնամյաց հույսը,
Անվեհեր կռվում էր Քյոսա Հերոսը։
Ներոնի քահանան բռնել է խաչը,
Թամանից խնդրեց այսպես Գուրգենն քաջը,
Կրակ բանանք դեպի թշնամու շարքը,
Չի կարելի, ասաց խորամիտ քաջը։
Թամանյանցը մտածում էր մեր վիճակը,
Ասաց. մի բանաք սոխի վրա կրակ
Սոսկալի կը լինի մեր վիճակ,
Թող մեր եղբայրներ քննեն մեր վիճակ։

44 (93). «ԽԱԲԵՑ ՏԱՐԱՎ ՇՈՒՆ ՕՎԱԳԻՆ»

Խաբեց տարավ շուն Օվագին,
Մոտեցուց Բաղեշ քաղաքին,
Լուր էր տվել ժամանակին,
Գնաց մատնեց Լևոն-փաշին։
Ասկյար փաթթեց Մուշն ու Փափշեն,
Ջանֆիդայիներ ելան գեղեն,
Կուլան-կողբան մեր ժողովուրդ,
Առաված տա նրանց աեր ու դուխ։
Զարկած Օվանես էգկած է,
Մյոս տղաքներ տեսած է,
Գացած Սերոփին ասած է,
Սերուփ ասաց՝ քիչ ըսպասե։
Կարապետ շալկեց Օվանես,
Արյունն թափավ ըռեզ-ըռեզ,
Տարավ դրեց մոտ խոտի դեզ,
Թուփչոն զարկեց քաջ մարդու պես։
Ա՛յ աղվարա օլմիշ յարա,
Բին ասկյարա բարեն-բարա[1]։

45 (94). ՀԱՅԴՈՒԿԻ ԵՐԳ

Հազար ինն հարուր տասներկու թվին,
Խմբեն շարժում եղավ Տաճկաստանի հողեն,
Իմաստուն մարդիկներ շուտ վկայեցին,
Երևում են պատերազմին տեղերը։
Թիֆլիս կետրոն ընտրվեցան ելաս,
Նպատակներս դեպի Սասուն գնալն է,
Գնացինք Բաշ գեղ մասնավորվեցանք,
Նպատակներս դեպի Սասուն գնալն է։
Սուլթան Համիդն ըսավ.—Շատ պարիսպները շիներ եմ,
Զորս կողմերը թնդանոթները շարել եմ,
Թեֆիրխ փաշան դեմդ կռվի հանել եմ,
Տեսնիա կ'սարսափիս, կուտաս զենքերդ։
Խան Պետրոս ըսավ.—Ինատս զոռ է,
Գոմաց Զորը առած եմ, աչքերդ քոռ է.
Խելքդ կորսված է, միտքդ մոլոր է,
Նպատակս դեպի Սասուն գնալն է։
Սուլթան Համիդն ըսավ.—Շատ և[ն] զորքերս,
Ճանապարհիդ շինված ունիմ բերդերս,
Վրեդ կռվի կը հանեմ անթիվ քյուրդերս,
Տեսնես՝ կը սարսափես, կուտաս զենքերդ։
Պատվերս առած իմ հայրիկես,
Պատերազմ ունեմ, արի ասպարեզ,
Գնդակ գցեմ, քեզ կը հեռացնեմ իմ սարես,
Նպատակս դեպի Սասուն գնալն է։

46 (95). ԱՏԱՆԱՅԻ ԿՈՏՈՐԱԾԸ

Կոտորածն անգութ, հայերը թող լան,
Անապատ դարձավ շքեղ Ատանան,
Կրակը, սուրը ու անխիղճ թալան,
Ռուբենի տունը, ա՜խ, ըրավ վերան։
Ալ մի՛ տար լույսդ, պայծառ արեգակ,
Լուսինն, շուրջ կապե դուն սուգի մանյակ,
Անցավ մեր երկրեն հարյավի խորշակ,
Զորցուց, թոռմեցուց ծառ-ծաղիկ համակ։
Րոպե մը չանցավ ու հայոց խեղճեր,

Ինկան սուրին տակ խուժանին ահեղ,
Ժամեր ու դպրոց բոցի մեջ կորան,
Բյուրավոր հայեր անխնա մեռան։
Անզգա անօրեն վատը որք թողուց
Զավակը մորմեն, հարսը իր սեսեն,
Ճեվատեն անզգամ, Ատիլը գծուծ,
Կերան կշտացան հայու արյունեն։
Պարապ է ավա՜ղ, հարուստ Ատանան,
Մոխիր է դարձեր ամբողջ Կիլիկյան,
Միայն ապրեցավ Հաճընի տիրոյն,
Ինչո՞ւ չշարժիր ապառաժ Ջեյթունն։
Երեք օր պինդ կրակը մեջեն,
Թշնամվույն սուրը, գնդակը դրսեն,
Ջնջեցին հայը երկրին երեսեն,
Արյուն կը վազե մեր ջինջ գետերեն։
Ալ բավ է որքան վատերուն լուծը
Կրեցինք, թողունք մեր լացն ու կոծը,
Օտարին տունը ալ չէ ապահով,
Հայ հողերու վրա մեռնինք մենք փառքով։

47 (96). ա) ՎԱՂԱՐՇԱԿԻ ԵՐԳԻ

Տոլպանտլու գյուղ ինվորվեցա,
Ճամբա ելա մոլորեցա,
Հոբվերան եկա, ետ դարձա։
Ամոթ քեզի, շուն Համիդ։
Մեշի մեջը մնացինք փոսփոն,
Չհանդիպանք շեկ ուռուսին,
Բոլորի ձեռքերեն էր մուսին,
Քեզի կուգան, Համիդ Սուլթան։
Վաղարշակն եմ, ելա Սուրբ խաչ,
Ընկեր, առա Պետրոսը քաջ,
Կատարեց ազգին պահանջը,
Լավ հիմացիր, Համիդ Սուլթան։
Կռիվ կենեմ գոռգոռալեն,
Զվինցիք քոռացան լալեն,
Սարերեն ջանդակ կրեյեն,
Ամոթ քզիկ, Համիդ Սուլթան։

Քաջ Վարդանն եմ մտա յառը,
Քուրդն ու զորքը զարկի խառը,
Պետրոսն ազատեց ծառը,
Լավ հիմացիր, Համիդ Սուլթան։
Երգենք Սիմոնի անունը,
Վաղարշակի տուրք արյունը,
Թախտդ կը բզդոմ գարունը,
Լավ հիմացիր, Համիդ Սուլթան։

բ) ՀԱՄԻԴ ՍՈՒԼԹԱՆԻՆ

Սպասմաթ գյուղից զինվորվեցանք,
Ճամփա ելանք մոլորվեցանք,
Թուփերուն եկան, մենք ետ դարձանք,
Ամոթ քեզի, Համիդ Սուլթան։
Խմբապետը Վաղարշակը,
Վահանը պարզեց դրոշակը,
Վալադ Գևորգ, Համայակը,
Ի՞նչ արեցիր, Համիդ Սուլթան։
Վաղարշակն ելավ սուրը խաչ,
Զինվորներից Պետրոսն էր քաջ,
Կկատարեր ազգի պահանջ,
Լավ իմացի, Համիդ Սուլթան։
Մութ անտառից դուրս եկավ փուսին,
Բոլորի գենք էր մուսին,
Չես դիմանա շեկ ոտսին,
Կգանք քեզի վեզ, Համիդ Սուլթան։
Երգենք Սիմոնի անունը,
Վաղարշակի տուրք արյունը,
Թաղիդ կփլի էս գարունը,
Լավ իմացի, Սուլթան Համիդ։

գ) «ԴՈՒՐԲԱՆԴԼՈՒ ԳՅՈՒՂ ԶԻՆԱՎՈՐՎԱՆ»

Դուրբանդլու գյուղ զինավորվան,
Ճամպա ելան, մոլորվեցան,
Հուվերան գացին, ետ դառան,
Մի խնդանա, Համիդ Սուլթա՛ն,

Մի խնդանաս, կարմիր գազան*։
Վաղարշակը եկավ Սուրխաթ,
Ընկերներ եղավ Պետրոսն քաջ,
Կատարեց իր ազգի պահանջ,
Լավ իմանաս, կարմիր գազա՛ն,
Լավ իմանաս, Համիդ Սուլթան։
Վաղարշակի սուրբ անունը,
Քեզ չի մնա այդ արյունը,
Թախտեր կքանդինք գարունը,
Լավ իմանաս, Համիդ Սուլթա՛ն,
Լավ իմանաս, կարմիր գազան։

48 (97). «ԴԱՐԲԱՆԴ ՍԱՐԸ ԽԻՍՏ ԱՆԱՒԻԿ»

Դարբանդ տարը խիտ անտառիկ,
Յուր շրջակայք թուրք ու տաճիկ,
Համազարկեր վրաս բացին,
Ես չտեսա ալ ոչ մեկին։
Հանկարծ վրաս ութ հատ գնդակ,
Թափեց կարկուտի նմանակ,
Հայոց ազգին եմ նահատակ,
Ինձ պաշարեց թուրքի բանակ։
Ընկերներս վախեն փախան,
Ես մնացի մեջ իմ արյան,
Ինձ մերկացուց թուրքի խուժան,
Տարավ շորերս, անդին հրացան։
Մարդո եղբայր, դու շատ մի՛ լար,
Իմ վերքերս խոր, անհամար,
Ես զոհվեցա ազգիս համար,
Նպատակիս այս էր հարմար։
Հայրս, մայրս, մացե՛ք բարով,
Ես գնում եմ հազար տարով,
Քանի տարի է իմ հասակս,
Բախտս ընձի խփեց քարով։
Մուշեղ էր անուն գինվորին,
Թիլվիչի Սաքուլից տարին,

---

* Յուրաքանչյուր տան առաջին երկտողը և վերջին եռատողը երգելու ժամա կրկնվում են (Ս. Բ.)։

Թուրք-հայկական կոտորածին,
Ինձ խփեցին Դարբանդ սարին։

49 (98). «ԹԱԼԱՆՆ ԷԿԱՎ, ԹԱԼՆԵՑ ՏԱՐԱՎ ՄԵՐ ՄԱԼԸ»

Թալանն էկավ, թալնեց տարավ մեր մալը,
Քյաֆուրն էկավ, զարկեց տարավ մեր մալը*։
Քուրան էկավ տարի կողեն,
Խարաճ վերուց մըր հողեն,
Զարկեց էնտր ու տատկըցուց,
Իրիցու տղա Պողեն։
Պառեկ դեմ էրինք սարին,
Աչքս ընկավ դիմաց քարփոս,
Դուշման մըզի քաշեց տուր,
Էլ ետ չ'գա էն տարին։
Ալ քողով խարտաներ տարան,
Մընք մացինք գիլու բերան,
Մըր ճրժերին ու աղջկներըզ,
Զընաք գինա, թե որ կուրան։
Կտրի՛ճ, թևերդի՛ քշտե՛.
Շուտ շեխի կողեն բշտե՛,
Մենծ ու պզտիկ խըտ հիտրաց,
Դու մեկ դրըբով կորշտե՛։
Էլ չկա օր ու արև,
Կտրավ մըր անուշ քարև,
Ատավաճ զըմեն կու տեսնա,
Նախոսկ մըր գլխու վերև։
Զուլում ..... մեկ էղած՝
Զորս կողերս են բոլըրած,
Զոռբութենով մըր տավար,
Թալնեցին էղած-չէղած։
Գրող խեղդա Ալոյին,
Սպանեց խեղճ Գալոյին,
Ղարադուդուշուն դիպնի
Կաճետցի շուն Սըլոյին։
Խորիմ շեխ Սոֆու գլուխ,
Օր չը կտրեր մըր տան մուխ,

---

* Կրկնել յուրաքանչյուր տնից հետո (Ծ. Բ.)։

Դիլաք կէնիմ աստըծուց,
Օր կտրի ուր օչխի ծոխս։

50 (99). «ԹՈՒՐՔԸ ԵԿԱՎ, ԱՆՑԱՎ ՔԸՆԱՑ»

Թուրքը եկավ, անցավ քընաց,
Կեղին արնով սարը լվաց,
Նոշեն կեղին ճարը կրտռի,
Թաքչելու տեղ կու փնտռի։
Սաղ Նոշենը ավըրվեցավ,
Ճայլներուն կապեց տարավ,
Եխդարներուն թըրվի առավ,
Կեղը շինեց յարա-յարա։
Թուրքը եկավ չարթեց քնաց,
Նոշենն կեղը մարթ չէ մնաց,
Թուրքին փաշեն կրակվի գար,
Սըրտին մեջը հնչ խեղջ չկար։

51 (100). «ԼՍԵՔ, ՁԵԶԻ ՊԱՏՄԵՄ ԿՈՎԻ ՄԻ ՄԱՍԸ»

Լսեք, ձեզի պատմեմ կռվի մի մասը,
Բայբուրդու լեռներեն էկավ վնասը,
Մեր պոլկը զոհ գնաց, մնաց մի մասը,
Քարդ քարի վրա չմնաս, Բայբուրդ։

Դեռ լույս չէր ծագել թուփերը խոսան,
Ղարսա կողմէն մեզի ինդատ չհասավ,
Օլթվա կողմեն էլ թուրքերը եկան,
Քարդ քարի վրա չմնա, Բայբուրդ։

Մե կողմեն պլիմոտ, մե կողմեն թուփեր,
Կարծես թե երկնքեն կարկուտ կթափեր,
Գեներալ Բարաթովը[1] զորքին կխաբեր,
Քարդ քարի վրա չմնա, Բայբուրդ։

Բայբուրդու սարերը հագան ալ արտուն,
Սալդատներու համար բացվավ սև գարուն,
Ա՜խ ճիտը տակը գար Բարաթովներու,
Քարդ քարի վրա չմնար, Բայբուրդ։

52 (101). ԲԱՅԲՈՒՐԴ

Ահա պատմեմ ձրդի Բայբուրդա բասը,
Քամբախի լեռներուց հասավ վնասը.
Երեք մասը քնաց, մնաց մի մասը,
Քարդ քարի վրա չմնա, Բայբուրդ,
Սարդ սարի վրա չմնա, Բայբուրդ։
Թուփեր քաշեցին պարսկաստան կացին,
Խեղճ հայերը կերի մնացին,
Քույր ու մայրիկներ նստան ու լացին,
Քարդ քարի վրա չըմնա, Բայբուրդ,
Սարդ սարի վրա չըմնա, Բայբուրդ։
Մի նամակ կրիմ, ճամփիմ մայրիկիս,
Թող լավ պայե քնքուշ բալեքիս,
Թող ենոքին կառքե, թորկե Ալեքըս,
Քարդ քարի վրա չմնա, Բայբուրդ,
Սարդ սարի վրա չմնա, Բայբուրդ։

53 (102). «ՍՈՒՓՈ ԲԵԿՆ ՀԱԿՈԲԻՆ ԽԱՓԵՑ, ՍԱՐԲՈՒԼԱՂ ՏԱՐԱՎ»

Սուփո բեկն Հակոբին խաբեց, Սարբուլաղ տարավ,
Որ պլուխը կտրեին, ղենքն ու ձին առնեին,
Հըմը ձիու տեղակ՝ ճակտին գյուլլեն առավ,
Ծառի պես ըկավ ինքը, խուլամներըն փախան,

Հակոբի սիրամը կաղղվան հանին,
Հայ քաջի դոշեն Գեորգևի խաչ կախին,
Սուփոյին լալով տարան Սարբուլաղի գոռները,
Թող աստված կանանչ պահե քաջ Հակոբի ձևռները։

54 (103). ՂԱՐՍԱ ՀՈՂ ՈՒ ՋՈՒՐԸ...

Ղարսա հող ու ջուրը արնով շաղված էր,
Երիտասարդները անտեր թաղված էր.
Տունը միջին ծակված էր, տուն չըկար,
Եխպարս գերի էր, մե հատ լուր չըկար։
Հագածս չուվքի էր, ոչխարի բուրդ էր,
Քեռուս տարողը մայրիկ, անօրա թուրք էր։

Ջանգերը զարկեցին, ժողովուրդ քոմմեցին,
Լըցին մարաք, մայրիկ, կրակ թողնեցին։
Արի, յար ջան, արի, գնանք խաս բախշենն,
Հետն էլ վերցնենք, յարտ ջան, ատչն ու քյամանչենն։

55 (104). ա) ԱԼԱՇԿԵՐՏՑԻՔ ԲԱՐՁԱՆ, ԳԱՑԻՆ

Ալաշկերտցիք բարձանն, գացին,
Մուշ, Բըլանուխ նըստան, լացին.
Իրանց մանուկներ մոռացին.
Զուլո՜ւմ, զուլո՜ւմ դաստաստան էր.
Գերի մընաց գերդաստանըս։
Վերև նայեմ, աստղը փելա,
Ներքև նայեմ, արուն—տիլ ա.
Մեր՝ որդու տեր նստի կ'իլա.
Զուլո՜ւմ, զուլո՜ւմ դաստաստան էր,
Գերի մընաց գերդաստանըս։

բ) «ԱԼԱՇԿԵՐՏՑԻՔ ՊԱՐՑԱՆ ԿԱՑԻՆ»

Ալաշկերտցիք պարցան կացին,
Մուշ-Բուլանըխ նստան լացին,
Իրանց մանուկներ կորցուցին.
Զուլում-զուլում դաստաստան էր.
Տեր իմ աստված, էդ ի՞նչ պան էր։
Ալաշկերտու տեղը դուզ էր,
... օսմանցին կավկաչ կոչեր,
Գաղտականներ մնացին դռսը.
Զուլում-զուլում դաստաստան էր.
Տեր իմ աստված, էդ ի՞նչ պան էր։
Իգդըրա ճամփեն օլոր-մոլոր,
Քամբախտ Արան դարձավ խոլոր,
Մեր խեղճ հայեր մնացին մոլոր,
Զուլում-զուլում դաստաստան էր.
Տեր իմ աստված, էդ ի՞նչ պան էր։

1

56 (105). «ՄԱՉՄԱՆՈՎԸ ԳՐԵՑ ՔՅԱՄԱԼ-ԲԵԿ ՓԱՇԻՆ»

Մազմանովը գրեց Քյամալ-բեկ փաշին,
Ասեց.—Այս նամակը տվեք Արտաշին,

Օլթին թող դատարկի մինչև վաղ ճաշին։
Սուլթանը լսելով այսպես հրամանն,
Ասեց.—Հայերը ինչ են, որ դառնան իշխան,
Ղարսից եմ վռնդում դեպի Երևան։
Մազմանովը լսեց Ղարսի վտանգը,
Տեսավ կքայքայվի ամբողջ բանակը,
Իր կողքից քաշելով ատրճանակը,
Իզուր զոհ տվեց իր քաղցր կյանքը։
Մազմանովի դիակ բերին լատանցին,
Էտ անիրավ հայեր թողին գնացին։
Դուք անիրավ հայեր, բոլորդ կոտորվեք,
Մազմանովի դիակ գերի մի թողեք։
Հայեր մոլորվին, լցվին վագոնը,
Մազմանովի դիակ թողին բալկոնը։

Գ. ԱՌԱՆՁԻՆ ԱՆՀԱՏՆԵՐԻ ՆՎԻՐՎԱԾ ԵՐԳԵՐ

1 (106). ԱՂԱՍԻ ԵՎ ԸՆԿԵՐՔ ՅՈՒՐ

Այն որ ծանոթ է պատմությյան ազգին,
Ճանաչե Վահան, Մուշեղ, Գարեգին,
Նոքա գընացին, տեր ետ մեզ կըրկինն,
Սեզ Կարոն, Մուսեն և քաջն Աղասին։
Ապրի՛ն պաշտպանք մեր ազգին,
Կարոն, Մուսեն, Աղասին,
Կեցցե՛ն դյուցազք մեր ազգին,
Կարոն, Մուսեն, Աղասին*։
Միշտ պիտի պարծի քանաքեռ ավան,
Որ ծընավ ձեզ պես կորյուն անընդման.
Դուք Արարատա ամուր ախոյան,
Փառք և ցընծություն Ատքանազյան տոհմ։
Մահիս, Արագած, Նըպատ և Զիրավն,
Սիրով տեղի տան ձեր սուրբ միությյան.
Դուք նոքա գըլխին կեցե՛ք Հայաստան,
Ուր տեղ վըտանգ կա, հասե՛ք օգնությյան։

---

* Կրկնվում է յուրաքանչյուր տնից հետո (Ծ. Կ.)։

Մինչ մեր սև բաղդեն՝ Սատանն այն գազան
Կըլկեր խեղճ Հայոց՝ վըշտոք զանազան,
Դուք նորա դարձաք սարսափ հավիտյան,
Ձորա նորին վանյալ տարտյք ցիրուցան։
Ձի մոռնար Անին զայն ձեր հաղթությունն,
Որով թշնամին արարիք նըկուն,
Այնու հայ գերյաց հասաք օգնությունն,
Խոսմբ-խոսմբ փրկեցիք դառնալ յուրյանց տուն։

2 (107). «ՄՆԱՔ ԲԱՐՅԱ՛Վ, ՍՈՒՐ, ՀՐԱՑԱՆ»

Մնաք բարյա՛վ, տուր, հրացան.
Մնաք բարյավ ընկերներս,
Անցան օրեր ազատության,
Եկան բանտ ու կապանքներ։
Երբ ես վառված ատելությամբ,
Դեպ գարշելի բռնության,
Թուշտամ էի կատաղությամբ,
Տալ եղբարցս օգնության։
Այնժամ անհագ սիրտս լի էր,
Մաքուր և տուրք իղձերով,
Կյանքիս գնով նա ուզում էր,
Տալ խեղճ հային սեր, գորով։
Բայց թշնամին ինձ թակարդեց,
Պղծեց սերս սրբալից,
Անպատվության դրոշմ դրեց,
Գործի վրա սխրալից։
Բայց ծանր չեն կապանքներս,
Մութ բանտը չէ ինձ տանջող,
Ո՛հ, այլևս թշնամու դեմ,
Ձեմ անհոդդողդ մարտնչող։
Սակայն եթե նորից ազատ,
Վիճակված է ինձ լինել,
Այնժամ՝ տուրը ձեռս առած,
Կելնեմ նորից մարտնչել։
Եվ կատաղած սրտիս հագը,
Այդ սրովը ես կառնեմ,

Եվ թշնամու գարշ վարմունքը
Իր երեսին կը զարնեմ։
Գերեզմանիս քարին վրա,
Սերտով սիրով դու երգիր,
Եվ փոխանակ իմ երեսին,
Շիրամիս քարին համբուրիր։
Մընաք բարյավ, սուր, հրացան,
Մընաք բարյավ, ընկերներ։
Անցան օրերս ազատության,
Եկան բանտի շղթաներ։
Գերեզմանիս չորս բոլորը,
Վարդ, մանիշակ թո՛ղ բուսնին,
Իմ հայրենյաց խե՛ղճ զավակունք։
Այս վարդերով զբոսանին։

3 (108). ա) «ԵՐԲ ԱԼԵԿՈԾ ԾՈՎԻ ՎՐԱ»

Երբ ալեկոծ ծովի վրա,
Իմ մակույկը խորտակվի՝
Ես փրփրադեզ ալյաց միջին
Դեռ իմ հույսս չեմ կտրի։
Բոլոր ուժով և համարձակ,
Բազուկներս կշարժեմ,
Ալիքները պատառելով,
Դեպի ափը կը թռչեմ։
Անհավասար այս կռվի մեջ,
Թե ուժերս ինձ թողնեն,
Ալիքները հորձանք տալով,
Թե դեպ անդունդ ինձ նետեն։
Այն ժամանակ գեթ սփոփանք,
Ես կգտնեմ նրա մեջ,
Որ մեռնում եմ քաջի նման,
Կռիվ տալով մինչև վերջ։

բ) ՀԱՌԱՋԱՆՔ ՎՇՏԱՅՅԱԼ ՍՐՏԻ ՍԱՐԳԻՍՋԱՆ ԿՈՒԿՈՒՆՅԱՆԻ

Երբ ալեկոծ ծովուն վրա,
Իմ մակույկս խորտակվի,

Ես փրփրագեղ ալյաց մեջը,
Դեռ իմ հույսս չեմ կտրել։
Բոլոր ուժովս և համարձակ,
Բազուկներըս կը շարժեմ,
Ալիքները պատառելով,
Դեպի ափունք կը թռչիմ։
Անհավասար այս կռվին մեջ,
Թե ուժերըս ինձ թողնեն,
Ալիքները հորձանք տալով,
Դեպի անդունդ զիս մղեն
Այն ժամանակ գեթ սիրտ անք,
Ես գտնում եմ նրա մեջ,
Որ մեռնում եմ քաջի նման,
Կռիվ տալով մինչև վերջ։
Ես Կուկունյան Սարգիս անուն,
Աքսորման մեջ ինկած եմ,
Ազատության սիրույն համար,
Կյանքս ու հոգիս զոհած եմ։
Ջուրքերս շղթա, ոտքերս շղթա,
Մութ բանտին մեջ ինկած եմ,
Հայրենիքի սիրույն համար,
Կյանքս ու հոգիս զոհած եմ։

4 (109). ԿՈՒԿՈՒՆՅԱՆԻ ԵՐԳԸ

Թողել եմ վաթանս, ընկել դարբեդար,
Համածս արտասուք է, կերածս զահրտամար,
Մահվան մկրատը կուզե կտրել կյանքիս լարը,
Կռունկ, մեր վաթանից ի՞նչ լուր բերեցիր։
Մի տեղում թողել եմ մայր, քույր, եղբայրներ,
Մի տեղում ամուսին և գառ զավակներ,
Սևացան իմ կյանքի անցյալ փայլ օրեր,
Կռունկ, մեր վաթանից ի՞նչ լուր բերիր ինձ։
Հյուսիսի խորքերում ա՜խ-վա՜խ եմ կանչում,
Արյուն արտասուքներով Աստղիկըս եմ հիշում,
Աստղեր-արև-լուսնյակ նայել եմ ուզում,
Կռունկ, մեր վաթանից ի՞նչ լուր բերիր ինձ։
Կռունկ, քեզի մատաղ, շատ բարևներս տար,
Ասիր նրանց՝ կարոտը չի տալ ինձ դադար,

Թե չմեռնեմ կտեսնեմ նորանց մինչ նոր դար,
Կոտնկ, մեր վաթանից ի՞նչ լուր բերիր ինձ։
Կոտնկ, ես Կուկոնյանն եմ, հոգիս վխրավոր.
Ցավերս մեկ չէ, հազար չէ, այլ բյուրավոր,
Կօգնե ինձ սուրբ Սարգիս, զորեղ ձիավոր,
Կոտնկ, մեր վաթանից ի՞նչ լուր բերիր ինձ։

5 (110). «ՇՂԹԱՅԱԿԱՊ ԲԱՆՏՈՒՄ ՆՍՏԱԾ ԿՈՒԼԻԱՍ»

Շղթայակապ բանտում նստած կողքամ,
Սև է տարին ամխա, շաբաթ, օր իսկ, ժամ,
Ազատության դուռը փակ է առաջիս,
Մտիկ տվող չկա ցավ ու հառաչիս։
Անգութ բախտի երկաթե ձեռքն ինձ ճնշեց,
Սրտիս վերքս ծանրանալով, շունչս կտրեց,
Անընկճելի պողպատ կամքս փշրեց,
Բախտի դեմը գլուխս խոնարհ հաղթվեց։
Հեռացա հայր-մայրս, եղբայր, քույրերից,
Ջավակներից, սրտիս մտիկ ամոստներից,
Որոնց համար վառ արյունս ցամաքեց,
Նորանց սիրույն կյանքիս հույսը խորտակվեց։
Մոայլ երկինք, մոայլ բնություն, մոայլ բանտ,
Անգթության ձեռին իմ կյանքն է պատանդ,
Զուրկ արևից, զուրկ աստղերից, զուրկ լուսնից,
Զուրկ բնության ազատ օդը ծծելուց։
Ինձ կասեն. թո՛ղ քո պաշտելի հայրենիք,
Գնա հյուսիս, այդ է ճակատագրդ սև կնիք,
Այնտեղ պետք է թաղվես օտար հողի տակ,
Օտար արծիվը քրքրելու է քո դիակ։
Կրգա փրկիչ, ազատիչ տուրք հրեշտակ,
Չի թողնիլ ինձ բռնության լծի տակ,
Նա կսրբե ճակատիս քսված անարգ մուր,
Թույլ չի տալ, որ քամեմ մահվան դառն մրուր։

6 (111). ԿՈՒԿՈՒՆՅԱՆ

Հեռացել եմ Հայրենիքից,
Եվ իմ ծնող մայրիկից,

Ինձ տանում են Սիբիրիա,
Գուցե հետ չգամ նորից։
Այս ինչ դժբախտ վիճակ է,
Որ մենակ նստած բանտում,
Ինչպես տխակ գեղեցիկ,
Զարշարվում եմ վանդակում։
Ես ընկերներ շատ ունեի,
Բայց բոլորն էլ պետքական,
Հենց որ բանտն ընկա ես,
Էլ չեն հիշում մեկ անգամ։
Անցան օրերս գեղեցիկ,
Անցան ժամերս թանկագին,
Ինձ տանում են Սիբիրիա,
Գուցե հետ չգամ նորից։

7 (112). ա) ՔԱՋ ԱՐԱԲՈՅԻ ԵՐԳԸ

Գրող տանի քուրդ Աբոյին,
Սպաներ է ջոջ ափոյին,
Իլլաջ մացեր Արաբոյին,
Զարթի՛ր լաո, մրռնիմ քըզի։
Չուր ե՞ք մնաս էլու դռներ,
Էրթամ գառնամ գիմ խեղճ գառներ,
Ջրեմ գիմ բոստընի ծառներ.
Զարթի՛ր լաո, մրռնիմ քըզի։
Ինն իրիշկե գալող ո՞րն է,
Քաջ Արաբո բաղդավորն է,
Կարմիր իրիցանց գինվորն է.
Զարթի՛ր լաո, մրռնիմ քըզի։
Խեղճ մշեցին մեռավ լարով,
Հեռու երկրներ մանգալով,
Մեռավ թուրքի պատերը տալով.
Զարթի՛ր լաո, մրռնիմ քըզի։
Ելեք կայնե՛ք, կտրիճ խերան,
Ոտով գացե՛ք առաջ ուրան,
Սալլաթ Մեհրու բաժին խուրբան,
Զարթի՛ր լաո, մրռնիմ քըզի։
Սեֆի՛լ, շիվար մացած ձագեր,
Էղած անտեր, բնավեր խավքեր,

Տե՛ր դու փրկե, պահե ճըժէր,
Զարթի՛ր լաո, մըռնիմ քըզի։

բ) ՄՇԵՑՈՒ ԵՐԳԸ

Զուր ե՞րթ մնանք զէլու դռներ,
Ընթամ գոնիմ զիմ խեղճ գառներ,
Ասւքեմ զիմ պախչայիս ծառներ,
Զարթի՛ր լաո, մռնիմ քզի։

Խեղճ մշեցին մեռավ լալով,
Ստար երկիրներ մանգալով,
Մեռավ թուրքի պարտքը տալով,
Զարթի՛ր լաո, մռնիմ քզի։

Գրող տանի քուրդ Հատտյին,
Որ չտպաններ ջոջ Ափոյին,
Իլաճ մացեր Արաքոյին,
Զարթի՛ր լաո, մռնիմ քզի։

Դեն իրիշկե՝ գալող ո՞ղն ա,
Քաջ Արտաքո բաղդափորն ա,
Կարմիր իրիցանց զինվորն ա,
Զարթի՛ր լաո, մռնիմ քզի։

գ) ՄՇԵՑՈՒ ՄՈՐ ՕՐՈՐՈՑԱՅԻՆ ԵՐԳԸ

Խուժան ասկեր զգնղ պաշարե,
Մոր ու մանդան ծեռվիրն կապե,
Մըգա գիկա սըրե մըզի,
Զարթնիր, լաո, մեռնիմ քըզի։
Էլի վերտունք թվանք, զառվել,
Հըդ թուրքերոսն գուզիմ կռվել,
Սուլթան գուզե ջնջե մըզի,
Զարթնիր, լաո, մեռնիմ քըզի։
Ի՞նչ անիծեմ թուրք ըսկըրին,
Որ սպանեց մեծ ապոյին,
Զամըր հուս թողեց վըրս օրորոցին,
Զարթնիր, լաո, մեռնիմ քըզի։
Խեղճ մշեցին մեռավ լալով,

Օտար երկրներ ման գալով,
Մեռավ խըլխխի պարտքը տալով,
Ջարթնիր, լաո, մեռնիմ քըզի։
Ջուր ե՞րբ մնամ էլու պռներ,
Էրթամ գըտնիմ զիմ խեղճ գառներ,
Ջուքիմ զիմ բախչան ու ծառներ,
Ջարթնիր, լաո, մեռնիմ քըզի։

դ) ՄՇԵՑՈՒ ԵՐԳԸ

Խեղճ մշեցիք մնացին լալով,
Երկրե-երկիր ման գալով,
Մեռան թուրքին հարկ տալով,
Ջարթնի՛ր լաո, մեռնիմ քեզի։
Ջարթնի՛ր, զարթնի՛ր, գնա Սասուն,
Գնա Սասուն, օգնե հայուն։
Բոքիկ ոտքով չուր Ախթամար,
Ելնեմ երթամ հայու համար,
Ձեր օգնական սուրբ տիրամայր,
Ջարթնի՛ր, լաո, մեռնիմ քեզի։
Գրողը տանի քուրդ Հասոյին,
Որ սպանել է ջոջ Աւոյին,
Էլ ճար չմնաց Արաբոյին,
Ջարթնի՛ր լաո, մեռնիմ քեզի,
Ջարթնի՛ր, զարթնի՛ր, գնա Սասուն,
Գնա Սասուն, օգնե հայուն։

8 (113). ԴԵՐՈՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Դերոյան Տիգրան, Մքո և Արշակ[1],
Դաշտ Կուրուբաշա եղան նահատակ,
Քաջ երիտասարդ վասպուրականի
Դերոյան Տիգրան, անուն ցանկալի։
Նա յուր խմբի մեջ հրեշտակի նման,
Էնոր սև օրն էր քաջ Դերոյանի,
Համիդ զորքեր շրջապատեցին,
Երեք հայ զինվոր սայլով բերեցին։
Բոլոր հայերուս սրտերն այրեցին,
Ջար կուսակալի փափագ լցուցին,

Քաջ երիտասարդներ կուլան ու կողբան.
Նվ միշտ կը կանչեն Դերոյան Տիգրան։
Էնտա մատնիշներ
Մեջ Կուրուբաշա,
Պիտի որ լինեն
Նման վասակա։

9 (114). ՎԱՋԳԵՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Հայդուկ, մի վախնար քրդի գնդակից,
Նա մահաբեր չէ քաջերիդ համար,
Ջո «ջան-ֆիդայի» ահեղ անունից,
Քյուրդը սոսկում է ինչպես դիվահար։

Առե՛ք հրացան ու ելեք հանդես,
Տանջանքի մեջ է ձեր մայր-հայրենիք.
Մի՞թե չեք լսում, նա կանչում է ձեզ,
«Օգնութեան արի՛ք, հարազատ որդիք»։

Ձեր հրացանը վրեժով լցրեք,
Ջարդեք թշնամուն, թշնամուն գազան,
Դուք ձեր մոր սիրուն զարկեք ու ընկեք,
Միայն թե կեցցե՛, կեցցե՛ Հայաստան։

10 (115). ա) ՍԱՔՈՅԻ ԵՐԳԸ[1]

Այն օրը, որ ես քեզ տեսա էլ ուրիշին չը սիրեցի,
Գիշե՛ր-ցերեկ աղաչելով՝ քաջիդ կյանք, արև խնդրեցի,
Այդ պատճառով շատ սիրեցի, որտեղ տեսա սևաթոռեցի[2],
Սևաթոռիդ ղուրբան, Սաքո ջան, ջան ջիվան ջան։
Բոքիկ ոտով ուխտ գնացի, փառք աստծո մուրազիս հասա,
Այն ինչ երջանիկ օր էր, որ քեզ սկզբում Դերիկ[3] տեսա,
Դերիկիդ ղուրբան, Սաքո ջան, ջան հոգի ջան։
Հարց տրեցի վարպապետին, ասի՝ ո՞վ է այդ աբեղան,
— Աբեղա չէ, հոգիս, զինավոր է այդ սիրուն տղան,
Զինավորիդ ղուրբան, Սաքո ջան, ջան ասլան ջան։
Պատարագը վերջացրին, գնացին զարկերու նշան,
Մեկդին Պետո[4], մեկդին Կարո[5], ինչ սիրելի ընկերներս կան,

Ընկերիդ ղուրբան, Սաքո ջան, ջան ասլան ջան։
Երկար հաղթությունից հետո տանջանքների դեմ կռվելով,
Անհաղթ ջան-ֆիդան, մեծ մարդ կոչման արժանացար,
Այդ դեպքոմն էլ պատմության մեջ անհաղթելի փառք ստացար
Անհաղթիդ ղուրբան Սաքո ջան, ջան հայդուկ ջան։

Բ) ՍԱՔՈՅԻ ԵՐԳԸ

Այն օրը որ քեզ տեսայ,
Էլ ուրիշ յար չընտրեցի,
Քո պատճառով շատ սիրեցի,
Որտեղ տեսա սևքարեցի,
Սևքարիտ ղուրբան, Սաքո ջան հո՜յ։

Բոբիկ ոտքով ուխտ գնացի,
Փառք աստծու, մուրազիս հասա,
Ախ, ինչ երջանիկ օր էր, որ
Քեզ սկզբում Դերիվոկ տեսա,
Դերիվկիտ ղուրբան, Սաքո ջան, հո՜յ, Սաքո ջան հո՜յ։

Հարցրեցի վարդապետից,
Ասի՝ ոստի՞ց է աբեղան,
Ասաց. աբեղա չէ, հոգիս,
Հայդուկ է այդ սիրուն տղան,
Հայդուկիտ ղուրբան, Սաքո ջան, հո՜յ։
Սաքո ջան, հո՜յ։

Պատարագից վերջ հրացանով,
Գնացինք զարկելու նշան,
Մեկ դին Կարո, մեկ դին Պետո.
Ինչ սիրելի ընկերներ կան,
Ընկերիտ ղուրբան, Սաքո ջան, հո՜յ։
Սաքո ջան, հո՜յ։

Թուխր Սաքո, Ասլան բալա,
Դաղ-քարամի կարմիր արյուն,
Ժողովուրդը պատմությունով
Քեզ տվել է հազար անուն,
Անունիտ ղուրբան, Սաքո ջան, հո՜յ։

Չհասկացող ընկերներդ
Քեզ ղրկեցին ձենքից զրկված,
Հազարներու դեմ դնող մարդ
Քեզ մի հատիկ քուրդն է բռնած,
Լափը, մայրիկս լալիս է,
Մայրիկիտ ղուրբան, Սաքո ջան, հո՞յ։

11 (116). ԴԺՈԽՔ–ՀՐԱՅԻ ԵՐԳԸ

Գերեզմանիս թող արձանին վրա,
Գրեն, հալքիումյան, թե կոթող է սա,
Թող տեսնեն Հայաստան, թող կարդան հայ քաջեր,
Տեսնեն յուրյանց ընկեր,
Նահատակ է պատկեր,
Ծոցն Հայաստանի։

Անձնվեր և քաջ Ղազարյանի պես,
Ցուցնեն քաջություն քաջ Արմենի պես
Գալարին աղիքներ, թափին գաղջ արցունքներ,
Տեսնեն յուրյանց ընկեր,
Նահատակ է պատկեր,
Ծոցն Հայաստանի։

Հոսով եմ կընքած աչացս վերջին քուն,
Տեսնեմ Հայաստան յուր ազատությումն,
Իմ գերեզմանիս քով թող կայնին ու ձայնեն,
Ահա ազատությումն,
Եվ ահա փրկությունն,
Քաղցր Հայաստանի։

Հանգչին ոսկորներ մեջ իմ տապանին,
Տեսնեն փրկություն մայր Հայաստանին։
Այն ատեն թող կնքեն իմ գերեզմանիս վեմ,
Ազատ դրոշակներով,
Հայու վիճվորներով, ֆեդայիներով։

12 (117). ԳԱԻՐԳԵՆԻ[1] ԵՐԳԸ

Սամսո լեռներում զինված ոսթ տղա,
Իրանց խմբապետ Գուրգեն և Ռուբեն,
Սասուն ելնելով, զենքեր վերցնելով
Մինչև ապրիլ լեռներ ման գալով։

Օրը հինգշաբթի ծրոնք տեղ հասան,
Տղայոց խումբը մարտի մեջ մտան,
Այդ գյուղի քյոխվեն մրն էր մուտուման,
Յուր երկու որդին վալուն լուր տարան։
Հլու հրամանով հավաքվավ զորքը,
Թալըփ-էֆենդին առաջնորդ ընկավ,
Օրը ուրբաթ ծրոնք գեղը հասան,
Տղայոց խումբը մարգի մեջ մտավ։
Թալըփ-էֆենդին ըսավ ահվչուն,
Ռուբեն կանչեց,—Գուրգեն, զարկ էդ շուն,
Հրացան բացվեցավ, կռնակին դիպավ,
Ու շար թշնամին գետին փռվեցավ....
Այդ որ լսեցին, խոտ ու գազ բերին,
Մարագի չորս կողմը կրակ վառեցին։
Ով հայե՛ր, հայե՛ր, հասնեք օգնությյան
Գուրգեն կըզոհվի ի սեր ազգությյան։
Խմբապետ Գուրգեն առյուծի նման,
Երկու ընկերով մարգից դուրս ելան։
Գնդակ պարպելով դեպի սար գնացին,
Վատ թուրքի զորքը ընկավ ետևից....

13 (118). ԳՈՒՐԳԵՆԻ ԵՎ ՌՈՒԲԵՆԻ ԵՐԳԸ

Պատիժ ու բանտ քեզ կը սպասե,
Քեզ, ով պինովոր ազատությյան,
Կապանք, շղթայք քու բաժինդ են,
Այդ է օրենք քաղաքականն։
Թող ապագան, հայու զավակ,
Քեզ նվիրե փառաց պսակ*,
Ամեն մանուկ յուր մոր գրկին,
Ապրի Ռուբեն, յուր Սուրմալին,
Կըսե կերգեր ուրախ-ուրախ,
Շուն Դալիպին կըսեր ավաղ։
Պարոն Գուրգեն հառաջ վազեց.
Հարդանոցի պուռ խորտակեց,
Կռվե՛ք, տղերք, պոռաց կանչեց,
Թշնամիներ գետին փռեց։

---

* Կրկնվում է յուրաքանչյուր տնից հետո (Ծ. Կ.)։

14 (119). ՍԵՐՈՔԻ ԵՐԳԸ

Առյուծն ելավ Սուրուխ գյուղեն,
Ինքն և իրան ջուխտակ տղեն.
Թող խապարեն փ գա, հայու զավակ,
Քեզ կը նվիրեմ առանց արսակ*։
Առյուծն ելավ, ձագերն էլ հետ,
Ղրկեցին Մըլմուրադ գեղ,
Հիտոստ ըզի փաշայի հետ,
Պատերազմելու թուրքի հետ։
Անդրեյ եղբայր, գացեք բարով,
Ես ուխտել եմ հարյուր տարով,
Նամակ գրեմ էլի արի,
Հայոց քաջեր չեն դադարի։
Լուր տվեցին Մշու փաշին,
Փաշեն կանչեց թեչի պաշին.
Բոլոր աշխարհ թել կը քաշվի,
Ր գան Սուլուխ, Սերոբ տեսնին։
Անդրեյ եղբայր, գացեք բարով,
Ես ուխտել եմ հարյուր տարով,
Նամակ գրեմ էլի արի,
Հայոց քաջեր չեն դադարի։
Թագավորը խիստ հրամայեց,
Զորքեր ղրկեց Սերոբ տանին,
Սերոբ կանչեց Ամրամանին,
Կեցցես Սերոբ, մեր փաշեն է։

15 (120). ՍԵՐՈՔ ՓԱՇԱՅԻ ԵՐԳԸ

Գընդակ որոտաց նոյեմբեր ամսուն,
Պաշարված ենք մենք, իմ սիրուն Սոսե,
Վեր առ մոսինդ, քաջություն հոս է,
Քո սիրած Սերոբին օրհնյալ օրն այս է։
Ձայն տվավ Սոսենն.—Սերոբ ջան, հոս եմ.
Ջինվածծ, պատրաստված ձայնիդ կսպասեմ.
Քեզի հետ կռվելու, քու կողքին մեռնելու,
Ամեն օր, ամեն ժամ, պատրաստ է Սոսեն։

---

* Վերջին երկու տողը կրկնվում է յուրաքանչյուր տան վերջում (Ծ. Կ.)։

Իսկ քո Սերոբը, կյանքիդ հատորը,
Արյունով ներկեց Տալվորիկ ձորը,
Առյուծի նայվածքով նայում էր բոլորը,
Հաղթական կռվի մեջ էր ամբողջ օրը։
— Զայն տո՛ւր Անդրանիկ, կենսատու ընկեր,
Արդյոք այս պահուս ո՞ր լեռն ես պառկել,
Ոսկեթել մազեր, երեսդ ես ծածկել,
Հաղթական բազուկով մոտինդ ես գրկել։
Հասիր Անդրանիկ, հասիր օգնութեան,
Սերոբ կզանվի ի տեր ազգութեան,
Դե՛ հասիր, շո՛ւտ հասիր, կտրիճ խմբերով,
Սերոբ կզանվի իր զավակներով։

16 (121). ՍԵՐՈԲ ՓԱՇԱՅԻ ԵՐԳԸ

Ով որ քաջ է՝ ինչ կը տպատե,
Արդեն ժամանակ է, թող գա,
Մահ—պատերազմի օրհաս է,
Ով որ անվախ քաջ է՝ թող գա։
Կամ կռվենք, պարպենք, վերջանանք,
Կամ ղենքով փրկութեան ըստանանք,
Կռվելով փրկենք Հայաստան,
Ազնիվ մտածողը թող գա։
Այս մեր Սասուն, սարե Սիփան,
Կռիվ ոանե[ն] միշտ անխափան,
Կռվելով փրկենք Հայաստան,
Այս հուրս ունեցողը թող գա։
Այս հինգ դար է մեզ կսպանեն,
Բռնի կրոնքեն կը հանեն,
Մեր կին, աղջիկներ կը տանեն,
Պատիվ ունեցողը թող գա։
Երկաթե մարտ, քարե հոգի,
Վրեժխնդիր վինի թուրքին,
Անվախ քարի տակ չոքողը,
Անսխալ խփողը թող գա։
Վերջապես մենք ունինք կռիվ,
Ջենքով պիտի մաքրենք հաշիվ,
Մեր հայրենյաց փառքն ու պատիվ՝
Սերոբ-փաշային սիրողը թող գա։

17 (122). ԱՂԲՅՈՒՐ ՋԱՆ

Բոլոր աշխարհում
Հռչակ քո անուն.
Առյուծ քաջարի,
Աղբյուր ջան,
Հայոց աշխարհի։
Հայուհյան անուն
Խիստ բարձրացուցիր.
Քնած սրտեր,
Աղբյուր ջան,
Դու բորբոքեցիր։
Մեզի օրհնակ
Թողուցիր գացիր.
Երիտասարդաց,
Աղբյուր ջան,
Դուռներ բաց արիր։
Քաղցր հայրենիքդ
Բնավ չմոռնիր.
Մինչև վերջին շունչ,
Աղբյուր ջան,
Պատերազմեցիր։
Սուրբ գործ սիրեցիր,
Խոմբեր կազմեցիր.
..... թյուրք և քյուրտ,
Աղբյուր ջան,
Սարսափեցուցիր։
Բաղեշ վիլայեթ
Ոտքի կանգնեցրիր.
Խեղճ ժողովրդին,
Աղբյուր ջան,
Հոգի, հույս տվիր։
Գիշեր և ցորեկ
Ախլաթ լալիս է.
Անդադար կը կոչե,
Աղբյուր ջան,
Սևրոբ և Սոսե։
Այժմ ննջում ես
Ու հոգի տակին.

Մեզի թողնելով,
Աղբյուր ջան,
Օգնել հայ ազգին։
Սիրով Աղբյուրի
Կործին հետևինք.
Վրեժ կը գոչե,
Աղբյուր ջան,
Հայե՜ր, վրեժ առնենք։

18 (123). ԱՂԲՅՈՒՐ

Խլաթի գավառ,
Սոխորդ գեղ ըսված,
Իրեն բնակիչ՝
Աղբյուր ջան,
Բարիքով լցված։
Պողոս, Գրիգոր՝
Թյուրքին սիրական,
Կուգեն վերջացնել,
Աղբյուր ջան,
Ամբողջ Հայաստան։
Պողոս, Գրիգոր
Խորհուրդ կազմեցին,
Թյուրք ոստիկաններ,
Աղբյուր ջան,
Ամբողջ կանչեցին։
Սանաթ տըվեցին,
Նորեն խրկեցին,
Թեղուտ ու Սոխորդ,
Աղբյուր ջան,
Հանկարծ պատեցին։
Անիծած Դավիթ
«Աղա ջան» կանչեց.
Կեղծավթյամբ ըսաց—
Աղբյուր ջան,
Թե զորք մեզ պատեց։
Անիծյալ ըլլա
Դավիթ ծնած տեղ,
Ավերակ դառնար,

Աղբյուր ջան,
Կոշտաձ լավաճ գեղ։
Ոտխորդա վերև՝
Նամրուտ մեծ սարեն,
Ծուցակ տըվավ մեզ,
Աղբյուր ջան,
Ջեն մոսինեբեն։
Բաղեշ վիլայեթ,
Անոսն Սալվի-Զոր.
Սոսի կը կանչե.
«Հոգի ջան,
Կյանքդ ազգին տուր։
Կեցցե՛ քաջ Աղբյուր
Եվ իր մոսինեն.
Հիսուսն և հինգ զորք
Աղբյուր ջան,
Ըրավ ցան ու ցիր։
Անունդ էր Աղբյուր
«Մինչև Ռուսաց Դուռ
— Աշոտ կը գրեր —
Աղբյուր ջան,
Կտրա՛, վճիռ տուր»։

19 (124). ա) ՍԵՐՈՒԲ ՓԱՇԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Գլուխդ Բաղեշ և մարմինդ ի Մուշ,
Հովի պես անցար դու քաջի նմուշ,
Անոսնիդ մատաղ, թուրքի աչքի փուշ,
Աղբեր Սերոբ ջան, անունդ քաղցր-անուշ։
Անմահ դյուցազն խլաթա,
Հսկա կորյուն Նեմրութա,
Հայերուս փառք և բաղձանք,
Քեզ մատաղ, Սերոբ փաշա։
Ասկից վերջ Բաղեշ քեզ պիտի հիշե,
Եվ հորդ արցունքներ միշտ պիտի թափե,
Գլուխդ, գերեզմանդ երբ նա կտեսնե,
Աղբեր Սերոբ ջան, միշտ պիտի կանչե։
Հողի տակ ննջե, դուն զավակ Հայկա,
Անունդ ազգիս մեջ միշտ պիտի մնա,

Հայք քեզ կոչեցին դյուցազն խլաթա,
Թուրքը սարսափած քեզ կասե փաշա։
Սարե Սիփան, Սև սար, Գրգուռ և Նեմրութ,
Որք են մնացել, քաշեն քո կարոտ,
Երկիր դող հանիր անցար քո խմբով,
Աղբեր Սերոբ ջան, մաշվանք քո սիրուց՝
Մենք քո ընկերներ կուխտենք երդումով,
Որ վեր սար ելնենք մեր գենք զրահով,
Երթալ միշտ լեցուն փոշ և տատասկով,
Աղբեր Սերոբ ջան, քո ճանապարհով։

բ) ՍԱՍՆԱ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՐՈՍ, ՆԱՀԱՏԱԿՎԱԾ ԱՂԲՅՈՒՐ ՍԵՐՈԲԻ ԵՐԳԸ

Գլուխդ ի Բաղեշ, մարմինդ ալ ի Մուշ
Աղբյուր Սերոբ ջան, անունդ քաղցր, անուշ։

Հայք քեզ կոչեցին «դյուցազն խլլաթա»
Ոտքդ սարսափած՝ լսելն քեզ «փաշա»։

Անունիդ մատաղ, դուշմնի աչքին՝ փուշ.
Ու կը շողշողաս քաջի դու նըմոսյշ։

Ննջե անմոռաց, կորյունըդ Հայկա,
Անունդ ազգիս մեջ պիտի միշտ մընա։

Քեզմե որք մնացինք, Աղբյուր Սերոբ ջան,
Քեզ կոթող՝ Գըրգուռ, Նեմրութ ու Սիփան։

20 (125). ՍՈՍԵԻ ԵՐԳԸ

Գյալեգյուզան դումանի,
Հալմ յոխտուր յամանի,
Ասկյար գյալդի դումանի,
Վեր կաց, դու տեա, Սերոբ ջան։
Էլ չեմ ասում, Սերոբ ջան,
Գլխիդ մատաղ, հերոս ջան,
Վեր կաց, վերցրու հրացան,
Ինձ կտանեն գերության։
Ասկյարն էկավ ժամու դուռ,
Սոսեն ասեց՝ դուրքին տուր,

Հայերի վիզ մնաց ծուռ,
Վեր կաց, դու տես, Սերոբ ջան։
Էլ չեմ ասում, Սերոբ ջան,
Բավ է կանչեմ, հերոս ջան.
Վեր կաց, վերցրու հրացան,
Ինձ մի թողնի գերությյան։
Աղջո, քու տուն քանդեցիր,
Ինչո՞ւ Սերոբին մատնեցիր,
Հայերուն գերի տվեցիր,
Վեր կաց, դատես, Սերոբ ջան։
Բավ է կանչեմ, Սերոբ ջան։
[Էլ չեմ ասում, հերոս ջան],
Վեր կաց վերցրու հրացան,
Աղգդ մի թող գերությյան։

21 (126). «ՊՈՒՏԿԵ ԹՈՒՆԴԻՐ, ԳԱՐԵ ԽԱՑ»

Պուտկե թունդիր, գարե խաց.
Սերոբն էկավ, ոտներ թաց,
Սոսեն ըսավ. «Սերոբ ջան,
Ասքարն էկավ վեց խազար,
Տուր մավիզեր, ելնիմ դուս,
Ջըրկեմ, տպանեմ պոսմանդար»։
Ես Սերոբն եմ սողորթեցի,
Ելա Նամրութ, կանա, մացի։

22 (127). ՔՆԻՐ ՈՐԴՅԱԿ

Մեռանք, վառանք այս տանջանքով,
Պետք է խփենք տիրոջ կամքով.
Շուտ ազատենք մեր գերիներ,
Մեր խնդրանքով, սուրբ տանջանքով։
Քնփր զավակ, քնփր որդյակ,
Բավ է մնանք գերությյան տակ,
Քնփր, մեծացիր ու զորացիր,
Որ թշնամուն խփես գնդակ։
Գյալեգյուզան խումբ կազմեցինք,
Կես գիշերին թշնամուն վախցուցինք,
Պարոն Լևոնին[1] խփեցին,

Մեր վառ հույսեր կորցուցին։
Սոսեն ասաց.—Սերոբ, իմ աչիւ լույս,
Առ մաուզեր, ելիր դուրս,
Թե կսպանվես մեր հայ ազգին,
Դու կհասնես երկնի փառքին։

23 (128). ՍԵՐԵՄՃՅԱՆԻ. ՀԻՇԱՏԱԿԻՆ

Վերքերով լի ջանֆեդա եմ,
Թափառական տուն չունեմ,
Յարիս փոխան զենքս եմ գրկել,
Մի տեղ հանգիստ քուն չունեմ։
Արյունոտ երկիր, սուգ ու շիվան.
Ինձ դուրս կանչեց փակ կյանքից,
Տանջված հայրենիքի սերը,
Չվախեցուց ինձ վտանգից։
Ես կոչվեցա ջանֆիդայի,
Դարձա զինվոր գաղափարի.
Թող իմ թափած արյան շիթեր,
Օրինակ դառնա հայ զինվորի։
Ահա հանգիստ հող կմտնեմ,
Հույս դուք եք, ընկերներ,
Շարունակեք մեր սուրբ գոլծը,
[Հայոց ազգի] վեհ քաջեր։

24 (129). ԵՐԳ ԱՇՈՒ ԹԱԹՈՒԼԻ

Նլդըզ քյոշքից հրաման տվեց դահիճ Սուլթանը,
Մնաք բարև ազնիվ ընկերք, մոտ է կյանքիս վախճանը։
Կարմրագույն պատանքս բանտի պատեն մեխել են.
Դիվապաշտպան անգութ ֆարմանը գլխիս վերան կախել են
Թող չթաղեն ինձ թուրքն, թողնեն հողի երեսին,
Թող կատարե անգութ ֆարման գազանական հանդիսին։
Ես պաշտել եմ գաղափար, ոսխտել եմ ղոհվել ազգիս.
Կախաղանի անգութ սարսափ, չի փոխիլ իմ սուրբ վճիռս։
Հայց դուք ազնիվ ընկերներ, ձեր սրտի մեջ գևրեզման
Թող թաթուլին հանդերձներով, մահս հիշեք մշտական։
Արև լուսնի կարոտով, երկար տարու տանջանքով,
Էրված, վառված իմ կյանքին վերջ դրեց իմ թշնամին։

25 (130). ՍՈՒԼՈՒԽ ԳՅՈՒՂԻ ԿՈՎԻ ԵՐԳԸ

Սոսկումն ահավոր պատեց Մշո դաշտ,
Նորեն հառաչեց հեք Սուլթան անհաշտ,
Սարսափը մեծ էր, վախցավ օսմանցին,
Ղումանտար, կանչեց Քոսի պինպաշին,
Հասիր բանակով, ապստամբ Սուլուխ,
Սկսի կրակ, բարձրանա վեր մուխ։
Ազատ որդիներ Գեորգ[1] և Ռուբեն
Ինչ միջոց պետք է որ ի գործ դնեն,
Ուզեցին քաշվիլ ի մեր գյուղացուց,
Պինպաշին կռվո փողը հնչեցուց,
Տասնյակ զատվելով տղերք դիրք առին,
Աստված կանչելով կրակ բաց արին։
Կռվեցեք, տղերք, Գեորգ կը ձայներ,
Տաքցավ հրացան, վառեց գնդակներ,
Ի մեջ մեծ հուզման քաջ ֆիտաճներին,
Ամբեր էր հրացան Գեորգ Զավուշին,
Երբ ինք անտարբեր հրացան կը քաներ,
Գնդակի կայծ մը ձախ կողմ կը մաներ։
Զարնվեր էր Գեորգ, սարվերի ապան,
Իր զենքին նայեց մեկ ալ իր արյան,
Ուղղեց մուխինը իր նպատակին,
Ոռնաց, վար ինկավ Քոսա պինպաշին.
Երբ իննկած տեղից ուզեց վեր կայնել,
Հասավ Մքոյից գնդակ մահաբեր։
Տանիքն ընկողմած Գեորգ կը դիտեր,
Զարկեք, անխնա, տղերք, կը ձայներ,
Թող մեր հրացանի որոտման ձայնեն,
Սարսափի Սուլթան երտրզի գահեն։
Պետ կռվի՛նք, տղերք, մինչև ջուն վերջին։
Արժանի լինինք փառաց պսակին։
Տաճկաց բանակը կոտրած սգավոր,
Դարձավ դեպի Մուշ սանճագ սևավոր,
Կորուստը մեծ էր, հաղթանակ շքեղ,
Վերանում լինի քամբախտ Սուլուխ գեղ,
Ղարսեցի Հակոն, Կալեն Սպաղանցին,
Երկու կտրիճներ նահատակվեցին։

Արևն օր անցավ Իննակյան սարեն,
Մարտադուլ կանչեց ռազմագետ Ռուբեն,
Սարհատ, սիրական հետևրնիդ տարեք
Կանանչ դաշտի մեջ զքաջն պատկեցուցեք։
Եվ արտասվախառն ֆեդայիները,
Համբուրել գացին Գեորգ Զավուշին։
Լուսին բարձրացավ դեպ երկինք կամար
Մշո դաշտ տրտում, տխուր կերևար,
Է, մնաս բարյա՜վ, հառաչեց Սարհատ²,
Ա՜խ, չտեսա զքեզ վայրկյան մը ազատ։
Փչեց վերջին շունչ, լսավ լոսնակին.
Սիրո ողջույնս տար Անդրանիկ պետին։
Մեռնիմ քեզ, լուսնակ գոհար պատվական,
Անտոք, Ֆըրֆըրքար, Տարոն սիրական,
Քեզ պիտ գան պատմեն հայ հերոսներին,
Երբ որ գաս անցնիս Մշո սարերեն,
Սաչքի-Դուրանի պառկած քաջերին,
Վրեժխնդրության ձայնիդ կը հնչեն։

26 (131). ա) ԳԵՎՈՐԳ ԶԱՎՈՒՇԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Հազար ին հարյուր յոթ թվականին,
Ջքնաղ մայիսի քսան և յոթին,
Տոն է բազմաշխատ մահվան Գևորգին,
Սասնո հարազատ մեծանուն քաջին։
Որ գրկած հողը հայրենիք երկրին,
Մոտ քսան տարի ծառայեց ազգին,
Կռվեցավ անվերջ հետը տուշմանին,
Միշտ հաղթեց մեկուվ անոնց հազարին։
Վերջին կռիվ մ'ալ կը սպասեր քաջին,
Պըտակիլու զինք փառաց երկնայինն,
Եվ ահա գորքը պաշարեց Սուլուխ,
Եռաց կռիվ մ'ալ ինչպես հրաբուխ։
Հառաջ արշավեց Քոսա պինպաշին,
Կանչեց.—Ֆետայիք, մահն է ձեր բաժին։
Որոտաց Գևորգ.— Անիրավ տուշման,
Եկուր թանկ կյանքդ ծախեմ շատ աժան։
Հարվածը խոսքեն շատ աժան չեղավ,

Իսկույն պինպաշին ձիեն վար ինկավ,
Երբ ինկած տեղից ոտքեց վեր կանգնել,
Հասավ Մքոյից գնդակ մահաբեր։
Վրե՛ժ, ընկերներ, դիմենք դեպի մահ,
Պարոն Ռուբենը մռնչեց անահ,
Ալ չվախենանք թշնամու սրից,
Ազատ մեռնիլը քաղցր է ամենից։
Քաջի մոտինը գոռաց երեք ժամ,
Երկինք ու երկիր թնդաց մի անգամ,
Խիստ իրարանցում եղավ զորաց մեջ,
Փռվող դիականց, հկար թիվ ու վերջ։
Թնդաց սրտերը տատնչակ քաջերուն,
Կռվեցան անվերջ մինչև իրիկոմն,
Իսկ երբ գիշերեց՝ Գևորգը շալկած,
Գյուղեն դուրս ելան և գացին տրտմած.
Ճամբան աղաչեց քաջը մահամերձ.
Հանգիստ ձգեք զիս, մի ընեք շնչահեղձ,
Դրեք զիս այստեղ, ծածկեք խոտերով,
Գացեք ընկերներս, դուք գացեք բարով։
Վերջին բարևներս տարեք հայ ազգին,
Վերջին համբույրներս՝ որդուս Վարդգեսին,
Լացին ընկերներ, մոտեցան կարգով,
Համբուրեցին գինք ու անցան խմբով։
Նայեց բոլորտիք, ալ չկար ընկեր,
Ընկած կռվի դաշտ տառապեր անտեր,
Համբուրեց հողը քաղցրը հայրենյաց,
Փակեց աչքերը ներքևն աստեղաց։
Հանգիստ, փրկութիյամբ իր տուրբ տակերաց,
Պատվավոր հարգի անունդ անմոռաց.
Նույն ալ միշտ պիտի տոնվե դարեդար,
Ազնիվ Գևորգի տոնը անդադար։

բ) ԳԵՎՈՐԳ ՉԱՎՈՒՇԻ ԽԱՉԸ

Հազար ինը հարյուր յոթ թվականին՝
Ջքնաղ մայիսի քսանըյոթին
Տոն է բազմաշխատ Գևորգ Չավուշին,
Սամնու հարազատ մեծանուն քաջին։
Իր գրկած հողը՝ հայրենյաց երկիր,

Մոտ քսան տարի ծառայեց ազգին,
Կռվեցավ անվախ հետը դուշմանին,
Միշտ մեկով ախտեց էնոնց հազարին,
Առաջ արշավեց Քյոսա բինբաշին,
Ասաց. «Ֆիդայի, մահ է ձեր բաժին»,
Որոտաց Գևորգ. «Անիրավ դուշման,
Էկուր, թանկ կյանքդ խիստ ծախիր էժան»։
Խիստ իրարանցում էղավ զորաց մեջ,
Մեռնող, պիականց չկար թիվ ու վերջ։
Կռվեցան անվախ մինչև իրգուն,
Իսկ եբ գիշերին Գևորգ շալակած
Գյուղից դուս ելան, գնացին տրտում,
Ճամփան աղաչեց քաջ Շմավոնին.
«Թողեք զիս հանգիստ, մ'էնեք շնչահեղձ,
Դրեք զիս ալատեղ, ծածկեցեք խոտով,
Իսկ դուք հրնգերներ, գնացեք ապահով։
Վերջին բարև տարեք հայ ազգին,
Վերջին համբույրս՝ որդուս Վարդգեսին»։
Լացին հրնգերներ, մոտեցան կարգով,
Համբուրեցին զինք, անցան ապահով։
Նայեց բոլորը՝ էլ չկար հրնգեր,
Ինքն էր կռվի դաշտ՝ տառապյալ, անտեր։
Համփուրեց հողը քաղցր հայրենյաց,
Ու փակեց աշկեր ներքև աստեղաց։

գ) ԳԵՎՈՐԳ ՋԱՎՈՒՇԻ ԵՐԳԸ

1907 թվականին
Ջքնաղ մայիսի քսան և յոթին,
Տոն է բազմաշխատ մահվան Գևորգին,
Սասնա մեծանուն հարազատ քաջին։
Հառաջ արշավեց Քյոսա բինբաշին,
Կանչեց՝ ֆիդայիք, մահն է ձեր բաժին,
Որոտաց Գևորգ. անիրավ դուշման,
Եկուր քու կյանքը գնեմ շատ էժան։
Քաջի մոտեննին զորաց երեք ժամ,
Կարծեց երկինքը շարժվեցավ մի անգամ,
Խիստ իրարանցում եղավ զորքի մեջ,
Փռված գիակներին ոչ թիվ կա, ոչ վերջ։

Երբ գիշեր մութն էր, շավկեցին զԳևորգ,
Ճամպին աղաչեց. ինձ դրեք գետին,
Խոտով ծածկեցեք, մի անեք մահաշունչ։
Լացին ընկերներ, կանգնեցան շարքով,
Համբուրեցին զքաջ և անցան կարգով։
Փչեց վերջին շունչ, հատավ լուսնակին։
Գնացեք ընկերներ, գնացեք դուք պարով,
Վերջին ողջույնս Անդրանիկ փաշին,
Վերջին բարևս հայ ժողովրդին,
Վերջին համբույրս որդյակ Վարդգեսին,
Փակեց աչքերը ու գնաց բարով։

27 (132). ԳԵՎՈՐԳ ՉԱՎՈՒՇԻՆ

Մայիս ամսու մեջ,
Վարդն էր՝ նոր բացվեց,
Հանկարծ Սուլուխը,
Ջորս կողմից մթնեց։

Ամպեր գոռացին,
Շանթեր արձակվեց,
Դրախտի ճամբան
Արյամբ ողողվեց։

Հայոց քաջերի
Ջատիկն էր,
Դարձյալ մի հերոս
Ինկավ նահատակ։

Այն քաջ հերոսը
Սարհատն էր, ավա՜ղ,
Որ մղեց ուժգին
Կռիվներ անհաղթ։

Փչեց շունչ վերջին,
Ասաց լուսնակին,
Սիրո համբույր տար
Որդվոյս Վարդգեսին։

Քու մահից հետո
Ա՛լ մեզի համար

Ի՜նչ կարժե կյանքը,
Ի՜նչ կարժե աշխարհ։

28 (133). ԳԵՎՈՐԳ ՉԱՎՈՒՇԻ ԵՐԳԸ

Թուրք լսավ անունդ Չավուշ,
Դեմքդ սիրուն, լեզուդ անուշ,
Կյանքիդ մեջ հանգիստ չունեցար.
Թշնամյաց դարձուցիր ապուշ։
Սասուն է քո ապաստան,
վրեժ է քո դատաստան*։
Հայոց համար սպարապետ,
Անդրանիկին ընկեր, վարպետ.
Սասունը կանգուն պահեցիր,
Օգնող է քեզ սուրբ Կարապետ։
Կոտորեցիր քանիցս վաշտ,
Թուրք արյունով ներկեցիր դաշտ,
Անվախ հերոս թուրքաց դեմը,
Մինչև վերջը մնացիր անհաշտ։
Անվախ հերոս ես ճշտապես,
Հայք պիտի հիշեն մշտապես,
Քաջաց քաջն ես Գևորգ սարդար,
Վարդանի տիպ ես իսկապես։

29 (134). ա) ԱՐԽԱՆՅԱՆԻ ԵՐԳԸ

Ազատության որդին եմ,
Արխանյան Գալուստն եմ,
Երբեր բանտեն ազատվիմ,
Դարձյալ խմբեր պիտ կազմեմ։
Թվով հինգ ընկեր էինք,
Մեկ սիրտ, մեկ հոգի էինք,
Դարձյալ չէինք հանձնվեր,
Ավաղ, անօթի էինք։
Առավոտ արշալույսին,
Զորս կողմերնիս պատեցին,

* Վերջին երկտողը կրկնվում է յուրաքանչյուր տնից հետո (Ծ. Կ.)։

Ամբողջ չորս օր, չորս գիշեր,
Չորս հարյուր թշնամիներ։
Քաջդ Խորեն, ի՞նչ եղար,
Երեք գնդակով ինկար,
Մինչդեռ հոգի կոտաքիր,
Դարձյալ պատերազմեցար։
Թող լա Խորենի մայրիկը,
Թող համբերե հայրիկը.
Չի զոհ գնաց վասն ազգին,
Քաջասիրտն Խորեն։
Արխանյան բանտարկվեցավ,
Խորեն նահատակվեցավ,
Արխանյանի զենքերը
Հակոբին հանձնվեցավ։
Մարտինս տուր, մայրիկս,
Սուրս ալ տուր, քույրիկս,
Երթամ կռվեմ վատին դեմ,
Խորենին վրեժը լուծեմ։

բ) ԱՐԽԱՆՅԱՆ

Մխոթյան թերությունը,
Հանեցին մեզ լեռները.
Վատ թյուրքին դեմ կռվելու,
Հայրենիքը փրկելու։
Առավոտ արշալույսին,
Չորս կողմերնիս պատեցին.
Ամբողջ չորս օր, չորս գիշեր,
Չորս հարյուր թշնամիներ։
Թվով հինգ ընկեր էինք,
Քարայրներու մեջ էինք.
Երբեք չէինք հանձնվեր,
Ավա՜ղ, անոթի էինք։
Մարթինիս տուր, մայրիկս,
Սուրս տուր, եղբայրիկս.
Թե որ ազգիս չի զոհվիմ,
Հապա ինչո՞ւ ծնած եմ։
Խորեն, սուրդ քաշեցիր,
Վրեժ առնել փորձեցիր.

Երբոր գնդակի եկիր,
Հայաստանդ հիշեցիր։
Հայրենիքս է Արմաւտան,
Մականունս է Արխանյան.
Խմբապետ եմ հայ խումբի,
Դարձյալ խումբեր պիտ՝ կազմեմ։

30 (135) ԵՍ ԵՄ ԱԶԱՏ

Ես եմ ազատ հայ պատանի,
Աշխարհս են այս լեռները,
Սուրն է միայն իմ սիրելիս,
Եվ ընկերս մարթինիս։
Իմ զարդերս են զենքերըս,
Եվ թանգ ոսկիս՝ փամփուշտներս,
Անկողինս՝ կանաչ մարգեր.
Փափուկ, մաքուր, պատվական։
Ապաստարանս ժայռ-քարերը,
Եվ հայելիս չինչ վտակ,
Բնակարանս անտառները,
Եվ լապտերըս վառ լուսնակ։
Ես պարծենալ չեմ կարող, չեմ,
Որևիցե ուսումով,
Միայն գողտրիկ երգել սիրեմ,
Եվ զենք շարժել սուրը սլտով։
Խմբապետ եմ հայ խումբի մը,
Զարդարված լավ զգեստով,
Հանուն ազգին կռված եմ ես,
Քաջարի ընկերներով։
Ծննդավայրս է Արմաւտան,
Մականունս է Արխանյան,
Անունս է Հաճի Գալուստ,
Հայրենիքի չերմ պաշտպան։

31 (136). ԿՈՐԿՈՏՅԱՆԻ ԵՐԿԸ

Ձենքերս տուր, մայրիկս, սուրերս տուր քույրիկս,
Թե որ ազգիս չզոհվիմ, ապա ինչո՞ւ ծնար զիս։
Առավոտ արշալույսին չորս կողմերս պատեցին,

Չորս դին չորս հազար զորքեր, չորս հազար թշնամիներ։
Աղատության վառ սերը ինձ հանել է լեռները,
Վատ թշնամու դեմ կռվելու՝ Հայաստանը փրկելու։
Լևոն տուրդ քաշեցիր, վրեժ առնել ուզեցիր,
Երբոր գնդակը դիպավ՝ ա՜խ Հայաստան զոհեցիր։
Մայր անունս Արամյան, մականունս Կորկոտյան
Երբ որ բանտից ազատվեմ, դարձյալ խմբեր կը կազմեմ։

32 (137). ՆՎԵՐ ՀԵՐՈՍԻՆ

Հաճի Գեորգ, առյուծի ձագ,
Զինվորաց մեջ նա արեգակ,
Վերցնենք նրանից օրինակ,
Չը մոռանանք յուր հիշատակ։
Նա սիրում էր զենք ու զրահ,
Քաջ կռվում էր որպես հսկա,
Անխոնջ գործել միշտ աներկբա,
Տարաձայնվեց մինչ Եվրոպա։
Այժմ նա գործում է հույսով,
Կուզե վերադառնալ լույսով,
Փամփուշտ հրացան ու ռումբով,
Ատրճանակ, սուր դաշույնով։
Հայության մեջ որպես ծաղիկ,
Զինվորաց մեջ էր մի հատիկ,
Նրան սիրում էր Անդրանիկ,
Գիտե երգել միշտ քաղցրիկ։
Սասնո առյուծն վեհ, ամեհի,
Կռվով Սասնում նա կատաղի,
Ջուրը ճեղքեց մեջ Շատախի,
Անուն ստացավ հաղթողի։

33 (138). ա) ԽԱՆԻ ԵՐԳԸ

Լուսին չկար, մութ պիշեր էր,
Մի խումբ կերթար արագ-արագ,
Տեսանք, որ քաջ խանի խումբն էր,
Զինված էին բոլոր նրանք։
Կյանքներըը ազգին նվիրած,
Կուրիճ խանն առաջ ինկած,

Գնում էին տաճկաց սահմանը.
Թուրսում էին որպես կրակ։
Հրացանները ոսերին՝
Դրոշակ պարզել էին,
Գնում էին ուրախ-զվարթ,
Ազատություն երգում էին։
Մութ անտառից անցնում էին.
Ամեն մեկը առյուծ էին.
Նժույգ ձիանց վրա նստած,
Մերկ սրերը քաշել էին։
Երբ քաջ խանը եկավ Բասեն,
Թնդանոթներ արձակեցին,
Հայ քաջերի մոսիններից
Գնդակները դոզդոռացին։
Ահեղ կռիվն ահա տկաեց,
Երկու անհաղթ թշնամյաց մեջ,
Թուրք զորքերին դիմադրեցին.
Փառաց պսակ վաստակեցին։
Երբ քաջ խանը հրահանգ կոտար.
— Արիք առյուծներ իմ քաջ.
Մտան թշնամուն խիտ շարքեր,
Կոտորեցին ձախըն ու աջ։
Երբ քաջ խանըլ «ոստա՜» գոռաց,
Թշնամիքը մոլորվեցան,
Հազարավոր տաճիկներին
Գլուխները չախչախվեցան։
Ջերմ եռանդով կռվում էին,
Սրտերումը կար շատ պահանջ,
Փախչում էին տաճկաց զորքեր,
Չէին կարող կանգնել առաջ։
Կեցցե՜ խանը յուր խմբովը,
Սարսափ թողեց Բասենումը,
Երեք օր ու գիշեր կռվեց,
Աչքերիցը քունը կտրեց։
Հայաստանի հողի վրա,
Քաջը թափեց յուր արյունը,
Հիշենք հայեր, չը մոռանանք,
Կտրիճ խանի քաջ անունը։

34 (139). ԲԱԽՇԻԻ[1] ԵՎ ԽԱՆԻ[2] ՀԻՇԱՏԱԿԻՆ

Բարով եկար, դու քաջ Բախշի,
Ազգիդ համար դու զոհ եղար.
Ավեր դառնար Ջայլի-լարը,
Որ գնացիր, էլ հետ չէկար։
Իմ ուժերս սպառվեցան,
Օգնականներս հեռացան,
Դե կռվի, դու քաջ խան,
Ջարդենք, վերջ տանք թշնամուն։
Աստված սիրես, դու Ալեկսան,
Վերցրու դու իմ հրացանս.
Գոնե դու էլ իմ եղբորս,
Արյան վրեժս թող առնե շուտով։
Ինձնից լուր տարեք Համոյին,
Որ լավ պահե իմ ընտանին.
Հիվանդ թողի ու գնացի,
Արյան դաշտում ես զոհվեցի։
Ես խանն եմ Բալասանյան,
Ազգիս համար ես զոհ եղա,
Իմ ընկերներ, ինձ օգնեցեք,
Արյան դաշտից հեռացրեք։
Դե մնաք բարյավ, եղբայրներ,
Թշնամուցը վրեժ առեք,
Մեր կյանքը ձեզ ենք նվիրել,
Մեր արյունը զուր չը կորցնեք։

35 (140). ԳՐԻԳՈՐ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ[1] ՀԻՇԱՏԱԿԻՆ

Մեծ էր կուրծքդ, մեծ սիրտ ունեիր,
Մեծ էր հոգիդ ու արի,
Հսկա բոյդ, մեծ կամք ունեիր,
Հերոս զինվոր Ֆիդայի։
Դու սիրեցիր թշվառ ազգիդ,
Անկեղծորեն ուխտեցիր,
Եվ քո սիրած հայրենիքիդ,
Ջահել կյանքդ զոհեցիր։
Ու գնդակներդ անվրեպ,
Արձակեցիր աջ ու ձախ,

Կանգնած հազարների հանդեպ.
Մինչ վերջ կռվեցիր անվախ։
Դու կռվեցիր Օձիքներում,
Այն վեհ կռվում ահավոր.
Դու վախցուցիր քյուրդ ու թուրքին,
Դու մեր ազիզ Գրիգոր։
Ու հիշատակդ անթառամ,
Քեզ արժանի երգերով,
Պահել հավերժ սրտերում,
Անմահ անունդ հիշելով։

36 (141). ա) ԱՎԵՐԱԿ ՋԱՂԱՑ

Առաքել, Մուշեղ[1] լեռներեն իջան,
Ավերակ ջաղաց, հոգի ջան, գտան օթևան.
Լեռներ ու ձորեր եղան բոլոր մարդ,
Ավերակ ջաղաց, հոգի ջան, օգնեց մեզի շատ։

Ջմրուխտե տարը բռնել էր կարկուտ,
Սերուի կկանչե. հոգի ջան, դուշմանն է անգութ։
Դե զարկեք, զարկեք, դե կռվեք քաջ-քաջ,
Տիրոջ սուրբ կամքով, հոգի ջան, մենք երթանք առաջ։

բ) «ԱՌԱՔԵԼ, ՄՈՒՇԵՂ ԼԵՌՆԵՐԻՑ ԻՋԱՆ»

Առաքել, Մուշեղ լեռներուց իջան,
Ավիրակ ջաղաց, հոգի ջան, օթևան դարձավ։
Դե զարկե՛ք տղեք, դե կռվե՛ք քաջ-քաջ,
Տիրոջ սուրբ կամքով, հոգի ջան, մենք երթանք առաջ։
Խրիմյան Հայրիկ, անունդ Մկրտիչ,
Դու պիտի լինես, հոգի ջան, հայ ազգին փրկիչ։
Դե զարկե՛ք տղեք, դե կռվե՛ք քաջ-քաջ,
Տիրոջ սուրբ կամքով, հոգի ջան, մենք երթանք առաջ։
Առաքելն ասաց.—Եղբայր իմ Մուշեղ,
Դուք բռնեք պարը, հոգի ջան, մենք երթանք առաջ։
Դե զարկե՛ք տղեք, դե կռվե՛ք քաջ-քաջ,
Տիրոջ սուրբ կամքով, հոգի ջան, մենք երթանք առաջ։

37 (142). ՔԱՋ ԱՆԴՐԱՆԻԿԻՆ

Դարձյալ փայլեց Սասնա գլխին,
Ազատության դրոշակ.
Կեցցե հայրենիք, գոչելով,
Բարձրացրին աղաղակ։
Թնդաց, որոտաց ձայներից
Ողջ աշխարհքը հայկական,
Խումբ-խումբ կարգած հայ զավակներ
Հավնում էին օգնության։
Գուրգեն, Վահան, Հրայր, (Դժոխք)
Քաջ Անդրանիկը ղեկավար,
Տալվորիկի լեռներում,
Շրջում էին անդադար։
Սարսափեցան թշնամիներ,
Մինչ պալատը Սուլթանին,
Հրամայեց շուտ կործանել
Դիրքերը հայդուկներին։
Ահա անգութ քյուրդ ու տաճիկ
Սարսափելի տեսարան.
Ժամանակ է վրեժ լուծել,
Գոչեց ձայնը հայկական։
Կրակ տեղաց հայ քաջերի
Բնակավայր դիրքերից,
Այլայլվեցան քյուրդ ու տաճիկ
Ահռելի գնդակներից։

38 (143). ԱՆԴՐԱՆԻԿԻՆ

Իբրև արծիվ սավառնում ես լեռ ու ժայռ,
Թնդացնում ես երկինք-գետինք տենչավառ.
Սուրբ անունդ պիտի հիշվի դարեդար,
Հսկա լեռներ քեզ ապաստան, Անդրանիկ։
Քյուրդ ու տաճիկ երբ լսեն քո անունդ,
Օձերի պես պիտի սողան իրանց բունը.
Երակներիդ ազնիվ քաջի արյունը
Չի ցամաքի մինչ հավիտյան, Անդրանիկ։
Հայոց կուսանք դափնյա պսակ թող հյուսեն,

Քնքուշդ ձեռքով քո ճակատը պսակեն,
Գոհարներով անվախ կուրծքդ զարդարեն,
Կեցցես հավետ դու անսասան, Անդրանիկ։
Հայաստանի սոխակներդ քեզ համար
Թող դայլայլեն գիշեր-ցերեկ անդադար.
Անհաղթ մնաս, դու քաջ կռվի սիրահար,
Հայրենիքի տեր ու պաշտպան, Անդրանիկ...

39 (144). ՀԵՐՈՍ ԱՆԴՐԱՆԻԿԻՆ

Հերոս մռնչաց, Սուլթան դողդողաց,
Վիլհելմի աչքից արտասուք ցողաց,
Սուրըդ թշնամու կրծքին շողշողաց,
Հայոց ղեկավար, հերոս Անդրանիկ։

Քեք համար պետք է կատարենք մաղթանք,
Անգութ թշնամուն ցույց տվող տանջանք,
Դուք պետք է լինիս մեր փառք ու պարծանք,
Քաջ գործակատար, հերոս Անդրանիկ։

Պարզե դրոշակ, տեսնե Եվրոպա,
Թող բացականչե՝ կեցցե Հայաստան,
Կեցցես դուն հավետ, հերոս հայկական.
Հայոց ղեկավար, հերոս Անդրանիկ։

Դուք պետք է փրկես ամբող Հայաստան։
Կարին և Սասուն, մ'այրաքաղաք Վան,
Տիգրանակերտից մինչև Շավարշան,
Տիրեց մեզ համար հերոս Անդրանիկ։

40 (145). ՔԵՒԻՆ ԵՐԳԸ

Ջորրորդ գունդի հրամանատար քաջ Քեռի,
Ինքդ արի և գործերդ միշտ բարի,
Սրտաճմլիկ լուրըդ առինք ցավալի,
Քաջաց քաջը ֆետա Քեռի պանծալի։
Անգութ մահը՝ քեզ մեզանից բաժանեց,
Մեր սրտերում անբուժելի վերք բացեց,

Մի՞թե չար գնդակը քեզի ողոնեց,
Գաղափարդ ու հույսերդդ խորտակեց։
Թող լռեն սոխակները էլ ձվվան,
Սլացեք կռունկներ դեպի Հայաստան,
Լուր տարածեցեք ամեն տեղ հայության,
Հայոց պաշտպան Քեռին մատավ գերեզման։
Դու ամեն տեղ վազում էիր օգնության,
Քեզ ազդում չէր ոչ սուր, ոչ թուր, ոչ գնդակ,
Ամենքին անխտիր էիր դու պաշտպան,
Կոչմանդ արժանի հերոս Քեռի Խան։
Ուլվանատուզի կռիվն էր շատ ահավոր,
Թշնամի զորքերն էին շատ բյուրավոր,
Տասնը հինը տասնըվեց մայիս տասնըհինգին,
Հայոց առյուծն ինկավ վրեժը կրծքին։

III. ՋԻՆՎՈՐԻ (ՍԱԼԴԱԹԻ) ԵՐԳԵՐ

(ՆԱԽԱՍՈՎԵՏԱԿԱՆ ՇՐՋԱՆ)

1 (146). ա) «ՎԱ՜Յ ԷՆ ՄԱՅՐԻԿԻՆ, ՈՐ ԻՆՁԻ ԲԵՐԵՐ Է»

Վա՜յ էն մայրիկին, որ ինձի բերեր է,
Գիշեր-ցերեկ քունը կտրեր, պահեր է,
Արխալուղը դրեր ծնկին, կարեր է,
Սև-սև կոճկներ գոգսին շարեր է։
Մայրիկ, ես գնում եմ, դու կեցիր բարով,
Իմ ընտանին պահե ալ քողկով, զարով։

Ուրբաթ օրը տարան տուդիի դուռը,
Իմ սիրուսիի վիզը թողեցին ծուռը,
Շաբաթ օրը տարան պոլիցի դուռը,
Շոատով տվին զինվորական շորերը։
Մայրիկ, ես գնում եմ, դուն կեցիր բարով,
Իմ ընտանին պահե ալ քողկով, զարով։

Վախում եմ, թե գնամ գուլուլի քարով,
Մայրիկ օտար երկիր գնալու ես եմ,
Քահանեքը տվին մեթրիքականս,
Գիշեր-ցերեկ կրակն ընկավ իմ ջանս։
Մնաց մորմոքելով իմ խղճուկ նանս,
Մայրիկ, օտար երկիր գնալու ես եմ։

Այսօր ինձի տվին զինվորաց շորը,
Ավա՜ղ, ինչպես պիտի անցնի իմ օրը,
Երանի մեռնեի ծնվածս օրը,
Մայրիկ, օտար երկիր գնալու ես եմ։

Այսօր տվին պետության թուրը,
Լացավ իմ սիրուհին և էլ իմ քույրը,
Վախում եմ այլոց դեմ մեզ քաշեն սուրը,
Մայրիկ, օտար երկիր գնալու ես եմ։

Մայրիկ, հալալ արա տվածդ կաթը,
Խնդրենք աջողվի բանիս օխտ չարը,

Այսօր իմ սիրու[հի]ն հագավ սև լաթը,
Մայրիկ, օտար երկիր գնալու ես եմ։
Այստեղից անջատվելը շատ մեծ համբավ է,
Զինվորության գնալը կրակ ու ցավ է,
Յարից բաժանվելը մահից շատ վատ է,
Մայրիկ, օտար երկիր գնալու ես եմ։

բ) ԵՐԳ ԶԻՆՎՈՐՈՒԹՅԱՆ

Մայրիկ, ես գնում իմ, տուն գեցիր բարով,
Իմ ընտանուս պահե ալ քոխկով զարով,
Վախենում եմ գնամ մեկ գիլի յարով։
Մայրիկ, օտար երկիր գնալու ես իմ,
Ավախ, թե ես իմ։
Քահանայք հանին մետրիկականս,
Գիշեր-ցերեկ կրակ ընկավ իմ ջանս,
Մնաց մորմոքալով իմ խղճուկ նանս։
Մայրիկ, օտար երկիր գնալու ես իմ,
Ավախ, թե ես իմ։
Զինվորություն էրթողն կրակ ու ցավ էր,
Մայրից բաժանվելը մահը շատ լավ էր։
Մայրիկ, օտար երկիր գնալու ես իմ,
Ավախ, թե ես իմ։
Երազումս տեսա իմ գալաջաղը,
Ինձի ուղարկեցին տերությյան տաղը,
Բալակ շոտով չորցավ իմ կանաչ բաղը։
Մայրիկ, օտար երկիր գնալու ես իմ,
Ավախ, թե ես իմ։
Մայրիկ, հալալ արա տվածտ կաթը,
Խնդրե որ հաջողի բանիս յոթ ղաթը,
Այսօր իմ սիրուհին հագավ սև լաթը։
Մայրիկ, օտար երկիր գնալու ես իմ,
Ավախ, թե ես իմ։

գ) «ՄԱՅՐԻԿ, ԵՍ ԳՆՈՒՄ ԵՄ, ԴՈՒՆ ԿԵՑԻՐ ԲԱՐՈՎ»

Մայրիկ, ես գնում եմ, դուն կեցիր բարով,
Դու իմ յարը պահե ալ քողքով, զարով
Ավա՜ղ, դեհ զարով։
Վախենում եմ, գընամ մեկ գյուղի յարով,
Մայրիկ, օտար երկիր գնալու ես եմ։

Քրհանեքը հանին մետրիկականըս,
Գիշեր, ցերեկ կրակն ընկավ իմ ջանս,
Մնաց մորմոքելեն իմ խղճուկ յարս,
Մայրիկ, օտար երկիր գնալու ես եմ։

2 (147). ԿՈՎԻ ՄԵԿՆԱՐԱ

Մնաս բարյա՛վ, քաղցր մայրիկ իմ, ես պիտի գնամ,
Տուր մայրական վերջին համբույր, սիրտս ղովանա.
Երկնքի երեսի գույնը կամար է կապեր,
Կարծես հայ տղաների սիրտ խավար է պատեր։
Այ խղճալի հայ ծնողներ, չի լաք իզուր տեղ,
Այլ խնդրեցեք աստվածանից ձեր վերքին մի դեղ.
Այս ինչ տարսափելի բան էր, որ ինծի եղավ,
Կարծես դիտմամբ սև նոմըրըս իմ ձեռքս եկավ։
Արդյո՞ք կը լինի որ կրկին կենդանի մնամ,
Ուրախ-զվարթ գամ հայրենիք, նոր
կյանք առնեմ։

3 (148). «ԱՍՏՎԱԾԱԾՆԻՆ ԷՐԳՈՒՇԱԲԹԻՆ ԴԽՈՒՐ ԼՈՒՐ ԼՍՎԵՑԱՎ»

Աստվածածնին էրգուշաբթին դխուր լուր
լսվեցավ.
Հայ դղաներուա սրդին մեչը մահվան
ցավ լցվեցավ,
Գանչեցին մեգ-մեգ, մեգ-մեգ, անուններս կրեցին,
Օդարի լուծը հայ դղայոց նոքա վզին
տրեցին։
Մենք հայերս բաղրատատ էինք հայրենիքի
պոհ լինել,
Ոչ թե կնալ ու օդարի լուծը մեր վիզը տնել։
Ջնողներս, գիներս դոմը նստած լալիս են,
Ջավագներս նոցա շուրջը բդուդ-բդուդ
կալիս են.
Հարցնում են իրանց մորը, ո՞ւր են մեր
հայրիգները,
Ինչու մեզ իմաց չդրվիք, որ կնայինք
հեղները։

Երբ որ մայրերը լսեցին դղոցը
բահանջները,
Ախ քաշեցին սրդներից, մխիթարեցին
դղոցը։
Պարև գեցիք, մայրիգներս, դուք ողջ էղիք,
հայրիգներս,
Պարև գեցիք, ազգագաններ, ախրելի
պարեգամներ։
Օրհնյալ գեցիք, դուք հայ գյուղեր, որ մեղ
օգնություն դվիք,
Եվ մեր մեղքերը ներելով, լալ-ողբալով
ջամփեցիք։
Մի՛ լաք ձնողներ, մի՛ լաք գիներ, գուցե հեդ
կոսկանք,
Դուք մի՛ լաք, զավակներ, շուտով դոն կուկանք։

4 (149). ՆՈՐ Ա ԲԱՑՎԵԼ ՍԱՐԻ ԼԱԼԵՆ

Նոր ա բացվել սարի լալեն,
Թող մեռնի սապրպի բալեն,
Նանի, նանի, նանի, նանի,
Նանի, նանի ջան.
Թող մեռնի սապրպի բալեն։
Ողբում եմ, լալիս եմ,
Ջեմ գընա, նանի ջան։
Եկան, գըրին եզն ու գոմեշ,
Ջեռրա քըցի աստրծու փեշ.
Եկան, գըրին մեր ձիանիք,
Մեծից հասավ մեր գիանիք։
Եկան, գըրին մեր կովերը,
Հայերին քըցին ծովերը։
Սարուղամիշ, դու ձուն արի,
Ղարիբ աղբեր, դու տուն արի։
Յար, ամպել ա, ձուն չի գալիս,
Ղարիբ աղբեր տուն չի գալիս։
Եկա, հատա էջմիածին,
Քեզի մեռնեմ, աստվածածին։
Երևանա ճամփեն դուզ ա,
Թագավորը սալդաթ կուզա։

Թղթերն եկան այլուն-փայլուն,
Որն ազապ էր, որ նշանլուն։
Թագավորի դռան պուզը,
Սալդաթներին քոմին դուզը։
Արևն առավ Կողբա սարին,
Ե՞րբ կըթըմամի երեք տարին։
Արև դիպավ Կողբա սարին,
Ե՞րբ կհասնեմ ես իմ յարին։
Սալդաթ տանելը մըրմուռ ա,
Տեր իմ աստված, ազատ արա։

5 (150). ՆՇԱՆԼՈՒ ՍԱԼԴԱՏԻ ԵՐԳԸ

Մեր արևը շատ կանանչ է,
Նաչալնիկը մեզ կը կանչե,
Քյասիբ տղին հեչ չի ճանչե։
Յաման յար, յաման յար,
Նարըմ-նարըմ, նար,
Քյոհնա յարըմ յար.
Նշանլու եմ ես,
Սավդալու եմ ես,
Սալդըտցու եմ ես*։
Սալդըտի մեր լվացք կանե,
Շուշպեն ավետրընին տանե,
Սալդատ տղին ազատ անե։
Արև դիպավ Կողբա սարին,
Ե՞րբ պըտի դա իրեք տարին,
Էրթանք հասնինք նազլու յարին։
Խապար տարեք սարեր, ձորեր,
Հագել եմ սալդըտի շորեր,
Լաց էղնելեն ընցոսմ օրեր։
Անուշ մերիկ, դարտ մի էնե,
Նազլի հարսիդ ազիզ պահե,
Ջուրի աստված ինձ ազատե։
Գիշերն անքուն ես մնացի,
Էրազ տեսա նատա լացի,

* Այս վեց տողը յուրաքանչյուր տան վերջում պետք է կրկնել (Ծ. Բ.)։

Ավետրընեն ուխտ գնացի։
Սարի քոլյկեն ծաղիկ բուսավ,
Նազու յարս լինձի տեսավ,
Մոտեցավ՝ հետս կուշտ խոսավ։
Դարտս շատ է, ես ի՞նչ էնեմ,
Ջահել-ջիվան, ո՞րը տանեմ,
Ջորս տարին ե՞րբ գլուխ հաննեմ։
Ամպեր թոփ էղան վըր գվխոս,
Սև ձուն բերին իմ արևոս,
Յարս լաց էղավ չուրի լուս։
Սիրտս էղավ փարա-փարա,
Տեր իմ աստվածծ, ազատ արա,
Սրտիս չըմնա խոր յարա։

7 (151). ա) «ԱՐԵՎ ԴԻՊԱՎ ԿՈՂԲԱ ՍԱՐԻՆ»

Արև դիպավ Կողբա սարին,
Նամակ գրիմ տամ իմ յարին,
Ե՞փ կը թըմի չորսը տարին։
Մայրիկ ջան, մայրիկ,
Ինչի՞ բերեցիր,
Բալուլ էրեցիր,
Ասքար ղրկեցիր։
Լավ պահե յարըս
Մինչի իմ գալս։
Սամավարը բերեք օդեն,
Նոր եմ եկե յարիս մոտեն,
Չեմ կշտանա անուշ հոտեն։
Մայրիկ ջան, մայրիկ
Ինչի՞ բերեցիր,
Բալուլ էրեցիր,
Ասքար ղրկեցիր։
Լավ պահե յարս
Մինչի իմ գալս։
Արի էրթանք ժամի բակը,
Տերտերն օրհնե մեր պսակը.
Հատատատ մնա մեր պսակը։
Կաթնատուր մայրիկ,

Ինչի՞ բերեցիր,
Բալուվ էրեցիր,
Ասքար ղրկեցիր։
Լավ պահե յարս
Մինչի իմ գալս։

բ) ԱՐԵՎՆ ԱՌԱՎ

Արևն առավ Կողբա սարին,
Նամակ գրեմ, ղրկեմ յարին,
Հարի թըմի չորսը տարին.
Մայրիկ ջան, մայրիկ,
Ընչի՞ բերեցիր,
Բալուվ էրեցիր,
Սալդաթ ղրկեցիր։
Սամավարը տարան օդեն,
Ջր հեռացա յարի մոտեն,
Ջր կշտացա անուշ հոտեն.
Մայրիկ ջան, մայրիկ,
Ընչի՞ բերեցիր,
Բալուվ էրեցիր,
Սալդաթ ղրկեցիր։
Սամավարի կռանտա օսկի,
Պտիկ աղջիկ, չէկար խոսքի,
Մե պագդ աժեր հազար օսկի.
Մայրիկ ջան, մայրիկ,
Ընչի՞ բերեցիր,
Բալուվ էրեցիր,
Սալդաթ ղրկեցիր։

գ) ԱՌԵՍ ԸՆՁԻ ԲԵՐԵԼ Ա՛...

Ադես ընձի քերել ա,
Օրորոցում պահել ա,
Օրորոցում մեռնեի,
Թաքլե սալդաթ չգրվեի։
Կաթնատուր մայրիկ ջան,
Ընչի՞ բերեցիր,

Սև օրով պահեցիր,
Ջուլեր գցեցիր։

դ) ՍԱՄԱՎԱՐԸ ԲԵՐԻՆ Օ՛ԵՆ

Սամավարը բերին օրեն,
Նոր եմ եկե յարիս մոտեն,
Ջեմ կշտացե համեն-հոտեն.
Մայրիկ ջան, մայրիկ։
Լավ պահի յարս
Մինչև իմ գալս։
Սամավարը պատվական է,
Միջի չայը բավական է.
Յար եմ սիրե, գովական է.
Գովական մայրիկ ջան,
Լավ պահի յարս,
Մինչև իմ գալս։
Սամավարը դեղին ոսկի,
Պոռճուր աղջիկ չի գա խոսքի,
Մի պագն արժե հազար ոսկի.
Կաթնատու մայրիկ ջան,
Լավ պահի յարս,
Մինչև իմ գալս։

7 (152). ԱԼԱԿԱԶԻ ԵՐԳ

Ալակազ բարձր սար ա, հա՛յ դիվան, վա՛յ դիվան,
Ջորս բոլոր գուղ հոպան ա, հա՛յ դիվան, վա՛յ դիվան,
Նիկոլ հայից սալդատ կուզա, հա՛յ դիվան, վա՛յ դիվան,
Աշխարհ քանդվեց, էս ինչ զուլում ա, հա՛յ դիվան, վա՛յ դիվան։

Ալակազ ձուն է կալիս, հա՛յ դիվան, վա՛յ դիվան,
Մաշինի ձեն է կալիս, հա՛յ դիվան, վա՛յ դիվան,
Հայ տղերք գնում են սալդատ, հա՛յ դիվան, վա՛յ դիվան,
Վեհափառի քենֆն է կալիս, հա՛յ դիվան, վա՛յ դիվան։

Շալում եկավ հերևանա, հա՛յ դիվան, վա՛յ դիվան,
Լսեք, թե ինչ զուլում բան ա, հա՛յ դիվան, վա՛յ դիվան։

Մեծ ու պուճուր լաց են լինում, հա՛յ դիվան, վա՛յ դիվան,
Սիրտ պիտա որ դիմանա, հա՛յ դիվան, վա՛յ դիվան։

Ռուսբստանա այսամ տուշ ա, հա՛յ դիվան, վա՛յ դիվան,
Վա՛յ-վա՛յ կանչող քոռ պայքուշ ա, հա՛յ դիվան, վա՛յ դիվան,
Իմ սիրականը գնոամ է սալդատ, հա՛յ դիվան, վա՛յ դիվան,
Վարդ մանիշակ ինձի փուշ ա, հա՛յ դիվան, վա՛յ դիվան։

Ալակազ ձոան էկեր ա, հա՛յ դիվան, վա՛յ դիվան,
Արփաչայը վարարեր ա, հա՛յ դիվան, վա՛յ դիվան,
Սիրականիցս ճուղապամ չառա, հա՛յ դիվան, վա՛յ դիվան,
Աճապ որտեղ որ ֆռոնտ ա, հա՛յ դիվան, վա՛յ դիվան։

8 (153). ԱՐԵՎՆ ԷԼԱՎ

Արևն էլավ կամար-կամար.
Էս լուրն էկավ մեղի համար,
Մակարից էլավ հրաման,
Որ հայիցը սալդաթ տարան։
Էկան գրեցին ձիանը,
Մակարից հատավ գիանը։
Սալդաթն հատավ Սարիղամիշ,
Մեջքին կապած կապույտ գայիշ։
Սալդաթ տղեն Քանաքեռ ա,
Թվանքն ուսին ծանդր բեռ ա,
Տունը քանդված պրիստավը,
Ջոկեց ջահելնեքի լավը։
Էլ մենք չունենք մխիթարանք,
Երկնոց գետին ընկանք, կորանք։
Անարատ կաթ աստվածածին,
Դու սաղ պահես նանի բալին։

9(154). ՎԻՃԱԿԻ ԵՐԳԸ

Մըտա եգեղեցին, վառի մոմերը,
Հանի սալդաթության պեռավի նոմերը.
Յար ջան, յար ջան, թևերըտ մատջան։
Ախտիցը կալխա ի, տու տուրը, պացիր,

Որ ասի սալդաթ եմ, ա՜խ արիր լացիր,
Անուշ, անուշ, ծամերըտա քընքուշ։
Մըտա կանցիլար, աշկըս շողմըղաց,
Որ ասին, սալդաթ ես, ծնգերըս տողաց.
Յարըս, յարըս, ջան ու ջիգյարըս։
Կանցիլարի տուռը կանանչ խիյար ա,
Իմ յարիս տանում են գերմանու տուռը,
Յար ջան, յար ջան, թևերըտ մատջան։

10 (155). «ԵՍ ԻՄ ՎԻՃԱԿՍ ՀԱՆԵՑԻ»

Ես իմ վիճակս հանեցի,
Էլա սալտաթ գնացի,
Տանից տեղից զրկվեցա,
Զինվորութեան մեջ ընկա։
Իմ մայրիկս ինձ բերել էր
Անուշ զավակի համար,
Օրորոցիս մեջ մեռնեի,
Գուցե զինվոր չըլայի։
Մոտս հայրս ծերացել էր,
Մորս աչքը կուրացել,
Հայրս մահով մահվեցավ,
Մորս տերտը շատացավ։
Մնաք բարև, իմ ընկերներ,
Դուք ձեր հոգին ողջ պահեցեք,
Ինաք բարև, բարեկամներ,
Բոլորըտ ալ ողջ մնացեք։

11 (156). ա) ԿԵՍ ԴԱՐ ԱՌԱՋՎԱ ԹՈՒՐՔ ԲԱՆԱԿԻ ՀԱՅ ՆՈՐԱԿՈՉԻԿԻ ԵՐԳԸ

Վարդի թուփ ըլնեի,
Դուրըդ բացվեի,
Առտուն երբ էլնեիր
Դեմքըդ տեսնեի։
Մայրիկ, մայրիկ, զինվոր եմ՝ կէրթամ։
Բին յուչ յերամի բեշ՝
Թուրքի թըվական,
Հանեցին կարդացին

Ասքյարի Ֆերման։
Մայրիկ, մայրիկ, զինվոր եմ՝ կէրթամ։
Աստված սիրես մայրիկ,
Ջանթաս լավ կարե,
Հարսըդ է պըտուիկ՝
խաթերը նայե։
Մայրիկ, մայրիկ, զինվոր եմ՝ կէրթամ։
Տեղըս որոշված է,
կէրթամ Սելանիկ։
Աստված ողորմած է,
Դառնամ հայրենիք։
Մայրիկ, մայրիկ, զինվոր եմ՝ կէրթամ։
Ընկերներով կէրթանք
Բալկանի ճակատ,
Քանի՞ հոգի կմնանք
Այս մերին չոկատ։
Մայրիկ, մայրիկ, զինվոր եմ՝ կէրթամ։

բ) ԱՍՔԱՐՒ ԵՐԳ

Ուշ յուզ խզխրամի քեշ թյուրքի թվականը,
Եկան ժողովեցան հուքմաթի դուռն,
Հանին ու կարդացին ասքարի ֆիրման,
Կէրթամ, կէրթամ ասքար եմ կէրթամ։
Տղերք, որոշեցին, կէրթամ Սելանիկ,
Աստված սիրես, մայրիկ, հարսիտ լավ պահես,
Ես վերադառնամ, գամ անուշ հայրենիք,
Անուշ, անուշ, անուշ, հայրենիք։
Ես տարեն կուգամ, դու դուռը բացիր,
Ձեռքս ծոցդ տարա, ախ, քաշիր, լացիր,
Ինչքան քեզ նայեցի, թողիր գնացիր,
Թողիր, թողիր, թողիր գնացիր։
Տղերք որոշեցին, տարան Սելանիկ,
Աստված սիրես, մայրիկ, գուլպեք լավ կարիս,
Մայրիկ աստված սիրես հարսիտ լավ նայես,
Գուցե վերադառնամ ես իմ հայրենիք։

գ) «ԿԱՆՑԻԼԱՐԻ ԴՈՒՌԸ ԳԱՅՆԱԾ ՄՆԱՑԻ»

Կանցիլարի դուռը գայնած մնացի,
Ձեռքս ծոցիս տարա, ախ էրի, լացի,
Ասկարի նոմեր տիմաց հանեցի
Կէրթամ, կէրթամ, ասկար կէրթամ։
Ուճուզ յիրմի բեշ թուրքի թվական
Մեծ կայսր սուլթանից եկավ ֆերման,
Պերին կարթացին,
Կէրթամ, կէրթամ, ասկար կէրթամ։
Քուրիկ, աստված սիրես,
Ջանթես ի կարես,
Մայրիկ, աստված սիրես,
Հարատտ լավ պահես,
Կէրթամ, կէրթամ, ասկար կէրթամ։

12 (157). ա) «ՔԸՍԱՆ ՄԵԳՍ ԳՈԽԵՑԻ»

Քըսան մեգս գոխեցի,
Հորս-մորս լացուցի։
Օ՛ֆ-օ՛ֆ-օ՛ֆ, մարիգս,
Քսան մեգ էր դարիքս։

Դավարի բես քշեցին,
Օշխարի բես պաժնեցին։
Օ՛ֆ-օ՛ֆ-օ՛ֆ, մարիգս,
Չկար մեզի ազատում։

Դարին տատնոք խոթեցին,
Լանքերս, բոյերս չափեցին։
Օ՛ֆ-օ՛ֆ-օ՛ֆ, մարիգս,
Քսան մեգ էր դարիքս։

Հայի չեքմեննա հանեցին,
Սալդաթի շինել հագուցին։
Օ՛ֆ-օ՛ֆ-օ՛ֆ, մարիգս,
Քսան մեգ էր դարիքս։

Հոսի գոշիգս հանեցին,

Սալդաթի գոշիգ հաքուցին։
Օ՜ֆ-օ՜ֆ-օ՜ֆ, մարիգս,
Քսան մեգ էր դարիքս։

Հոսի կառտոզս հանեցին,
Սալդաթի կառտոզ հագուցին։
Օ՜ֆ-օ՜ֆ-օ՜ֆ, մարիգս,
Քսան մեգ էր դարիքս։

Թութու բոռշով արիշ հաց,
Ե՞ր բիդ մոռնամ ջերմագ հաց։
Օ՜ֆ-օ՜ֆ-օ՜ֆ, մարիգս,
Չկար մեզի ազադում։

Մեզի գռանից ջամփեցին,
Թուրքին դեմը շարեցին։
Օ՜ֆ-օ՜ֆ-օ՜ֆ, մարիգս,
Չկար մեզի ազադում։

բ) ԱՌՋԻ ՍԱԼԴԱԹԻ ԵՐԳԸ

Օրեն կանաչ կիր էգավ,
Աշխարքներս մթնեցավ,
Օֆ, օֆ, օֆ հայրիգս,
Ցավ քաշիլ էր մայրիգս։
Դարին ստանոք խոթեցին,
Լանքերս, բոյերս չափեցին,
Օֆ, օֆ, օֆ հայրիգս,
Ցավ քաշիլ էր մայրիգս։

Հայի չեքմեննա հանեցին,
Սալդաթի շինել հաքուցին,
Քսանմեգս գոխեցի,
Հորս, մորս լացուցի,
Օֆ, օֆ, օֆ հայրիգս,
Ցավ քաշիլ էր մայրիգս։
Օֆ, օֆ, օֆ հայրիգս,
Ցավ քաշիլ էր մայրիգս։

Թութու բոռշով արիշ հաց,

Ե՞փ բիդ մոռնամ ջերմագ հաց,
Օֆ, օֆ, օֆ հայրիգս,
Ջի կա մեզի ազադում։

13 (158). «ՄՏԱ ԿԱՆՑԻԼԱՐԸ»

Մտա կանցիլարը,
Վառի մոմերը,
Ջեռս գցի հանի
Սալդաթ նոմերը։
Կանցիլարի դռան
Տաշած մեծ քարը,
Մերս բերեց, գցեց
Դարբեդիարը։
Կանցիլարի դուռը,
Տասներկու կամար,
Սև օրով մեծացա
Սալդաթի համար։
Կանցիլարի դուռը
Ջաքջով տաշած էր,
Իմ յարի պատկերը,
Վրեն քաշած էր։

14 (159). «ՊԵՌՎԻ ՆՈՄԵՐ ՀԱՆԻ, ՎԱՌՈՒՄ Է ՋԱՆՍ»

Պեռվի նոմեր հանի, վառոսմ է ջանս,
Հեռու տեղ գնալով դժվար է բանս։
Արի, յար ջան, արի, կարոտս առնեմ,
Սեր ու տուվդուվդի խնգաս կմեռնեմ։
Թաքավորի վիզն իրա տակ մնա,
Սալդաթ տղեն իրա սիրած թողնի, ո՞ւր գնա։

15 (160). ՍԱԼԴԱԹ ԵՄ, ԿԵՐԹԱՄ

Ես մե թաք տղա եմ, աստծուն ծառա,
Աստծմեն խնդրեցի, փափագս չառա,
Կերթամ, կերթամ, սալդաթ եմ, կերթամ։
Աղջի Հայկո, Հայկո դոշդ մի բանա,
Դառ դեմ աղոթրան, մեկ խաչ ըմ հանա,

Մալադո գինվոր եմ, էլ չեմ գիմանա,
Կերթամ, կերթամ, սալդաթ եմ, կերթամ։
Կանցիլարի դուռը ոսկով տաշած է,
Մալադո տղայի պատկեր քաշած է,
Կերթամ, կերթամ, սալդաթ եմ կերթամ։
Մտա եկեղեցին, վառի մոմերը,
Ձեռքս գցի, հանի տվի նոմերը,
Կերթամ, կերթամ, սալդաթ եմ կերթամ։

16 (161). ՀԻՆ ՍԱԼԴԱԹԻ ԵՐԳԸ

Տխրված չինեմ, ի՞նչ անեմ մայրիկ,
Ինձի սալդաթ տանըմ են,
Նաշալնիկը նստած ա,
Ձափը ձեռին պռնած ա,
Կրծքիս տակը չափըմ են, մայրիկ,
Ինձի սալդաթ տանըմ են։
Վագոն-վագոն կայնած ա,
Շալոն-շալոն տարնըմ են,
Որթին մորիցը հանըմ են
Տխրված չըլինեմ, ի՞նչ անեմ, մայրիկ ջան
Ինձի սալդաթ տանըմ են։

17 (162). ա) ՍԱԼԴԱԹԻ ԵՐԳ

Ես քյնոմ եմ երեք տարով,
Նշանածս լալով չարով,
Լալով կասեմ մնաք պարով,
Մի լար մայրիկ, հետ գալու եմ,
Մի լար քույրիկ, հետ գալու եմ։
Անուշ հացս թթու դառավ,
Անցած օրս մութը դառավ,
Որտեղ գոնեմ քաջ վարդանին,
Որ ազատի հայ սալդաթին։
Ինձի հըմար աղոթք արեք
Շաբիք, շորեր շուտով կարեք,
Մի լար մայրիկ, հետ գալու եմ,
Մի լար քույրիկ, հետ գալու եմ։

Ես քինըմ եմ իրեք տարով,
Լալով կանչեմ մնաք պարով,
Նշանածիս ահ ու զարով,
Մայրիկիկիս ասա, չուխես կարի լալով, լալով,
Սև կոճակը վրեն շարի մխկտալով։

18 (163). Ա՞հ ՆԱՆԻ...

Ջեռներս կապեցին,
Գամին դրեցին,
Լալով ու ողբալով,
Ճամփու գցեցին։
Ա՜խ նանի՛, նանի՛,
Ջա՜ն, նանի՛, նանի՛,
Քից՝ ջուրը տանի։
Հարսավի քամին մտել էր գամին,
Ղրկոտմ էր Անին։
Փչի՛ր, քամի, փչի՛ր,
Սալդաթ են տանոմ,
Տանից ու վաթանից,
Նանից են հանոմ։
Ա՜խ նանի՛, նանի՛,
Ջա՜ն, նանի՛, նանի՛,
Քից՝ ջուրը տանի։
Հարսավի քամին մտել էր գամին,
Ղրկոտմ էր Անին։

19 (164). ՋԻՆՎՈՐԱԿԱՆ ԵՐԳԵՐ

Մարե, գաթա թխա,
Դիր տանեմ հետս,
Ամեն պիր(ք) մտնելուն,
Քեզ քցեմ միտս։
Թուփեր գոգոաց,
Մայրիկ ջան,
Սիրտս մոմոաց,
Կանչում եմ, մայրիկ,

Զայնս չի բերի։
Մի լար մայրիկ, մի լար,
Լալողը ես եմ,
Կարմիր գյուլլի դեմ,
Կայնողը ես եմ։
Մտա կանցիլարը,
Վառվում էր ֆանար,
Յարիս մեջքն էր կապած,
Ոսկեջուր քամար։
Մտա կանցիլարը,
Պատերը շողաց,
Գերման ընձի տարավ,
Ջոքերս դողաց։
Նստա մաշինեն,
Դեպի Դիլիջան,
Մայրիկ չունենք ասեր.
—Սալդաթ բալա ջան։
Նիկոն թաքավորը
Եկել ա Թիֆլիս,
Ոսկե խաչը թալած
Անդրանիկի վիզ։
Այլեպլան եկավ
Ծովերի երեսով,
Փախե՛ք տղեք, փախե՛ք,
Գերման եկավ ուր պոլկով։

20 (165). ՍԱԼԴԱԹԻ ԵՐԳ

Աշուն էկավ իր վադեն,
Կէրթամ, կորիմ քու դարդեն,
Ես էրվեցա քու սավդեն,
Սալդաթ էլա քու բախտեն։
Քալլազ աղեն յար չունեմ,
Աշունն էկավ իր վադեն,
Հալըը գիտե—դարդ չունեմ
Կէրթամ, կորիմ քու դարդեն։
Դարդը ընձի զարկեր է,
Ես էրիցա քու սավդեն,

Ջահել եմ, սալդաթ կէրթամ,
Բալքա պրծնեմ քու դարդեն։

21 (166). ՅԱՐ ՋԱՆ

Սալդթներին մնաց մեկ օր, մեկ գիշեր,
Յար ջան, մեկ օր, մեկ գիշեր,
Վառեցին չիգյարս, քաշեցին շշեր,
Յար ջան, քաշեցին շշեր։
Գնա, յար ջան, քեզի չեմ մոռանա,
Յար ջան, քեզի չեմ մոռանա,
Մինչև որ սալդթի տեղից դու դառնաս,
Յար ջան, դու դառնաս։
Արի յար ջան, արի, փափակս առնեմ
Յար ջան, փափակս առնեմ.
Հավատացի յար ջան, ես քեզի կառնեմ,
Յար ջան, ես քեզի կառնեմ։
Յարից բաժանվելը շատ դժվար բան է,
Շատ դժվար բան է,
Քու սալդաթ գնալը հոգիս կհանե,
Յար ջան, հոգիս կհանե։
Մտա կանցիլարը, աչքերս շողաց,
Յար ջան, աչքերս շողաց,
Պեռվի նոմեր հանի, չոքերս դողաց,
Յար ջան, չոքերս դողաց։
Կանցիլարի դուռը վառած էր մոմեր,
Յար ջան, վառած էր մոմեր,
Ձեռս տարա, հանի սալդթի նոմեր,
Յար ջան, սալդթի նոմեր։

22 (167). ԳԵՐՄԱՆԸ ՔՈՒԱՆԵՒ

Պարախոդը էկավ, թնդաց ու գնաց,
Քաղցր հայրենիքըս շատ հեռու մնաց,
Ախ, ադե ջան, ոչ դու ըլնիր, ոչ քու մերուքյուն,
Բերիր, ինչո՞ւ բերիր, ուղարկիր գերուքյուն։
Գերմանը քոռաներ,
Կռիվը մոռաներ։

Արի յար ջան, արի տալդաթ մի գնա,
Գերմանն անատոմած ա, կրոմբակոծա։
Երկնքից անցնում էր այրոպլանը,
Փախեք, տղերք, փախեք, ես կամ գերմանը։
Գերմանը քոռաներ,
Կոխվը մոռաներ։
Կանցիլարի դուռը կանգնած մնացի,
Խաբար տարեք մորս, սալդաթ գնացի։
Կանցիլարի դուռը վառվում էր փուռը,
Սալդաթ տղերք ևկան, վզնոցը ծուռը։
Գերմանը քոռաներ,
Կոխվը մոռաներ։
Մտա կանցիլարը, նոմեր հանեցի,
Երեք հարյուրի չափ էր, սալդաթ գնացի։
Մտա կանցիլարը, կանգնած մնացի,
Խաբար տարեք մորս, սալդաթ գնացի։
Վագոն, մի գնա, վագոն, մի գնա,
Վագոն, բախտդ ընկնեմ, յարս կմնա։

23 (168). ՋԻՆՎԱՐԻ ԵՐԿՔ

Գնալով, գնալով տանից հեռացա,
Տասնութ տարեկան սալդաթ դարձա,
Մաշինեն ևկավ դեպի Դիլիջան,
Մայրիկ չունեմ կանչի, ա՜խ, բալա ջան։
Երկնքից կախված ոսկե շղերը,
Քո բալին տարան, մամա ջան, լուսնակ գիշերը,
Արև չկար, օրը խավար էր,
Յարից բաժանվելը, մամա ջան, մահից դժվար էր։

24 (169). ԿԱՆՑԻԼԱՐԻ ԴՈՒՌԸ

Կանցիլարի դուռը,
Վառեցին ֆուռը,
Սալդատ տղոնց սիրտը,
Մամա ջան,
Ընկավ մրմուռը։
Կանցիլարի դուռը,
Փուեցին խսիլ,

Սալդատ տղեքը
Մամա ջան,
Դարձել են եսիր։
Կանցիլարի դուռը
Ուրքով տաշած էր,
Սալդատ տղոնց սիրտը
Մամա ջան,
Հալված-մաշված էր։
Վադոնում շարված էին
Ոսկե շղերը,
Ախպորս տանում են
Մամա ջան,
Լուսնյակ գիշերը։

25 (170). ՍԱԼԴԱԹԻ ԵՐԳ

Թազա, մալադո, եմ,
Սապոքս նեղ ա,
Ընկել եմ բալնիցեն,
Դոխտուր կտեղա։
Արի յար ըլենք,
Դարձի՛ յար ըլենք,
Իմ մե բալի խաթրին
Դարբադար չլենք։
Կանցիլարի դուռը,
Վառեցին փուռը,
Մորս խաբար արեք,
Ինձ պցին Քուռը։
Արի յար ըլենք,
Դարձի յար ըլենք,
Իմ մե բալի խաթրին
Դարբադար չլենք։
Կանցիլարի դուռը,
Փռած էր խսիր,
Մորս խաբար արեք,
Ինձ տարան եսիր։
Արի յար ըլենք,
Դարձի յար ըլենք,

Իմ մե բալի խաթրին
Դարբադար չենք։

26 (171). ԿԱՆՉԵ, ԿՈՒՆԿ...

Կանչե, կուռնկ, կանչե,
Քանի գարուն է,
Սալդաթների սիրտը
Լիքը արուն է։
Մտա կանցիլարը,
Վառի մոմերը,
Ջեռս գցի հանի
Պեղովի նոմերը։
Մտա կանցիլարը,
Կայնած մնացի,
Խաբար տարեք մորս
Սալդաթ գնացի։
Ադե՛, գաթա թխա,
Դիր տանեմ հետս,
Դիրքերը փորելուց
Քեզ պցեմ միտս։

27 (172). «ՆՍՏԱ ՊԱՍԱՃԻՐԸ, ՁԵՆ ՏՎԱՎ ԳՆԱՑ»

Նստա պասաճիրը, ձեն տվավ գնաց,
Աչե, իմ վաթանը շատ հեռու մնաց,
Ակուշկից աշեցի, յարս կալ կաներ,
Թաշկինակը ձեռքին ախ ու վախ կաներ։
Պոյեզ տավարնի,
Պոյեզ տավարնի,
Պոյեզ դարդդ ընկնեմ,
Յարին մի տանի։
Ակուշկից աշեցի, գևտինը բուք էր,
Ծրեսա խնդում էր, բայց սիրտս սուք էր։
Յարից բաժանվեցի, բարձս մնաց թաք,
Արևս խավրավ, մտավ ամպի տակ։

28 (173). ԵՐԳ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ Ս ԱՍԻՆ

Կանցիլարի դուռը վառում էր փուռը,
Ջէր կտրում ջահելի սրտի մրմուռը։
Վագոն մի բանի, վագոն, մի բանի,
Վագոն, հոգուտ մեռնեմ, յարիս մի տանի։
Կանցիլարի դուռը ուրքի տաշուկ ա,
Ջահել տղի բոյը ղալմի քաշուկ ա։
Վագոն մի բանի, վագոն, մի բանի,
Վագոն, հոգուտ մեռնեմ, յարիս մի տանի։
Կանցիլարի դուռը լիքը տավար ա,
Ջահելների ճամբեն մութ ու խավար ա։
Վագոն մի բանի, վագոն, մի բանի,
Վագոն, հոգուտ մեռնեմ, յարիս մի տանի։
Ջահելներին շարին, արին մի հոտ,
Լցրին վագոն, ճամփին գերմանու ֆրոնտ։
Վագոն մի բանի, վագոն, մի բանի,
Վագոն, ակռ ջարդիս, յարս մի տանի։

29 (174). ՆԱՆԻ ՋԱՆ

Երանի մեռնեի ծնվածս օրը,
Ջերթայի հագնեի, նանի ջան,
Սալդաթի շորը։
Առավոտը լուսին,
Ատակ գնացինք,
Տանից ու վաթանից, նանի ջան,
Կարոտ մնացինք։
Շատերը կոտորվան,
Մնաց քիչ մատը,
Էս կռվից հասավ, նանի ջան,
Մեզ էս վնասը։
Տանուտի տարվա մեջը
Սալդաթ գնացի,
Ո՞վ սիրելիս քեզանից, նանի ջան,
Կարոտ մնացի։

30 (175). ՀԻՆ ՍԱԼԴԱԹԻ ԵՐԳ

Մայրիկ, ես գնում եմ,
Դու կեցիր բարով.
Վախենում եմ սպանվեմ,
Մի գյուլլի յարով։
Մի լար մայրիկ, մի լար,
Պատմեմ ցավերս։

Ռուսըն իր զորքը,
Քաշեց քարափը,
Ա՜խ, ինքնահեռ տվեց
Թուփի շարապը։
Պասաջիրը էկավ,
Գնաց Դիլիջան,
Մայրիկ չունեմ, կանչի՝
Վա՜յ, սալդաթ բալա ջան։
Էն անտեր բալնիցեն
Տատներկու կամար,
Մեղրս ինձ բերել էր
Դիրքերի համար։

31 (176). ԲԱԽՏՍ ՂԱՐԱ ԷՐ

Բախտս ղարա էր,
Մայրիկ ջան,
Սիրտս յարա էր։
Նատեցի մաշկենեն,
Դեպի Դիլիջան,
Մայրիկս կանչում էր՝
Սալդաթ բալա ջան։
Բախտս ղարա էր,
Անուշ ջան,
Թուփի յարա էր։
Նստեցինք վագոնը,
Մինչև Երևան,
Լուսադեմին քշին,
Շատ հեռու տարան։

---

* Կրկնվում է յուրաքանչյուր տնից հետո (Ծ. Կ.)։

Բախտս զարա էր,
Անուշ ջան,
Սիրտս յարա էր։

21 (177). ԱՍԻ ԲԱՆԱԿ ԷԹԱՄ

Ախր բանակ էթամ,
Դու չավատացիր,
Հենց որ շորերս հագա, մամա ջան,
Նատար ու լացիր։

Կանտիլարի դուռը
Ուրքով տաշած է,
Բանակ տղոց սիրտը, մամա ջան.
Հալած-մաշած է։

Կանտիլարի դուռը
Կանգնած մնացի,
Խաբար տարեք մորս, մամա ջան.
Բանակ գնացի։

Պոյեզը էկավ,
Շվաց ու գնաց,
Հետ նայեցի, հայրենիք, մամա ջան,
Շատ հեռու մնաց։

Պատաժիր եկը
Դեպի Դիլիջան,
Մայրիկ չունեմ, գար ազատեր,
«Սալդաթ բալա ջան»։

Թազա մալադոյ եմ,
Կոշիկս նեղ է,
Դեղ ու դոխտուր բերեք, մամա ջան,
Վերքերս դեղե։

33 (178). ՍԱԼԴԱԹԻ ԵՒԿ

Թող պարով կոռծանվեր Նիկոլի թախտը,
Է՛լը էկավ սալդաթ տանելու վախտը։

Կապեք շորերս,
Էկան օրերըս։
Մայրիկ, կաթա թխի որ տանեմ հետս,
Դիրքերը մտնելու քեզ քցեմ մխտս։
Ա՜խ, մացեք պարով
Ես կերթամ տարով։
Էս անտեր մաշինեն շվվաց ու կնաց,
Իմ յարխա աղպուխը ձեռոմս մնաց։
Ճամփեքը շուշա,
Վաթանն անուշ ա։
Կանցիլարի տուռը վառվոմ ա փուռը
Ջահիլներին տարան գերմանու կուռը։
Ա՜խ, մացեք պարով,
Տանոմ են՝ զորով։
Ջաջուռա սարն ընցանք չկար օթևան,
Տավարնի վագոնը նեղվասկ է յամա՜ն։
Էկան սև օրեր,
Կուրանաք մերեր։
Կնալով, կնալով երկրից հեռացա,
Տասնութը տարեկան, դարդի տիրացա։
Ճամփեքս փուշ ա,
Վաթանն անուշ ա։
Մալադոյ սալդաթ եմ, սապոքս նվղա,
Բալնիցեն պառկած եմ, յարևքս տեղա։
Վա՜յ դըլե յամանն,
Ընգանք անգյումանն։
Մայրիկ չկա կողքիտ որ յարես տենաս,
Անատավաճ պմիշկը յարեա կը տևդաս։
Մացինք չոլերըն,
Վա՜յ մեր օրերին։

34 (179). «ԲԱՐՁՐ ՍԱՐԻ ԳԱԳԱԹԻՆ ԾԱՂԻԿ ՈՒ ՎԻՃԱԿ»

Բարձր սարի գագաթին ծաղիկ ու վիճակ,
Ջոկին տարան բալիդ, քեզ թողին մենակ։
Մայրիկ, գաթա թխիր, որ տանեմ հետս,
Ամեն դիրք մտնելիս, քեզ քերեմ մխտս։
Էլի աչքս ընկավ բանակիս ճամփին,
Կրակն ընկներ, վառվեր վատ մարդիր ջանդ։

Երկնքից կախված էր ոսկե շշերը,
Բալիդ տատան, մայրիկ, լուսնյակ գիշերը։
Ես մալադո սալդաթ, յոթ սարի քամակ,
Ջունեմ թուղթ ու թանաք, որ գրեմ նամակ։
Ես մալադո սալդաթ, սապոգս նեղ է,
Հիվանդանոցում պառկած եմ
Ջորս կողմս նայում եմ, ազգական չունեմ։

35 (180). ՄԱՅՐԻԿ

Գնալով-գնալով տանից-տեղից հեռացա,
Տասնյոթ տարեկան, մամա ջան, բախտի տիրացա։
Ես մալադո սալդաթ, յոթ սարի քամակ
Ջունեմ թուղթ ու թանաք, մամա ջան,
որ գրեմ քեզ նամակ։
Ես ամաչի գնում եմ, մամա ջան, դու չհավատացիր
Հենց որ վեշս կապեցին, նոր կայնիր ու լացիր։

36 (181). «ԳՆԱԼՈՎ, ԳՆԱԼՈՎ ՀԱՍԱՆՔ ԴԻԼԻՋԱՆ»

Գնալով, գնալով հասանք Դիլիջան,
Հասանք Դիլիջան,
Մայրիկս ձեն տվեց՝ գինվոր բալա ջան.
Ջինվոր բալա ջան։
Քարափի տակիցը ծագեց արևը,
ծագեց ադևը,
Կռունկի թևի հետ ղրկեմ բարևը,
Ղրկեմ բարև։

37 (182). «ԵԹԻՄ ՄՆԱՐ ՆԻԿՈՅ ԲԱԼԵՆ»

Եթիմ մնար Նիկոյ բալեն,
Վզիս փաթթեց խաթա-բալեն,
Յարս թողեց տանը լալեն,
Իմա՞լ անեմ, իմա՞լ անեմ։
Անուշ մերիկ, յարալու եմ
Յարալու եմ, դառնալու չեմ*։

* Կրկնվում է յուրաքանչյուր տնից հետո (Ծ. Բ.)։

Կրեպոսաի դուռը չուգուն,
Ձեռ ու ոտիս դրին դուգյուն,
Ջահել ջիվան արին սուրգյուն,
Իմա՞լ անեմ, իմա՞լ անեմ...

Պազիցից բ'երին էս տեղը,
Հալվեր Նիկոյ աչքի եղը,
Ջիմացա ինչ էր իմ մեղը,
Սուրգյուն արին, իմա՞լ անեմ։

Անուշ մերիկ, յարալու եմ,
Ճամբես չաշեք՝ դառնալու չեմ,
Իմա՞լ անեմ, իմա՞լ անեմ,
Խեղճ սալդատ եմ, շիվարել եմ...

38 (183). ՆԱՄԱԿ

Շոշից տեսա կարմիր արև,
Ո՞ւմ խեստ խրկեմ յարիս բարև,
Իմ Շուշանս վարդի տերև,
Ե՞րբ կթամի չորսը տարին,
Գնամ հասնեմ սիրած յարին։

Թռիր նամակ, հասիր տունս,
Գոնե դու տես դերդաստանս,
Սաստիկ դժվար է իմ բանս,
Ե՞րբ կթամի չորսը տարին,
Գնամ հասնեմ սիրականին։

Զարչարում են մեզ անդադար,
Մեր ղոսղուղն է կրակից բեթար,
Հացըմ կիտան ինչպես ախար,
Ե՞րբ կթամի չորսը տարին,
Գնամ հասնեմ սիրած յարին։

Դրին պոեզ մեզի տարան,
Հեռու երկիր ծովու բերան,
Թաքավորի թախտն վերան,
Ե՞րբ կթամի չորսը տարին,
Գնամ հասնեմ սիրած յարին։

39 (184). ԵՐԿՆՔՈՎ ԱՆՑՆՈՒՄ ԷԻ

Երկնքով անցնում էր ալլահլանը,
Փախեք տղերք, փախեք, եկավ գերմանը։
Գաթա թխի, մայրիկ ջան, դիր տանեմ հետս»
Ամեն դիմք մտնելուս, քեզ քցեմ միտս։
Ինչո՞ւ բերեցիր, մայրիկ ջան, բալուլ արեցիր,
Գերմանու ֆրոնտը ինձի ղրկեցիր։
Գնալով, գնալով գյուղից հեռացա,
Տանուխ տարեկան, դարդի տիրացա։
Նստեցի մաշինեն, հասա սայմանը,
Յոթ տարի էր մայրիկ ջան, կռվի պայմանը։
Կանցիլարի դուռը, վառվում էր փուռը։
Ինձի տանում են, մայրիկ ջան, բոյինի դուռը։
Երկու կռունկ իջան Իգդիրա սարին,
Քաֆուր գերմանն էկավ, տարավ իմ յարին։

40 (185). ՀԻՆ ՍԱԼՏԱՏԻ ԵՐԳ

Կանցիլարի դուռն կայնած մնացի, յար ջան,
Մերքս տարա ծոցս, ախ էրի լացի, յար ջան,
Կանցիլարի դուռն կը վառեր փուռը, յար ջան,
Սալտատների սրտեն չէլավ մոմուռը, յար ջան,
Ընկել եմ սալտատ, տեր իմ, ոմ գնամ գանգատ։

Ընտտա պարախոդն, օյ, անցա Սև ծովն, տեր իմ,
Անցա Սև ծովն Ասրտան, [յար ջան].
Մին նամակ գրեցի, օյ, իմ ծնող մորըն, տեր իմ,
Իմ ծնող մորն, Ասրտա, [յար ջան],

Ընտտա պաշաջիրն, օյ, իջա Դիլիջան, տեր իմ,
Իչա Դիլիջան, յարտան, այրլտիմ օյ, օյ, չոլարա դուշտըմ.
Մայրս ինձի կանչեց, օյ, սալտատ բալա ջան, մարալ,
Սալտատ բալա ջան, յարտան այրլտիմ,
օյ, օյ, չոլարա դուշտըմ,
Ընկել եմ գերի, յար ջան, օտար երկրի։
Մաշինեն ման գալով, օյ, առաջտ ծով էր, մարալ,
առաջտ ծով էր,
Մայրիկս նստել էր հետև, տեր իմ, հետևը հով էր,
Յարտան այրլտիմ, չոլարա դուշտըմ։

Նիկոլ թաքավորն եկել էր Թիֆլի՛ս, աեր իմ, էկել էր Թիֆլի՛ս,
Խաչ ու մետալ քցեց Անդրանիկի վիզ,
մարալ, Անդրանիկի վիզ,
Ընկել եմ գերի, մարալ, բախտըս չի բերի։

41 (186). ԸՆԿԵԼ ԵՄ ՍԱԼԴԱԹ

Ընկել եմ սալդաթ,
Ընկել եմ սալդաթ,
Մայրիկ ջան,
Ո՞ւմ անեմ գանգատ։
Ընկել եմ գերի,
Ընկել եմ գերի,
Քուրիկ ջան,
Նամակ տուր, բերի։
Գերմանու գերի,
Գերմանու գերի,
Մայրիկ ջան,
Ձենս չի բերի։
Գերմանեն քոռնար,
Գերմանեն քոռնար,
Քուրիկ ջան,
Սալդաթին մոռնար։
Գերմանեն վատ է,
Գերմանեն վատ է,
Մայրիկ ջան...
. . . . . .
Գերմանուց տարին եմ.
Գերմանուց տարին եմ.
Անուշ ջան,
Դարձա՝ քեզ կառնեմ։

42 (187). «ՎԵՐԻ ՁԱՂԵՆ ԱՐՏ ՈՒՆԵՄ»

Վերի ձաղեն արտ ունեմ,
Շատ մարդ գի՛դի դարդ չուն՛եմ,
Յար գի՛դի, դու գիդի՛ իմ յարն ես,
Սոնա յարո՛ ջան, սալդաթ՛ եմ։
Գարոնն եկավ դաշտերումն,

Աչքս մնաց ճամփեքուն,
Յար գիդի, դու գիդի իմ յարն ես,
Սոնա յարս ջան, սալդաթ եմ։
Կանաչել են արտևրս,
Շատացել են դարդերս,
Յար գիդի, դու գիդի իմ յարն ես,
Սոնա յար ջան, սալդաթ եմ։

43 (188). ՀՈՊ ԳՅՈՒԼԻ

Հոպ Գյուլի, գյուլա, գյուլա, յարս։
Դուզն եմ ատում, վերջը զուր ա, յարս։
Հո՛պ Գյուլի, թե չգրես նամակ,
Ամանդ Գյուլի, կերթամ տարի քամակ։
Հո՛պ Գյուլի, ֆայտոնի մասերը,
Սալդաթ տարան, քու սև-սաթի աչքերը։
Հո՛պ գյուլի, ինչ եմ անում նամակ,
Սալդաթ տարան, կերթամ սարի քամակ։
Հո՛պ Գյուլի, գյուլա, գյուլա, յա՛րս։
Դուզն եմ ատում, վերջը զուր ա յարս։

44 (189). ԳԵՐՄԱՆՈՒ ՖՌՈՆՏԸ....

Գերմանու ֆռոնտը կրակ էր ու պոց,
Թուփ գյուլլեն կը կյար քյանց մե փըթըրոց,
Մե կողմից դիժբալեն, մեկից այլապլան,
Կը տըփին մեր դիրքեր, կը շինեն վերան։
Կարպետի լեռները մըժ էր ու դուման
Ամա՛ն, փրկվելու էլ չունենք գյուման։
Մեր քաղցր վաթանին կարոտ մնացինք,
Լացե՛ք, խերիկ, մերիկ,—անտառց կնացինք։

45(190). «ԳԼԽԸՆԵՐԻՍ ԳՅՈՒԼԼԵՆ ԿԹԱՓՎԻ ԹՈՓԻՑ»

Գլխըներիս գյուլլեն կթափվի թուփից,
Ես նամակ կը գրեմ ձեզի՝ ակոպից,
Վառված կրակված եմ ես ձեր կարոտից։
Սալդաթ եմ, կապված եմ, ազատում չունեմ,
Ոչ գիշեր, ոչ ցերեկ հանգիստ քուն չունեմ։

Նամակ քարև արա իմ հորն ու մորը,
Իմ ազիզ քույրերիս ու իմ ախպորը,
Ասա, ախ ու վախով կանցնի իմ օրը,
Մայրիկ, մի վիրավոր սալդաթ եմ անտեր,
Ես չոլերի մեջը ընկած եմ անտեր։
Նշանածիս ասեք շորերս պահի,
Իմ ծառուկ բալիկիս խնամի, շախի,
Ախպորս ասեք թող եղնեերքս չը ծախի,
Մայրիկ վիրավոր եմ, յա գամ, յա չգամ,
Մնաք բարով ծանոթ, ընկեր, բարեկամ։
Ռևանդուզա սարեր ծաղկած գարուն ի,
Սալդաթների սիրտը լերթուկ արուն ի,
Որը ծնող, ախպեր, որը յար ունի,
Ընկանք դարբիտյար տնից ու տեղից,
Կարոտով մնացինք հայրենի հողից։

46 (191). «ՀԱՋԱՐ ԻՆՆԸ ՀԱՐՈՒՐ ՏԱՍՆՉՈՐՍ ԹՎԻՆ»

Հազար ինները հարուր տասնըչորս թվին,
Մեկ որոտում ընկավ ամբողջ աշխարում.
Բեհաշիվ բեմուրատներուն կռիվ պրկեցին,
Ջայլներուն լացկան մորերեն պրկեցին։
Լաց ապա ջան, լաց,
Լաց ապա ջան, լաց։
Մանուկ աղեն բախչեն գինի կու խմեր,
Ջայլներուն հետսով կռիվ կու պրկեր,
Կրակի կար աղեն բեզարթեր խեղջը,
Ջայլ չէ թողեց տաղ գեղին մեջը։
Լաց ապա ջան, լաց,
Լաց ապա ջան, լաց։

47 (192). ՁԻՆՎՈՐԻ ԵՐԳԸ

Կանցիլարի տուռը կանգնած մնացի,
Յարին տարան սալտատ, մինակ մնացի։
Կանցիլարի տուռը կար կանանչ խիար,
Մայրիկ, ինձ բերիր գերուվթյան համար։
Մտա կանցիլար, մոմեր վառեցի,
Ձեռքս տարա խուռեն, սալտատ գնացի։

Ալագյազ աչքերտ, կամար ունքերտ,
Ուզում եմ հեռանալ, չի թողում սերտ։
Կանցիլարի դուռը չակճով տաշած էր,
Սալտաո տղի բոյը վրեն քաշած էր։
Մայրիկ, գաթա թխիր, տիր հետս տանեմ,
Ամեն դիրք մտնելուց ես քեզի հիշեմ։
Ծծիդ կաթը, մայրիկ, լինձ հալալ արա,
Շուշանս նոր հարս է, սրբի պես պահա։
Դիրքում պառկած եմ, ցուրտ ու ղիամաթմ,
Մայրիկ, նոր հարստս քեզի ամանաթ։
Գերդաստանս անտեր փողոց թողեցի,
Մայրիկ, օամանլուխն գերի մնացի։

48 (193). «ՏՈՒՆԸ ՄՆԱՑ ՔՈՒՐՈՋԸՍ, ՄՈՐԸՍ»

Տունը մնաց քուրոջըս, մորըս,
Խաբար էրևք մյեծ ախբորըս,
Լացեք անուշմյեր լացեք,
Սյեվին քնաց ջայել օրըս։
Ինծի տարան թուփի բերան,
Դուշմընյերըս պըլոխս կերան,
Ես քնացի օտար երկիր,
Ծնողներես չունիմ մե կիր։
Ղատուշանը ծակյեց քնաց,
Սյեվ արունըս, ախբար, հոսաց,
Ծնողներուս հուսը կըտրի,
Հեչ չէ տեսած կյանքս քնաց։

49 (194). ՍԱԼԴԱԹԻ ԵՐԳ

Մաշկեն էկավ, բվաց ու գնաց,
Նայիր, հայրենիքս շատ հեռու մնաց*,
Մայրիկ, վեշտ շատ է, վագոն կբառնամ,
Մայրիկ, ատտվածծ կանչա Ղարսա հետ դառնամ*։
Թուփ ու պլիմոտը կպավ իմ կողքին,
Գերեզմանս մնաց շուն թուրքի հողին*,
Էն օր բախշեն տնկես, չոտես նրա բարը
Հլամ մտածիր, տես ինչքան էր դժար*։

* Տողը կրկնվում է (Ծ. Կ.)։

Ընկել եմ նեղը, գոռում եմ հավար,
Աչքիս լիսը քաղվեց մնացի խավար*,
Մայատոյ սալդաթ եմ, տապոգա նեղ ա,
Ընկել եմ բալնիցեն, բժիշկ կդեղա*։
Վատ հըրնգերներս կուզեն իմ մահը,
Կոպեն շոստ մեռնեմ, ոտեն իմ մալը*,
Ընտրված ծաղիկ ի հաստատոն բախշից,
Ես ոմ գանգատ գնամ էտ իմ չար բախտից*։

50 (195). ՌԱՍՏԱԿԵՍԻՆ ԵՐԳԻ

Մայրիգ, իմ մայրիգ, զիս առին դարին,
Դարին Տեհնի պոլկ, անումս կրեցին,
Օխտնոամ ռուտի մեջ ինձի հայդնեցին.
Շորերս առին, զինվոր տառծուցին,
Հրացանն ինձի գին անվանեցին,
Մեգ ռուս ոստուցչի ինձի հանձնեցին.
Նա շատ խստությամբ, ինձ հետ վարվեց,
Իսկ և այն օրից սիրտս խոցոդեց,
Չի ցավ ստացա, որ մահ բաղձաուց,
Իմ ծնողներից ինձի պաժանց.
Ցավի դիրացա, հիվանդանոց ընգա,
Ջարերուն ֆոդեն ես ոժես զրգվեցա,
Ընգեր գանչելով, ես ձայնով խոզած.
Դասն և հինգ օրվա մեջ ոտքես բըրձա,
Ընգեր գանչելով ես պան չըստացա։
Դարին զիս, դարին, քաղաքեն հանեցին,
Ախալցխային քովը ինձի թաղեցին,
Հայ դերդերներով թաղոսմս արին։
Պարև գեցիք, ախ իմ ձնողներ,
Տուք ողջ մնացեք, սիրոն ընգերներ,
Որ տուք դոմ կնաք, իմ մասին բադմեք,
Նոր Նախիջևան, մայրենի քաղաք.
Տուք մնաք պարով, ես մնամ դարով,
Մայրս, հղբայրս, տուք մխիթարվիք։

51 (196). ԱՆԲԱԽՏ ԳՒՐԻՉ

Անծանոթ չոլեր ընգած,
Գդրիչ մեր անխնդաց,

* Տողը կրկնվում է (Ծ. Կ.)։

Օդար երգիր էշմոդ-չեգոդ,
Միմի՛այն ինձի գասին։

Ինձի առին ազգես, դարին,
Կեղիս վրայէն անցուցին,
Հոքիս չառած, փուճ մարմինըս,
Ինձի քաշխեցին։

Օդար երգիր, օդար քժիշկք
Ինձի նայեցան,
Օդար մարթիք, օդար դղաք
Ինձի թաղեցին։

Ինձի առին մեծ օբային դագը թաղեցին.
Մայրի՛գ գանչելով, ձայնս խըռճեցավ,
Ձայնիս ձայն չեգավ,
Հոգիս դուրս էգավ։

Մնաք պարով, դանջված հայր-մայր,
Իմ քույր և եղբայր,
Ես կնում եմ սառը կերեզմանը,
Էլ չեմ դեանի լուս աշխարհ։

52 (197). ՀԱՍԱՆ ՂԱԼԱ

Կարմիր պըլե՛թ ըղրկե՛ցին,
Ջաբաս տղեք հավաքեցին,
Հորից-մորից բաժանեցին,
1/4 Վերան դառնաս, Հասան խալա։

Հօգոտոսին քոմին զապաս,
Տարան լցրին Գյոմըրին ու Ղարս,
Տներ թորգին աղջիկ ու հարս,
Վերան դառնաս, Մամա խաթուն,
2/9 Յարալու եմ, տարան Բաթում։

Օգոստոսի տասնվեցին,
Ռուսաց թոփեր հարձակվեցին
. . . . . .

3/12 Մենք գնացինք Հասան Ղալա։

. . . . . .

Հասան գալեն ես գնացի,
Կամանդարն էր գերմանացի,
Ամեն սեկրետն էլ իմացի,
4/16 Վերան դառնաս, Հասան գալե։

Գնացի հասա Հասան գալեն,
Սատկեր Անվար փաշի պալեն,
Յարս մնաց թուրքի լալեն,
5/20 Վերան դառնար Հասան Ղալեն։

Հասան խալա շատ գնացել ենք,
Անոթի, ծարավ մնացել ենք,

. . . . . .

6/23 Անտեր դառնաս, Հասան խալա։

Մեր գեներալ Բարաթովը,
Հասանք Հասան Ղալու քովը,
Անթիվ անալոգ տվինք զոհը,
7/27 Վերան դառնաս, Հասան Ղալա։

Հասան Ղալի ճամպեն ո՞ւր է,
Ետևը ջուր, դեմը ատր է,
Մեր կռվելը շատ իզուր է,
8/31 Վերան դառնաս, Հասան Ղալա։

Հասան Ղալեն բանդր սար էր,
Ջորս բոլորը անմայ քար էր,
Կրովողնեվի շատը հայ էր,
9/35) Վերան դառնաս, Հասան Ղալա։

Հասան կալեն բարձր տեղ ա,
Ջուրն էլ հիվանդի դեղ ա,
Հայ պիոնվորի տեղը նեղ ա,
10/39 Հատիր նամակ, վիրավոր եմ։

Հասան գալեն քառ ու քոա,
Գուլոսլեն մեջը կֆոֆոա,
Թևիս յարեն կմոմոա,
11/43 Վերան դառնաս, Հասան Ղալա։

Հասան Ղալի տեխտ քար էր,
Մայրը գինա բալեն սաղ էր,
Հայրիկ չուներ էնտեխ թաղեր,
Վերան դառնաս, Հասան Ղալա,
12/48 Խեղճ հայերուն դարդ ու բալա։

Հասան Ղալի բոլոր մեշա,
Գյոպլեն միչին կխշխշա,
Սրտիս յարեն կտժտժա,
Վերան դառնաս, Հասան Ղալա,
13/53) Խեղճ հայերուն մի ճար արա։

Հասան ղալի տեղը դար ա,
Գիլլեն կառնի, կանա յարա,
Յարալու եմ, չկա չարա,
14/57 Վերան դառնաս, Հասան Ղալա։

Հասան խալեն մի մեծ սար էր,
Ջորս բոլորը ամա այ էր,
Թուրքի վեց թոպեր էնտեղ էր,
Կրակելով մեզ կվառեր,
15/62 Անտեր դառնաս, Հասան Ղալա։

Հասան Ղալի բերդն էր պայխին,
Շուն կորպոսան էր մեզ հետ խայխին,
Ջարդել տվեց բոլոր հայխին,
16/66 Վերան դառնաս, Հասան Ղալա։

Հասան Ղալի տուռը պացխին,
Կամանդուշն էր գերմանացխի,
Մերեր, քուրեր նետան լացխին,
17/70 Վերան ըլներ Հասան Ղալեն։

Հասան Ղալի տուներ կապուտ,
Գյուղեն կիգա քարե կարկուտ,
Բերին ղրին ինչպես թաբուտ,
Վերան դառնա Հասան Ղալեն,
18/75 Խեղճ հայերուն դարդ ու բալեն։

Հասան Ղալեն դարձավ արուն,
Մեզի բերեց մե սև գարուն,
Ասկյարն ու նեմեցն էին զալում,

19/79 Վերան դառնաս, Հասան Ղալա։

Հասան Ղալու ջուրը աղը,
Հացն ու կերակուրը լեղի,
Հազարները մեռան անտեղի,
20/83 Վերան դառնաս, Հասան Ղալա։

Հասան Ղալի ճամփեն օլոր,
Ջինվոր պերին արնակոլոր,
Պերին լցրին բալնիցի տուռ
21/87 Վերան դառնար Հասան Ղալեն։

Քըշեր-ցիրեկ տուռը վառանք,
Հասան Ղալի պեռթը առանք,
Կեսից ավել թամուզ վառանք,
22/91 Անտեր մնար Հասան Ղալեն։

Հասան Ղալեն շատ ժժար էր,
23/93 Էնվեր փաշի սիրտը քար էր։

. . . . . .
. . . . . .
Երբ որ հասանք Թուրքի հողը,
Ջաններս ընկավ մահվան դողը,
Շատերին դրեցինք հողը,
24/97 Վերան դառնաս, Հասան Ղալա։

Աստվածածին մեզ պաշտպան էր,
Թուրքը եկավ հեսիր տաներ,
Գիտենք, որ մեզ կը սպաներ,
25/101 Վերան դառնաս, Հասան Ղալա։

Ճեպեն էկավ, հէտիր տարավ,
26/103 Վերան դառնաս, Հասան Ղալա։

Անդոանիկը գոչեց՝ ուռա,
Դառցավ ասեց. սալդաթին ո՞ւր ա,
Փաշեն ասեց. կավկազն իմն ա,
Վերան դառնաս, Հասան Ղալա,
27/108 Խեղճ հայերուն դարդ ու բայա։

Քյոփրքյոյի տակը դուզ ա,
Օսմանցին կայնե, կռիվ կուզա,

Ամբողջ Կավկազն առնել կուզա,
28/112 Ավեր մնաս, Հասան Ղալա։

Մըժընկերտու տեղ տուզ էր,
Միլազոսմ ասքյար կուզեր,
Կտկծում պեխեր կխուզեր,
29/116 Անտեր դառնաս, Հասան Ղալա։

Հայոց զորքը լցվավ Զիվին,
Խաբար տվեք Թուրքի գյուղին,
Զարդեց անցավ քանիմ գյուղեն,
30/120 Վերան դառնաս, Հասան Ղալա։

Զվինոսմը շատ բոյ եղավ,
Շատերի մարմինը փտավ,
31/123 Շատն էլ յոտ օսկի գտավ։
. . . . . .

Թուրքն էկավ Դավա բոյին,
Ըռուսն եղավ օյին-օյին,
Թվանքն էր սալդըթի բոյին,
32/127 Կյանքիս վայխտ, Հասան Ղալա։

Թուրքը եկավ Օլթին առավ,
Կրակն ընկավ ջանս վառավ,
Էտ ինչ զուլում սիթամ տառավ,
33/131 Քյամբախտ տառներ Հատան Ղալեն։

Թուրքը էկավ հազար տաճոտթ,
Գյուլլեն էկավ ինչպես կարկուտ։
Թուրքի թոփն էր վացուն վեց փութ,
34/135 Անտեր մնար Հատան Ղալեն։

Այլոպլան վերը պաներ,
Պուլեմոտը գյուլլեն մաղեր,
Շըրապնելը մեզ կվառեր,
35/139 Անտեր մնար Հասան Ղալեն։

Դիրքը մտած ժամանակս
Լալով գրեցի նամակս,
Կարթացեք, առեք փափագըս,
36/143 Վերան դառնաս, Հասան Ղալա։

Դիրքը մտանք դիրքը խոր էր,

Վիրավորվա, վերքս նոր էր,
Հաքինա սալդաթի շոր էր.
37/147 Վերան դառնաս, Հատան Ղալա։

Դիրքը մտա, տեղս թաց էր,
Քամին զարկեց, վրես բաց էր,
Խշտիկ զարկող անատաված էր,
38/151 Յանա-յանա, դիլխոր բան ա։

Արևն ելավ յանա-յանա,
Դոխտուր բերեք գյուլլես հանա.
Գյուլլի յարեն չի լավանա,
39/155 Մայրիկ չկա վույ-վույ անա։

Դիակս տարեք, հայ ընկերներ,
Քաշքշում են շուն տաճիկներ,
Գոնյե իմ աստղ խավարեր,
40/159 Ընձի շուտ հասցրեք իմ մորս։

Նամակ գրեմ կողակցին,
Որ լավ պահես շամամ ծոցին,
Ես էլ կգամ ամսի վեցին,
Եթե չեկա ամսի վեցին,
41/164 Կքաժանես դուռ-դրկցին։

Իրեք հարիր հոքինկներով
Ջինավաժ էին մոտիներով,
Մեչն ջարդին արաբներով,
42/168 Խեղճ Խեչոն եմ վայ կանչելով։

Ես Խեչոն եմ նախչըվանցի,
Յավերա ..... պատմեցի,
Կամադուշիկը գերմանացի,
43/172 Խեղճ Խեչոյին ըսպանեցին։

Ես Ապարն եմ արմըտլեցի,
Էս սև խաղը ես կապեցի,
Էդ հողն ու ջուրը անիծեցի,
44/176 Վերան դառնաս, Հատան ղալա։

Ջի մոռացվի էս կռիվը,
Պահասում է հայոց թիվը,

Այդպես է ճակատագիրը,
45/180 Վերան դառնաս, Հասան Ղալա։

53 (198). ԻԳԴԻՐՈՒ ՍԱՐԵՐԸ ԴՈՒԽՄԱՆ Է

Փոցխս ծիրանի կոթ է,
Իգդիրու սարերը դոմման է,
Սիրտս յարալու խոց է,
Սալդատը էլել ա Գեատռակը,
Սիրտս սրտոամդ պիտի,
Սալդատը էլել ա Ալաճեն.
Գիտենաս սավդեն ո՞նց է,
Նայ, նայ, նայ, նայ, նայ, նայ, նայ, նայ*,
Հավը թռավ թառն էլավ,
Մեր բանը դավոլն էլավ,
Սաքաբի որդին մեռնի։
Դուշմանի արտոլն էլավ։
Ա՛յ տղա բաղի մէջին,
Ոտներդ շաղի մէջին,
Կանչի՛, կանչելուդ մեռնեմ,
Ես եմ քո հաղի մէջին։
Վարդ քցի՛, ձևռնով բռնեմ,
Յարալու արտիդ մեռնեմ,
Քյոլկիցը մի դուրս արի՛,
Բալքի հավասըս առնեմ։
Սաղ տարին ծոմ ու պաս եմ,
Քեզ համար ոսկե թաս եմ,
Սրտիս մէջի դարտերը,
Ծառզարդարին քեզ կասեմ։
Աչքս քցել եմ սարին,
Ոտքս դիպավ լեռ քարին,
Էրթա ու էլ ետ չգա,
Քեզ սալդատ գրած տարին։

54 (199). «ՓՆՃԻԼԻԿ ՏՂԱ, ՅԱԽԵՐ ՄՈՄԵՄ»

Փնճիլիկ տղա, յախեր մոմեմ,
Սալդատ կերթաս՝ աշխըրքով էն։

---

* Բոլոր տները այս տան նման երգել (Ծ. Բ.)։

Լիզոսդ դիր բերանըս ծամեմ.
Սիրտս հիմի ելման ծով է։
Փնճիլիկ տղա, մոտըս մնա,
Ես չեմ ուզե սալդատ գնաս.
Ճիտը կոտրեր թագավորի,
Որ չհասնեինք էսման օրի։
Կռիվ եղավ մեր սև բախտեն,
Փնճիլիկ տղա յախեդ մոմեմ,
Երնեկ Նիկոլն ընկներ թախտեն,
Սալդատ կերթաս՝ աշխըրքով է։
Ինչքան մուրազ մնաց թերի,
Փնճիլիկ տղա յախեդ մոմեմ,
Շատերի յարն ընկավ գերի,
Սալդատ կերթաս՝ աշխըրքով է։
Քեզ կըտապասեմ օխտը տարի,
Փնճիլիկ տղա յախեդ մոմեմ,
Ինչքան կարաս դու թեզ արի,
Սալդատ կերթաս՝ աշխըրքով է։
Ուրտի՞ց էս սև կռիվն էկավ,
Փնճիլիկ տղա յախեդ մոմեմ,
Էկավ ու մեր գեղը մտավ,
Սալդատ կերթաս՝ աշխըրքով է։

55 (200). ՍԱԼԴԱԹԻ ԵՐԿ

—Քույրիկ ջան, սալդատ եմ քինըմ.
—Սալդատ մի քինա, սալդատ ախպեր ջան,
Սալդատ ախպեր ջան,
Դարդոտ ախպեր ջան,
Սալդատ մի քինա,
Սալդատ ախպեր ջան։
Մաշինի ճամփեն
Երկար ու պարակ,
Երկար ու կոլոր
Պեխերտ ոլոր։

56 (201). ԳՆԱ, ՅԱՐՈ ՋԱՆ

Գնա յարո ջան, գնա
Գնա սալդատ, մի մնա։

Մեր սարերու արոտից,
Ազիզ յարխա կարոտից,
Սիրտս հալու մաշ դառավ՝
Բաժնըվում եմ իմ յարից։
Սալդատ եղնել լավ բան չի,
Իմ յարը ազիզ մանչ է։
Թազա ընկեր թե ճարես՝
Ընկերոջդ լավ ճանչե։
Յարիս խլե, կտանին,
Վիշտ կոտրի գլավիս,
Էսօր սալդատ կտանիք
Հեչ կտազե՞ էս տղին։

57 (202). ՅԱՐ ԱՄԱՆ

Յար ամանե, գյուլ ամանե,
Գյուլերս թազացել ա,
Յարոյիս տանում են,
Գարդերս շատացել ա։
Սալդաթ տղին տուն չունի,
Յար ամանե, գյուլ ամանե,
Գյուլերս թազացել ա։
Մի տեղ հալալ քոսն չունի,
Յարոյիս տանում են,
Գարդերս շատացել ա։

58 (203). ՏԱՆՈՒՄ ԵՆ

Տանում են, ադե ջա՛ն,
Տանում են,
Տանում են, վաթանից
Հանում են։
Ամա՛ն, տարան իմ յարին,
Տանում են, ադե ջա՛ն,
Տանում են,
Տարան իմ մեկուճարին,
Տանում են,
Վաթանից հանում են։

59 (204). ԱՄԱՆ ՄԱՐՕ

Մեր բաղի դուռը բաց ա, Մարո՛,
Մարոն մէջին քնած ա, յարո՛,
Քնած չի, քրտնած ա, Մարո՛,
Վարդն էրեսին փռած ա, յարո՛։
Յամ՛ան Մարո, Մարոյին, Մարո՛,
Սալդաթ տարան յարոյին, Մարո՛,
Ջեր դաշտի դուռը բաց ա, Մարո՛,
Սպիտակ սուփրեն փռած ա, յարո՛,
Յարս կողքին քնած ա, Մարո՛,
Վարդաջրով լցված ա, յարո՛։
Յամ՛ան Մարո, Մարոյին, Մարո՛,
Սալդաթ տարան յարոյին, Մարո՛։

60 (205). Ա3 ԼՕԹԻ ՄԱՐԱՆ

Ա՛յ լոթի Մարան,
Ա՛յ լոթի Մարան,
Սալդաթ են տանում
Յարոյիս, տարա՛ն։
Ուշի ուշ անեմ,
Թաղան ղուշ անեմ,
Իմ ախպոր բալին,
Կանվա դոշ անեմ։
Ա՛յ լոթի Մարան...
Մաշինեն էկավ,
Տասներկու վագոն,
Յարոյիս տարավ,
Սալդաթ դրակոն։
Ա՛յ լոթի Մարան...
Մաշինեն էկավ,
Վազելեն գնաց,
Յարիս այլուխը
Իմ մոտը մնաց։
Ա՛յ լոթի Մարան,
Ա՛յ լոթի Մարան,
Սալդաթ են տանում
Յարոյիս, տարա՛ն։

61 (206). «ԵՍ ՈՒ ՅԱՐՔՍ ՉԱՀԵԼ ԵՆՔ»

Ես ու յարքս չահել ենք,
Յար չան մալուվ մի մնա.
Պայմանն էրէ, պահել ենք,
Յար չան, տալդատ մի գնա։
Ջընգբլիկ օրոճ եմ շարե,
Քյաղըթքեզով եմ կարե,
Մեշի միջի պաղ աղբյուր,
Ջամեատլիկ օրոճ եմ շարե,
Տղա՝ արի տար քո քուր,
Քյաղըթքեզով եմ կարե։

69 (207). ՄԱՂՆ ԱՌԱ

Մաղնի առա գացի ցանկի,
Ջիբերցս խնձոր հանի.
Տեսա յարս ընդի չէր,
Ընդի մի հոգոց հանի։
Վո՜ւյ, վո՜ւյ, տարան իմ յարը,
Սալդաթ տարան իմ յարը,
Բա ո՞նց կլնի իմ ճարը։

63 (208). «ՋԱՊԱՍ ԹՈՓ ԷՐԻՆ, ՋԸՒՉԻ, ԷԼԼՈՒՅԱՐ»

Ջապաս թոփ էրին, Ջըռչի, էլլույար,
Թագավոր թախտըդ շռչի, թելլու յար...
Յարիս կըռիվ են տարե, էլլու յար,
Սիրտըս խոփով են վարե, թելլու յար։
Էլլու, էլլու, էլլու յար, էլլու յար,
Թելլու, թելլու, թելլու յար, թելլու յար։

64 (209). «ՍԱՐԵՆ ՎԱՉՈՂ ԱՌՎԻ ՋՐԵՐ»

Սարեն վազող առվի ջրեր,
Բարև տարեք իմ յարին։
Յարիս նոր են տալդատ տարե,
Ե՞ք կըթըմամի հինգ տարին։
Պար կը խաղայինք իրար հետ,

Երնեկ հերու, յարըս հոս էր,
Սիրտս հիմի ան ակոս է,
Սրտիս զարկին հազար նեխտ։

65 (210). ԱԼ ՄԱՐԻՆԵՍ

Ալ մարինես ծալ մնաց,
Սիրելիս տալդաթ գնաց։
Ծառ տնկեցի բար չունեմ,
Ալ մարինես ծալ մնաց,
Է՛լ դարդիման յար չունեմ,
Սիրելիս տալդաթ գնաց։
Էրնեկ նրանց՝ դարդ չունի,
Ալ մարինես ծալ մնաց,
Զարիք երկիր յար չունի,
Սիրելիս տալդաթ գնաց։

66 (211). ԻԿԴԻՐՈՒ ՍԱՐԵՐԸ

Իկդիրու սարերը վայնա էր,
Հերանցս օթախը թոյնա էր,
Նստած տեղս քար չունեմ,
Իկդիրի սարերը վայնա էր։
Բաղ ունեմ ու բար չունեմ,
Հերանցս օթախը թոյնա էր։
Դարդն էկել ա տարել ա,
Իկդիրու սարերը վայնա էր,
Ո՞նց ա դու խաբար չունես,
Հերանցս օթախը թոյնա էր։

67 (212). ԲԱՐԱԿ ԲԱԺ

Հերկեցի, հերկած մնաց,
Բարակ բաժ, հայ բարակ բաժ,
Սիրեցի բանակ գնաց,
Բարակ բաժ, հայ բարակ բաժ։
Գնացիր ու մնացիր,
Բարակ բաժ, հայ բարակ բաժ,

Իմ մասին չըմտածեցիր,
Բարակ բաժ, հաչ բարակ բաժ։

68 (213). ՆԻԿՈԼԻ ՔԱՐԻՆ

Նստեմ Նիկոլի քարին.
Նստեմ Նիկոլի քարին,
Ապելացի անեմ,
Նիկոլի ազիզ բալին։
Էդ էլ իր քոռ բախտեն,
Նիկոլն ընկավ թախտեն,
Ջուխտ աչքերով քոռացավ,
Սալդաթին մոռացավ։

69 (214). «ԷՍ ՏԱՐՎԱ ԱՐՏԵՐԸ ԴԱՐՁԵԼ ԵՆ ԽՍԻԼ»

Էս տարվա արտերը դարձել են խսիլ,
Թաժա յարմ էլի բռնե ընկել է եսիր,
Վերևեն անցնիկը այրոպլանը,
Ատված թող ավիրե գերմանու բանը.
Սև խաղեր կանչեք, ջահել աղջկներ։
Յարիս տարել են գերմանու հողը,
Որդով չխնդա կռիվ էնողը.
Աշխարը լցվավ արցունք ու արուն,
Մեր գլխուն էկավ լացով ավ գարոնը,
Սև խաղեր ըսեք, անբախտ աղջկներ։
Գեղը չմնաց ահել ու ջահել,
Ջեա կարա էլ մեր հանդերին նայե,
Սարերը դարտակ, արտերը խոպան,
Սալդատ են տարե մաճկալ ու չոպան.
Սև խաղեր ըսենք, տարի աղջկներ։
Երբ ծաղիկի էրթանք Քարգոխ սարը,
Էլ մեր ետևեն չի գա մեր յարը,
Հեռու աշխարք են իմ յարին տարե,
Մեր բախտը սև է, մեր վախտը չար է,
Սև խաղեր կանչենք, սև բախտ աղջկներ։

70 (215). «ԱՆՏԵՐ ՄՆԱՐ ԿՈՎԻ ՏԱՐԻՆ»

Անտեր մնար կովի տարին, սև տարին։
Սալդատ էրին, կռիվ տարան իմ յարին։

Սիրտս հիմի խարաբա է, ավեր է,
Ջոկին տարան ջահելները, լավերը։
Անտեր դարձան մեր հանդերը, տարերը.
Էրնեկ թե միշտ խավար մնար արևը։
Էլ ո՞ւմ է պետք Համբարձում ու Վարդևոր.
Ծաղիկներն են արտակոտոր, սևավոր։
Ա՜խ աղջիկներ, կանչեք կարոտի խաղեր,
Էս կռիվը մեր սրտերը մոխիր լցրեց ու դադեց։

71 (216). ԳՅՈՒԼԻ ՋԱՆ

Գյուլի ջան,
Ցայտոնի ակները,
Սալդաթ տարան,
Իմ աղիզ ախպերը։
Գյուլի ջան,
Կարմիր կովը գոմին,
Մերդ քոռնար,
Ո՞նց ես ուտում սոմին։
Գյուլի ջան,
Մանուշակը քոլին,
Մերդ քոռնար,
Ո՞նց ես քնում չոլին։

72 (217). «ԱԽՊՈՐՍ ԺՐԵՔԸ ԵԼԱՎ ՎԱՏ»

Ախպորս ժրեքը* ելավ վատ,
Ախպորս տարան սալդատ,
Ես մենակ բիտի էրթամ արտը,
Սարի չափ ծանդր է դարդըս։

Ախպերը անգին է, անուշ է,
Դրախտի հազարան ղուշ է,
Ախպեր կորցնողի օրը սև է,
Դարտը սրտի մեջ փուշ է։

Ձերմակ ամպի թևին դրեմ մեկ նամակ,
Գրեմ մեկ նամակ՝ Հակոբիս համար.

---

* «Ժրեքը» բառից հետո փակագծերում՝ վիճակը (Ծ. Կ.)։

Նամակի մեջ դնեմ համբույր ու կարոտ,
Ախպորս հասնի, տուն դառնա բարով։

73 (218). «ՍԱԼԴԱՏ ԱԽՊՈՐՍ ՆԱՄԱԿԸ»

Սալդատ ախպորս նամակը,
Կարդամ իմանամ քաղաքը.
Ախ ե՞րբ գուկա իրենց վադեն
Սալդատները Բաաեն շատ են։

Մորս աչքը խավրեց լալեն,
Սալդատ ախպորս նամակը,
Հեչ լուր չկա որդու գալեն,
Կարդամ իմանամ քաղաքը։

Ով որ եղավ կռվի սաբաբ,
Սալդատ ախպորս նամակը,
Միտը էրվի դառնա քյաբաբ.
Կարդամ իմանամ քաղաքը։

Տիրամեր, դու խղճա մորս,
Սալդատ ախպորս նամակը,
Ուրախ էրա մեր ամ օրը,
Կարդամ իմանամ քաղաքը։

Մեր հանդեպը դարձան դարտակ,
Սալդատ ախպորս նամակը,
Ոնչ հոտաղ կա, ոնչ էլ մաճկալ
Կարդամ իմանամ քաղաքը։

74 (219). ՔՈՒՅՐ

Ալագյազը շատ բարձր է,
Սալդաթ աղբերս քաղցր է,
Սալդաթ աղբերս գրե նամակ,
Զարչարվում է նա անքանակ։
Սալդաթ աղբերս հեռու տեղ է,
Դրուժյումնա սաստիկ նեղ է,
Անիծում եմ թաքավորին,
Քույրը կարոտ է եղբայրին։
Աղբորս ժարտավ պրիստավը,
Կոտրվել է տրտխա նավը,

Թաքավորի տունն ավիրե,
Քար չմնա վըր իր քարին։
Ծղբայրս լալով գնաց,
Աչքս ճամբին երկար մնաց,
Երբ պիտի գաս, իմ աղբեր ջան,
Մեզի չկա տեր ու պաշտպան։

75 (220). ԻՆՉ ԿԼԻՆԵՐ

Ի՞նչ կլիներ,
Նիկոլը սատկեր,
Ի՞նչ կլիներ,
Յարս գար տուն,
Դինչ կըլիներ։
Սարերի լալեն,
Սարերի լալեն,
Կրակն ընկներ բալքի,
Նիկոլի բալեն։
Սարերի ձունը,
Սարերի ձունը,
Ատաված քանդեր,
Նիկոլի տունը։
Կաքավը ձորին,
Կաքավը ձորին,
Նիկոլի էրեսից
Հասանք էս օրին։
Ա՜խ, մեր գեշ բախտը,
Ա՜խ, մեր սև բախտը,
Տակեն վեր շրջվեր,
Նիկոլի թախտը։
Նիկոլը սատկեր
Ի՞նչ կլիներ,
Յարս գար տուն,
Դինչ կլներ։

76 (221). ԲԱԼԻ-ԲԱԼԻ ԲԱԼԴԻՐ ՅԱՐԻՑ

Կյանքիդ, արևիդ մատաղ,
Բալի, ղալի-բաղըր յարո[1],

[1] * Կրկնել յուրաքանչյուր 2 տողից հետո (Ծ. Բ.)։

Կանանչ տերևիդ մատաղ,
Նամակով հիշել էիր,
Ղրկած բարևիդ մատաղ։
Կողքս քամին բոլորավ,
Յարիս բեխերն ոլորավ,
Յարիս պրեցին տալդատ,
Սիրտս փորս մոլորավ։
Ա՛յ տղա, արի գնա՛,
Շապիկդ տուր ու գնա՛,
Լվամ, լվամ չիտրկվի,
Վարդաջրեմ կիմտրկվի։
Դու նստել ես պերանիդ,
Ղառղու շվին բերանիդ,
Ոսկե ղայթան եմ գործել,
Կարեմ ջիբիդ բերանիդ։

77 (222). «ԿԱՔԱՎԸ ՔԱՐԻՆ, ԿԱՆՉՈՒՄ Է ՅԱՐԻՆ»

Կաքավը քարին, կանչում է յարին, օյ, օյ,
Իմ փինջած վարդը տվեք հովերին,
Տանին իմ յարին, օյ, օյ։
Յարըս տալդատ է, աստված ինդատ է, օյ, օյ,
Իմ վառված սիրտը դնեմ ամպերուն
Տանին իմ յարին, օյ, օյ։

78 223). «ՀԻՐԳՈՒՆ ՄՈՒԹՆ ՀԸՆԳՆՈՒՄ Ա, ՎԱՌՈՒՄ ԵՆ ԼԱՄՓԵՆ»

Հիրգուն մութին հընգնում ա, վառում են լամփեն,
Ադեյ հըշկ մնում ա տղերքի ճամփեն,
Սարերը դոմման, մերիկ ջան, առոգուվ ա գերման,
Լեռները դոմման, մերիկ ջան, տղերքը կորան։
Դարերը դոմման, ադե ջան, մացինք բեզյոմման։

79 (224). ԱՄԱՆ ՅԱՐ

Ամա՛ն յար, տարումն արի,
Անուշ յար, դարումն արի,
Ամպերը շարան-շարան,

Ամա՜ն յար, սարովն արի,
Իմ յարը սալդաթ տարան,
Անուշ յար դարովն արի։

80 (225). ԻՄ ՍԻՐԱԾԸ ՍԱԼԴԱԹ ԷՐ

Ես սիրեցի, իմ սիրածը սալդաթ էր,
Հավայ լուսի, վագզալի դուռ կանգնած էր.
Ես սիրեցի, իմ սիրածը սալդաթ էր,
Հավայ լուսի, վագզալի դուռ կանգնած էր։
Կանաչ արտը հաց տարա,
Ես սիրեցի, իմ սիրածը սալդաթ էր,
Ծղբորս տեսա, ետ դարա,
Ես սիրեցի, իմ սիրածը սալդաթ էր։

81 (226). «ԼՈՒՍՆԱԿ ԼՈՒՍ ՏՈՒԻ, ՆՈՐ ԳՆԱ»

Լուսնակ լուս տուր, նոր գնա,
Յարիս հուս տուր, նոր գնա,
Յարըս ղարիբ երկիր է,
Յարիս քովը շատ մնա.
Լուսնակ լուս տուր, նոր գնա։

Աշխարքը քու աշքիդ տակ,
Յարիս դու աշե շիտակ,
Յարին կռիվ են տարե,
Ախ յարս մեկուճար է,
Լուսնակ լուս տուր, նոր գնա։

Էրնեկ քու պաղ աչներուն,
Որ կռեսնեն շատերուն,
Էսօր թըմամավ մե տարին,
Որ տարել են իմ յարին,
Լուսնակ լուս տուր, նոր գնա։

Անցան ծնոնդ ու զատիկ,
Նամակ էկել ես շատից,
Յարս նամակ չի գրէ,
Հույս դնեմ ո՞ւմ վրեն,
Լուսնակ հույս տուր, նոր գնա։

82 (227). «ԱՄԱՆ ԿՈՒՆԿ ԵՐԿՈՒ ԲԱԼԻԴ ԱՐԵՎԸ»

Աման կունկ երկու բալիդ արևը,
Յարըս մնաց Արզրոամի սարերը.
Յարիս եսիր են տարե,*
Աման կունկ երկու բալիդ արևը։
Միրտս դաղով են վառե,
Յայրս մնաց Սարղամիշի սարերը,
Մուրադ գեսի չայիրներն ոս գոլերը,
Աման կունկ... էկան իմ սև օրերը,
Յարս մնաց երզնկայի չոլերը։

83 (228). «ԷԼԼԻՆՔ ՍԱՐԸ, ԲՌՆԵՆՔ ԲՈԼՈՐԻԿ ՊԱՐԸ»

Էլլինք սարը, բռնենք բոլորիկ պարը,
Սարևր ետ գնացեք, տեսանեմ իմ յարը։
Յարիս հեռու են տարե,
Էլլինք սարը, բռնինք բոլորիկ պարը,
Տարե, սալդատ են էրե,
Սարևր ետ գնացեք, տեսնեմ իմ յարը։

84 (229). ՎԱԳՈՆԻՆ

Վագոն մի բանիր,
Վագոն մի բանի,
Վագո՛ն, բախտդ ընկնեմ,
Յարիս մի տանի։
Վագո՛ն, մի ժաժա,
Վագո՛ն, մի ժաժա,
Վագո՛ն, բախտդ ընկնեմ,
Յարս էր թաժա։
Վագո՛ն, մի թնդա,
Վագո՛ն, մի թնդա,
Վագո՛ն, բախտդ ընկնեմ,
Թող յարս խնդա։
Սալդաթ մի գնա,
Սալդաթ մի գնա,
Ժամա՛ն, յար ջան,
Յարդ կմնա...

---

* Դևրի (Ծ. Բ.)։

85 (230). «ՍԻՐԵՑԻ ՅԱՐՍ ՏԱՐԱՆ»

Սիրեցի յարս տարան,
Սալդաթ եմ ղրկվել իմ ջիվան յարին,
Յարս տվին ու տարան,
Երկար կսպասեմ իմ ջահել յարին,
Էլի գարուն է բացվել,
Սալդաթ եմ ղրկել իմ ջիվան յարին,
Կարոտ աչքս է թացվել,
Երկար կսպասեմ իմ ջահել յարին:

1 (231). «ՊՈԻԵՄՈՆՆԵՐ ԿՐԱԿԵՑԻՆ ԲՐԱՆԵՎԻԿԻՑ»

Պուլեմոտնները կրակեցին բրանեվիկից,
Թուփ ու զալբի ձենը էկավ վակզալի դեխից։
Բալշևիկներ դեպոն առան, կռիվն սկսեց,
Դաշնակ տեսավ բանը զուր է, թողեց ու ճղեց։
Քյոմագն էկավ Դուդքյանդիցը կազաչի պոստը,
Ջեռներն ընկած դաշնակների քերեցին փոստը։
Զորքը քաշին պալիգոնից վակզալի կողմը,
Եկողն առավ զենքը, ամեցավ բալշևիկի կողմը։
Բայինդուրա դուզը բռնեց փախնող դաշնակը,
Բրանևիկը շոտով հատավ, թափեց, կրակը։
Սմբաթն ասավ. խաբար տարեք մերոնց Երևան,
Զորք ուղարկեն, բալքի անենք մենք էտոնց դիվան։

2 (232). «ԱՂՍՏԱՖԱՅԻՑ ԲԵՐԵՑԻՆ ԼՈՒՐԸ»

Աղստաֆայից բերեցին լուրը,
Սեպուհը ասաց՝ մեր պանը զուր է,
Արամը կանչեց Մուրադը ո՞ւր է,
Փախիր, ա՛յ տաշնակ, պանակը էկավ,
Քո վիզդ կտրող պանակը էկավ։

Ուզունթալայից բարձեցին ավտոն,
Պետը մոռացավ հաքնել յուր պալտոն,
Շուտ արա„ ասավ ձին քաշիր Անտոն,
Փախիր, ա՛յ տաշնակ, կարմիրներ էկան
Փախի՛ր, հեռացիր, երկրի տերն էկավ։

Արարատուվին տվին տրպեժը,
Ինչ պետք ա անի էն սարսաղ գիժը,
Մինիստրների խառնվեց գաժը,
Փախիր, ա՛յ տաշնակ, բալշևիկն էկավ,
Մյատնիկյանը մենակ ինքն էկավ։

Խատխուվ աղան հատավ մինչ Բաթում,
Շալակած ոսկին, մեկ էլ իր խաթուն,
Պարախոդ տվեք ատոծու խաթրին,
Փախիր, ա՛յ տաշնակ, բալշևիկն էկավ,
Բալշևիկն էկավ, քոմագով էկավ։

3 (233). «ՉԱԽՄԱԽՎԻՑ ԱՆՑԱՎ ՉՈՐՔԸ»

Չախմախվից[1] անցավ զորքը,
Չնչվեց տաշնակի քյոքը,
Անցավ, մտավ կեռնի խորքը,
Կարմիր պանակ, պարով էկար։
Չաղացի մոտ բռնին դիրքը,
Կամանդիրն էր մեծը ինքը,
Մեզի փրկեց ծևր սուրբ զենքը,
Կարմիր պանակ, պարով էկար։
Չարխեջից էկավ քյոմագը,
Անցան մեր զորքի քամակը,
Տաշնակ փախավ մտավ ծակը,
Կարմիր պանակ, պարով էկար։
Իջևանին հանին դրոշը,
Եկավ մեծավորի խոշը,
Տաշնակներին պանը բոշ ա,
Կարմիր պանակ, պարով էկար։
Խաբար գնաց Դիլիջանը,
Սաղ մընա բալշևիկի ջանը,
Կորավ Սեպուհի խոնջանը,
Կարմիր պանակ, պարով էկար։

4 (234). «ՊԼԻՄՈՏՆԵՐ ԿԱՊԻՆ ՔՅԱՎԱՌԱ ՎՐԵՆ»

Պլիմոտներ կապին քյավառա վրեն,
Սուսան յար ջան, քյավառա վրեն,
Ձին քաշա տալտեն, անուշ յար ջան,
Գյուլուլի դարդեն։
Բալշևիկներն էկան ելենովկա յանեն,
Սուսան յար ջան, ելենովկա յանեն,
Էման քո յարն եմ, անուշ յար ջան,
Ետ դառնամ կառնեմ։

Թուփերը զանեցին Քյավառա քուից,
Սուսան յար ջան, Քյավառա քուից,
Նժդեհ ասավ Լազգուն.—Ո՞ր յանով փախնենք,
Սուսան յար ջան, որ յանով փախնենք։
Լազգի Հայկոն ասավ.—Պարոն, Գեղուկով փախնենք,
Սուսան յար ջան, Գեղուկով փախնենք,
Էլման քո յարն եմ, Սուսան յար ջան.
Ապղ մնամ կառնեմ։

5 (235). «ԽԱՏԻՍՅԱՆԸ ԱՇԽԱՐՀ ՉԱՓԵՑ»

Խատիսյանը աշխարհ չափեց,
Մեր հողը ծախեց,
Միամիտնևրի աչքը կապեց,
Իբրև ազատեց՞։
Դե՛հ ձեն տվեք, Գյումրի, Ղազախ
Ընկեր Լենինին,
Քարը քարի վրա չթողնենք դաշնակին։
Գյումրին կանգնել ու ձեն տվել.
Քյավառ ոտքի ել,
Դաշնակներին երկրից քշել,
Հողը ազատել։
Դե՛հ ձեն տվեք, Գյումրի, Ղազախ,
Ընկեր Լենինին,
Քարը քարի վրա չթողնենք դաշնակին։

6 (236). «ԵՐԵՎԱՆԻՑ ՎԱԶԵՎԱԶ»

Երևանից վազեվազ,
Ջան, գյուլում ջան, ջան,
Խատիսյանը քյանդիրքաղ,
Ջան, ծաղիկ, ջան, ջան։
Ջահել աղջիկ, սիրուն հարս,
Ջան-գյուլում ջան, ջան,
Սրբազանի միտքը թարս,
Ջան, ծաղիկ ջան, ջան։
Հե՛յ ջան տղերք, իմացեք,

---

* Ձեռագրատանը տան վերջին երկտողը կրկնվում է (Ս. Բ.)։

Ջան գյուղում, ջան,
Թուրքն է գալիս, դիմացեք,
Ջան, ծաղիկ, ջան, ջան։
Արփաչայը անցկացավ,
Ջան գյուղում ջան, ջան,
Սարդարաբադում ջարդվեցավ,
Ջան, ծաղիկ ջան, ջան։
Խատիայանը դուրս թռավ,
Ջան, գյուղում ջան, ջան,
Բոլշևիկը տիրացավ,
Ջան, ծաղիկ, ջան, ջան։

7 (237). ԼԵՆԻՆՆ ԷԿԱՎ

Լենինն էկավ,
Ջոռով զորքով,
Մեզի ազատեց,
Հողը զորքի
Ձեռքից խլեց,
Գեղացուն տվեց։
Խեղճ գեղացի,
Ուրախացի,
Էլ զորքա չկա,
Նրա տեղը
Թև թիկունք
Մեծ Լենինը կա։
Դե, վեր կացեք,
Ախպեր-տղերք,
Ջարկենք դաշնակին,
Ու ձեռ զարկենք
Մեզ ազատող
Կարմիր Բանակին։
Հե՛յ, վեր կացեք,
Գովաբանենք
Կարմիր Բանակը,
Հաստատ մնա,
Լենինին բերած
Մեծ հաղթանակը։

8 (238). ԼԵՆԻՆՆ ԻՐ ՁՈՐՔՈՎ

Լենինն իր զորքով
Իրա ծով խելքով,
Խեղճ ու նաչարին,
Բևհալ առճարին,
Ժողվեց իրար քով։
Բանվոր-գեղացին
Տեր դարձավ հիմի,
Իր ունեցածին
Ու հալալ հացին։
Ո՞վ էր տեսել
Էսպես հրաշք՝
Որ մշակ, նոքար
Իրավունքով տիրեր
Աշխարք,
Էլներ ղեկավար։
Լենինն ասեց.
— Ե՛լ, դուք տոված,
Բանվոր-գեղացի,
Ձենքերդ առ,
Գնա առաջ,
Կորած համացիր։
Հին աշխարքին,
Ձառքով տվեք,
Ցիր ու ցան անենք,
Ժողովրդի անցած վերքին
Նոր դարման անենք։

9 (239). ԸՌՈՒԲԵԻ ԵՐԳԸ

Անուններս ըՌուբե, կռվի սիրահար,
Հասիր Գուրե ջանն, պանակիս լուր տար.
Ոսիատել եմ օգտվել իմ տասակարքիս,
Ձը խըմնայելով իմ կյանք ու հոգիս։
Մզնիֆ ընգերներ, կրե՛ք հայրենիս,
Որ չսպասեր ըՌուբե որթյակին.
Հայաստանում ինքս ծնվեցա,
Ղարաբաղումը որթիկրվեցա։

Կարմիր պանակին անձրև ծառայեց,
Իմ տասակարքը ինձի պահանջեց.
Որի համար և ազնիվ կռվեցա,
Ու դիրքիս վրա նահատակվեցա։

10 (240). ԱՌԱՋ ՏՂԵՐՔ.....

Առաջ տղերք, մի վհատվեք,
Նետվենք անվախ դեպի կռիվ,
Մայր հողերը ևկ ազատենք,
Փրկենք մեր կյանքն ու պատիվ։
Ելիր բանվոր ու գյուղացի,
Նոր արշալույս է ծագել,
Կարմիր բանակ առաջ դիմիր,
Ազատությունն է մեզ բերել։
Ցնծա հավետ մուրճ ու մանգաղ,
Հերոսները հաղթական,
Բուրժույ ցարին դրին դագաղ,
Կեցցե՛, կեցցե՛ կոմունան։

11 (241). ԱԹԱՐԲԵԿՅԱՆ

Աթարբեկովն եկավ զենքերը կարմիր,
Հրամանատար դաշնակ, զենքերդ վայր դիր։
Շուտով մեր բանակը կանցնի Սասուն,
Հրամանատար դաշնակ, զենքերդ վայր դիր։
Կողկերիդ կշարեմ քսան գնդացիր,
Հրամանատար դաշնակ, զենքերդ վայր դիր։

12 (242). ԴԵ ՅԱՐ–ՅԱՐ

Ըստուլի վըրի պոռդրին,
Դե յար-յար, դե յար*,
Կեցցե մարշալ Բուդյոննիին,
Հերն անուշ է, մերն անոշ է,
Դե քելա, դե ցոլա
Ծրդան յար**։

---

* Կրկնվում է (Ծ. Բ.)։

** Կրկնվում է (Ծ. Բ.)։

13 (243). ԸՆԿԵՐ ՎՈՐՈՇԻԼՈ

Զորապետաց կլխավորն ա,
Ապրի ընկեր Վորոշիլո,
Կարմիր պանակի ընտիրն ա,
Ապրի ընկեր Վորոշիլո։
Վորոշիլոն կոմիտար ա,
Մեր ցավերին տեղ ու ճար ա,
Մեր թիկունքին քանց մի սար ա,
Ապրի ընկեր Վորոշիլո։
Բրա գենք ու զրահ շատ ա,
Մեզի փրկելու կաշխատա,
Էն նամառդ դուշմանը վատ ա,
Ապրի ընկեր Վորոշիլո։
Վորոշիլո մեկ կրակ ա,
Մեզի փայլուն արեքակ ա,
Քյատիբ քանվորի զավակ ա,
Ապրի ընկեր Վորոշիլո։
Վորոշիլոն բալշևիկ ա,
Դուշմնին կանա թիքա-թիքա,
Զորապետաց մեջը մեկ ա,
Ապրի ընկեր Վորոշիլո։
Վարոնն էտ խոսքերն ասեց,
Վորոշիլո կոմետա տվեց,
Կարմիր պանակին ա նա մենծ,
Ապրի ընկեր Վորոշիլո։

14 (244). ԿԱՆՑԻԼԱՐԻ ԴՈՒԻՒԼ

Կանցիլարի դուռը կայնած մնացի,
Խաբար տարեք մորըս՝ բանակ գնացի։
Կանցիլարի դուռը
Վառվռամ է ֆուռը,
Սալդատ տղոնց սրտեն
Ջէլավ մրմուռը։

Կանցիլարի դռան
Կանռանչ ավելը,
Շուն Հիտլերը ջոկեց
Հայի լավերը։

15 (245). ՄԱՅՐԻԿ ՋԱՆ...

Մայրիկ ջան, մնաս բարով,
Ես կերթամ սարով, քարով,
Ճամբիս պաշարը պատրաստի,
Բաժանվում եմ մեկ տարով։
Աշխարհը հուր է դառել,
Արյունը ջուր է դառել.
Թնդանոթի ձենից ը,
Մարդիկը լուռ են դառել։
Մայրիկ ջան, քույրիկ ջան,
Ես կերթամ սարով, քարով,
Ճամբիս պաշարը պատրաստի,
Բաժանվում եմ մեկ տարով։

16 (246). ՄԱՅՐԻԿ ՋԱՆ

Մայրիկ ջան, մնաս բարով,
Ես կէրթամ քարով-սարով.
Վերադարձիս կսպասես,
Բաժանվում եմ մեկ տարով։
Մայրիկ ջան, քույրիկ ջան,
Բաժանվում եմ մեկ տարով։
Գնաս բարով որդյակս,
Իմ փայլուն արեգակս,
Էլ անկողին չեմ մտնի,
Մինչև վերադառնալդ։
Իմ բալեն, իմ լալեն,
Մինչև վերադառնալդ։
Օտար երկիր պիտի գնամ,
Օրհնիր այնտեղ չմնամ,
Մի լա, մի լա, մայրիկ ջան,
Շուտով կվերադառնամ։
Մայրիկ ջան, քույրիկ ջան,
Շուտով կվերադառնամ։

17 (247). ՕՐՀՆԻՐ ՃԱՆԱՊԱՐՀՍ

Օրհնիր ճանապարհս, թանկագին մայրիկ,
Անպատճառ պիտ գնամ, մնալ չեմ կարող,

Սպասվեր նամակիս, ծերունի հայրիկ,
Անպատճառ պիտ գնամ, մնալ չեմ կարող։
Թշնամին մարդակեր մտավ մեր հողը,
Ինչպես մութ գիշերվա չարամիտ գողը,
Ջարմացավ ու շշմեց ամեն լսողը,
Անպատճառ պիտ գնամ, մնալ չեմ կարող։
Առաջնորդը տվեց մարտի հրամանի,
ժողովուրդը կանգնեց մեկ մարդու նման,
Թշնամին մեր հողում զարկել է վրան,
Անպատճառ պիտ գնամ, մնալ չեմ կարող։
Պատերազմ է մղվում հանուն մեր պատվի,
Կխփենք թշնամուն՝ որտեղ նկատվի,
Որ մտավ մեր հողը անշուշտ կը դատվի,
Անպատճառ պիտ գնամ, մնալ չեմ կարող։

18 (248). ԴՈՒ ՊԻՆԴ ՄՆԱ...

Դու պինդ մնա մայրիկ ջան,
Իմ գնալը կորած տեղ չի.
Հայրենյաց համար կռվելը,
Մահանալը կորած տեղ չի։
Կանչում է մեծ զորավարը,
Շատ է մեր թիվ ու համարը.
Հայրենիքն է մեր մեծ մայրը,
Ջոհ գնալը կորած տեղ չի։
Խոսք չկա, որ մենք կհաղթենք,
Ջար դեմանուն կտապալենք.
Իսկ թե դաժան կռվում ընկնենք,
Քաջի մահը կորած տեղ չի։

19 (249). ՆՍՏԱ ՊԱՐԱԽՈՒՏ

Նստա «Միկոյան» դեմ արի Սևան,
դեմ արի Սևան,
Էլ հույս չունեմ, մայրիկ, դառնամ օթևան,
դառնամ օթևան։
Նստա մաշինեն դեպի Դիլիջան,
դեպի Դիլիջան,

Մայրս տանըր կվանչեր սալդաթ բալա ջանր,
սալդաթ բալա ջան։
Աերոպլանննեըր ելան երկնի պաթըր,
երկնի պաթը,
Մայրիկ ջան, հալալ արա քո ծծի կաթը,
քո ծծի կաթը։

20 (250). ՀԻՏԼԵՐԻ ՅԱՅԼԻՆ

Հիտլերին պատեց սուգը.
Ջախջախվում է թիկունքը,
Պարտիզաններն են գարկում,
Մհանա բռնեց բուքը։
Ոզեց Մոսկվայում ճարշի,
Որ Կրեմլին լավ աշի,
Իր սատկած զորքը տեսավ,
Հիմա հոգին թող մաշի։
Ներվը տեսավ երազին,
Հասել է իր մուրազին,
Ջարթնեց Կարմիր բանակը
Պինդ չոքել էր բողազին։
Աղվեսը մեծ ուստա է,
Իր հունարին վստահ է,
Թակարդն ընկավ ջուխտ ոտքով,
Բռնողը մեծ ուստա է։

21 (251). ԲՈՒԴՅՈՆՆԻՆ ԵՎ ՎՈՐՈՇԻԼՈՎԸ

Բուդյոննիմ սրեց բեղերը,
Հիտլերն ընկավ տեղերը...
— Խարտախ Հիտլեր, դե куда?
Ինչ ես գալիս դու թաքուն,
Հենց իմացար թե բաքուն
Փափլիկ հավի չաղ բուդ ա...
Դե շուտ, դե շուտ մի назад,
Քարը կտամ կնդազադ։

Վորոշիլովը մեր մարշալ,
Հանեց երկար իր շաշկան,

Էկավ, նայեց շատ մռայլ,
Կտրևց Հիտլերի բաշկան։

22 (252). ԲԱՂՐԱՄՅԱՆ

Ֆաշիստ Հիտլերը փախավ հնգեր Բաղրամյանի ահից,
Հնգեր Բաղրամյանն էր ծնվել Զարդախլուփց,
Կեցցե հնգեր Բաղրամյանը,
Անվախ հերոս Բաղրամյանը,
Նրա ծնունդ դաշտային Ղարաբաղը։
Հնգեր Բաղրամյանը կռվելո֊ անցավ Բալթիկ ծովից,
Հիտլերի երկիրը կոտորվեց ցավից, տովից,
Հիտլերն էլ փախավ Բեռլինից,
Վախեց հնգեր Բաղրամյանի սրից,
Կեցցե հնգեր Բաղրամյանը,
Հայ հերոս հնգեր Բաղրամյանը։
Ֆաշիստ Հիտլերը փախավ, չուներ մաջալը,
Մոտեցել էր Հիտլերի աջալը,
Երգն ա ասում հնգեր Ղալաչյանը,
Բեռլինում ջարդեցին հարյուրհազար հիտլերականի ջանը,
Ղալաչյանն էր ասում հնգեր Բաղրամյանի քաղցր ջանը։
Ֆաշիստ Հիտլերը մեկ ամսում տվեց Բուդապեշը,
Անգաջները թառ տվուց բեռի տակի էշը,
Բեռլինից քաշեց մթերքը ու վեշը,
Բոլորն են ատում Հիտլերի գեշը։
Հնգեր Բաղրամյանը տա.ն օրում դուս շպրտեց
Կովկասի լեռներից,
Նա ետ չէր մնում իր հնգեր մարշալներից,
Հրամանը ստացավ ղեկավարներից։
Կեցցե հնգեր Բաղրամյանը,
Անմահ հերոս Բաղրամյանը,
Նրա ծնունդ դաշտային Ղարաբաղը։

23 (253). ՄԱԶԴՈՒԿ

Գյուղումն իմացան իմ վատս,
Լաց ին լինում համ մամս, համ էլ տատս,
Մազդուկում թողի իմ ճախու մատս,
Անտեր մնաս, դու, Մազդուկը,

Վերան դառնաս, դու, Մազդոկը,
Կտրեց խեղճ հայերի քոքը,
Կերշից էլ պակաս չէր Մազդոկը։
Կողքիս խփվեց կոմիտասը,
Վիրավորվեց Սանատարը,
Վերքս փաթթեց Բալատանը,
Ջկար կողքիս սաղ իսանը։
Անտեր մնաս, դու, Մազդոկը
Վերան դառնաս, դու, Մազդոկը,
Կտրեց խեղճ հայերի քոքը,
Կերշից էլ պակաս չէր Մազդոկը։
Վերևից էկավ սավառնակը,
Հանկարծ կուխնկին կոխեց գետնի տակը,
Պռվրին կոխեց հողի տակը,
Ջտեսանք ճաշի ոչ սառը, ոչ էլ տաքը,
Քար չկար որ մտնենք տակը,
Գյուլլեն ծակեց պռվրի կռնատակը։
Անտեր մնաս, դու, Մազդոկը,
Վերան դառնաս, դու, Մազդոկը,
Կտրեց խեղճ հայերի քոքը,
Կերշից էլ պակաս չէր Մազդոկը։
Արմենակը ատավ Մազդոկոմ երգը,
Մազդոկոմ ստացա ծանդր վերքը,
Գյուլլեն տարավ ձախու ձեռքը,
Ջկար ոչ դուռ, ոչ էլ եկքը,
Անտեր մնաս, դու, Մազդոկը,
Վերան դառնաս, դու, Մազդոկը,
Կտրեց խեղճ հայերի քոքը,
Կերշից էլ պակաս չէր Մազդոկը
Երգն ասավ Արմենակը,
Հնգերն ընգավ հողի տակ,
Ջրովն գնաց տանկի ակը,
Կերշից պակաս չէր Մազդոկի կրակը։
Անտեր մնաս, դու, Մազդոկը,
Վերան դառնաս, դու, Մազդոկը,
Կտրեց խեղճ հայերի քոքը,
Կերշից էլ պակաս չէր Մազդոկը։
Աչքս խավար մնաց վարդին.
Քաշին պոկին վերքիս մորթին,

Անտեր մնաց շատերի պատին,
Անտեր մնաս, դու, Մազդոկը,
Վերան դառնաս, դուս, Մազդոկը,
Կտրեց խեղճ հայերի քոքը,
Կերշից էլ պակաս չէր Մազդոկը։

24 (254). «ՍԵՎ ԾՈՎԻ ԱՓԻՆ, ՄԱՅՐԻԿ ՋԱՆ»

Սև ծովի ափին, մայրիկ ջան,
Փրփուր չի բռնում,
Իմ գրած նամակս, մայրիկ ջան,
1/4 Քեզի չի հասնում։

Ամպի հինգին, ժամը վեցին
Ես գնալու եմ,
Հաստատ գիտեմ, որ, մայրիկ ջան,
2/8 Հետ դառնալու չեմ։

Տատնուքի տարեկան հասակում
Սիրահարվեցի,
Սիրահարված ժամանակս
3/12 Կռիվ գնացի։

Նատեցի մաշինեն, մայրիկ,
Հետևից նայիր,
Հետևից նայիր, մայրիկ ջան,
4/16 Ոսոտդ կտրիր։

Կամուրջն անցկենալիս, մայրիկ,
Ետևես նայիր,
Կամուրջն անց կացա էն կողմը,
5/20 Ոսոտդ կտրիր։

Մի լա, մայրիկ, մի լա քույրիկ,
Լացողը ես եմ,
Շուն Հիտլերի գյուլլի դեմը
6/24 Կանգնողը ես եմ։

Մի լա, մայրիկ, մի լա, քույրիկ,
Ես էլի կգամ,
Մինչև կռվի վերջը, մայրիկ,
7/28 Երազով կգամ։

Մեր խաղաղ երկիրը, մայրիկ,
Պատերազմում է,
Ինձ քեզ տեսնելը, մայրիկ,
8/32 Երազի բան է։

Ա՜խ, թև տվեք, թռչեմ հասնեմ
Ես իմ մայրիկին,
Կարոտս առնեմ ես իմ մորից,
9/36 Ետ գամ նորից։

Գնացի կերյալը, մայրիկ ջան,
Տեսա այն ի՞նչ էր,
Կանգնած նայում էի,
10/40 Ջորա կոշմը լիճ էր։

Էտ անտեր կերյը, մամա ջան,
Տեսնեք, թե ի՞նչ է,
Մովի ափին է կատուցված,
11/44 Սև արյան լիճ է։

Մովի մեջ սուզվեցան, մամա ջան,
Անթիվ ընկերներ,
Որոնց մեջ էլ, ա՜խ, մամա ջան,
12/48 Իմ մեծ եղբայրն էր։

Մի եղբայր ունեի, մայրիկ,
Նա բանակ գնաց,
Նա բանակ գնաց, մայրիկ ջան,
13/52 Հետը չմնաց։

Կերյի ճակատում, մայրիկ ջան,
Վիրավորվեցի,
Առանց քեզ տեսնելու, մայրիկ,
14/56 Մովը նետվեցի։

Գլխատակիս բարձը, մամա,
Սովետական ա,
Վերքս խորն ա, քույր իմ, մամա,
15/60 Գերմանական ա։

Երազումս տեսա, մայրիկ,
Վեց հոգի էինք,

Հայրա՛, մայրա՛, քույր-եղբայրս,
16/64 Ես ու իմ յարա՛:

Էն ի՞նչ սև ունդուկ էր, մայրի՛կ,
Մեր դռան առաջ,
Տատնուց տարեվան մեռնում ես,
17/68 Մուրազս չառա՛ծ:

Գդալս կոտրիր, մայրի՛կ ջան,
Պարտեզում գցի՛ր,
Իմ բաժին կերակուրս, մայրի՛կ,
18/72 Աղքատին բաժնի՛ր:

Էդ անտեր կերշը, մայրի՛կ ջան,
Հայոց գերեզման,
Հայոց արյունը, մայրի՛կ ջան,
19/76 Հեղեղի նման:

25՛ (255). «ԿԵՐՉ ՔԱՂԱՔԸ ՔԱՐ ՈՒ ՔՈՒԱ»

Կերչ քաղաքը քար ու քոա,
Գյուլլան մեջը կը ֆոֆռա,
Սրտիս յարեն կը մըռմըռա,
1/4 Խաբեք մորս վիրավոր եմ:

Հենց որ մտա Կերչի հողը,
Սիրտս ընկավ մահվան դողը,
Սև մազերս դրի հողը,
2/8 Խաբեք մորս վիրավոր եմ:

Երբ որ հասանք Կերչի դռան,
Ընկերներս ինձ վրա կորան,
Նախկայով ինձի տարան,
3/12 Գրեք մորըս յարալու եմ:

Կերչ քաղաքի ջուրը պաղ էր,
Մայրը գիտեր՝ որդին սաղ էր,
Բայց չգիտեր՝ հողի տակն էր,
4/16 Խաբեկ մորըս վիրավոր եմ:

Կերչ քաղաքի ջուրը աղի,
Հացն ու կերակուրը լեղի,

Շատ չահելներ կորան անտեղի,
5/20 Խաբեք մորս վիրավոր եմ։

Կնրչ քաղաքի գլխի լալեն,
Թաղեմ գերմանացու բալեն,
Հորս ու մորս թողեց լալես,
6/24 Խաբեք մորս վիրավոր եմ։

Անտեր մնար Գերմանիեն,
Յարս տունը մնաց լալեն,
Կրակն ընկներ Հիտլերի բալեն,
7/28 Պատմիր նամակ՝ վիրավոր եմ։

Հիտլերն մեզ հետ արեց պայման,
Խախտեց օրենք, անցավ սայման,
Կանգնել ենք դեմ դառը մայվան,
8/32 Խաբեք մորս յարալու եմ։

Պարախոտը լցրին զորքը,
Ճամբա չկար, անցներ խորքը,
Իզուր կորավ չահել զորքը,
9/36 Պատմիր նամակ՝ վիրավոր եմ։

Շպալներըը կրծքիս խփի,
Հայոց գնդերն առաջ քաշի,
Դիակս հողին պայ տվի,
10/40 Ասեք մորս վիրավոր եմ։

Ոտատովից վերադարձա,
Ձեռքից, ոտքից վիրավորվա,
Մայրիկ չունեմ վրես լացեր,
Քույրիկ չունեմ վերքս կապեր,
Հայրիկ չունեմ դիրքս փորեր,
11/46 Խաբեք մորս վիրավոր եմ։

Վիրավորվել՝ հետ եմ դառե,
Սառած ծովին դեմ եմ առել,
Ճանապարհըս քար է դառել,
12/50 Խապեկ մորըս վիրավոր եմ։

Ծարավ եմ, ջուր տվող չկա,
Էս քաղաքին աղբյուր չկա,

Վախենամ ղարիբ մեռնեմ,
13/54 Մոտս էլ ազգական չկա։

Դիրքում նստած տեղս թաց էր,
Քամին փչեց, վերքս բաց էր,
Ինձ խփողը անատամած էր,
14/58 Յանա-յանա դիվխոր բան ա։

Դիրքիս մեջը արև կամար.
Լուսնակը վերևիցը խավար,
Ես մենում եմ ձեզի համար.
15/62 Խաբեք մորս վիրավոր եմ։

Դիրքը մտած ժամանակս
Լալով պրեցի նամակս,
Անդեր մնաց գեղդատանըս,
16/66 Խապեկ մորըս վիրավոր եմ։

Ջոր սուխարին իմ քամակս,
Սա է վերջին իմ նամակս,
Տվեք կարդա սիրած յարս,
17/70 Խաբեք մորս վիրավոր եմ։

Նամա՛կ, թռիր, հասիր մորս,
Բայց չպատմես դիվխոր հորս,
Միայն կասես մեծ եղբորս,
18/74 Որ ես ծանր վիրավոր եմ։

Բաժանվում եմ հորից, մորից
Եվ հարազատ ընկերներից,
Հայաստանի սեգ սարերից,
19/78 Խափեք մորս վիրավոր եմ։

Քույր ու մայրս թնդրա բոցին,
Սիրած յարս ձեռքը ծոցին,
Նոր մանուկս օրորոցին,
20/82 Խափեք մորս վիրավոր եմ։

Քամին եկավ յանա-յանա,
Թժիշկ բերեք, վերքս բանա,
Վերքիս միջից գյուլլեն հանա,
21/86 Խաբեք մորս վիրավոր եմ։

Բժիշկ չկա վերքս բանա,
Շարապլենին միջից հանա,
Թող քոռանա Հիսլերի լուս,
22/90 Մորս ասեք վիրավոր եմ։

Գյուլլեն էկավ դիպավ կրծքիս,
Բժիշկներ եկավ նստավ կողքիս,
Զարշալրվելով տվին հոգիս,
23/94 Յանա-յանա դիլխոր բան ա։

Արյուն դուշիս չորացել էր,
Մայրս լալով կուրացել էր,
Բալես որբուվ մնացել էր,
24/98 Յանա-յանա յարալու եմ։

Զյանդը տկավ, վրես դիվեց,
Գելը եկավ, վերքս լիզեց,
Բժիշկներ եկավ, վերքս կապեց,
25/102 Խափեք մորս, յարալու եմ։

Կերշա սարը շրջեցինն,
Ինձի մեջը պրեցինն,
Զյանդը, հողը վրես լցրինն,
26/106 Խաբեք մորս վիրավոր եմ։

Մեծ եղբայր ջան, ես մեռնում եմ,
Ընտանիքս քեզ թողնում եմ,
Ընտանիքս լավ կպահես,
27/110 Յանա-յանա, դիլխոր բան ա։

Հայրենիքը քաղծր բան է,
Հայրենիքը ազիզ բան է,
Հայրենի հողն ինձ կպահե,
28/114 Խափեք մորս վիրավոր եմ։

Իմ հայրենիք, մնաս բարով,
Քեզ երկար կյանք, ազատ արև,
Ես ընկնում եմ որպես տերև,
29/118 Խափեք մորս վիրավոր եմ։

Ես վրեժն եմ բաջօղլվեցի,
Հայրենիքիս ղոհ գնացի,

Դիակս կերշոամ թողեցի,
30/122 Խափեք մորս վիրավոր եմ։

Ընկերներիս կանչել տվեք,
Դուդուկներըս փըչել տվեք,
Գերեզմանիս քարի վրա
31/126 Տխուր երգեր ածել տվեք։

Առավոտվա ժամը վեցին
Ընկերներս հավաքվեցին,
Իմ դագաղս տարքել տվին,
32/130 Անունս վրեն գրեցին։

Ընկերներս մեկ-մեկ թող գան,
Գերեզմանիս համբույրներ տան,
Աղի արցունք ու արյուն լան,
33/134 Խափեք մորս վիրավոր եմ։

Ընկերներ ջան, հողիս եկեք,
Սյունյակներով երգեր դրեք,
Եվ անթառամ վարդեր բերեք,
34/138 Խափեք մորս յարալու եմ։

Աշուղ չէի, աշուղ դառա,
Սազ չունեի, տազ էլ առա,
Կյանքս դառավ խաթա-բալա,
35/142 Խափեք մորս յարալու եմ։

26 (256). «ԳԼՈՒԽՍ ԿԱՊԵԼ ԵՆ ԿԱՐՄԻՐ ՌԱՆԳՈՎ»

Գլուխս կապել են կարմիր ռանգով,
Սարերը մանւ կուգաս կաքավի քայլով։
Ջամոլեցի Սուրեն, Արամեն տոլգեցի,
Աշըղ Քյարամի պես բեմուրվազ մացի։

Դիակս ֆուրգոնով տոնն բերեց հայրս,
Արդեն կուրացել էր կաթնատու մայրս։
Բախչեքը մանւ կուգաս կապույտ ծաղիկով,
Արի հետս խոսիր անուշ բառերով։

Առավոտյան սառը ջրով լվացվիր,
Արի հետս խոսիր, թող սիրտս բացվի։

Վերևից եմ գալիս, մազերս խսիր,
Ասա, ինձ տանում են գերմանու հսիր։

27 (257). ա) «ԿԱՍՏՈՒՄԸ ՊԱՏԻՑ...»

Կաստումը պատից կախված էր,
Կոտպանդը ղուխին.
Հայրը կգա կասի. «Ո՞ւր ա իմ որդին։

Դոշիդ տուր, մայրիկ ջան, կարդացի թերթը.
Աղվանին տանում են ծովային բերդը։

Արևը մայր մտավ, լուսնյակը ցոլաց,
Նավը կռուկ տվեց, Աղվանը դողաց։

Աղվանի ընկած տեղը շատ խորը տեղ էր,
Շատերը կարծում են Աղվանը սատ էր։

Ավետիք հայրիկ ջան, դանակդ սրի,
Աղվանի դագաղը նաշխոմ զարդարի։

Սև եզը մորթեցինք, հարսանիք արինք,
Ջուռնի ձենը կտրինք, պատարագ արինք։

բ) ԱՂՎԱՆԻ ԵՐԳԸ

Ես Աղվանն եմ Օրդակլվա գյուղացի,
Սևանգէսը ծառայության գնացի.
Դուշինկա մամա ջան, մի նստի հումը,
Ձախորդության բան է, կընդհնես մեծ ծովը։

Դուշինկա մամա ջան, տասցիր թերթը,
Աղվան բալիդ տարան ծովային բերդը,
Ծովային ալիքներ գնում են, գալիս,
Աղվանին և Բարուին բարև են տալիս։

Երկնքից կախվել էր ոսկե շղեղը,
Աղվան բալիդ թաղին լուսնյակ գիշերը,
Նավավար եղբայր ջան, նավը մի շարժիր,
Թազա նշանելու եմ, կոզբանդիա բախշիր։

Կոստյումս պատից կախ,
Կոզբանդս ղուխին։

Ամենի որդին էկավ,
Ո՞ւր ա իմ որդին։

գ) ՍՓԱ՛, ՍՈՎ ՋԱՆ....

Սփա՛, ծով ջան, ծփա՛,
Աղվանա տոհմ գա,
Ձաղնա սրտիս յարեն,
Աչքերիս քուն գա։
Նավատատի, ախպեր ջան,
Նավդ մի՛ քշի,
Թազա նշանլու եմ,
Կոսպանդա բաշխի։
Դոշիդ տուր, մայրիկ ջան,
Կարդացի թերթը,
Աղվանին տանուջ են,
Ծովայինն բերդը։

դ) ԱՂՎԱՆԻ ԽԱՂԸ

Բուրաստան յարս ջան, մի քնի հովը,
Զախորդությոնն առե, ընգել ենք ծովը.
Ծովային ալիքը տխուր էր գալիս,
Աղվանաբույր, հո՛յ մամա ջան, բարև կտանիս։
Մարալ եզը բերեք մորթենք, հարսնիք անենք,
Դավուշ-զուռնի ձենը կտրեք՝ պատարագ անենք,
Ախ, մամա ջան, ատացիր թերթը, ատացիր թերթը,
Աղվան բալեն գնաց-կորավ ծովային բերդը։
Ախ, մամա ջան, ատացիր նամակը, ատացիր նամակը։
Աղվան բալեն գնաց-կորավ ծովայինն բանակը։

28 (258). ՍԱՄԲԵԿԻ ԴԵՐԱՆ

Դատաստանն է դարիքս,
Գրագ ընգա, մարիգս.
Մնաք պարով, ընգերներ,
Հեչ չեղածի բես կնացի։
Սամբեկին դերան կնացինք,
Ալաշ-թալաշ մնացինք,

Ամառամատով գբուցին,
Հավի խադակ չըլեան։
Սև ծին բոխչկաին լձեցին,
Ոսատովի բոլնից հասցուցին.
Մինչև բոլնից հասցուցին,
Հոքխս փորես հանեցին։
Հոնեն ընգանք մեծ ջամփան,
Տեբի կեղի կերեզմաս,
Ջնողներս թոփ եղաս,
Ինձի տրին կերեզման։
Մնաք պարով, ձնողներ.
Մնաք պարով, ընգերներ,
Մնաս պարով, իմ Զարթար,
Նայե, ինձի մի՛ մոռնար։

29 (259). ՈՒՆԱՆԷ

Կերչան նամակ եկը, մամա ջան,
Նամակը սև էր,
Ունանին ըրազում տեսա, մամա ջան,
Արև սև էր։
Ունանը կռվում ինգավ, մամա ջան,
Թափվեց արյունը,
Էն էր ումադու, մամա ջան,
Քո արտի ստունդ։
Նշանածը սև ու կեցալ, մամա ջան,
Աչուսաստունք անուս,
Ունան տըղատ, մամա ջան,
Հողումն ու քընուս։
Մի լար մայրիկ, մի լար քույրիկ,
Քաջ էր Ունանը.
Հայրենիքի հողի համար
Զոհ էր Ունանը։

30 (260). ՆԵԼՍՈՆ

Էն երկնքում փոքրիկ է,
Էն ո՞վ կխաղա,
Էն Նելսոնի մաշինն է,

Էնտեղ կխաղա։
Էն կայծակն է վառվռամ,
Էն ո՞վ կխփի,
Էն Նելսոնն է երկնքից
Կրակ կթափի։
Էն պերմանու սրտները
Ո՞վ է շամփրում։
Էն Նելսոնն է Հիտլերին
Ահ ու դող բերում։
Շարած աստղերը դոշին,
Էն ի՞նչ իգիթ է,
Շարած աստղերը դոշին
Մեր քաջ Նելսոնն է։
Էն ծովը արուն կապեց,
Էն ո՞ւմ արունն էր,
Էն Նելսոնն էր, որ զոհվեց,
Նրա արունն էր։
Սեգ սարերը սուգ կանեն,
Էն ո՞ւմ հառաչն է,
Էն նրա մոր մոմուռն է,
Նրա հառաչն է։
Էն ո՞ւմ արտերում կապրի,
Էն ո՞ւմ անունն է,
Էն մեր արտերում կապրի,
Նելսոն անունն է։

31 (261). ԿԱՐՄԻՐ ՊԱՆԱԿ ՅԱՐԸՍ...

Ախչի, անունտ Մահի,
Ճակատդ բոլոր շահի.
Կարմիր պանակ, յարըս բաշվելիկ ա,
Կը թամամի հեդա աշունք կի՛ինգյա։
Արի ինձի մի պաչ տու,
Աստված ախպերըտ պահի.
Մեր դուշմանը տառնա թիքյա...թիքյա
Կարմիր պանակ, յարըս բաշվելիկ ա։
Ուռի ծառը պիրցըր ա,
Սրտով սիրածը քաղցր ա.

Կարմիր պանակ, յարըս բաշվելիկ ա,
Բաշվելիկ ա, հ'եկող աշուն կի'իգյա։
Քելա նանիս խառցըրա,
Թե որ չի տա՝ փախցըրա.
Պոպոզ քըդակ, յարըս բաշվելիկ ա,
Կը թամամի գո պանակից կի'իգյա։
Ախչի, անունըտ Թելլի,
Ատկ ու սոյով ես քելլի,
Թող դաշնակը տառնա թիքյա-թիքյա,
Կարմիր պանակ, յարըս բաշվելիկ ա։
Կյացիր դառար կոմսոմոլ,
Խառյաթըտ փոխիր էլի.
Կարմիր պանակ, յարըս բաշվելիկ ա,
Կը թամամի, էկող աշուն կի'իգյա։

32 (262). ԶՈՐԱԿՈՉԻԿ ՅԱՐՈ ՋԱՆ

Քեզ պոյեզով են տանում,
Զորակոչիկ յարո ջան,
Դափ ու զուռնով են տանում,
Քսան թվի յարո ջան,
Գնաս բարով, յարո ջան։
Լոռաք եմ տվել համքերեմ,
Զորակոչիկ յարո ջան,
Կգամ քեզի համբուրեմ,
Քսան թվի յարո ջան,
Գնաս բարով, յարո ջան։
Ջանաք կանեմ օղակում,
Զորակոչիկ յարո ջան.
Դու էլ վարժվի բանակում,
Քսան թվի յարո ջան,
Գնաս բարով, յարո ջան։
Վադեդ թամամի, ետ դարձի,
Զինակոչիկ յարո ջան,
Սիրտս դուզ է, իմացի,
Քսան թվի յարո ջան,
Գնաս բարով, յարո ջան։
Թուրըդ կտրուկ թող մնա,
Զորակոչիկ յարո ջան,

Թշնամու դեմ դուզ գնա,
Քսան թվի յարս ջան,
Գնաս բարով, յարս ջան։

33 (26). ԱԼԱԳՅԱԶԸ ՄԵՋ ՄՈՏԻԿ

Ալագյազը մեզ մոտիկ,
Հյուրու մալաք է յարըս,
Ջյոնը էլել է գոտիկ,
Մայրաքաղաքն է յարըս։
Ջեբս ընկավ դանակը,
Հյուր ու մալաք է յարըս,
Կեցցե կարմիր բանակը,
Մայրաքաղաքն է յարըս։
Կոնդի եաև վար կանեմ,
Կարմիր եղնկա գյազ կանեմ։

34 (264). ՅԱՐ ԳՅՈՒԼԱ

Ջայնիկ բերեք չայ անենք,
Յար գյուլա, յար գյուլա,
Մեր դյուժինին փայ անենք,
Յար գյուլա, յար գյուլա,
Յարիս բլուզը գյուլա,
Տո քիրա ջան, հունար ունես խաղջա։

Ախպերս գնաց բանակ,
Յար գյուլա, յար գյուլա,
Գրել է ինձ մի նամակ,
Յար գյուլա, յար գյուլա,
Յարիս բլուզը գյուլա,
Տո քիրա ջան, հունար ունես խաղջա։

Մեռնեմ ախպորս բանակին,
Յար գյուլա, յար գյուլա,
Հետն էլ ղրկած նամակին,
Յար գյուլա, յար գյուլա,
Յարիս բլուզը գյուլա,
Քիրա ջան, հունար ունես խաղջա։

35 (265). ՅԱՐ ԳՅՈՒԼԱ

— Յար գյուլա,
Մհծեռնակի բոմբը,
Աստված քանդեր
Գերմանու տոմբը։
— Յար գյուլա,
Մեր օթախի հաշտը,
Յարխա տարան,
Պատերազմի դաշտը։
Յար գյուլա,
Մեր օթախի փեչը,
Յարխա տարան,
Պատերազմի մեջը։
Յար գյուլա,
Ես ի՞նչ կանեմ նամակ,
Մալադո եմ,
Կեղթամ սարի քամակ։

36 (256). ՍԱՐԵՐԻ ՀՈՎԻՆ

Սարերի հովին մեռնեմ,
Իմ յարի բոյին մեռնեմ,
Մի տարի է, չեմ տեսել,
Տեսնողի աչքին մեռնեմ։
Ջադացա մանի-մանի,
Քունըս անուշ կտանի,
Իմ յարը կռվի դաշտում,
Իմ քունը ո՞նց կտանի։
Յար ջան, արևիդ մեռնեմ,
Ղրկած բարևիդ մեռնեմ,
Արի, տեսնեմ մեկ անգամ,
Գոնե կարոտըս առնեմ։
Վարդի ծառին փուշ-կըլնի,
Համբույր կտամ—նուշ կըլնի,
Թե էս տարի ինձ չառնես,
Եկող տարի ուշ կըլնի։

37 (267). ԱՆՑԱՎ ԿԱՐՄԻՐ ՎԱՇՏԸ...

Անցավ կարմիր վաշտը,
Անցավ կարմիր վաշտը,
Հրեն յարըս գնաց,
Պատերազմի դաշտը։
Ավվի, թափի հաշտը,
Ավվի, թափի հաշտը,
Ուրախ գնա, յար ջան,
Պատերազմի դաշտը։
Հելա կայնա շոշին,
Հելա կայնա շոշին,
Տեսա յարըս եկավ
Շքանշան դոշին։
Յորենը արևին,
Յորենը արևին,
Կարոտել եմ, յար ջան
Քո տված բարևին։

38 (268). «ԱՎԻ, ԹԱՓԻ ՓՈՇԻՆ»

Ավի, թափի փոշին,
Ավի, թափի փոշին,
Սովետների զնդակը՝
Գերմանացու դոշին։
Առուների իզը,
Առուների իզը,
Բանակից գաս, յարս ջան,
Փաթաթվեմ քո վիզը։
Սարերի շուշանը,
Սարերի շուշանը,
Քեր համբուրեմ, յար ջան,
Դոշիդ շքանշանը։
Կայնել եմ մեր բակը,
Կայնել եմ մեր բակը.
Նոր եմ առել, յարս ջան,
Ես քո նամակը։

39 (269). ԿԱՂՆԻ ԾԱՌ ԵՍ

Կաղնի ծառ ես, հեծելակ ես,
յա՛ր ջան.
Թշնամու դեմ մի կեծակ ես,
յա՛ր ջան։
Տաք դնդակ ես, արեգակ ես,
յա՛ր ջան,
Թշնամու գլխին կըրակ ես,
յա՛ր ջան։
Քաջ մարտիկ ես, հրաձիգ ես,
յա՛ր ջան։
Ոչ ոք չունեմ ես քացի քեզ,
յա՛ր ջան
Դու ճակատում, ես թիկունքում,
յա՛ր ջան,
Հողը դնենք մեր թշնամուն,
յա՛ր ջան։

40 (270). ԲԱՆԱԿԻՆ ՄԵՌՆԻՄ

Յարըս գնաց Կարմիր բանակ,
բանակին մեռնիմ.
Գըրել է ինձի մի նամակ,
նամակին մեռնիմ։

Ինձ սրտանց բարև է ղրկել
բարևին մեռնիմ.
Կասես թե արև է ղրկել,
Արևին մեռնիմ։

Թիկունքն է սար, բոյը չինար,
Իր բոյին մեռնիմ.
Ինքը բոլշևիկ կոմիսար
Իր սոյին մեռնիմ։

Ֆաշիստների դեմ է կըռվում,
կովողին մեռնիմ.
Հայրենիքի հողն է պահում,
Պահողին մեռնիմ։

41 (271). ՀԱՅՐԻԿՍ ԲԱՆԱԿ ԳՆԱՑ

Հայրիկս գնաց բանակ,
Բանակին մեռնեմ.
Գրել էր ինձ մի նամակ,
Նամակին մեռնեմ։
Ես սարեն կուգայի, հայրիկ ջան,
Թեշի մանելով.
Աչքս ջուր դառավ, հայրիկ ջան,
Ճամփեդ նայելով։

42 (272). «ՅԱՐ ՈՒՆԻՄ, ՅԱՐ ՈՒՆԻՄ»

Յար ունիմ, յար ունիմ,
Օդեննավոր յար ունիմ,
Կռնակիս մեծ սար ունիմ
Մեկ անգին աշխարհ ունիմ։
Բովին են նամակ առա,
Ջան, յար ունիմ, յար ունիմ,
Ֆաշիստի սիրտը վառավ,
Օդեննավոր յար ունիմ։
Մոսկուվը հայտնեց ուրախ,
Յարիս հաղթություն լուրը,
Յարս էլ խինդով տուն դառավ,
Դոշին ալվլան հուրը։
Ես յար ունիմ, յար ունիմ,
Օդեննավոր յար ունիմ,
Ջան, յար ունիմ, յար ունիմ։
Կռվում հաղթող յար ունիմ։

43 (273). ՆԱՄԱԿ ԸՍՏԱՅԱ

Նամակ ըստացա, որթի՛ ջան, սազ ես,
Հայկական դիվիզում քաջ կոմիսար ես,
Որթի՛ ջա՛ն, ես քու բանակին մեռնեմ,
Որթի՛ ջա՛ն, ես քոս նամակին մեռնեմ։
Նամակ ըստացա, որթի ջան, սազ ես,
Հայկական դիվիզում, քաջ պարտիզան ես,

Որթի ջա՜ն, ես քու բարևին մեռնեմ,
Որթի ջա՜ն, ես քու արևին մեռնեմ։

44 (274). ՆԱՆԵ

Նանե, մայրիկ, ո՞ւր կերթաս,
Ներացել ես, դուր կերթաս,
— Վայ, բալա ջան, մի ասե,
Էսօր ջահել օրս է,
Տղես կռվեն է եկե,
Հեռու հեռվեն է եկե,
Կռվեն նոր է տուն դառե։
Իմ ջերմ համբույրն է առե,
Սրտիս մուրազն է առե,
Դուշմանին հողն է դրե,
Կերթամ աղբյուրը ջրի,
Որ բալես սառ ջուր խմի,
Հոգնած ոտներդ լվամ,
Պագեմ, արտով հովանամ։

45 (275). ՄԵՐ ՍՐՏԵՐՈՒՄ

Մեր արտերում վար է անում
Ախպերըս,
Բերք հավաքում, սար է անում
Ախպերըս,
Կարմիր ու թոռոմն ծաղիկ
Ախպերըս,
Էսօր յոթն օր, նոր է եկել
Ախպերըս։

Մեր բանակից տուն է եկել
Ախպերըս,
Հաղթանակի հետ է եկել
Ախպերըս,
Գյոսղում եղավ բրիգադիր
Ախպերըս
Փեսաների մեջը ընտիր
Ախպերըս։

Կարմիր ու թոռուն ծաղիկ է
Ախպերըս,
Էսօր յոթն օր նոր է եկել
Ախպերրս։

46 (276). ԿԵՐՉՎԱ ՍԱՐԵՐԸ

Կերչվա սարերը մուժ են ու դուման,
Ուրմա՞ն կորար, ղարիբ յար ջան,
Առանց տեսնել, բեգյուման։
Նատար նավը, անցար ջրի էն կողմը,
Յարաբ կէղնի, ղարիբ յար ջան,
Ոտդ դնես մեր հողը։
Նատար նավը, օլոր-մոլոր գնացիր,
Էլ ետ չեկար, ղարիբ յար ջան,
Օտար երկիր մնացիր։
Օտարություն քաշելը դժվար հարց է,
Ամայի դաշտերում, յար ջան,
Չոր քար գլխիդ տակ բարձ է։
Թե որ սաղ ես, ընչի՞ նամակ չես գրում,
Ջլինի թե, ղարիբ յար ջան,
Մեզ էլ մեռած ես կարծում։

47 (277). ՅԱՐՕ, ՅԱՐ ՋԱՆ

Բանձր սարի գլխից իջավ սև ամբը,
Մի թուղթ տվեք գրեմ յարոյիս դարդը։
Ես մի թաք կռունկ էի, էրա սարն արոր.
Ջանիցս բեզարած, յարիցս կարոտ։
Գառներըը արածում են բուղդերիկ սարը,
Կրակը թափում էր՝ անձրևը խառը։
Պոյեզը գնում էր գերիին ու գանգատ.
Վայ էն մայրիկին, որ բալեն էր սալդաթ։
Ալագյազ բանձր ա, տակը դուրան ա,
Բոլորի յարն էկավ, իմս ուրա՞ն ա։
Աղբյուրը զուլալ ա, վրեն ոսկե թաս,
Հեռավոր յարո ջան, բարով դու տուն գաս։
Բամբակը ծլել ա, ծիլը կանանչ ա,
Հեռավոր յարո ջան, անգաջտ կանչա։

48 (278). ԳԵՐՄԱՆՈՒ ՖՐՈՆՏ

Գերմանու ֆրոնտ, գերմանու ֆրոնտ,
Սև գիրդ են բերել, ազիզ ջան,
Թևերդ թուլանար, անատամած Հիտլեր,
Ջթողնեիր քորփա բալեքս անտեր։
Ա՜խ, իմա՞լ էնեմ, ազիզ ջան,
Որ աշխօր անեմ, ազիզ ջան,
Բալեքդ պահեմ, ումոտ ջան,
Սիրտդ չմնա, յարո ջան։

49 (279). ՀԱՐՍԻ ՎԻՇՏԱ

Հանգավ յարիս արևը,
Կրակ կռվից լուր առա,
Էն ո՞ւմ սիրած կտրիճն է,
Կրակ կռվից տուն չի գա։

Հարսանիքիս շորերը,
Ա՜խ, սևացան, սև մնաց,
Սրտիս դալար վարդենին,
Ա՜խ, չորացավ, չոր մնաց։

Մեր սիրուն սարերը,
Կրակ կռվից լուր առան,
Հանգավ յարիս արև,
Կրակ կռվից տուն չի գա*։

50 (280). ՀԻՇԵՆՔ

Հայրենական պատերազմի
Ընկած հերոսները հիշենք,
Մեր ծաղկավետ բուրաստանի,
Հնձված ծաղիկները հիշենք։

Հայրենիքի սիրո համար,
Ջոհեր ենք տվել անհամար,
Ովքեր ընկել են քաջաբար,
Անմահ անունները հիշենք։

---

* Վերջին երկտողը կրկնվում է (Ծ. Բ)։

51 281). ՕՐՈՐՈՑԻ ԵՐԳ

Նանիկ արա, մինիկ բալիկ,
Նանիկ, կաթ տամ քեզ անուշ,
Քեզ աչքերիս քունն եմ տալիս,
Որ դու առնես քուն անուշ։
Սարի ծերից արև ծագ եց,
Սարի դոշին մանուշակ,
Ինչ նման էր, սիրուն բալա,
Քո աչերին անուշակ։
Երկնի ծովեն, լուսնի քովեն
Կաթը մարմանդ կհոսի,
Տես, թռչուններ թռան, հասան,
Կանաչ ափը Արագի։
Արշալույսին, ծաղիկներին,
Շաղը նստավ փայլփլուն,
Ծաղիկները թշերիդ պես,
Ծիծաղում են, վառվռում։
Տես մեր գյուղից քանի տղայք
Զինակոչիկ գրվեցին,
Սովետական հայրենիքի
Մեծ բանակը գնացին։
Քնիր բալիկ, չարդ տանեմ,
Երգդ եմ հյուսում ես անհագ,
Որ մեծանաս, ես էլ ուրախ
Ճամփու դնեմ քեզ բանակ։

52 (282). «ՎԱՅԵՆԿՈՄԻ ԴՈՒԽՐ»

Վայենկոմի դուռր
Տասներկու համար,
Իմ մայրիկը ինձ բերել է,
Բանակի համար։
Հորից բաժանվածծ,
Մորից բաժանվածծ,
Ախև ջան, արև,
Տար մորս բարև,
Արև ջան, արև,
Տար հորս բարև։

Գնացի վայենկոմ,
Կանգնած մնացի,
Մեծ մայրը չափս կալավ,
Բանակ գնացի,
Հորից բաժանված,
Մորից բաժանված
Արև չան, արև,
Տար մորս բարև,
Արև չան, արև,
Տար հորս բարև։
Ավտոբուս նստեցի
Մինչև Բլիջար,
Իմ մայրիկը ինձ կանչում է՝
Բանակ բալա չանե։
Հորից բաժանված
Մորից բաժանված
Արև չան, արև,
Մորս տար բարև,
Արև չան, արև,
Տար հորս բարև։

53 (283). «ԻՆՁԻ ԴՐԻՆ ՕԲՇԻ ՎԱԳՈՆ»

Ինձի դրին օբշի վագոն,
Ոսպիս դրին ծանր պագոն,
Իրեք տարով բանակ ղրկին,
Մորս տանը մենակ թողին։
Լռռվա* քամին փնռում գալիս,
Մեր դռան շեմին է տալիս,
Վեր կաց, մայրիկ, ի՞նչ ես լալիս,
Ջինվոր բալեդ տուն է գալիս։
Ես մայրիկիս շատ եմ սիրում,
Նոր տարին եմ շնորհավորում,
Համբերություն, անուշ մայրիկ,
Ջինվոր բալեդ շուտով կգա։
Դո՛ւ, քույրիկ ջան, շատ պարապի,
Անցած նյութդ մի մոռացի,

---

* Երգվում է նաև Արարկիր տեղանվամբ (Ծ. Բ.)։

Ու այս անգամ ոչ թե փորձեմ,
Այլ հաստատ դու ընդունվես։
Հարազատներ, դուք ինձ լսեք,
Բայց ոտեկը մի մոռացեք,
Խմեք օղի, կոնյակ, գինի,
Թող մեր տունը ուրախ լինի։
Ես բալիկիս կարոտել եմ,
Երազումս միշտ տեսնել եմ,
Երբ պետք է գա այն պայծառ օրը,
Որ դու վերադառնաս քեզ սպասող տունը։
Երկու տարին արդեն անցավ,
Եվ երրորդն է ահա սկսվել,
Եկեք ցանկանանք հաջողություն,
Թող մեզ լինի խաղաղություն։

54 (284). ԼՈՌՎԱ ՎԱԳՈՆ

Ես նստեցի Լոռվա վագոն,
Ուսիս խփին կայծիկ պագոն,
Երկու տարով բանակ տարան,
Հորս-մորս թողին մենակ։
Մայրս լացից կուրացել է,
Հայրս դարդից ծերացել է,
Յարս ինձի կարոտել է,
Գյուղը թողել, հեռացել է։
Լոռվա քամին գնում, գալիս,
Մեր դռանը ձայն է տալիս,
Մայրիկ, վեր կաց, շուտ դուռը բաց,
Սալդատ տղետ տուն է գալիս։
Մայրը եկավ, դուռը բացեց,
Սալդատ տղի թուշը պաչեց,
Երկու տարով տարած բանակ,
Հորս-մորս թողին մենակ։

55 (285) ՀԱՆԴԻ ԼԱԼԱ

Ուր գնացիր, ուր էկար,
Հանդի լալա յա յարս*,

* Կրկնել բոլոր տների առաջին տողերից հետո (Ծ. Բ.)։

Դուն իմ սրտին դուր եկար,
Մի մոր բալա յա յարս*։
Զանազեցրեն օյով ա,
Յարս ընձնեն բոյով ա։
Հերկեցի հերկած մնաց,
Սիրեցի սալդաթ գնաց։
Սալդաթ ելած գիշերը
Խաբար բերին ղշերը։
Սիրահար քո սերից
Հետ ընկա կուրսերից։

56 (286). «ՄՆԱՔ ԲԱՐՅԱՎ ՄԵՐ ԸՆՏԱՆԻՔ»

Մնաք բարյավ, մեր ընտանիք,
Դուք, իմ հարազատ հայրենյք,
Մնաք բարյավ, իմ սիրելիք,
Կրտսեր ու ազնիվ քույր, եղբայրք։
Մնաք բարև, լոռվա տարեր,
Մնաք բարև, իմ ընկերներ,
Հեռանում եմ մոտներից,
Սիրտս եմ թողնում ձեզ ընկեր։
Ինձ տանում են զինվորության,
Հասակս քսանմեկ տարեկան,
Օտար երկիր ծառայելու,
Գուցե կրկին էլ հետ չգամ։
Միշտ կարոտով սիտի հիշեմ,
Մեր բնություն անմոռան,
Երազիս մեջ սիտի խոսեմ,
Պաղ աղբյուրներից քչքչան։

57 (287). Ն Ա Մ Ա Կ

Նամակ ջան, փոստով ուղիղ կգնաս,
Մոսկվա կայարան մի օր կմնաս,
Պլատնիկ տղիտ անպայման կտեսնես,
Մեծ զվոդի մեջը դեմքը չմոռնաս։

---

* Կրկնել բոլոր տների երկրորդ տողերից հետո (Ս. Բ.)։

Տղին կազարմի դուռը կանաչ արուտ ա,
Տղայիս կասես՝ քո մայրը քեզ անչափ կարոտ ա,
Նամակին չորս կողմը վարդ ա,
Տղան մոր համար անչափ դարդ ա։
Արև ջան, խնդրեմ, մի քիչ ուշ մտիր,
Նամակս գնա, ղարիբը տղիս գտնի,
Նամակ ջան, խնդրեմ, ասածս լսես,
Գնաս, իմ տղի հետ իմ բերանով խոսես։
Անձրև ջան, նամակս ճամփեն չթրջես,
Գրիչով գրած բառերը չջնջես,
Նամակ ջան, Լրանի ես էլ հետդ գայի,
Ղարիբը տղիս տեսնեի, նորից ետ գայի։
Մոսկովից ծագեց կարմիր նոր արև,
Փուռե փուռ գալիս է մամայիդ բարև,
Ասա՝ մամա ջան, ինչ կանեմ քո դատարկ բարև,
Կասեմ՝ աստված պահա քո կարմիր արև։

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱԲ—Ս. Սարգսյանց, Ագուլեցոց բարբառը (զոկերի լեզուն), մ. II, Մոսկվա, 1883։

Ան, Ա—Մ. Աբեղյան, երկեր, հ. Ա, Երևան, 1966։

Անլժ, 3—Խ. Աբովյան, երկերի լիակատար ժողովածու, հ. III, Երևան, 1948։

Անլժ, 7—Խ. Աբովյան, երկերի լիակատար ժողովածու, հ. VII, Երևան, 1957։

ԱՀԸ—Ազգային ընդարձակ երգարան, Բեյրութ, 1932։

ԱՋ—Արյան ձայներ, երգարան, Թիֆլիս, 1906, երկրորդ տպագրություն։

ԱՀ, 7—8—Ազգագրական հանդես, գ. 7—8, Թիֆլիս, 1901, Քաչբերունի, Հայկական սովորություններ։

ԱՀ, 9—Ազգագրական հանդես, գ. 9, Թիֆլիս, 1902, Ե. Շահազիզ, Նոր Նախիջևանը և նոր նախիջևանցիք։

ԱՋԵ—Ակուղ Ջիվանու երգերը, Թիֆլիս, 1912 (խմբագրությամբ՝ Գ. Լևոնյանի)։

БПА—Поэзия Армении с древнейших времен до наших дней в переводе русских поэтов Редакция, вступительный очерк и примечания В Брюсова, Ереван, 1966

ԳԱԹ—Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան։

ԳԺԵ—Գուսանական և ժողովրդական երգեր, կազմեց Ս. Խանզադյան, Երևան, 1949։

ԳՎ—Ե. Տեր-Մկրտչյան, Գանձեր Վասպուրականի, հ. 1, Բոստոն, 1966։

ԳՔԱԵ—Գամառ-Քաթիպա, Ազգային երգարան հայոց, Ս. Պետերբուրգ, 1856։

ԴԽԱ—Ե. Շահազիզ, Դիվան Խ. Աբովյանի, հ. 1, Երևան, 1940։

ԵԿ—Երգարան Կիլիկիա, Կ. Պոլիս, 1921։

ԵՖՈՀ—Երգիչ Ֆահրատի ողբերն ու հառաչները կամ նորա բեկբեկ քնարի տխուր արձագանքը, Ալեքպոլ, 1907։

ՋԱՆ—Զեյթունցի, Զեյթունի անցյալեն և ներկայեն, մ. Ա, Վիեննա, 1901, մ. Բ, Փարիզ, 1903։

ՋՊ—Զեյթունի պատմագիրք, Պուենոս-Այրես, 1900։

ԹԲ—Ք. Թադևոսյանի բանաստեղծությունները, Մոսկվա, 1899։

ԺԵ—Ժողովրդային երգարան, հրատ. «Երևան», Բոստոն-Վաշինգտոն, թիվ 5։

ՀԵ—Համբոստ երգեր, Բոստոն, 1915։

ԺՍՏԱ—Հայկ. ՍՍՀ կուլտուրայի մինիստրության ժողովրդական ստեղծագործության տան արխիվ։

ԻՀԲ—Ա. Ինճիկյան, Հովհաննես Թումանյան, կյանքը և ստեղծագործության պատմությունը, 1869—1899, Երևան, 1969։

ԼԵ—Ե. Լալայան, երկեր, հ. 1, Երևան, 1983։

ԼՆԵ—Լիակատար նոր երգարան, Կ. Պոլիս, 1909։

ՄԵ—Մաղկեփունջ, երգարան, Թիֆլիս, 1907։

ԿԱԺ—Կոմիտաս, Ազգագրական ժողովածու, Հայ ժողովրդական երգեր ու պարերգեր, հ. II, Երևան, 1950։

КВ—*Г Аракелян*, Некоторые вопросы истории переселения армян на Северо-западный Кавказ и становление черкезогаев Кавказ и Византия, в. 3, Ереван, 1982

ԿԽԱ—Կուկունյան խմբի արշավանքը, Վիեննա, 1894։

ՀԱԲ, 2—Խ. Փորֆչեյան, Նոր Նախիջևանի հայ ժողովրդական բանահյուսությունը։ «Հայ ազգագրություն և բանահյուսություն (նյութեր և ուսումնասիրություններ)», պր. 2, Երևան, 1971։

ՀԱԲ, 9—Էջմիածնի և Աշտարակի բանահյուսությունից, գրի առավ Ա. Նազարյանը։ «Հայ ազգագրություն և բանահյուսություն (նյութեր և ուսումնասիրություններ)», պր. 9, Երևան, 1978։

ՀԱԲ, 11—Գ. Միքայելյան, Նոր-Բայազետ, «Հայ ազգագրություն և բանահյուսություն (նյութեր և ուսումնասիրություններ)» պր. 11, Երևան, 1980։

ՀԱԻԻԱ—Հայկ. ՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսության արխիվ։

ՀԱՀՀՊՕ—Հայ աշուղներն ու հորինողները Հայրենական պատերազմի օրերին, կազմեց և խմբագրեց՝ Ա. Վշտունի, Երևան, 1943։

ՀԵՊ—Հայոց երգարանը, հ. Ա, կ. Պոլիս, 1911։

ՀԵՈ—Ղ. Ալիշան, Հայոց երգք ռամկականք, Վենետիկ, 1852։

ՀԺՊ, 6—Հայ ժողովրդի պատմություն, հ. VI, Երևան, 1981։

ՀԽՑ—Հայկական խորհրդային ֆոլկլոր, ժողովածու, Երևան, 1938։

ՀՄԺԵ—Ս.ս Մնացականյան, Հայկական միջնադարյան ժողովրդական երգիր, Երևան, 1956։

ՀԱԺԲ—Ա. Ղանալանյան, Աբովյանը և ժողովրդական բանահյուսությունը, Երևան, 1941։

ՄՀ—Մրմունջք հայկական, Վառնա, 1901։

ՄՀԵ—Հայրենի երգեր, Հայրիկ Մուրադյանի ձայնից վերծանեց և կազմեց Ա. Փահլևանյանը, Երևան, 1980։

ՍՀԺԵՊ—Ս. Մելիքյան, Հայ ժողովրդական երգեր և պարեր, հ I, Երևան, 1949, հ. II, Երևան, 1953։

ՊՐԱԲ—Գ. Հակոբյան, Ներքին Բասենի ազգագրությունը և բանահյուսությունը, Երևան, 1974։

ՆԵՈԵ—Նոր երգարան, ռազմի երգեր, Թիֆլիս, 1915։

ՆՀԺՀ—Տ. Նավասարդյան, Հայ ժողովրդական հեքիաթներ, գ. VI, Թիֆլիս, 1890։

ՆՆՀԺԲ—Խ. Փորֆչեյան. Նոր Նախիջևանի հայ ժողովրդական բանահյուսությունը, Երևան, 1965։

ՆՔ—Նոր քնար, երգարան, հրատարակության տեղն ու թիվը չի նշված։

ՆՔՀ—Նոր քնար հայկական, Վառնա, 1897։

ՆՔՀ, Դ—Ոսկան Հովճաննիսյանց, Նոր քնար Հայաստանի, տետր Դ, Մոսկվա, 1858։

ՇԹՑ—Հ. Շահբազյան, Թանգարան գյուղը մեր և սիրո արյունոտ ածուներ, Բեյրութ, 1967։

ՊԵ—Պատանիին երգարան, Պեյրութ, 1959։

ՊՑՊ—Հ. Պողոսյան, Զեյթունի պատմությունը, 1409—1921 թթ., Երևան, 1969։

ՊԿԲ—В Потто Кавказская война в отдельных очерках, эпизодах, легендах и биографиях, т 4, в. 4, СПб, 1888

ՍՀԱԺԲՏ—Տ. Պալյան, Հայ աշուղներ, ժողովրդական երգիչներ, տաղասացք, Զմյուռնիա, 1911։

ՌՄ—Ռամկական մրմունջներ. աշուղական, ժողովրդական խառն երգեր և պարերգեր, խմբագրեց դպիր Արշակ Բրուտյանց, Ալեքպոլ, 1898, 1901, 1904։

ՍՀ—Սոխակ Հայաստանի, ազգային լիակատար երգարան, Մոսկվա, 1890, 1895, Բաքու, 1912։

Վե—Վազգեն, երգարան, հավաքեց Տիգրան Տերոյան (Վազգեն), Պոսթըն, 1901։

ՏԱՍ—Գլակ Տարոնցի, Ապստամբ Սասուն, ժնև, 1903։

Տե—Տարոն, երգարան, Պեյրութ, 1950։

ՏԺԵ—Տարոնի ժողովրդական երգեր, ձայնագրված Արմենուհի Գևոնյանի կատարումից, կազմեց՝ Ա. Գևոնյան, Երևան, 1978։

Տխ—Ա. Մխիթարյան, Տաղեր ու խաղեր, Ալեքպոլ, 1900։

ՏՍԿ—Գրիգոր Տալյանց, Սեր և կռիվ, Ալեքսանդրապոլ, 1907։

ՏՏ—Տաւրակ Տարոնո, երգարան, 1910, Թիֆլիս։

Փե—Փնչիկ, երգարան, Ս. Պետերբուրգ, 1906։

ՔՀ—Քնար հայկական, խմբագրեց Մ. Մխանսարյանց, Ս. Պետերբուրգ, 1868։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Հայ ժողովրդական ռազմի և զինվորի երգեր» ժողովածուի բնագրերը կազմված են պատմաաշխարհագրական սկզբունքով։ Բոլոր բնագրերը ներկայացված են ընդհանուր համարակալմամբ, յուրաքանչյուր գլուխ, ենթագլուխ ունի իր ինքնուրույն համարները, տարբերակները նույն համարի տակ նշվում են հայոց այբուբենի փոքրատառերով։

Այն երգերը, որոնք սկզբնաղբյուրներում անվերնագիր են, իրրև վերնագիր տրված է սկզբնատողը՝ չակերտների մեջ։

Բոլոր տպագիր և ձեռագիր հայտնի աղբյուրները չեն թվարկված՝ չծանրաբեռնելու համար ծանոթագրությունները։ Երգերի որոշ նմուշների հեղինակային սկզբնօրինակներ ներկայացված են ծանոթագրություններում՝ հեղինակային և ժողովրդական բնագրերի տարբերությունը ակնառու դարձնելու նպատակով։

Պատմական դեմքերի և տեղավայրերի վերաբերյալ տեղեկությունները ծանոթագրված են յուրաքանչյուր բնագրում՝ արաբական թվանշանով համարակալմամբ։ Սկզբնաղբյուրում առկա տվյալ բնագրին վերաբերող բացատրությունները առաղանիշով տրված են տողատակին։

Բնագրերը փոփոխության, խմբագրության չեն ենթարկված։ Փոխված է միայն ուղղագրությունը, բացառությամբ №№ 1, 2 ստեղծագործությունների, որոնք ներկայացված են անփոփոխ։ Բացառիկ դեպքերում ուղղված են ակնհայտ սխալները, արված են աննշան կետադրական խմբագրումներ։

ՄԱ, ՄԲ, ՄԿ, ԹԲ, ԹԿ համառոտագրությունները նշանակում են ծանոթագրություն ասացողի, ծանոթություն բանահավաքի, ծանոթություն կազմողի, թարգմանություն բանահավաքի, թարգմանություն կազմողի։

*

* *

ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՌԱԶՄԻ ԵՐԳԵՐԻ ՆՄՈՒՇՆԵՐ

1 (1). ա) Ի լեռն սրդի Հեթմոյ Ա

(էջ 57)

Տպագրվում է ըստ ՀԵՒ, էջ 5—7։ Վերահրատարակվել է նաև ԳՔԱԵ, էջ 35—36, ՔՀ, էջ 130—131, ՀՄԺԵ, էջ 231։

Երգի ռուսերեն թարգմանությունը մանրամասն ծանոթագրությամբ հրատարակել է Վ. Բրյուսովը (БПА, էջ 122, «Песня Левона»)։

բ) Ահա՛խ, բզկէոնն առեմ
(էջ 58)

Տպագրվում է ըստ ՀՄԺԾ, էջ 228—230։ Սկզբնաղբյուրը՝ 1608 թ., ձեռագիր երգարան, կազմած Խալդուղի ձեռքով (Մ. Մաշտոցի անվ. Մատենադարանի ձեռագիր № 7709)։ Տվյալ երգի կապակցությամբ ուշադրության է արժանի մի ժողովրդական երգ ևս, որը չերքեզահայերից գրի է առել, ապա չերքեզերեն բնագիրը գերմաներեն թարգմանությամբ հանդերձ 1938 թ. հրատարակել գերմանացի գիտնական Կ. Բոուդան (КВ, в. 3, стр. 36)։ Ստեղծագործության վերնագիրը հայերեն է. Leon takaor (Լեոն թաքաոր)։ Չերքեզահայերի պատմության հետազոտող Հ. Առաքելյանը այն կապում է Կիլիկիայի վերջին՝ Լևոն 6-րդ թագավորի անվան հետ։*

Всадник, сидящий на белой лошади
Трубил в медную трубу,
(И) возле поляны Асипа
Начали схватку
Когда уже начали (схватку),
Появился их черный конь,
Когда он уже появился
Началось большое сражение
«Если нас не впустят в наш дом,
Придется, пожалуй, нам жить в конуре
Аллах создал вас жестокими!
Где же я найду дом, подобный моему прежнему?»
(КВ, в 3, стр 35—36)

գ) Լևոն Գ-ի վրայ
(էջ 58)

Տպագրվում է ըստ ՊՀԱԺԾՏ, էջ 16։ Հրատարակվել է նաև ՀՄԺԾ, էջ 232։

2 (2). Ազատ-խանի Ըզմիլից չափմիշ արիլը
(էջ 59)

Տպագրվում է ըստ ԱԲ, մ 2-րդ, էջ 37—38։
Այլ տվյալներ երգի վերաբերյալ չկան։

I. ՌՈՒՍ-ՊՈՒՐՍԿԱԿԱՆ ԵՎ ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀՅՈՒՍՎԱԾ ԵՐԳԵՐ

1 (3). Տաղ ի Ռոստոմ-բեզ
(էջ 61)

Տպագրվում է ըստ «Բազմավեպ»-ի, 1847, № 3, էջ 40։ Հրատարակվել է. ա) ԳՔԱԾ, էջ 115—116։

---

* Շնորհակալություն ենք հայտնում Հ. Առաքելյանին, աղբյուրը մեզ սիրահոժար տրամադրելու համար (Ծ. Հ.)։

բ) ՆՔՀԴ, էջ 110—111։

գ) ՔՀ, էջ 505—506 և այլն։

Դիտվում են որոշ տարբերություններ. ԴՔԱՀ չկան 21 և 22 տողերը։

2 (4). Հայ աշուղ Սեֆի-Յուսուֆի ասած երգը Երևանի առման մասին
(էջ 62)

Թուրքերենից տողացի թարգմանել է Ե. Շահազիզը։

Տպագրվում է ըստ ԴԽԱ, հ. 1, էջ 327։

1. Նիկոլայ 1-ին ռուսաց թագավորը։

2. Ներսես Աշտարակեցի—հետագայում ամենայն հայոց կաթողիկոս։

3. Հասան-խան—Երևանի վերջին սարդարի՝ Հուսեյին խանի եղբայրը։

4. Մելիք-Սահակ Աղամալյան—Երևանի իշխաններից։

5. Պասկևիչ Ի. Ֆ.—Երևանի գրավման ժամանակ ռուսական զորքերի կովկասյան բանակի հրամանատար։

Վերահրատարակվել է. ՂԱԺԲ, էջ 71, ԱԵԺ, 7, էջ 355։

3 (5). «Սար ու ձոր սասանվիշ էյան, զարմացան»
(էջ 62)

Տպագրվում է ըստ ԱԵԺ, 3, էջ 177—178։

1. Պասկևիչ Ի. Ֆ.։

2. Վ. Մադաթով—ռուսական բանակի հայազգի գեներալ։

3. Կրասովսկի Ա. Ի.—ռուսական բանակի գեներալ։

4. Բենկենդորֆ Կ.—ռուսական բանակի գեներալ։

5. Ներսես Աշտարակեցի։

6. Եփրեմ—Ամենայն Հայոց կաթողիկոս։

4 (6). «Մոսկովը ճառավ էրզրումին»
(էջ 63)

Տպագրվում է ըստ «Բանբեր Հայաստանի արխիվների», 1974, № 3, եվ, հ. 1, էջ 435—436։ Թուրքերենից հայերեն է թարգմանել Ե. Գեղամյանը։

Երգը ռուսերեն հրատարակել է պատմաբան Վ. Պոտտոն. ПКВ, т. IV, вып IV, стр 485.

1. Ղելիփ փաշան—էրզրումի փաշան, թուրքական բանակի հրամանատար։

2. Հայր սուրբ—Կարապետ եպիսկոպոսը։

5 (7). «Ոտս դրի ձիու ղաշին»
(էջ 64)

Բնագիրը գտնվում է ՀԱԻԲԱ, FB I։ 2258։

Գրի է առել Մ. Մուրադյանը 1882 թ. Շամշադինում։ Երգի վերաբերյալ այլ տրվյալներ չկան։

6 (8). Հորդոր
(էջ 65)

Տպագրվում է ըստ ՆՔՀ, էջ 151։

«Երգ» վերնագրով հրատարակվել է.

ա) ՄՀ, էջ 73—74։

բ) ԱՀԲ, էջ 377 և այլն։

Նշված հրատարակություններում դիտվում են որոշ փոփոխություններ. յուրաքանչյուր քառատողի 2-րդ և 3-րդ տողերում «հայերը» բառի սկզբից ավելացված է «ոհ», «ախ» ձայնարկությունները, վերջին տան 3-րդ տողում «ժամեր կորնչին»-ի փոխարեն. «ժամը մարտնչին»։

Երգում ակնարկված են 1877—78ԹԹ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ ռուսական զորքերի կողմից Կարինի և Կարսի գրավման հետ առնչվող անցքերը։

Հայտնի է «Հորդոր» երգի համառոտ բնագիրը։

ԵՐԳ

Ռուսական պետություն, հայեր, ըսավ աշխարհի,
Բավ է քրիստոնյայք, ո՜հ հայեր, մնաք խեղճ գերի.
Ռուսական բանակն, հայեր, մտավ Հայաստան,
Օսմանյան զորքեր, ո՜հ հայեր, դեմ դեմի ելան։
Հրացան, թնդանոթներ, հայեր, գոռալ սկսան,
Ափսոս այն ազգակից, խեղճ հայեր որ զոհ գնացին
Հայկազն Մելիքով, հայեր, գեներալ ռուսաց,
Ղարսը շրջապատեց, ո՜հ հայեր, վրան ռումբ տեղաց։
(ՎԲ, էջ 324)

7 (9). Լոռվա-Մելիքի երգը
(էջ 65)

Ինագիրը գտնվում է ՀԱԻԲԱ, FB 1 (Տ. Նավասարդյանի ֆոնդ)։

Ասել է Պետրոս Գուլիկյանցը Արթիկում։ Այլ տվյալներ երգի վերաբերյալ չկան, ժամանակը՝ հավանաբար անցյալ դարի 80—90-ական թվականները։

1877—78 ԹԹ. ռուս-թուրքական պատերազմի ընթացքում և հաջորդ տարիներին հայ ժողովրդի մեջ լայն կենցաղավարում ունեին պատերազմի մասնակից հայազգի զորավարների քաջագործությունները գովերգող երգերը։ «Մշակի» թղթակիցը «Ճանապարհորդ» ստորագրությամբ «Նամակ Ղարսից» հոդվածում մեջ է բերում հետևյալ երկու տուները.

Մելիքն եկավ Ալաճեն,
Ղոշունը քաշեց յամաճեն,
Ջանդաքը թափեց ձորերը,
Արյունով ներկեց քարերը։
Մելիքի օխնած թուրը,
Նիզամը քաշեց սուրը։
Ես Մելիքն եմ լոռեցի,
Մուխթար փաշին զոռեցի։

և ապա նշում. «Այս երգը շատ երկար է։ Սրանով նկարագրում էին Ալաճայի պատերազմը, այդ լեռան առավելությունները, Մուխթարի թուլությունը, Լորիս Մելիքովի անվեհեր քաջությունները, Ղարսա առումը և այլն»։ Երգը թղթակիցը լսել է Կարսի Թազաքյանդ գյուղում, տեղացի օրիորդներից, որոնք այն երգում էին քաղցր ձայնով («Մշակ», 1882, № 175)։

Հայտնի է երգի մի այլ տարբերակ, բաղկացած երկու տնից, որը վերագրվում է Հ. Թումանյանին։

Ես Մելիքն եմ լոռեցի,
Մուհտար փաշին զոռեցի,
Տարի-նանա, տարի-նանա, Մելիք ջան,
Ղոշունի սարդար, Մելիք ջան։
Արփաչայի ծիլ-ծիլ խոտը,
Կարել է Մուհտարի հոտը,
Մելիք ջան,
Ղոշունի սարդար Մելիք ջան։
(ԻՀՒ, էջ 109)

Մ Աբեղյանը ևս հիշողությամբ գրի է առել Կարսի առմանը նվիրված երգից երկու տուն։ Ըստ նրա, 1890-ական թվականներին այն դեռ երգվում էր։

Ջեյրան թոփեր կապեցին,
Կարսա վրեն թափեցին։
Վո՛ւյ-վո՛ւյ, վո՛ւյ-վո՛ւյ Մե՛լիքով,
Ղուշումի սարդար Մե՛լիքով։

Կարսա բոլոր խանդաք ա,
Մեջը գյուլլի ջանդաք ա։
Վո ւյ-վո՛ւյ, վո՛ւյ-վո՛ւյ, Մե՛լիքով,
Ղուշումի սարդար Մելիքով։
(Աե, Ա, էջ 498)

8 (10). «Սալդատը ելավ Ալաջեն»
(էջ 66)

Բնագիրը գտնվում է ՀԱԻԲԱ, FF II։ 8523։ Գրի է առել Հ. Տեր-Վարդանյանը 1940 թ. Երևանում։ Բանահավաքը ծագումով Շիրակի Մահմուդջուղ (այժմ Արթիկի շրջանի Պեմզաշեն) գյուղից է։

1 Թուսական բանակի փայլուն հաղթությամբ ավարտված Ալաջայի ճակատամարտը խոր ազդեցություն է թողել ժողովրդի բանաստեղծական երևակայության վրա։ «Սալդատը ելել ա Ալաճեն» իբրև հիմնատող օգտագործված է նաև այլ երգերում (ՌՄ, 1898, էջ 206)։

2. Մ. Տ Լոռիս-Մելիքով։

9 (11). Գովեստ գեներալ Առշակ Տեր-Ղուկասյանին
(էջ 67)

Տպագրվում է ըստ ՌՄ, 1901, էջ 189, կա նաև 1904, էջ 165։ Տեղադրված է «Պարերգեր» բաժնում։

Երգի մի բնագիրը գտնվում է ԺՍՏԱ։

10 (12). Ա՛յ նավար, Բայազիտ վառեցին
(էջ 68)

Տպագրվում է ըստ ՆՀԺՀ, գ. 6-րդ, էջ 74—75։

Գրի է առել Պ. Մուրադյանը Ալաշկերտում և ի թիվս այլ ժողովրդագիտական նյութերի՝ անձնել վիպասան Պ. Պողոսյանին, իսկ Պ. Պողոսյանը՝ Տ. Նավասարդյանին (նույն տեղում, էջ 65, ծանոթագրություն)։

II ԱՋԳԱՅԻՆ-ԱՋԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԵՐԳԵՐ

Ա) ՋԵՅԹՈՒՆԻ, ՎԱՆԻ-ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ, ՄՇՈ ԵՎ ՍԱՍՆՈ ԵՐԳԵՐ

1 (13). Մայր Հայաստանի խրախույսն առ զեյթունցիս
(էջ 69)

Տպագրվում է ըստ ՆՔՀ, էջ 181։

Հրատարակվել է.

ա) ԺԵ, էջ 276, «Զեյթունցիներուն» վերնագրով։

Բնագրի հեղինակ՝ Տյունճև։ Նշվում է, որ երգվել է, «Ձայն մը հնչեցի» եղանակով։

2 (14). Զեյթուն անկախ
(էջ 69)

Տպագրվում է ըստ ԼՆԵ, էջ 127—128։

Հրատարակվել է.

ա) ՀԵՊ, էջ 119, աննշան բնագրային տարբերություններով։

բ) ՆԵՌԵ, էջ 44։

գ) ՋՊ, էջ 802, աննշան բնագրային տարբերություններով, կրկնակը երկու տող է.

Հեյլե՛, հեյլե՛, հեյլե՛, հեյլե՛,
Հեյլե՛, հեյլե՛, հեյլե՛, հեյլե՛ լե՛։

Նշվում է հեղինակը՝ Մ. Փորթուգալյան։

3 (15). Երգ մը Զեյթունի լեզվով
(էջ 70)

Տպագրվում է ըստ ՋԱՆ, մ Բ, էջ 77։
Ստորև ներկայացվում է թարգմանությունը։

Է երդիզ չայը ծեծ ըրինք. եկանք զորանոցն առինք,
Զորքերը գերի տարինք, մեր դրոշակը պարզեցինք։

Փաշան լսեց կատղեցավ. եկավ Ջերմուկ բնակեցավ,
Սոնդուխը կռիվ եղավ, խայտառակ ետ մղվեցավ։

Բարդուղիմեոս վարդապետ, հառաջ գնաց չմնաց ետ,
Հուսը հրացան, սուրը մեջքը. պատերազմի էր բանգետ։

Քահանայք զինյալ էին, տիրացուք ճիշտ նույն էին,
Ծերեր խրախույս տվեցին, տիկնայք ուրախացուցին։

Չեյթունցիք մտան դարան, ըսին զարկենք մեկ բերան,
Թուրք դիակ շատ կփռվեր, խնայեցնք չէր ըսվեր։

Ենի Տյունյա, Շովրոյան, Յաղուբյան և Սուրենյան,
Ջորսը մեկ բերան եղան. փաշան եղավ կորստյան։

Չեյթունցին ղըշլան առավ. զորքը թեմմանա ըրավ,
Հաչ դրոշակը տնկեցին. թշնամուն անիծեցին։

Աշուղ եմ ես Յովաննա. ուլնիացին քաջ կըլլա,
Աստված հաչողություն տա, միշտ հավերժ ո ժով մնա։
(ՉԱՆ, մ. Բ, էջ 78)

Չեյթունի բարբառով մեզ հասած ժողովրդական երգերի սակավաթիվ նմուշներից է։ Երգում հիշատակված դեպքերը տեղի են ունեցել 1895—96 թթ. ձմռանը. Չեյթունի չորս թաղապետ իշխանների գլխավորությամբ չեյթունցիները փոքրաթիվ ուժերով գրավել են թուրքական զորանոցը։

4 (16). ա) Չեյթունցիք
(էջ 70)

Տպագրվում է ըստ ՎԵ, էջ 256—257։
Հեղինակ՝ Հ. Չագրյան։
Հրատարակվել է.
ա) SS, էջ 204։
բ) ԸՆ, էջ 80. ընդամենը՝ 3 քառատող, ներկայացված բնագրի 2-րդ, 3-րդ, 5-րդ տները, նշված հաջորդականությամբ։
գ) ԺԵ, էջ 149։
դ) ՉՊ, էջ 804, բաղկացած է հինգ քառատողից, ներկայացված բնագիրք՝ առանց 5-րդ և 6-րդ տների։ Կան բնագրային որոշ տարբերություններ։

բ) Քայլերգ Չեյթունի
(էջ 71)

Տպագրվում է ըստ ՄՀ, էջ 50—51։
Հրատարակվել է.
ա) ՀԵՊ, էջ 82—83. կոչվում է «Չեյթունի մարշ», կցված է երաժշտական ձայնագրության մի հատված. բաղկացած է միայն 4 տնից, իսկ վերջին տունը չկա։ Վերջին տան վերջին երկտողը տարբեր է.

Ինչո՞ւ խղճուկ գլուխ ծռենք,
Բռնավորին մեր վիզ պարզենք։

բ) ՉՊ, էջ 800, ընդամենը չորս տուն. չկա 4-րդ տունը, իսկ վերջին տան վերջին երկտողը տարբեր է.

Մեր զբոսանք է պատերազմ.
Պատերազմներ ու արշավանք։

Կան բնագրային աննշան տարբերություններ։

գ) Երգ Զեյթունի
(էջ 72)

Տպագրվում է ըստ ՋԱՆ, մ Բ, էջ 79—80։

Երգը տեղադրված է 1895 թ. Զեյթունի դեպքերին նվիրված ստեղծագործությունների շարքում։ Ներկայացված բնագրի 1-ին տունը հայտնի է «Նոամյա երագիր Գեվորգյան ճեմարանի» ձեռագիր պարբերականի 1875 թ. դեկտեմբերյան համարում զետեղված «Մարշ» վերնագրով մի բանաստեղծությունից։ (Տե ս ՊՋՊ, էջ 301)։ Բանաստեղծության և «Երգ Զեյթունի» միջև կան իմաստային և բանաստեղծական ընդհանրություններ։

դ) Զեյթունցիներ
(էջ 73)

Տպագրվում է ըստ ՋՊ, էջ 803։ Երգահան Ա. Պատմագրյանը երգը մշակել է քառաձայն խմբի համար։ Վ. Բրյուսովը սույն բնագիրն, առանց վերջին քառատողի, թարգմանել է ռուսերեն և հրատարակել «Зейтунский марш» վերնագրով, իբրև ժողովրդական ռազմական երգ (БПА, էջ 119)։

Երգը հայտնի է մեր օրերում բանավոր ավանդմամբ։ Երգի սկզբնօրինակի հեղինակն է Հ. Ջագրյանը (1844—1899)։ Հ. Ջագրյանը զբաղվել է ուսուցչությամբ, հայտնի է եղել լեռնագավառում «Ջոլագ վարժապետ» մականունով։ Զեյթունի ազատագրական կռիվների ու ինքնապաշտպանական մարտերի կազմակերպիչ, մասնակից։ Թուրքական իշխանությունների կողմից բանտարկվել ու դատապարտվել է մահվան, սակայն խուսր է տվել մահապատժից։ 80-ական թվականներին այցելել է Թիֆլիս, Երևան։ Հանդիպում է ունեցել Ս. Տեր-Պողոսյանի (Խենթի) հետ։ Մահացել ու թաղվել է Բուքրեշում (Ռումինիա)։ Գրող Ս. Խանզադյանը հրատարակել է նրա շիրմաքարի մակագրությունը. «Հարություն Ջաքրեան, ծնեալ ի Զեյթուն (Օվնիա), 1844, հանգաւ ի տեր ի հասակի 55 ամաց 1899 յունիս 25-ի Պուքրեշ («Գարուն» ամսագիր, 1978, № 12, էջ 52)։

5 (17). Զինված պատահական
(էջ 73)

Տպագրվում է ըստ ԱՋ, էջ 24—25։

Հրատարակվել է.

բ) ՍՀ, 1912, էջ 297—298։

գ) ՀԵՊ, էջ 110։

ա) ԼՆԵ, էջ 123—124։

Բանավոր ավանդմամբ. բնագիրը գտնվում է ՀԱԻԲԱ, FF VI։ 7570։ Գրի է առել Գ. Միքայելյանը 1970 թ. Երևանում։ Գ. Միքայելյանի տաբբեբակը կրկներգ չունի։ 2-րդ քառատողի վերջին երկտողը ներկայացված բնագրի 3-րդ քառատողի առաջին երկտողն է. 3-րդ տունը տարբեր է.

Տուր ինձ հրացան,
Ես մի սուր դաշույն,
Ես կուզեմ կռվել, ես կուզեմ մեռնել,
Ես կուզեմ ծծել կաթի տեղ արյուն։

Բնագրի սկզբնօրինակը պատկանում է Գ. Տալյանի (Շերամ) գրչին, որը ստորև ներկայացվում է.

Ջինված պատրաստված Զեյթունի քաջեր,
Սուրբ ազատությամբ վառված անվեհեր,
Վրեժով լցված առյուծի նման,
Քայլ-քայլ կռվում եք տաճկի դեմ դաժան։

Կնցցեք դուք միշտ զեյթունցիք,
Որ պիտ փրկեք հայրենիք,
Դուք Հայաստանի պարծանք,
Մեր կյանքն էլ ձեզ կտանք*։

Զեյթունի լեռներ արյամբ շաղախված,
Թշնամիներով են շրջապատված,
Բայց նորա քաջեր երկյուղ չեն կրում,
Այր ու կին մեկտեղ կռիվ են մղում։

Նոքա միշտ կասեն լավ է ազատ մահ,
Քան բռնի ապրել աշխարհի վերա,
Եվ ստրուկ լինել անօրեն տաճկին,
Կամ արատ թողնել հայի անցյալին։

Մանուկն օրոցում աչքերը կապած,
Խնդրում է մորից՝ բազուկներս բաց,
Տուր ինձ հրացան և մի սուր դաշույն,
Ես կուզեմ ծծել կաթի տեղ արյուն։

Երեխան կասե. ի՞նչ ես կաշկանդել,
Քանդիր ինձ, մայրիկ, ես կուզեմ կռվել,
Չեմ ուզում հանգիստ ու այս օրորոց,
Երբ իմ եղբարքս կանեն լաց ու կոծ։

ՏՍԿ, էջ 37։

6 (18). Զեյթունի երգը
(էջ 74)

Տպագրվում է ըստ ԱՋ, էջ 130—131։
Հրատարակվել է.
ա) ՍՀ, 1912, էջ 300։
բ) ՄՀԲ, էջ 107։

7 (19). Զեյթունցի եմ մեմ
(էջ 75)

Տպագրվում է ըստ ՄՀԲ, էջ 107—108։

---

* Ամեն տան վերջը կրկնել այս տունը (Մ. Հ.)։

8 (20). Ձուխ-Կյատուկ
(էջ 75)

Տպագրվում է ըստ Վե, էջ 16։ Հեղինակ՝ Վազգեն (Տիգրան Տերոյան)։
Հրատարակվել է.
ա) SS. էջ 185—186, հեղինակ՝ Վազգեն։
1. Օհաննես—Հովհաննես Ագրիպպասյան, վանեցի, 2. Վարդան-Ալեքսանդր Գոլոշյան, թիֆլիսեցի։ Ազատագրական շարժման առաջին գործիչներից։ Ձոհվել են Ձուխ Կյատուկ լեռնանցքում, 1889 թ. Պարսկաստանից Վասպուրական՝ «երգիր» անցնելու ժամանակ։

9 (21). Ձոա Կեատուկ
(էջ 76)

Հրատարակվում է ըստ Վե, էջ 571—572։

10 (22). «Կովեցե՛ք, տղերք, կովեցե՛ք քաջ-քաջ»
(էջ 77)

Տպագրվում է ըստ Վե, էջ 531։
Նշված է հեղինակը՝ Մ. Ե. (Միհրդատ Եսայան)։
Հրատարակվել է.
ա) ԱՁ, էջ 16—17, «Կովեցեք տղերք» վերնագրով։
բ) Մե, էջ 80—81։
գ) Լնե, էջ 180, «Երգ Ավարայրի» վերնագրով։
ե) ՀեՊ, էջ 134, «Մարտիկի հիշատակին» վերնագրով.
դ) SS, էջ 248—249, «Խանասորի քայլերգը» վերնագրով.
զ) ԵԿ, էջ 253—254 և այլն։
Կան որոշ բնագրային տարբերություններ։ ԱՁ, Մե, Լնե, 1-ին տան վերջին երկտողը և 2-րդ տան վերջին երկտողը նույնն են։ Ներկայացված բնագրի 3-րդ տունը նշված հրատարակություններում 2-րդ տունն է, իսկ 2-րդը՝ 3-րդ։
Բանավոր ավանդմամբ. բնագիրը գտնվում է ՀԱԻԲԱ, FF VII։ 7517։ Երգել է Խ. Սիմոնյանը, 1963 թ. Վեդիում։ Գրի է առել բանահավաք Ա. Կաբապետյանը։ Ներկայացված բնագրի առաջին 12 տողը, իսկ վերջին երկու տողն է.

Մեռնինք հուսալով մերն է ապագան.
Մեռնինք, բայց կեցցե՛, կեցցե՛ Հայաստան։

1. Մարտիրոս Սարուխանյան (Մարտիկ), շուշեցի—Վանի շրջանում գործած հայդուկ, զոհվել է 1896 թ., երբ խմբով փորձում էր Վանից անցնել Պարսկաստան (ՀԺՊ, 6, էջ 262, «Լրաբեր», 1966, № 3, էջ 67)։

11 (23). ա) «Շատախու ոարեր աճուց զոզան»
(էջ 77)

Տպագրվում է ըստ «Արձագանքի», 1897, № 3։
Կոչվում է «Շատախցոց երգ». տեղադրված է «Կաղանդը ս. Էջմիածնի Գևորգյան ճեմարանում» անստորագիր հոդվածում։

1. Ագիզ
2 Ապրիկ } Հայդուկներ

բ) Ապրիկին ցաւ
(էջ 78)

Հրատարակվում է ըստ ՎՆ, էջ 583—585։ Հեղինակ՝ Վազգեն։

12 (24). ա) «Վարագա սար բացվե սուսուն»
(էջ 79)

Տպագրվում է ըստ «Արձագանքի», 1897, № 3։ Տեղադրված է «Կաղանդը ս. էջմիածնում» հոդվածում։

Տվյալ ստեղծագործության մասին ասվում է, որ այն կուռուպաշցվոց (գյուղ՝ Վասպուրականում) ժողովրդական երգերից է։ Ըստ հոդվածագրի, ճեմարանում անցյալ դարի վերջերին սովորություն է եղել, որ սաները խումբ-խումբ ներկայացնեն յուրաքանչյուրն իր հայրենիքի երգն ու պարը, զրույցն ու հեքիաթը։ Այս երգը ևս նույն եղանակով ներկայացվել է։

1. Վարագա սարին մի պատուհանաձև եռանկյունի փորվածք է։

Բանավոր ավանդմամբ. բնագիրը գտնվում է ՀԱԻԲԱ, FF VI։ 1247։

բ) Վանեցոց երգ
(էջ 80)

Տպագրվում է ըստ ՈՄ, 1904, էջ 70։ Տպագրվել է նաև ՈՄ, 1901, էջ 79։

1901 թ. հրատարակության մեջ ներկայացված բնագրի վերջին երկտողը բացակայում է։ Տեղադրված է «Խառն երգեր» բաժնում։

13 (25). «Խաբար տարեք ճարին, մարին»
(էջ 80)

Տպագրվում է ըստ «Արձագանքի», 1895, № 14։ Տեղադրված է «Սև սունցիների հետ» հոդվածում, հեղինակ՝ Ս. Հախումյան։

14 (26). Դեպի Վան
(էջ 80)

Տպագրվում է ըստ ՄՀԵ, էջ 111։

15 (27). Ո՛ճ, Սոխակ իմ
(էջ 81)

Տպագրվում է ըստ ՄՀԵ, էջ 112։

1. Սոխակ—հավանաբար հայդուկ։

2. Կոտոլ ձոր—գտնվում է Պարսկաստանի և Վասպուրականի սահմանամիջում։ Ձորով անցնող ճանապարհից օգտվում էին նաև հայ հայդուկները։

16 (28). Դեպի սիրուն Վան
(էջ 81)

Բնագիրը գտնվում է ՀԱԻԲԱ, FF V։ 2020։

Ասել է 69-ամյա Ղ. Սահակյանը 1964 թ. Սպիտակի շրջանի Սարամեջ գյուղում։ Գրի է առել բանահավաք Ա. Կարապետյանը։ Ասացողը գաղթել է Մուշից։

1. Ազատագրական շարժման գործիչ Մ. Սարգսյան (Փարամազ)։ Կախաղան է հանվել Կ. Պոլսում 1915 թ. հունիսի 15-ին։

17 (29). ա) Դալվորիկցի կարիճ (Տալվորիկի կարիճ)
(էջ 82)

Տպագրվում է ըստ «Արձագանքի», 1893, № 133։ Անվերնագիր. տեղադրվուծ է «Մուշ» հոդվածում, հեղինակ՝ Տարոնո-ենց։

«Արձագանքը» կրկին տպագրել է երգը (1894, № 108) «Մշեցոց երգեր» խորագրի տակ. հեղինակ՝ Ռեհվի Քուվի։

Ունեցել է բազմաթիվ հրատարակություններ։ Բանավոր ավանդմամբ կենցաղավարում է մեր օրերում։ Կատարվել է նաև պրոֆեսիոնալ երգիչների կողմից (Շ. Տալյան)։

ա) ՌՄ, 1898, էջ 99—101, 1901, էջ 126—128, 1904, էջ 110—112։ Առանց 6-րդ և 7-րդ տների և բնագրային փոքր տարբերություններով, ընդամենը 14 տուն։

բ) Վն, էջ 407—410, ՌՄ-ի տարբերակը, հետևյալ հորդորակով, որը երգվում է առաջին 2 տներից հետո և երգի վերջում։

Հա՜յ աղբըրտիք, վա՜յ աղբըրտիք,
Տալվորիկի զավակ եմ քաջ,
Ազատության սիրուն համար,
Եկեք դեպ ինձ, հառա՜ջ, հառա՜ջ։

գ) SS, էջ 259—262։ Երգը բաղկացած է 18 տնից բնագրային ոչ զգալի փոփոխություններով։

8-րդ տունը

Իսկի չքաշեմ բանիմ՝ կարոտ,
Քանի ունիմ զենգակ, վառոտ.
Ազատ ապրիմ, ազատ մեռնիմ,
Սասնո որդին եմ հարազատ։

16-րդ տունը

Ժակայն միթե կըրնա՞ աղքատ,
Կոչվել այն մարդ, որ է ազատ,
Միթե կա՞ բան մ'ավելի թանգ,
Քան անիշխան և ազատ կյանք։

Այս քառատողերը չկան «Արձագանքի» և «ՌՄ»-ի բնագրերում։ Հորդորակը երգվում է միայն առաջին 2 տներից հետո։

դ) ԺԽ, տների տարբեր դասավորությամբ, էջ 473—475, «Տալվորիկ» վերնագրով։

ե) Փն, ծավալը «ՌՄ»-ին հավասար, հորդորակին ասվում է յուրաքանչյուր 2 քառատողից հետո։

զ) FF VI։ 0955—0961։ Երգել է Ա. Հանեյանը 1967 թ. Երևանում։ Գրի է առել, Ա. Սահակյանը։ SS-ի բնագիրը. 18 տուն է, հորդորակին ասվում է յուրաքանչյուր 2 քառատողից հետո։

Որոշ աղբյուրներում նշվում է երգի բնագրի հեղինակը՝ Մ. Տամատյան։

Մ. Տամատյան (1863—1945). հայտնի պերճ Մուշլու, Մելքոն կեղծանուններով։ Ազգային-ազատագրական շարժման գործիչ. 1890-ական թվականներին մասնակցել է Սասունի ինքնապաշտպանական, պարտիզանական կռիվներին։

բ) Տալվորիկ
(էջ 83)

Տպագրվում է ըստ ՆՔՀ, էջ 13—15։

Նվիրված է հեղինակը՝ Մ. Տամատյան։ Առաջին 10 քառատողերը, որոշ բնագրային տարբերություններով նույնն են, ինչ «Տալվորիկի կորիճները», 11—14 տները միանգամայն տարբեր են։ Տպագրվել է.

բ) ՀԵՊ, էջ 15—17, «Տալվորիկ», 13 տուն, չկա 12-րդ տունը, հեղինակ՝ Մ. Տամատյան։

ա) ՄՀ, էջ 6—8, 14 տուն, երկու քառատողերի տարբեր դասավորությամբ։ «Տալվորիկի քայլերգ» վերնագրով հեղինակ՝ պերճ Մուշլու (Մ. Տամատյան)։

գ) Սասնո երգը
(էջ 85)

Տպագրվում է ըստ «Արձագանքի» 1895, № 3։ Համմտ. «Տալվորիկի կորիճ»։ Նըշվում է հեղինակը՝ Մ Տամատյան։ Երգը երգվել է մարտերի ժամանակ։

18 (30). Սասունցոց երգ
(էջ 85)

Տպագրվում է ըստ «Բազմավեպի», 1901, էջ 132։
Հրատարակվել է. Տե, էջ 68։

19 (31). «Մուշ, ա՜խ իմ հայրենիք»
(էջ 86)

Տպագրվում է ըստ «Արձագանքի», 1893, № 133։ Տեղադրված է «Մուշ» հոդվածում, հեղինակ՝ Տարոնո-եզ։

20 (32). «Պատառիկներ»
(էջ 87)

Տպագրվում է ըստ «Արձագանքի» 1893, № 133։ Տեղադրված է «Մուշ» հոդվածում, հեղինակ՝ Տարոնո-եզ։ Կոչվում է կոծ։ Հոդվածի հեղինակը երգում հիշատակված անուններին ավելացնում է. «և ապա Մակարը, Լևոնը, Կրպոն, Արապոն, Գևորգը, Սաղաթելը, և այլն» (նույն տեղում)։

Հիշատակված Մակարը, Լևոնը, Արաբոն, Գևորգը Մուշ-Սասունում անցյալ դարի 90-ական թվականներին գործող հայդուկներ են։

Երգում հիշատակված անցքը տեղի է ունեցել 1893 թ.։

21 (33). Ող
(էջ 87)

Տպագրվում է և ս «Արձագանքի», 1894, № 49։ Տեղադրված է «Մշու հարսանիք»

հոդվածաշարում, ի բիվս հարսանեկան, պանդխտության և այլ երգերի։ Հոդվածաշարի հեղինակ՝ Ղարիպ Տարոնցի։

22 (34). «Քամին էկավ էրաև, էրաև»
(էջ 88)

Տպագրվում է ըստ «Արարատի», 1896, № 12, էջ 556։ Գրի է առել Ս. Հայկունին, նշվում է. «Բուլանըխի բարբառով»։

23 (35). «Խիանցի՛ֆ, ընկավ ճավար»
(էջ 89)

Հրատարակվում է ըստ «Արձագանքի», 1894, № 150։

Տեղադրված է «Սասուն» հոդվածաշարում, հեղինակ՝ Իգիթբաշի։

«Տալվորկցու առիվ ի միջիայլոց այլ էրգերի ու շերերի՝ այօմ բերնե բերան ընկած, կերգվի և այս»։

1. Մելքոն—Միհրան Տամատյան

2. Քարակ—Տալվորիկ

3. Մուրատ—Համբարձում Բոյաճյան

24 (36). Ազու երգը
(էջ 89)

Տպագրվում է ըստ ՌՄ, 1898, էջ 137—138։

Կա նաև մյուս հրատարակություններում. 1901, էջ 167—168, 1904, էջ 146։ Տեղադրված է «Պարերգեր» բաժնում։

Հրատարակվել է.

ա) Տե, էջ 95—96, աննշան բնագրային տարբերություններով, «Ժողովրդական երգեր» բաժնում։

բ) Տե, 1-ին, էջ 64—65, «Տխուր երգեր» բաժինը։ Եղանակը տարածված է եղել. տէս «Սասուն վազեց արյան գետեր» (ներկա ժողովածուի № 46 երգը)։

25 (37). «Չէն օր գլուխն ճավսար իր դրուկ»
(էջ 90)

Տպագրվում է ըստ «Մուրճի», 1895, № 4, էջ 268։

Տեղադրված է «Սասուն» հոդվածաշարում։ Հեղինակը՝ Սեյլան։ Սեյլանը 1887—88 ԲԲ. ուսուցչություն է արել Սասունում (նույն տեղում, էջ 558)։ Երգի մասին հաղորդում է. «Սասնուհին, իբրև երախտագետ, յուր կորյունի անշուք օրորոցը օրորելիս երգում է քրդերեն հորինած դյուցազներգության կտորները, որոնց մեջ Սասո, Ավե, Գալե զուգափառ դրոշմված են մանկան մատաղ հասկության մեջ իբրև հերոսներ» (նույն տեղում)։ Ավելին, Տալվորիկի մեր (գյուղապետ), թունավորում է Հզուի գայմագամը (նույն տէղում, էջ 461)։ Մեր Հակոն նույն գայմագամի ջանքերով սպանվում է դավադրաբար 1879 թ. (նույն տեղում, էջ 465)։ Ավեն և Հակոն եղել են Մեր Սասոյի զինակիցները։ Մեր Սասոն Սասնո Գելի գյուղի Հոլայենց նշանավոր տոհմից է։ Մեր Սասոյին նվիրված երգեր են եղել, որոնք երգվել են նրա թաղման հանդեսին։

(նույն տեղում, էջ 263)։ Ավեն, Հակոն, Գալեն՝ Կոփի քաջերից և Ճեր Քալեն՝ Սիմոն վարդապետը, Նղել են Միր Սատոյի զինակիցները։

26 (38). Մասուն—Դավաո
(էջ 91)

Բնագիրը գտնվում է ԺՍՏԱ։

Ասել է ալջավազցի Ս. Մելիքյանը 1937 թ. Ջանգիբասարի շրջանի Թազագյուղում (այժմ Մասիսի շրջանի Ալինջակ գյուղը)։ Գրի է առել Մ. Դարբինյանը։

1. Հակոբ—հայդուկ։

2. Գևորգ—հայդուկ, ակնարկում է հայ ֆիդայիների կողմից խալիլի հետ նուիրակերպ դատաստան տեսնելու փաստը։

3. Խալիլ—քրդական աշիրաթապետ, 1899 թ. Ազբյուր Սերոբին սպանելուց հետո, կտրեց նրա գլուխը և տարավ Բաղեշ։

27 (39). ա) Ես մենակ չեմ
(էջ 91)

Տպագրվել է ՆՔ, էջ 534։

բ) «Սելեր եկան ճովռալեն»
(էջ 92)

Բնագիրը գտնվում է ՀԱԻԲԱ, FF V։ 2018—2020։

Երգել է 69-ամյա Ղ. Սահակյանը Սպիտակի շրջանի Սարամեջ գյուղում 1964 թ.։ Գրի է առել բանահավաք Ա. Կարապետյանը

28 (40). Մասունցոց բողոքը
(էջ 92)

Տպագրվում է ըստ «Արձագանքի», 1894, № 147։ Տեղադրված է «Մասուն» հոդվածում։

Հրատարակվել է.

ա) ՌՄ, 1898, էջ 70—71, 1901 էջ 97—98, 1904, էջ 85—86։ Տեղադրված է «Խառն երգեր» բաժնում։

29 (41). «Մենք սրտով կտրիճ ու բոյով պարթև»
(էջ 93)

Բնագիրը գտնվում է ԳԱԹ, Կոմիտասի ֆոնդ, գ. 356, էջ 10 («Ժողովրդական երգեր» հավաքածուն)։

30 (42). ա) Կտրիճ սասունցիք
(էջ 93)

Տպագրվում է ըստ ՌՄ, 1898, էջ 87։ Կա նաև՝ 1901, էջ 114, 1904, 100—101։ Տեղադրված է «Խառն երգեր» բաժնում։

Հրատարակվել է.

ա) ՍՀ, 1912, էջ 209—210 և այլն։

3-րդ տունը առանձին տպագրված է ՏԱՍ, էջ 21։

1, 4-րդ և 5-րդ տները որոշ տարբերություններով տպագրվել են «Արձագանքում» 1895, № 17։

բ) «Մենք սրտով կարին ու բաժով պարթև»
(էջ 94)

Տպագրվում է ըստ ՏԱՍ, էջ 8—9։

31 (43). Սասունի պատերազմ
(էջ 95)

Տպագրվում է ըստ ՌՄ, 1898, էջ 85—87։ Կա նաև՝ ՌՄ, 1901, էջ 112—114, 1904, էջ 98—100։

Երգի ստեղծման հիմքում ընկած են 1892—1894 թթ. Սասունում տեղի ունեցած արյունոտ դեպքերը, երբ թուրքական իշխանությունները քուրդ ավազակաբարո աշիրաթների հետ միասին դաժան հաշվեհարդար տեսան Սասնո բնակչության հետ։

1. Ազատագրական շարժման գործիչ Մ իհրան Տամատյանը աշխատում էր կազմակերպել սասունցիների պաշտպանությունը։

2. Գասպար—սասունցի իշխան։

3. Գելի—Գելիեզուզան, գյուղ Սասունում.

4. Պետո—Գելու ռեսը։

32 (44). Սասունցոց զանգատը
(էջ 96)

Տպագրվում է ըստ ՌՄ, 1898, էջ 194, կա նաև 1901, էջ 240, 1904, էջ 212։ Տեղադրված է «Պարերգեր» բաժնում։ Ըստ բանահավաքի երգվում է «Ազի» երգի եղանակով։

Ունեցել է բազմաթիվ հրատարակություններ։

ա) Վե, էջ 325, «Սասունցիներու գանգատը», առանց կրկնակի։

բ) ՏՏ, էջ 252, «Սասունցիներու գանգատը», առանց կրկնակի։

գ) ԺԵ, էջ 433, վերնագիրը նույնը, կրկնակով։

Բանավոր ավանդմամբ. ՀԱԻԲԱ, FF VI։ 0951։ Երգել է Ա. Հանեյանը, Երևանում, 1967 թ.։ Գրի է առել բանագետ Ա. Սահակյանը։ Երգվել է առանց կրկնակի, 1-ին տան 4-րդ տողը իբրև 3-րդ տող, առանց վերջին երեք տողի։

33 (45). «Սասուն նստեր անտեր կու լար»
(էջ 97)

Տպագրվում է ըստ ՄՀԺԵՊ, հ. 1, էջ 226։

34 (46). Սասման պոլոր
(էջ 98)

Բնագիրը գտնվում է ՀԱԻԲԱ, FF VII։ 7274։ Ասել է Հ. Ջադոյանը Կարմիրի շրջանի Մարտունի գյուղում 1962 հուլիսին։ Գրի է առել բանահավաք Ա. Կարապետյանը։

Ասացողը ծնվել է 1897 թ. Սպարկերտի Հառնչիկ գյուղում, 1915 թ. գաղթել է Արևելյան Հայաստան։

35 (47). Սասուն
(էջ 98)

Բնագիրը գտնվում է հեղինակի անձնական արխիվում։

Երգել է 58-ամյա Կ. Բարսեղյանը 1963 թ. Երևանում։ Կ. Բարսեղյանը վարդենիսցի է, նախնիները՝ Ալաշկերտից։

36 (48). Սասունա սարի երգը
(էջ 99)

Բնագիրը գտնվում է հեղինակի անձնական արխիվում։

Երգել է 59-ամյա Դ. Թովմասյանը Թալինի շրջանի Բազմաբերդ գյուղում 1964 թ.։ Դրի է առել հեղինակը։

Ասացողը ծագումով Սասնա Արծվիկ գյուղից է։

Երգի սկզբնօրինակը պատկանում է Ջիվանու գրչին (տես ԱՋԸ, էջ 87)։

37 (49). «Քայլամոլոր ճեզ բանակը»
(էջ 99)

Տպագրվել է ՀԵՊ, էջ 58։

1. Մուրատ—Համբարձում Բոյաճյան, ազատագրական շարժման գործիչ։

2. Արմենակ—Արմենակ Ղազարյան (Դժոխք Հրայր), հայդուկ։

3. Սեպուհ—հայդուկ։

Բ) ՀԱՅԴՈՒԿԱՅԻՆ ԵՐԳԵՐ

1 (50). Շարժում հայրենյաց կարոտ
(էջ 100)

Տպագրվում է ըստ ՍՀ 1912, էջ 175—176։

Երգը նվիրված է Կարինի «Պաշտպան հայրենյաց» հայրենասիրական կազմակերպության գործունեությանը։ Ներկայացված տարբերակը առավել ամբողջականն է ու ծավալունը՝ 14 տուն։

Ունեցել է բազմաթիվ հրատարակություններ, տարբեր ծավալով և տների տարբեր դասավորությամբ, աննշան բնագրային տարբերություններով։

ա) ՆՔՀ, էջ 98, «Շարժում հայրենյաց սիրո», ունի

«Երիտասարդք զեն ի ձեռին լալով խնդրում են
Պատերազմիլ ազգին համար, արյուն հեղում են»

տունը, որը չկա ՍՀ, 1912։ ՆՔՀ-ի տարբերակում չկան 11-րդ և 13-րդ տները։

բ) ՍՀ, 1890, էջ 220, 1895, էջ 226, «Կարնո բանդարկյալներուն», 7 տուն, չկան 3—8 և 14 տները։

գ) ՌՄ, 1898, էջ 82, 1901, էջ 110, 1904, էջ 96, 8 տուն տարբեր դասավորությամբ, չկան 6—8 և 12—14 տները։ Անվերնագիր։ Բնագրային աննշան տարբերություններով։ Տեղադրված է «Խառն երգեր» բաժնում։

դ) ՎԲ, էջ 150—151, «Կարնո շարժումը», 11 տուն, չկան 6—8 տները։

ե) ՄՀ, էջ 80—81, «Երգ Կարնո», 5 տուն, չկան 4 և 6—13 տները։

զ) ՀԵՊ, էջ 48, «Էրզրում», 8 տուն, չկան, 6—8 և 11—13 տները։

է) ՄՀԲ, էջ 108, 5 տուն, ներկայացված բնագրի 1-ին, 2-րդ, 3-րդ 12-րդ և 10-րդ տներր, կան բնագրային աննչան փոփոխություններ։

Ընագրերում, բացի ՄՀԲ, «քուրդ» բառի փոխարեն «թուրք»։

Երգը բանավոր ավանդմամբ հասել է մեր օրերը, ենթարկվելով որոշակի փոփոխության ու աղճատման Ստորև ներկայացվում է մի տարբերակ, գրի առնված Ա. Կարապետյանի կողմից Ղ. Սահակյանից 1964 թ. Սպիտակի շրջանի Սարամեջ գյուղում (ՀԱԻԲԱ FF V, 2006)։

Զայնը հնչեց Էրզրումից

Զայնը հնչեց Էրզրումից,
Հայոց լեռներից,
Հայ զինվորները գունդ-գունդ կազմած,
Ջենքերն են շողացնում։
Ուրախացիր Մայր Հայաստան
Ջավակներդ քաջ.
Յուր որդոց սուրբ արյունով,
Գնում են դեպ առաջ։
Հայ ծերուկը սուրը ձեռքին
Լալով խնդրում է,
Հայրենիքի ազատություն տեսնել,
Այն ատեն մեռնել։

Վ. Բրյուսովը երգի 7 երկտողից բաղկացած բնագիրը (1—5 և 7, 8 երկտողերը) թարգմանել է ռուսերեն և հրատարակել «Военная эрзрумская песня» վերնագրով (БПА, էջ 120)։

2 (51) ա) Խրախույս հայ ռազակոչ զինվորին
(էջ 101)

Տպագրվում է ըստ ՄՀ, 1890, էջ 120—121։ Նշվում է՝ հեղինակ Խ. Հ.։
Հրատարակվել է
ա) ԸԲ, էջ 65—66, հեղինակ՝ Պ. Նաթանյան. «Զինվորի մոր երգը» վերնագրով։
Ներկայացված բնագրի վերջին տան 3-րդ տողը փոխված է

Ազգի համար գնա, կյանք տուր։

Ունի հավելյալ տուն վերջից.

Գըրչով ուսար ազգ, հայրենիք,
Գընա՛ սուրով փըրկել զայն,
Մեր հայրենյաց վըշտաց հերիք՝
Չըսավ աշխարհր համայն։

բ) Ձինվորի մոր երգը
(էջ 101)

Տպագրվում է ըստ ԺԾ, էջ 146—147։
Հրատարակվել է.
ա) SS էջ 195—197, «Ձինվորի մոր խոսքը»։ Բազկացած է 13 տնից, հավելյալ երկու տները հետևյալներն են (ներկայացված բնագրի 8-րդ տնից հետո).

Խանձարուրիդ անար մրմունջ,
Սրորոցիդ շուրջը օրոր,
Ազգ, հայրենիք երգեց իմ շուրջ։
Դու հայրենյաց ես մատաղ։

9-րդ տնից հետո.

Արշալույսին, վերջալույսին,
Աղոթքե վերջ՝ ու առաջ,
«Ձքեզ ծներ եմ ազգի համար,
Ձրսի՞ որդյակ, օն հառաջ»։

բ) ՆԿ, էջ 156—157, «Մոր հրավերը ի մարտ»։
գ) ՄՀՆ, էջ 127, «Մոր հրավերը, ի մարտ», 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ տները, բնագրային աննշան փոփոխություններով։

3 (52). «Հերիք է մայրիկ, դու իճն փայփայես»
(էջ 102)

Տպագրվում է ըստ ԱՋ, էջ 63—64։
Հրատարակվել է.
ա) ԾՆ, էջ 153։
բ) ՆՔ, էջ 212։

4 (53). ա) Հայդուկի հրաժեշտը
(էջ 103)

Տպագրվում է ըստ ՆԲԱԲ, էջ 342։ Տեղադրված է «Ռազմի և հինվորի երգեր» բաժնում։

բ) «Մնաս բարյավ բաղցրիկ մայրիկ»
(էջ 103)

Բնագիրը գտնվում է հեղինակի անձնական արխիվում։
Գրի է առել Գ. Միքայելյանը 1970 թ.։ Լսել և սովորել է իր քրոջից, 1910-ական թվականներին։

5 (54). Հայդուկի երգերից
(էջ 104)

Տպագրվում է ըստ ԱՋ, էջ 73—74։
Հրատարակվել է.

ա) ՀԵՊ, էջ 247։

բ) ՆԵՌԵ, էջ 28—29։

Բանավոր ավանդմամբ. բնագիրը գտնվում է ՀԱԻԲԱ, FF VIII։ 7418։ Ծրգել է 65-ամյա Հ. Մամիկոնյանը Գանձակի (այժմ Կիրովաբադ) Քարհատ գյուղում։ Գրի է առել բանահավաք Ա. Կարապետյանը։

6 (55). Ներքին բասենցու խաղը

(էջ 104)

Տպագրվում է ըստ ՆԲԱԲ, էջ 342։ Տեղադրված է «Ռազմի և զինվորի երգեր» բաժնում։

7 (56). ա) Հույս

(էջ 104)

Տպագրվում է ըստ ՆՔՀ, էջ 47։

Հրատարակվել է.

ա) ՀՆԵ, էջ 5, նախավերջին տունը «բ» տարբերակի նախավերջի տունն է։

բ) ՀԵՊ, էջ 95, բնագրային որոշ փոփոխություններով և այլն։

բ) Երգ ռամկական

(էջ 106)

Տպագրվում է ըստ ՄՀ, էջ 28—29։

Հրատարակվել է.

ա) ՎԵ, էջ 410—411։

բ) ՏՏ, էջ 249։

գ) ԺԵ, էջ 34։

գ) Նահատակներու հիշատակին

(էջ 107)

Տպագրվում է ըստ ՀԵՊ, էջ 192։

Տպագրվել է նաև ԺԵ, էջ 14։

դ) Մեկնում

(էջ 107)

Տպագրվում է ըստ ՆՔ, էջ 197։

ե) «Անա՛, մայրիկ, ես գնում եմ»

(էջ 108)

Տպագրվում է ըստ ԱՀ, էջ 22—23։

Հրատարակվել է.

ա) ԼՆԵ, էջ 49—50։

բ) ՆԵՌԵ, էջ 6—7։

Բանավոր ավանդմամբ բնագիրը գտնվում է ՀԱԻԲԱ, FF IV, 5501, երգել է վարդենիսցի 57-ամյա Կ. Բարսեղյանը 1962 թ. Երևանում։ Գրի է առել բանագետ Ա. Նազինյանը։ Բաղկացած է 4 քառատողից, ներկայացված բնագրի 1-ին, 2-րդ, 4-րդ տները նշված հաջորդականությամբ։ 4-րդ տունը հետևյալն է.

Վարժարանից ընկերներս,
Խումբ-խումբ ելած պիտի գան,
Գերեզմանիս հողի վրա,
Տխուր ձայնով պիտի լան։

գ) «Մայրիկ, երբ որ Սասուն եկար»
(էջ 109)

Բնագիրը գտնվում է հեղինակի անձնական արխիվում։

Գրի է առել Թ. Պողոսյանը 1983 թ. Երևանում։ Լսել և սովորել է իր հորից՝ Գ. Պողոսյանից։

Այժմ էլ երգվում է։

8 (57). Պատերազմի կոչ
(էջ 110)

Տպագրվում է ըստ Վե, էջ 63։

Հրատարակվել է բնագրային տարբերություններով.

ա) ԱՋ, էջ 10, ունի հավելյալ մեկ տուն։

բ) ԺԵ, էջ 491, բաղկացած է 7 տնից։

գ) ԳՎ, էջ 519, միայն առաջի 2 տունը։

ԳՎ-ի հեղինակը սկզբնօրինակի հեղինակ է համարում Մ. Եսայանին, մինչդեռ Վե-ում նշված է Գ. Թադևոսյան։

9 (58) «Թիկունքդ լայն, բևեռդ ուժգին»
(էջ 110)

Տպագրվում է ըստ ԱՋ, էջ 53։

Հրատարակվել է.

ա) ԼՆե, էջ 146։

բ) ՆԵՌե, էջ 30։

գ) ՄՀե, էջ 112, բնագրային աննշան փոփոխություններով և այլն։

Բանավոր ավանդմամբ հայտնի է մեր օրերում։ Բնագրերը գտնվում են.

ա) ՀԱԻԲԱ, FF VII, 7513, երգել է Ս. Խաչատրյանը 1969 թ. Վեդիում։ Գրի է առել Ա. Կարապետյանը։ Ունի 7 տուն. 1—3-րդ տները ներկայացնում են սույն բնագրի 1—3-րդ տները, 1—4-րդ «Հուշս» երգի 1—4-րդ տները (տե՛ս սույն ժողովածուի № 56 երգը)։

բ) ՀԱԻԲԱ, FF VI, 7554, Գ. Միքայելյանի գրառում։ Լսել և սովորել է քրոջից 1915—1916 թթ.։ Ընդամենը 3 տուն։ Առանց առաջին տան։ Ըստ բանահավաքի, յուրաքանչյուր տան վերջին երկտողը կրկնվում է։

Երգել է Ն. Թորգոմյանը, 1945 թ. Այգեշատ գյուղում, ծնված 1920 թ. Աշտարակի շրջանի Եղվարդ գյուղում, գրագետ։ Գրի է առել Ա. Նազարյանը (ՀԱԲ, 9, էջ 158)։

30 (175). Հին սալդաթի երգ
(էջ 198)

Բնագիրը գտնվում է ԺՍՍԱ։

Երգել է սխտանցի 63-ամյա Հ. Ադոյանը։ Գրի է առել գրող Ս. Խանզադյանը։ Ասացողը երգը լսել է 1914—1916 թթ. «Սալդաթ եզած վախտը»։

31 (176). Թոխտս ղարա էր
(էջ 198)

Տպագրվում է ըստ ՀԱԲ, 9, էջ 110, № 209։

Երգել է Ա. Մելքոնյանը 1921 թ. Էջմիածնում։ Ասացողը ծնվել է 1890 թ. Աշտարակի շրջանի Բյուրական գյուղում։ Գրի է առել Ա. Նազարյանը (ՀԱԲ, 9, էջ 158)։

32 (177). Ասի բանակ էթամ
(էջ 199)

Բնագիրը գտնվում է ԺՍՍԱ։

Երգել են 13-ամյա Յուլակ Խաչատրյանը և 12-ամյա Ռուբեն Ենոքյանը Երևանում, 1946 թ.։ Գրի է առել գրող Ս. Խանզադյանը։ Գրառման հանգամանքների մասին տե՛ս № 258 գ ծանոթագրությունը։

33 (178). Սալդաթի երգ
(էջ 199)

Բնագիրը գտնվում է ՀԱԻԲԱ, FF I։ 2093—2097։

Ասել է 35-ամյա, անգրագետ Լ. Նազարյանը Ախտայի (այժմ Հրազդան) շրջանի Ալափարս գյուղում 1934 թ.։ Գրի է առել Գ. Թարվերդյանը։

Ասացողը հաշմանդամ է, ժամանակցել է 1-ին համաշխարհային պատերազմին, ուր կորցրել է երկու ոտքը։ Երգերը սովորել է ուրիշներից։

34 (179). «Բարձր սարի գագաթին ծաղիկ ո. վիճակ»
(էջ 200)

Ինագիրը գտնվում է ՀԱԻԲԱ, FF IV։ 8669։

Երգել է 29-ամյա Ա. Խաչատրյանը Ազիզբեկովի շրջանի Ագարակ գյուղում 1956 թ. սեպտեմբերին։ Գրի է առել բանագետ Ս. Հարությունյանը։

«Այս երգը երգում են բանակ տանելու ժամանակ։ Զինվորի հին երգ է» (FF IV։ 8669)։

35 (180). Մայրիկ
(էջ 201)

Ինագիրը գտնվում է ՀԱԻԲԱ, FF IV։ 8671։

«Երգը կատարեց» 20-ամյա Գ. Գրիգորյանը Ազիզբեկովի շրջանի Աղավնաձոր գյուղում 1956 թ.։ Գրի է առել բանագետ Ս. Հարությունյանը։

Ասացողը երգը լսել և սովորել է իր ծնողներից։

36 (181). «Գնալով, գնալով ճասանէ Դիլիջան»
(էջ 201)

Ինագիրը գտնվում է ՀԱԻԲԱ, FF VI։ 7575։

Գրի է առել Գ. Միքայելյանը 1970 թ.։ Լսել և սովորել է 1917—20 թթ. իր քրոջից։ Տպագրվել է ՀԱԲ, 11, էջ 88։

37 (182). «Եթիմ մնար նիկոյ բալեն»
(էջ 201)

Ինագիրը գտնվում է ԺՍՏԱ։ Երգի վերաբերյալ այլ տվյալներ չկան։

38 (183). Նամակ
(էջ 202)

Ինագիրը գտնվում է ԺՍՏԱ։

Երգի վերաբերյալ այլ տվյալներ չկան։

39 (184). Երկնէով անցնում էր
(էջ 203)

Ինագիրը գտնվում է ՀԱԻԲԱ, FF II։ 0507։

Երգել է 55-ամյա Ս. Բարսեղյանը Էջմիածնի շրջանի Ներքին Խաթունարխ գյուղում։ Գրի է առել Ա. Ղանալանյանը Հայրենական պատերազմի տարիներին։

40 (185). Հին սալդատի երգ
(էջ 203)

Ինագիրը գտնվում է ԺՍՏԱ։ Գրի է առնված նախասովետական շրջանում։ Երգի վերաբերյալ այլ տվյալներ չկան։

41 (186). Ընկել եմ սալդաթ

(էջ 204)

Տպագրվում է ըստ ՀԱՔ, 9, էջ 111, № 212։

Գրի է առել Ա. Նազարյանը։ Երգի վերաբերյալ այլ տվյալներ չկան։

42 (187). «Վերի գաղեն աբա ունեմ»

(էջ 204)

Ինագիրը գտնվում է հեղինակի անձնական արխիվում։

Գրի է առել Գ. Միքայելյանը 1968 թ. Երևանում։ Երգը տարածված է եղել Նոր-Բայազետում։ Տպագրվել է ՀԱՔ, 11, էջ 88։

43 (188). Հոպ գյուլի

(էջ 205)

Տպագրվում է ըստ ՀԱՔ, 9, էջ 114, № 229։

Երգել է Գ. Սաֆարյանը, ծնված 1906 թ., միջնակարգ կրթությամբ, էջմիածնի շրջանի Այգեշատ գյուղում։ Գրի է առել Ա. Նազարյանը 1929 թ. (ՀԱՔ, 9, էջ 159)։

44 (189). Գերմանու ֆռռնեը...

(էջ 205)

Ինագիրը գտնվում է ՀԱԻԲԱ, FF I։ 2105։

Ասել է Հ. Արշակյանը Ախտալի (այժմ Հրազդանի) շրջանի Ալափարս գյուղում 1934 թ.։ Գրի է առել Գ. Թարվերդյանը։

Ասացողը 30 տարեկան է, անգրագետ, երգերը սովորել է ուրիշներից լսելով։

45 (190). «Գլխըներիս գյուլեն կթափվի բոփից»

(էջ 205)

Ինագիրը գտնվում է ՀԱԻԲԱ, FF I։ 2449—2451։

Երգել է Ա. Ստեփանյանը Լենինականի Թուխառու (այժմ Հաջիկ) գյուղում 1934 թ.։ Գրի է առել Գ. Թարվերդյանը։

Ասացողը 28 տարեկան է, անգրագետ, երգը սովորել է ուրիշներից լսելով։

46 (191). «Հազար իններ ճարուր տառնըշորս բվին»

(էջ 206)

Ինագիրը գտնվում է ՀԱԻԲԱ, Ս. Մովսիսյանի ֆոնդում։

Գրի է առել Ս. Մովսիսյանը Ախալցիխայի Շղալրբբիլա գյուղում։ Այլ տվյալներ երգի մասին չկան։

47 (192). Ձինվորի երգը

(էջ 206)

Ինագիրը գտնվում է ԺՍՏԱ։ Գրի է առնված 1940 թ.։ Երգի վերաբերյալ այլ տվյալներ չկան։

48 (193). «Տունը մնաց fուրոչըս, մորըս»
(էջ 207)

Բնագիրը գտնվում է ՀԱԻԲԱ, Ս. Մովսիսյանի ֆոնդում։
Գրի է առել Ս.Լ Մովսիսյանը Ախալցխայի Շղալրըբիլա գյուղում։
Երգի մասին այլ տվյալներ չկան։

49 (194). Սալդաթի երգ
(էջ 207)

Բնագիրը գտնվում է ՀԱԻԲԱ։
Ասել է 70-ամյա Բ. Կարապետյանը Բյուրական գյուղում, 1964 թ. ամռանը։ Գրի է առել բանագետ Ռ. Գրիգորյանը։

50 (195). Ռաստակեսին երգը
(էջ 208)

Տպագրվում է ըստ ՀԱԲ, 2, էջ 40—41։ Հրատարակվել է նաև ՆՆՀԺԲ, էջ 78—79։
Երգը հորինվել է Նորնախիջևանցի զինվոր Ա. Քարտաշյանի մահվան կապակցությամբ, որը տեղի է ունեցել 1898 թ. Ախալցխայում։ Երգվում է «Դու չես հավատում» երգի եղանակով (ՀԱԲ 2, էջ 40)։

51 (196). Անբախտ գդրիջ
(էջ 208)

Տպագրվում է ըստ ՀԱԲ, 2, էջ 42։ Հրատարակվել է նաև ՆՆԺԲ, էջ 81։

52 (197). Հասան-Ղալա
(էջ 209—215)

«Հասան-Ղալա» անունով հայտնի երգերի շարքում առկա մոտիվների կրկնություններից խուսափելու նպատակով հարմար գտանք կազմել համահավաք բնագիր։
Համահավաքում ընդգրկված յուրաքանչյուր երգ ծանոթագրված է։ Բնագրային տարբերությունները նշված են, ըստ որում առաջին թիվը ցույց է տալիս համահավաքի բնագրի տան հաջորդական համարը, երկրորդը՝ տողի։
ա) «Մըժընկերտու տեղ տուզ էր»։ Բնագիրը գտնվում է ՀԱԻԲԱ FA V։ 3211—3215։ «Պատմեց Ղուկաս, Լևոն, Թադեոս (բասենցի) Շնողում, 1915 թ. հոկտեմբերի 5-ին»։ Գրի է առել Ն. Մարտիրոսյանը։ Ընդամենը 10 տուն։
29, 30, 11, 15, 5, 9, 33, 26, 1, 25 տները՝ նշված դասավորությամբ։
Բնագրային տարբերություններ.

11/40 Հասան խալեն ...
41 Կյուլլեն միջին ...
42 Թևիս ...
43 Անտեր ...
5/17 Հասան խալա շատ գնացել ենք,
18 Անոթի, ծարավ մնացել ենք,
19 — — — — — — — —

20 Անտեր դառնաս, Հասան խալա։
9/33 ... անվան ...
34 Կռիվ էնող հայ տղա էր,
35 Անտեր մնաս, Հասան խալա,
Ընծի նղար դարտ ու բալա։
33/129 Սիրտս ընկավ կրակ վառավ,
130 — — — — — —
131 Վերան մնաս .....

բ) «Ասին աստված մեզ պաշտպան էր», Բնագիրը գտնվում է ՀԱԻԲԱ FF I, 2087—2091։ Երգել է Լ. Նազարյանը Ախտալի (այժմ Հրազդան) շրջանի Ալափարս գյուղում։ Գրի է առել Գ. Թարվերդյանը։ Ասացողը 35 տարեկան է, հաշմանդամ (զուրկ է երկու ոտքից), մասնակցել է 1-ին համաշխարհային պատերազմին։ Երգերը սովորել է ուրիշներից լսելով։

25, 34, 15, 22, 17, 35, 32, 21 տները, նշված հաջորդականությամբ։

Բնագրային տարբերություններ.

25/98—Աստվածածին մեզ ...
99—Ջելով էկավ ...
100—Մենք ինչ աննենք, շատ ...
101— ... տառնար ...
15/58 ..... մի մեծ սար էր,
59 .... անմայ քար էր,
60 Կռվողների շատը հայ էր,
61 . . . . . .
62 Վերան դառնար .....։
5/17 Թողեց Ղալեն, փախավ բալեն,
18 Մեռներ էմիր ...
19 Հայրս մնաց տանը ...
82/125 .... եկավ Դերի-Ջորին,
126 Խշտիկն .....
127 Քամբախ դառնար .....։

գ) «Վալին էկավ Հասան Ղալենն», Բնագիրը գտնվում է ՀԱԻԲԱ, FF II, 2578—2582։ Ասել է Ս. Սարգսյանը 1934 թ. Երևանում։ Գրի է առել Ա. Ղանալանյանը։ Ս. Սարգսյանը ծնվել է 1900 թ. Ղարսի Ուղուզլու գյուղում, 1915 թ. գաղթել է Լենինական, Երևան է եկել երգելով «մի փոր հաց վաստակելու համար»։

5, 11, 9, 32, 36, 38 տները՝ նշված հաջորդականությամբ։

Բնագրային տարբերություններ.

5/17—Վալին էկավ ... ,
18—Մեռներ ... ,
19—... մնաց տունը ... ,
20—Կյանքիս վայիս ... ։
11/41—Գյուլլեն ...
42—Գյուլլի յարեն ...
43—Կյանքիս վայիս ... ։

38/48— ... տակս թաց էր,
151—Կյանքիս վայիս, Հասան Ղալա։

դ) «Հասան գալեն քար ու քոա»։ Բնագիրը գտնվում է ԺՍՏԱ, Ա. Աբրահամյանի ֆոնդ։ Երգի վերաբերյալ այլ տվյալներ չկան։

11, 5, 4, 9 տները՝ նշված հաջորդականությամբ։

Բնագրային տարբերություններ.

9/33—Ջորս մեկ պոլոր մարմար քար ա,
34 Կռվողի ...
Հավելյալ տող. Սատկի Անվար փաշի պալեն։

ե) «Հասան-Ղալեն քար ու քոա»։ Բնագիրը գտնվում է ՀԱԻԲԱ, FF VII։ 5623։ Ասել է Թալինի շրջանի Կաքնաղբյուր գյուղում 50-ամյա Հ. Հովհաննիսյանը 1954 թ. աշնանը. Գրի է առել բանագետ Ա. Նազինյանը։ Ասացողը կիսագրագետ է, մասնակցել է Հայրենական պատերազմին, վիրավորվել, կորցրել է թևը։ Լավ երգասաց է։

11, 12, 28, 22, 38, 17 տները՝ նշված հաջորդականությամբ։

Բնագրային տարբերություններ.

11/41 Թոփի գյուլլեն ...
42 Ջոքիս յարեն ...
43 Տողը չկա
12/44 Հասան Ղալի ջուրը պաղ էր,
..... գիտեր որդին ...
46, 48 տողերը չկան
47 Յանա-յանա, դիլխոր բան ա՝
28/109 Հասան Ղալեն դուրան ...
110 Շուն թուրք .....
111 տողերը չկան
112

Այս տան հաջորդ երկու տողերը քննական համահավաք բնագրի 22-րդ տան առաջին երկու տողերն են։

22/83 Ջոր ու գիշեր տուրսը սառա,
89 ..... չառա։
17/67 ... դռներ
69—չկա
70—Յանա-յանա, դիլխոր բան ա։

զ) «Անտեր մնար Հասան Կալեն»։ Բնագիրը գտնվում է ՀԱԻԲԱ, FF VI։ 7641։ Գրի է առել Սովետական Միության հերոս, պաշտոնաթող գնդապետ Գեղեոն Միքայելյանը 1967 թ. Երևանում։ Սովորել է թուրքական ճակատում կռված հայ զինվորներից։ Ասացողը ծնվել է 1906 թ. Նոր Բայազետ (Կամո) քաղաքում։ Տպագրվել է ՀԱԲ, Ը, էջ 88։

5, 11, 17, 10 տները՝ նշված հաջորդականությամբ. Երգելիս յուրաքանչյուր տան վերջին երկտողը կրկնվում է։

Բնագրային տարբերություններ.

5/17 Անտեր մնար
18 . . . Էնվեր

19 ... մնաց տունը
20 Հասիր նամակ, վիրավոր եմ։
11/42 Ա՛խ, գյուլլի
43 Վերան մնաս
17/67 ... դռներ
69 Ա՛խ, հայ տղերքին սրի քաշին,
70 Պատմիր նամակ, վիրավոր եմ։

է) «կարմիր փակետ ուղարկեցին»։ Բնագիրը գտնվում է ՀԱԻԲԱ, «Ջրանցված նյութեր», «Նոր Բայազետի շրջան գաղթած սուրմալվեցիների երգերից» տետր, կազմող՝ Ն. Հարությունյան, 1930 թ.։

1, 13, 39, 16, 44 տները՝ նշված հաջորդականությամբ։
Բնագրային տարբերություններ.
1/1 ... փակետ
2 Զապասներին
3 Կովի դաշտը ուղարկեցին։
13/49 Պազիծի լորս կողմը . .
50 Գուլեն կարկուտի պես կիշա,
51 և 53 տողերը չկան։
16/63 Գևրմանացու . .
64 Պոլգովնիկն էր ...
65 Ջարդել կիտար ...
44/173 Ես Ավագն եմ կանչոլացի,
174 Այս խոսքերը հնարեցի,
175 Վերջը վրես որ նայեցի,
Վերջը վիրավոր դառեցի։

բ) «Ես խեչոն եմ նախշրվանցի»։ Բնագիրը գտնվում է ՀԱԻԲԱ, FF II։ 2758—2762։ Ասել է Ջ. Դավթյանը 1934 թ. Ապարանի շրջանի Ղարաքիլիսա գյուղում։ Գրի է առել Ա. Ղանալանյանը։

43, 40, 42, 27, 12, 9, 11, 18, 38, 17, 13 տները՝ նշված հաջորդականությամբ։
6—9-րդ տները ավարտվում են.

«Վերան դառնաս, Հասան Ղալա,
Խեղճ հայերուն դարտ ու բալա»։

իսկ 10 և 11-րդ տները.

«Վերան դառնաս, Հասան Ղալա
Խեղճ հայէրուն մի հար արա»։

երկտողերով։
Բնագրային տարբերություններ.
9/33 Տաւը չունի ...
34 Միջին կռվող ...
Համեմատ. Տո մայրիկ ջան, անօրա են
35-ից հետո՝ համեմատ. Խեղճ հայերուն դարտ ու բալա։
11/41 Թոփ—գյուլլեն ...
42—տողը չունի
Համեմատ տողեր.

«Ջուրն ու արուն կգըռգըռա,
Թուրն ու խանչալ կֆըռֆըռա»
43-ից հետո.
«Խեղճ հայերուն դարտ ու բալա»։
38/148—Հասան-Ղալեն
149 ... դոշս բաց ա,
151 Ունի հավելյալ երկտող.
«Վերան դառնաս, Հասան Ղալա,
Խեղճ հայերուն դարտ ու բալա»։
17/67 ...դռներն ա բաց,
68 Թուրքն կիգա, ոտքերն ա թաց,
69 Ջունի
Հավելյալ. «Խեղճ հայերուն մի ճար արա»։

բ) «Հասան-Ղալա, Հասան-Ղալա, Շադին Հղար դարդ ու բալա»։ Տպագրվում է ըստ ՆԲՀԲ, էջ 343—344։ Գրի է առել արմըտլեցի (Բասեն) Ռ. Մարկոսյանը (նույն տեղում)։

11, 20, 7, 16, 9, 19, 44 տները՝ նշված հաջորդականությամբ։

Բնագրային տարբերություններ.
11/42 Թուփը մեջ կգըռգըռա
41 Մատիս ...
65 Տարավ չարդեց ոսին, հային։
32 . . . բերդը ...
33 Շատ մեռնող էլ մեկուճար էր,
34 Դիակը սարին հավասար էր,

գ) «Հասան-Ղալեն քար ու մեշա»։ Բնագիրը գտնվում է ՀԱԻԲԱ, FF IV։ 8039։ Երգել է 43-ամյա Մ. Հակոբյանը Արթիկի շրջանի Լուսակերտ գյուղում 1968 թ.։ Գրի է առել Ստ. Խաչատրյանը։ Ասացողը գիտի ժողովրդական շատ երգեր ու մանիներ։

13, 16, 11 տները՝ նշված հաջորդականությամբ։ Ունի առանձին ասվող երկտող կրկնակ։

Հասան-Ղալա, Հասան-Ղալա,
Հայ տղոնցը դարդ ու բալա։

Բնագրային տարբերություններ
13/49 Հասան-Ղալեն քար ...
50 ... կարկտի պես ...
Հավելյալ. «Գյուլլա զարգող, թևըդ թուլնա»։
51—Թևիս ...
11/42—ի տեղում Հավելյալ. «Գյուլլա զարգող, թևդ թուլնա»։
43-ի տեղում 42-ը։

դ) «Կարմիր փապեթ ուղարկեցին» Բնագիրը գտնվում է ԺՍՏԱ։ Երգել է 56-ամյա Մ. Մարտիրոսյանը Օշականում։ Երգի վերաբերյալ այլ տվյալներ չկան։

1, 31, 11, 5 տները՝ նշված հաջորդականությամբ։ Ունի առանձին ասվող երկտող կրկնակ.

Վերան դառնաս, Հասան Ղալա,
Եի էյար մեզ դարդ ու բալա։
Բնագրային տարբերություններ.
1/3 Մեզի տարան Ղարա-ղորղու,
4 Քնում էինք առանց յորղան։
Երկու տողը՝ 40 և 42 միացված հաջորդ տաներ։
11/42 Գյուլլի յարեն ...
5/17 Հասան-Ղալի գլխի լալեն,
18 ... էմիր ...
19 Մեր մայրերին թողեց ...
20 չունի

ժբ) «Հասան Ղալեն մենք գնացինք»։ Տպագիր՝. ՀԱԲ, 9, էջ 110, № 204։ Ասել է Ա. Մարտիրոսյանը, ծնված 1907 թ. Էջմիածնի շրջանի Արևշատ գյուղում, Ասացողը գրագետ է։ Գրի է առել Ա. Նազարյանը (ՀԱԲ, 9, 158)։

6, 5, 11, 5, 23, 5 տները, նշված հաջորդականությամբ։

Այս տարբերակն ունի յուրահատուկ կառուցվածք։ 5-րդ տունը հանդես է գալիս իբրև կրկնակ. բաղկացած է 3 տողից, 4-րդ տողը չկա։ Վերջին տողում հաջորդաբար՝ «Մերս թողի», «Քուրս տանը թողի», «Բալիս թողի»։

Բնագրային տարբերություններ.
6 Միայն երկու տող.
5/21 .. մենք գնացինք
22 Էնտեղ սոված մենք մնացինք։
11/42 Գյուլեն մեջը ..
43 Գյուլի յարեն ..
Տները հանդես են գալիս երկտող կառուցվածքով։

ժգ) «Դիրքը մտանք, դիրքը խոր էր»։ Բնագիրը գտնվում է հեղինակի անձնական արխիվում։ Գրի է առել բանագետ Ս. Վարդանյանը 1967 թ. Ախուրյանում։

37, 28, 11, տները՝ նշված հաջորդականությամբ։

Բնագրային տարբերություններ.
28/109 Հասան Ղալի ճամփեն ...
110 Թուրքը իրան փախչել կուզեր,
111 Ռուսը զորկը կդզեր,
112 Վերան դառնաս ...
11/42 Յարա թևս ...

ժդ) «Քյոփրքյոյի տակը դուզ ա»։ Բնագիրը գտնվում է ԺՍՏԱ, Ս. Բոզիկյանի ֆոնդում։ Երգը հիշողությամբ գրի է առել Ս. Բոզիկյանը 1935 թ.։ Բանահավաքը գրում է «Հիշում եմ 1916—17 թթ. իբրև երգ առաջին աշխարհամարտի մասին»։

28, 11, 14 տները՝ նշված հաջորդականությամբ։

Բնագրային տարբերություններ.
11/42 Գիլլի յարեն ...

ժե) «Օգոստոսի տասնվեցին»։ Բնագիրը գտնվում է ՀԱԻԲԱ, FF VII։ 8228։ Ասել է 65-ամյա Ո. Մամյանը 1961 թ. աշնանը Նոյեմբերյանում։ Գրի է առել բանագետ

Ա. Նաղինյանը (Նոյեմբերյանի բանահյուսական խմբարշավ)։ Ասացողը մասնակցել է 1-ին համաշխարհային պատերազմին. կռվել է Կարսում, Սարիղամիշում։

3, 9, 11 նշված հաջորդականությամբ

9/33 Ջորսի կողմը մահման դար ա,

34—ում 35 տողը

35 Շատի բալեն եթիմ թողեց։

11/40 ..... քար ու քոլ ա,

42 Ջանիս

43 Շատի բալեն եթիմ թողեց,

Հավելյալ տող. «Սատկի էմիր փաշի բալենն»։

ժզ) «Երբ որ հասանք Հասան-Ղալեն»։ Բնագիրը գտնվում է հեղինակի անձնական արխիվում։ Երգել է Հ. Հարթենյանը, Արթիկի շրջանի Հոռոմ գյուղում 1967 թ.։ Գրի է առել բանագետ Ս. Վարդանյանը։

5, 9, 17, 8, 24, 45 տները՝ նշված հաջորդականությամբ։

5/17 Երբ որ հասանք ...

18 Բան չհասկացանք կռվի հալեն,

19 Գերդաստանս տունը...

17/67 ...դուռը բաց է,

68 Կերածներս սոխ ու հաց է,

69 Գերդաստանս տունը լաց է,

70 Վերան դառնաս .....

ժէ) «Հօգոստոսին քոմին զապաս»։ Բնագիրը գտնվում է ՀԱԻԲԱ, FF V։ 4046։ Երգել է 71-ամյա Է. Ներկարարյանը Ստեփանավանի շրջանի Կուրթան գյուղում 1967 թ.։ Գրի է առել բանագետ Թ. Գևորգյանը։

2, 11, 38, 41 տները՝ նշված հաջորդականությամբ։

Բնագրային տարբերություններ.

11/42 Ձեռքիս յարեն ...

Հավելյալ տող՝ «Շատին թողիր եթիմ բալաս»։

38/148 ... վրես բաց էր,

149—ում՝ 150-ը

150 Վերան դառնաս, Մամա խաթուն

151 Յարալու եմ, տարան Բաթում։

Բուն երգից հեռացած տարրերակ է։

53 (198). Իգդիրու ասրերը դուման է

(էջ 215)

Տպագրվում է ըստ ՌՄ, 1898, էջ 206, 1901, էջ 252, 1904, էջ 223։

Տեղադրված է «Պարերգեր» բաժնում։

54 (199). Փնճիլիկ տղա, յախեդ մոմեմ»

(էջ 215)

Տպագրվում է ըստ ՆԲԱԲ, էջ 346։ Տեղադրված է «Ռազմի և զինվորի» երգեր բաժնում։

55 (200). Սալդաթի երգ
(էջ 216)

Բնագիրը գտնվում է ՀԱԻԲԱ, FF VII, 8106։

Երգել է 62-ամյա Հ. Մելիքջանյանը 1960 թ. Իջևանի շրջանի Աչաջուր գյուղում։ Գրի է առել բանագետ Վ. Սվազլյանը (Իջևանի բանահյուսական խմբարշավ)։

56 (201). Գնա, յարս ջան
(էջ 216)

Բնագիրը գտնվում է ՀԱԻԲԱ, FF II, 8347։

Գրի է առել Հ. Տեր-Վարդանյանը 1940 թ. Երևանում։ Բանահավաքը Շիրակի Մահմուդջուղ (այժմ Պեմզաշեն) գյուղից է։

57 (202). Յար աման
(էջ 217)

Տպագրվում է ըստ ՀԱԲ, 9, էջ 113, № 223.

Ասել է Ա. Մարտիրոսյանը, գրագետ, ծնված 1907 թ. Էջմիածնի շրջանի Արևշատ գյուղում։ Գրի է առել Ա. Նազարյանը (ՀԱԲ, 9, էջ 158)։

58 (203). Տանում են
(էջ 217)

Տպագրվում է ըստ ՀԱԲ, 9, էջ 112, № 217։

Ասել է կողբեցի Տ. Նալբանդյանը, ծնված 1904 թ., գրագետ։ Գրի է առել Ա. Նազարյանը 1922 թ. Էջմիածնում (ՀԱԲ, 9, 158)։

59 (204). Աման Մարո
(էջ 218)

Տպագրվում է ըստ ՀԱԲ, 9, էջ 112—113, № 221։

Գրի է առել Ա. Նազարյանը Կոշ գյուղում 1929—30 թթ. (ՀԱԲ, 9, էջ 157)։

60 (205). Այ լոթի Մարան
(էջ 218)

Տպագրվում է ըստ ՀԱԲ, 9, էջ 113, № 222։

Գրի է առել Ա. Նազարյանը Էջմիածին քաղաքում (ՀԱԲ, 9, էջ 157)։

61 (206). «Ես ու յարըս ջանել ենք»
(էջ 219)

Տպագրվում է ըստ ՆԻՄԲ, էջ 323—324։ Տեղադրված է «Պարերգներ» բաժնում։ Այլ տարբերակներ չկան։

62 (207). Մաղն առա
(էջ 219)

Տպագրվում է ՀԱԲ, 9, էջ 114, № 230։

Երգել է Էջմիածնեցի դհոլչի Համոն, ծնված 1883 թ., գրագետ, նվագում է թմբուկ և լրգում։ Գրի է առել Ա. Նազարյանը (ՀԱԲ, 9, էջ 158)։

63 (208). «Ջապաո թոփ էրիճ, Ջրոչի, էլլու յար»
(էջ 219)

Տպագրվում է քստ ՆԲԱԲ, էջ 308։ Տեղադրված է «Պարերգեր» բաժնում։ Ըստ բանահավաքի կոչվում է «Ջապասի խաղ». հորինվել է 1915—16 թթ. և տարածվել Բասենում (նույն տեղում)։

64 (209). «Սարեճ վազող առվի ջրեր»
(էջ 219)

Տպագրվել է քստ ՆԲԱԲ, էջ 404։ Երգել է Ներքին Բասենի Ջոլախլու գյուղացի Այրոնենց Մաքրունը։ Ըստ բանահավաքի բանասացն անգրագետ է, բայց օժտված է հորինելու և պատմելու ձիրքով (նույն տեղում)։

65 (210). Ալ մարիճես
(էջ 220)

Տպագրվել է ՀԱԲ, 9, էջ 113, № 226։

Ասել է էջմիածնեցի Ա. Տեր-Ստեփանյանը, ծնված 1902 թ., գրագետ։ Գրի է առել Ա. Նազարյանը 1935 թ. (ՀԱԲ, 9, էջ 159)։

66 (211). Իկդիրու սարերը
(էջ 220)

Տպագրվել է ՀԱԲ, 9, էջ 112, № 218։

Ասել է Անահիտ Հորաքույրը, 40 տարեկան, 1923 թ. էջմիածնում։ Գրի է առել Ա. Նազարյանը (ՀԱԲ, 9, 157)։

67 (212). Բարակ բաժ
(էջ 220)

Բնագիրը գտնվում է ՀԱԻԲԱ, FF VII։ 5585։

Երգել է 21-ամյա Ա. Կիրակոսյանը 1954 թ. Թալինի շրջանի Սասունաշեն գյուղում։ Գրի է առել բանագետ Ա. Նագինյանը։

68 (213). Նիկոլի ֆարին
(էջ 221)

Տպագրվում է քստ ՀԱԲ, 9, էջ 111, № 211։

Գրի է առել Ա. Նազարյանը Աշտարակում (ՀԱԲ, 9, էջ 157)։

69 (214). «Էս տարվա արտերը դարձել են խսիլ»
(էջ 221)

Տպագրվում է քստ ՆԲԱԲ, էջ 346—347։ Տեղադրված է «Ռազմի և զինվորի երգեր» բաժնում։

Հայտնի է առաջին տան տարբերակը.

Էս տարվա արտերը խըսիլ են դարձե,
Յաման յար հա, յաման յար.

Թաժա յարըմ եմ բըռնի, սալդատ են տարե,
Յաման յար չան, սալդատ յար։
(ՆԲԱԲ, էջ 209)

70 (215). «Անտեր մնար կուվի տարին...»
(էջ 221)

Տպագրվում է ըստ ՆԲԱԲ, էջ 404։ Ներկայացված է իբրև պարերգ։ Նրգել է Ներքին Բասենի Չոլախլու գյուղից Այրոնենց Մաքրունը։ Ըստ բանահավաքի բանաստացն անպրագետ է, բայց օժտված է հորինելու և պատմելու ձիրքով։

71 (216). Գյուլի չան
(էջ 222)

Տպագրվում է ՀԱԲ, 9, էջ 113—114, № 228։
Ասել է աշտարակցի, 35-ամյա Ա. Սիմոնյանը 1923 թ.։ Գրի է առել Ա. Նազարյանը (ՀԱԲ, 9, էջ 159)։

72 (217). «Ախպօրս ժրեքը ելավ վատ»
(էջ 222)

Տպագրվում է ըստ ՆԲԱԲ, էջ 392—393։ Նրգել է Ներքին Բասենի Արմտլու գյուղացի Սուկրենց Արշակը։ Ըստ բանահավաքի Արշակն ինքն է հորինել երգը իր եղբոր՝ Հակոբի 1905 թ. բանակ զորակոչելու կապակցությամբ (նույն տեղում)։

73 (218). «Սալդատ ախպօրս նամակը»
(էջ 223)

Տպագրվում է ըստ ՆԲԱԲ, էջ 344—345։ Տեղադրված է «Ռազմի և զինվորի երգեր» բաժնում։

74 (219). Քույր
(էջ 223)

Բնագիրը գտնվում է ԺՍՏԱ. «Սալդաթի երգեր» տետրը։
Գրի է առել գրող Ս. Խանզադյանը Արթիկի շրջանի Սոգյութլու (այժմ Սառնաղբյուր) գյուղում, հավանաբար նախապատերազմյան տարիներին։

75 (220). Ինչ կըլներ
(էջ 224)

Տպագրվում է ըստ ՀԱԲ, 9, էջ 111, № 210։
Գրի է առել Ա. Նազարյանը Աշտարակում (ՀԱԲ, 9, էջ 157)։

76 (221). Բալի բալի բալդր յարս
(էջ 224)

Տպագրվում է ըստ ՌՄ, 1898, էջ 171։ Կա նաև ՌՄ 1901, էջ 208, 1904, էջ 183։ Տեղադրված է «Պարերգեր» բաժնում։

Հայտնի է բանավոր ավանդմամբ. բնագիրը գտնվում է ԺՍՏԱ, գրի է առնված 1978 թ.։ Բաղկացած է երեք քառատողից. ներկայացված բնագրի 2-րդ և 4-րդ տներ-ի՛ն 3-րդ տունը հետևյալն է.

Միրել եմ, կերել եմ նուշ,
Սիրած յարըն է անուշ,
Մատաղ լինեմ էն օրին,
Քու բարևտ բերեր ղուշ։

77 (222). «Կաֆավը ֆարից, կանչում է յարից»
(էջ 225)

Տպագրվում է ըստ ՆԲԱԲ, էջ 328։ Տեղադրված է «Պարերգեր» բաժնում։

78 (223). «Հ՚իրգուն մութն ընկնում ա, վառում են լամփեն»
(էջ 225)

Բնագիրը գտնվում է ԺՍՏԱ։

Գրի է առել Վ. Բոզիկյանը 1950 թ. Կամո քաղաքում։ Բանահավաքը վերնագրել է «Ծբգ առաչին աշխարհամարտի շրջանում հոբինված»։

79 (224). Աման յար
(էջ 225)

Տպագրվում է ըստ ՀԱԲ, 9, էջ 113, № 225։

Ասել է Փ. Գրիգորյանը, ծնված 1890 թ. Աշտարակում։ Գրի է առել Ա. Նազարյանը 1923 թ. (ՀԱԲ, 9, էջ 157)։

80 (225). Իմ սիրածը սալդաթ էր
(էջ 226)

Տպագրվում է ըստ ՄՀԺԵՊ, հ. 2-րդ, էջ 171։

Երգել է 12-ամյա Ս. Սարգսյանը Ստեփանավանի մանկատանը։ Սովորել է Աշտարակում։

81 (226). «Լուսնակ լուս տուր, նոր գնա»
(էջ 226)

Տպագրվում է ըստ ՆԲԱԲ, էջ 345։ Տեղադրված է «Ռազմի և զինվորի երգեր» բաժնում։

82 (227). «Աման կռունկ երկու բալիկ արևը»
(էջ 227)

Տպագրվում է ՆԲԱԲ, էջ 309։ Տեղադրված է «Պարերգեր» բաժնում։ Երգը հորինվել է որոշակի պատմական իրողությունների առիթով. 1918—20 թթ. Թուրքական արշավանքների ժամանակ բազմաթիվ հայ երիտասարդներ գերեվարվեցին և զոհվեցին գերության մեջ։

83 (228). «Էլիճճ սարը, բռնեճճ բոլորիկ պարը»
(էջ 227)

Տպագրվում է ՆԲԱԲ, էջ 323։ Տեղադրված է «Պարերգեր» բաժնում։

84 (229). Վագոնին
(էջ 227)

Տպագրվում է ըստ ՀԱԲ, 9, էջ 110, № 207։ Երգել է Հայկո մայրիկը 1923 թ. էջմիածնում։ Գրի է առել Ա. Նազարյանը։ Ասացողը մոտ 55 տարեկան է անգրագետ, ծագումով Սուրմալուից։

85 (230). Սիրեցի, յարս տարան
(էջ 228)

Բնագիրը գտնվում է ՀԱԻԲԱ, FF VI։ 1197։

Երգել է 45-ամյա Հ. Գասպարյանը, 1967 թ. Ախուրյանի շրջանի Երազգավորս գյուղում։ Գրի է առել բանագետ Ա. Սահակյանը։

IV. ՍՈՎԵՏԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՌԱԶՄԻ ԵՎ ՋԻՆՎՈՐԻ ԵՐԳԵՐ

1 (231). «Պուլեմոտներ կրակեցին բրանեվիկից»
(էջ 229)

Բնագիրը գտնվում է ՀԱԻԲԱ, FF I։ 2443։

Ասել է 55-ամյա Ջ. Սուքիասյանը 1925 թ. Լենինականում։ Գրի է առել Գ. Թարվերդյանը։

Ասացողը անգրագետ է, ծագումով Ալչավազի կողմերից։

2 (232). «Աղստաֆայից բերեցին լուրը»
(էջ 229)

Բնագիրը գտնվում է ՀԱԻԲԱ, FF I։ 2601։

Ասել է դերձակ Մ. Արամյանը 1934 թ. Դիլիջանում։ Գրի է առել Գ. Թարվերդյանը։

Ասացողը երգը սովորել է իջևանցի Ա. Առաքելյանից, երգվում է «Փախիր պռուա»-ի եղանակով։

Տպագրվել է ՀԽՖ, էջ 67։

3 (233). «Ջախմախլվից անցավ զորը»
(էջ 230)

Բնագիրը գտնվում է ՀԱԻԲԱ, FF I։ 2503։

Ասել է Իջևանի շրջանի Աղդան գյուղի բնակիչ Մ. Արզումանյանը 1934 թ., նույն շրջանի Ուզունթալա (այժմ Այգեհովիտ) գյուղում։ Գրի է առել Գ. Թարվերդյանը։

Տպագրվել է ՀԽՖ, էջ 68։

1. Ջախմախլու—գյուղ Ղազախի շրջանում։

4 (234). «Պլիմռոներ կապին քյավառա վռնե»
(էջ 230)

Բնագիրը գտնվում է հեղինակի անձնական արխիվում։
Գրի է առել Գ. Միքայելյանը Երևանում 1967 թ.։ Տպագրվել է ՀԱԲ, 11, էջ 89։

5 (235) «Խատիսյաները աշխարհն չափեց»
(էջ 231)

Բնագիրը գտնվում է հեղինակի անձնական արխիվում։
Հիշողությամբ գրի է առել Գ. Միքայելյանը 1968 թ. Երևանում։

6 (236). «Երևանից վազեվազ»
(էջ 231)

Բնագիրը գտնվում է ՀԱԻԲԱ, FF VI։ 7559—7560։
Գրի է առել Գ. Միքայելյանը։ Լսել և սովորել է դարի 20-ական թվականներին։
Տպագրվել է ՀԱԲ, 11, էջ 89։

7 (237). Լենինն էկավ
(էջ 232)

Տպագրվում է ըստ ՀԱԲ, 9, էջ 114, № 234։
Գրի է առել Ա. Նազարյանը Աշտարակում (ՀԱԲ, 9, էջ 157)։

8 (238). Լենինն իր զորով
(էջ 233)

Տպագրվել է ըստ ՀԱԲ, 9, էջ 114—115, № 235։
Գրի է առել Ա. Նազարյանը Աշտարակում (ՀԱԲ, 9, էջ 157)։

9 (239). Ղռութի երգը
(էջ 233)

Բնագիրը գտնվում է ՀԱԻԲԱ, FF I։ 2101։
Ասել է 30-ամյա Հ. Արշակյանը, 1934 թ., Հրազդանի ձորյանի Ալափարս գյուղում։
Գրի է առել Գ. Թարվերդյանը։
Առացողն անգրագետ է, երգել սովորել է ուրիշներից լսելով։

10 (240). Առաջ տղերք...
(էջ 234)

Բնագիրը գտնվում է ՀԱԻԲԱ, FF VI։ 7558
Գրի է առել Գ. Միքայելյանը 1970 թ. Երևանում։

11 (241). Աբարբեկյաս
(էջ 234)

Բնագիրը գտնվում է ՀԱԻԲԱ, FF IV։ 4663։
Երգել է 57-ամյա Կ. Բարսեղյանը 1963 թ. Վարդենիսում։ Գրառողն անհայտ է։

12 (242). Դե յար-յար

(էջ 234)

Բնագիրը գտնվում է ՀԱԻԲԱ, FF VII։ 5583։

Ասել է 21-ամյա Ա. Կիրակոսյանը Թալինի շրջանի Ներքին Սասնաշեն գյուղում 1954 թ.։ Գրի է առել բանագետ Ա. Նազինյանը։

13 (243). Ընկեր Վորոշիլո

(էջ 235)

Բնագիրը գտնվում է ՀԱԻԲԱ, FF I։ 3699—3700։

Ասացողն անհայտ է։ Գրի է առել Գ. Թարվերդյանը 1934 թ.։

Համբագրական որոշ շտկումներով տպագրված է ՀԽՅ, էջ 55։

14 (244). Կանցիլարի դռտը

(էջ 235)

Բնագիրը գտնվում է ՀԱԻԲԱ, FF IV։ 8037։

Ասել է Մ. Հակոբյանը Արթիկի շրջանի Լուսակերտ գյուղում 1968 թ.։ Գրի է առել Ստ. Խաչատրյանը։

Ասացողը 43 տարեկան է, գիտի բազմաթիվ ժողովրդական հին երգեր ժանիներ (FF IV։ 8119)։

15 (245). Մայրիկ ջամ . .

(էջ 236)

Բնագիրը գտնվում է ՀԱԻԲԱ, FF II։ 0564։

Ասել է Կոտայքի էլաո գյուղի բնակչուհի Վ. Սարգսյանը։ Գրի է առել Էդ. Թոփչյանը (հավանաբար պատերազմի տարիներին)։

16 (246). Մայրիկ ջան

(էջ 236)

Բնագիրը գտնվում է ՀԱԻԲԱ, FF II։ 0411։

Երգը Ք. Սիմոնյանը 1944 թ. արտագրել է իր ընկերուհու՝ 19-ամյա Ն. Բուդաղյանի ձեռագիր երգարանից և հանձնել Ա. Ղանալանյանին։

17 (247). Օրճնիր ճանապարհս

(էջ 236)

Բնագիրը գտնվում է ՀԱԻԲԱ, FF II։ 0427։

Ասել է 12-ամյա մի աղջիկ Երևանի Կոմունարներ այգում 1942 թ.։ Գրի է առել օշականցի Թ. Արսենյանը և հանձնել Ա. Ղանալանյանին։

Երգվել է Ջիվանու «Մայրիկի» եղանակով։

18 (248). Դու պիճղ մնա

(էջ 237)

Բնագիրը գտնվում է ՀԱԻԲԱ, FF II։ 0429։

Ասել է 18-ամյա Ժ. Բաղիրյանը 1947 թ. Գորիսում։ Գրի է առել գրող Ս Խանզադյանը։

Ասացողը երգը սովորել է ԼՂԻՄ Մեծ Թաղլար գյուղում։ Բանահավաքը նշում է, որ երգվել է «Հասան-Ղալայի» եղանակով։

19 (249). Նստա պարախոդ
(էջ 237)

Ինագիրը գտնվում է ՀԱԻԲԱ, FF IV։ 5599։
Երգել է 57-ամյա Կ. Բարսեղյանը 1963 թ. Վարդենիսում։

20 (250). Հիտլերի յայլին
(էջ 238)

Ինագիրը գտնվում է ՀԱԻԲԱ, FF IV։ 0407։
Երգել է 16-ամյա Լ. Բազիկյանը 1945 թ. Վաղարշապատում։ Գրառողն անհայտ է։ «Լսել է ուրիշներից»։

21 (251). Բուդյոննին և Վոռոշիլովը
(էջ 238)

Ինագիրը գտնվում է ԺՍՏԱ, տեսր «Ոսկե մատանի» 1976 թ.։ Ասել է 20-ամյա Ա Հայրյանը Գորիսում։ Գրի է առել Գ. Ադամյանը։

22 (252). Բաղրամյան
(էջ 239)

Ինագիրը գտնվում է ՀԱԻԲԱ, FF V։ 4022—4024։
Ասել է Ա. Ղալաչյանը Ստեփանավանի շրջանի Հոբարձի գյուղում 1967 թ.։
Գրի է առել բանագետ Թ. Գևորգյանը։

23 (253). Մազդոկ
(էջ 239)

Ինագիրը գտնվում է ՀԱԻԲԱ, FF V։ 4016—4020։
Ասել է Ա Ղալաչյանը Ստեփանավանի շրջանի Հոբարձի գյուղում 1967 թ.։ Գրի է առել բանագետ Թ. Գևորգյանը։
Ա. Ղալաչյանը ծնվել է 1904 թ. օժտված է երգեր հորինելու շնորհքով (տե՛ս Բաղրամյանին նվիրված երգը)։

24 (254). «Սև ծովի ափին, մայրիկ ջան»
(էջ 241—243)

«Սև ծովի ափին» անունով հայտնի երգերի շարքում առկա մոտիվների կրկնություններից խուսափելու նպատակով, հարմար գտանք կազմել համահավաք ինագիր։
Համահավաքում ընդգրկված յուրաքանչյուր երգ ծանոթագրված է։ Ինագրային տարբերությունները նշված են, ըստ որում առաջին թիվը ցույց է տալիս համահավաքի տան հաջորդական համարը, երկրորդը՝ տողինը։
ա) «Սև ծովի ափին, մայրիկ ջան»։ Ինագիրը գտնվում է ՀԱԻԲԱ, FF II։ 0565—0566։

Գրի է առել Ք. Սիմոնյանը Կոտայքի շրջանի Գեղադիր գյուղում 1943 թ. և հանձնել Ա. Ղանալանյանին։ Ք. Սիմոնյանը երգը լսել է գյուղի երեխաներից։

1, 4, 16, 17, 7, 14 տները՝ նշված հաջորդականությամբ։

Բնագրային տարբերություններ.

1/3 ... նամակը, մայրիկ,
4—Քեզ էլ
17/67— ... տարեկան եմ, մայրիկ,
7/27— ... պատերազմի վերջը։
28—Երաղիդ ...

բ) «Սև ծովի ափին, մայրիկ ջան». Բնագիրը գտնվում է ՀԱԻԲԱ, FF II։ 0534—0535։

Երգել է 41-ամյա Գ. Հակոբյանը Երևանում։ Գրի է առել Ա. Ղանալանյանը հավանաբար պատերազմի տարիներին։

1, 16, 7, 5, 14, 17 տները՝ նշված հաջորդականությամբ։

Բնագրային տարբերություններ.

1/2 ... բռնել,
3 ... մայրիկ,
4 ... հասել։
16/62—երեքով
63—Մեկը հայրս, մեկը մայրս,
64—Մեկն ազիզ քույրս։
5/17—Մինչև կամուրջն անց կենալս,
18 ... նայեք,
19—Կամուրջից էն կողմը, մայրիկ,
20—Հույսերդ կտրեք։
14/55—Տասնութ տարեկան հասակում,

գ) «Սև ծովի ափին, մայրիկ ջան»։ Բնագիրը գտնվում է ՀԱԻԲԱ, FF II։ 1778։

Երգել է 45-ամյա Ս. Մարգարյանը Կոտայքում 1945 թ.։ Գրի է առել ազգագրագետ Վ. Բդոյանը։

1, 14, 17, 7, 16, 6, 2, 18 տները՝ նշված հաջորդականությամբ

Բնագրային տարբերություններ.

1/2—բռնի,
3 մայրիկ,
4 Հասնի
14/53 Սև ծովի ափին, մա րիկ,
55 . . ջան
17/67 Տասնըյոթ
7/26—Էլ Լո չեմ գա էս
27—Ամսի տասնչորսի դիշէրը,
28—Երազիդ .
6/23—Ընկերներիս միչեն
24—Անբախտը ես եմ։
18/71—Իմ փալ ...
72—Ախկատանց

դ) «Սև ծովի ափին, մայրիկ ջան»։ Բնագիրը գտնվում է ՀԱԻԲԱ, FF II։ 0533—0534։

Գրի է առել Ա. Ղանալանյանը Երևանի Կագանովիչի անվան դպրոցի աշակերտներից հավանարար պատերազմի տարիներին։

1, 7, 18, 17 տները՝ նշված հաջորդականությամբ։

Բնագրային տարբերություններ.

7/26—նորից հետ

27—

18/69—Մայրիկ—

70 Դետինը

71—Իմ փայլ Հաշս

72 .. ցրիր։

ե) «Սև ծովի ափին, մայրիկ ջան»։ Բնագիրը գտնվում է ՀԱԻԲԱ, FF II։ 0547։ Ասել է Դ. Դերձյանը, Դիլիջանում։ Գրի է առել ուսանողուհի Մ. Թամրազյանը ու հանձնել Ա. Ղանալանյանին հավանաբար պատերազմի տարիներին։

1, 7, 17 տները՝ նշված հաջորդականությամբ։

Բնագրային տարբերություններ։

7/26—Նորից հետ ...

զ) «Սև ծովի ափին, մայրիկ ջան»։ Բնագիրը գտնվում է ԺՍՏԱ, տետր «Նորագույն ժողովրդական երգեր»։

Երգել են 13-ամյա, Թալշարոխցի (այժմ Հրազդանի Հրջանի Մեղրաձոր) Յուլիկ Խաչատրյանը և 12-ամյա Ռուբեն Ենոքյանը Ապարանի Չամուլու (այժմ Քասաղ) գյուղից, Երևանում 1946 թ.։ Գրի է առել գրող Ս. Խանզադյանը։ «Յ. Խաչատրյանը և Ռ. Ենոքյանը երգելով փող են վաստակում և օգնում իրենց ընտանիքներին։ Առաջինի հայրը զոհվել է պատերազմում, երկրորդն էլ որբ է»։

1, 6, 16, 18, 13, 19, 17, 14 տները նշված հաջորդականությամբ։

Բնագրային տարբերություններ.

6/22—Լացողն էլ

23—Ընկերներիս միջին մայրիկ,

24—Անբախտը ես եմ։

16/61—Գիշերը երազումս

64—Ես էլ

է) «Սև ծովի ափին, մայրիկ ջան»։ Բնագիրը գտնվում է ՀԱԻԲԱ, FF II։ 6195։

Գրի է առել գրող Ս. Խանզադյանը Գորիսում, 1946 թ.։ Բանահավաքը երգը վերնագրել է «Կերչի ճակատում (զանգեզուրյան վարիանտներից)»։

1, 14, 17 տները՝ նշված հաջորդականությամբ։

Բնագրային տարբերություններ.

1/3 Իմ գցած

14/55—Իմ գրած նամակս, մայրիկ ջան,

56 Կիսատ թողեցի։

ը) «Սև ծովի ափին, մայրիկ ջան»։ Բնագիրը գտնվում է ՀԱԻԲԱ, FF II։ 0499։

Երգել է 43-ամյա, արհեստով «փինաչի» Հ. Գիլանյանը, Վաղարշապատից (այժմ Էջմիածին)։ Գրի է առել Ա. Ղանալանյանը հավանաբար պատերազմի տարիներին։

1, 5, 14, 7 տները՝ նշված հաջորդականությամբ։

Բնագրային տարբերություններ.

14/53— ... մայրիկ,

55—սիրածիս տեսնելու.

7/26—էլի ես կուգամ,

27— ... վերջանալը։

բ) «Սև ծովի ափին, մայրիկ ջան»։ Բնագիրը գտնվում է ՀԱԻԲԱ, FF *II*։ 0501։

Երգել է 33-ամյա վաղարշապատցի Ա. Նազարյանը։ Գրի է առել Ա. Ղանալանյանը հավանաբար պատերազմի տարիներին։ Ասացողը ուսուցչուհի է, «ձայնեղ է, երգում է շատ սրտառուչ»*։

1, 14, 3, 6 տները՝ նշված հաջորդականությամբ։

Բնագրային տարբերություններ.

1/3 ...մայրիկ,

14/55—Բայց քույրերը ուշ մոտեցան,

56—Արնաքամվեցի։

14/55—Հայրենիքի պատվի համար,

6/23—Գերմանացու թոփի առաջ,

24—Գնացողը ես եմ։

ժ) «Սև ծովի ափին, մամա ջան»։ Բնագիրը գտնվում է ՀԱԻԲԱ, FF *IV*։ 8035։

Երգել է 27-ամյա Ս. Մկրտչյանը Արթիկի շրջանի Սարատակ գյուղում, 1968 թ.։ Գրի է առել Ստ. Խաչատրյանը։ Ասացողը մարմնամարզության ուսուցիչ է, գիտի բազմաթիվ ժողովրդական երգեր, որը պատեհ հանգամանքներում կատարում է։

1, 6, 16 տները՝ նշված հաջորդականությամբ։

Բնագրային տարբերություններ.

1/1 ... մամա,

2— ... մնում,

3— ... նամակները,

4—չեն

16/61—Գիշերը երազում,

Սկզբից ունի հավելյալ տուն, որը չի անուշվում բուն երգի հետ. իմաստով հետևվոր կերպով հիշեցնում է 19-րդ տունը։

Այս կերչ քարը
Ինձ գերեզման
Դարձել է, մայրիկ,
Հայոց տղոնց արյունը
Հոսում է, մայրիկ։

Նույն ասացողը երգել է նույն բնագրի մի այլ տարբերակը՝ բաղկացած 1 և 6 տներից, տե՛ս FF *IV*։ 8033։

ժա) «Սև ծովի ափին, մայրիկ ջան»։ Բնագիրը գտնվում է հեղինակի անձնական արխիվում։

---

* Ա. Նազարյանի հավաքած ժողովրդական երգերը տպագրվել են՝ տե՛ս «Հայ ազգագրություն և բանահյուսություն», պրակ 9, Երևան, 1978 թ.։

Երգել է 48-ամյա է. Սարգսյանը ԼՂԻՄ Մարտունու շրջանի Աշան գյուղամ։ Գրի է առել Ա. Ղազիյանը։ է. Սարգսյանը ուսուցչուհի է, ունի լավ լսողություն և ձայն, երգում է սրտառուչ եղանակով, միակ եղբայրը պահվել է պատերազմում։

1, 6 տները։

Բնագրային տարբերություններ

6/22—Լաց լինողը ես եմ,

23—Ընկերներից, սիրած յարից,

24—Բաժանվողն ես եմ։

ժբ) «Սև ծովի ափին, մայրիկ ջան»։ Բնագիրը գտնվում է հեղինակի անձնական արխիվում։

Երգել է Սունդուկյանի անվան թատրոնի դերասան, 42-ամյա Ա. Մանուկյանը Երևանում 1977 թ.։ Գրի է առել Բ. Ղազիյանը։ Ա. Մանուկյանը երգը լսել և սովորել է պատերազմի տարիներին։

1, 9, 16, 17 տները՝ նշված հաջորդականությամբ։

Բնագրային տարբերություններ.

1/4—բոնի,

«ջան» չունի

4—հասնի.

16/61—ես երազ տեսա, մայրիկ ջան,

62— .. հոգով

17/65—ես ... սանդուղ եմ

ժգ) «Էտ անտեր կերչը, մայրիկ ջան»։ Բնագիրը գտնվում է ՀԱԻԲԱ, FF 11։ 2252։

Երգել է Բ. Բդոյանը Ախալքալաքում 1947 թ.։ Գրի է առել ազգագրագետ Վ. Բդոյանը։

19, 1, 10, 12, 16, 18, 17, 4, 7 տները՝ նշված հաջորդականությամբ։

Բնագրային տարբերություններ.

1/2 ... գալիս,

4 ... հասնի։

12/45—Լճի մեջ սուզվում են անթիվ ընկերներ,

46—Անթիվ ընկերներ,

47—Սրանց մեջ, մայրիկ ջան,

16/62—Մեր ընտանիքը,

63—Մենք հայրս, սիրած յարըս,

64—Քույրս ու եղբայրս։

18/69—կոտրավ

71— . ճաշը, ջան

72—Աղկատներին, մայրիկ ջան

17/65—մայրիկ ջան,

67—Ա՛խ, մեռնում եմ տասնութ տարեկան,

4/13—Նստեցի մաշինին, մայրիկ ջան,

16—Ու

7/26—Էլի հետ քուքամ,

28—Էրազդ քուքամ։

ժդ) «Մի լար, մայրիկ, մի լար, քույրիկ»։ Բնագիրը գտնվում է ՀԱԻԲԱ, FF II։ 6485։

Երգել է Բ. Մուսայելյանը Խնձորեսկ գյուղում, 1946 թ.։ Գրի է առել գրող Ս. Խանզադյանը։ Ասացողը 28 տարեկան է. մասնակցել է Հայրենական պատերազմին։ Բանահավաքը գրում է, թե երգը բաղկացած է 30 քառյակից, բայց ներկայացնում է միայն 4-ը և նշում. «Կերչի երգերի նոր վարիանտներ»։

6, 18, 11, 12 տները նշված հաջորդականությամբ։

Բնագրային տարբերություններ.

6/23—Գերմանացու դեմ, մամա ջան,

24—Կըռվողը

18/69— ... կոտրևցեք,

70—Հորը նևտեցեք,

71— .. .խորակը, մամա ...

72—Օգողին տվեք։

ժե) «Կերչի ճակատում, մայրիկ ջան»։ Բնագիրը գտնվում է ԺՍՏԱ։

Երգել է 24-ամյա Ռ. Հովհաննիսյանը։ Գրի է առել գրող Ս. Խանզադյանը։ Ասացողի ամուսինը զոհվել է պատերազմում։ Երգը լսել և սովորել է ուրիշներից։

14, 7, 8, 16, 17, 18, 1 տները նշված հաջորդականությամբ։

Բնագրային տարբերություններ.

14/54—վիրավորվեցա։

56—Նևտվեցա։

7/26— ... շուտով

16/71— ... ճաշը, մայրիկ ջան,

72— ... բախշի։

ժզ) «Կերչի ճակատում, մայրիկ ջան»։ Բնագիրը գտնվում է հեղինակի անձնական արխիվում։ Երգել է է. Սարգսյանը 1974 թ. ԼՂԻՄ Մարտունու շրջանի Աշան գյուղում։ Գրի է առել Ա. Ղազիյանը։

14, 17, 6, 15 տները՝ նշված հաջորդականությամբ։

Բնագրային տարբերություններ.

14/55—Վիրավորված ժամանակը,

17/65—Էն ի՞նչ սև ամպ է, մամա ջան,

60— .. առաջ,

67—Հասակս է տասնութ տարի,

68—Անմուրազ մեռա։

6/22—Լաց լինողը

23—Հորից, մորից, քուր-եղբորից,

24—Բաժանվողը ևս եմ։

ժէ) «Էդ ինչ սև սնդուկ էր, մայրիկ»։ Բնագիրը գտնվում է ՀԱԻԲԱ, FF II։ 0421—0422։

Ասել է Զ. Մոմճյանը Սուխումիի շրջանի հայկական Անուկաա գյուղում։ Գրի առնողն անհայտ է։ Երգը նախապատերազմյան տարիներին տվյալ բնակավայրում կատարվել է իբրև սգո երգ։

17, 1, 7, 18, 5, 7, 16 տները նշված հաջորդականությամբ։

Բնագրային տարբերություններ.

17/66—դիմաց

67—Իմ սերն էլ, քո սերն էլ, մայրիկ,

68—Դադաստան անաց։

1/2—Կայզ չի բանի,

3—Ձեռքերս թուլացան, մայրիկ,

4—Հրացան չեն բռնի։

7/26— ... նորից

27—Ամսու տասնհինգին ...

28—Քեզ բարև կուամ։

18/69— ... կոտրվեց ...

70—Գցեցի պարտեզ,

71—Իմ փայ բաժին կերակուրը,

72—Ախքատանց ...

5/17—Մինչև քյոփրին անցնեմ,

18—Հետևես ...

19—Քյոփրին անցնեմ վերջը, մայրիկ,

16/61—Պաղ աղբյուրի գլխին կանգնած,

62—Ջորս բնկերներս,

63—Մեկը մայրս, մեկը քույրս,

64—Մեկն էլ իմ յարս։

25 (255). «Կերչ fաղաfը fար ու fոա»

(էջ 243—247)

«Կերչ քաղաքը» անունով հայտնի երգերի շարքում առկա մոտիվների կրկնություններից խուսափելու նպատակով հարմար գտանք կազմել համահավաք բնագիր։

Համահավաքում ընդգրկված յուրաքանչյուր երգ ծանոթագրված է։ Բնագրային տարբերությունները նշված են, ըստ որում առաջին թիվը ցույց է տալիս համահավաքի տան հաջորդական համարը, երկրորդը՝ տողի։

ա) «Կերչ քաղաքը քար է, քոա»։ Բնագիրը գտնվում է ԺՍՏԱ։ Երգել է 12-ամյա Ն. Մալիլյանը, Գորիսի շրջանի Քարահունջ գյուղից, Ղափան—Մինջևան գնացքում։ Գրի է առել գրող Ս. Խանզադյանը հավանաբար պատերազմից հետո։ Կա բանահավաքի նշում. «Երգվում է Հասան-Ղալայի եղանակով»։

1, 2, 4, 20, 17, 30 տները՝ նշված հաջորդականությամբ։

Բնագրային տարբերություններ.

1/2 ... կըվըռվըռա,

Թևիս յարեն ...

4 ... յարալու եմ։

2/5—Երբ որ ...

2/7—Իմ դիակը դրին ...

8— ... յարալու եմ։

4/16 ... յարալու եմ։

20/80—Ազիզ բալես

81—Շեկլիկ յարս ...

82— ... յարալու եմ։

17/67—Սև սուխարին ...
69—Տվեք սիրած յարիս կարգա,
70—Մորս ասի, յարալու եմ։
30/119—Ես երեմն եմ գորիսեցի,
120 Ֆրոնտի մեջ վիրավորվեցի,
121 Իմ դիակն այնտեղ թողեցի,
122 ... յարալու եմ։

բ) «Կերչ քաղաքը քար ու քոա»։ Բնագիրը գտնվում է ՀԱԻԲԱ, FF II։ 0553—0554։ Երգել է Կեբչից վերադարձած մի վիրավոր զինվոր։ Գրի է առել Աշտարակի շրջանի Օշական գյուղի բնակչուհի Լ. Աբրահամյանը հավանաբար պատերազմի տարիներին ու հանձնել Ա. Ղանալանյանին։

1, 2, 30, 6 տները նշված հաջորդականությամբ։
Բնագրային տարբերություններ.
1/3 Սիրած յար ...
4 Խարեք յարիս ....
2/5—Երբ որ ...
6 Վրես թափվեց ...
7—Շեկ մազերս ...
30/ —Իմ խմբովս առաջ գնացի,
Մեր պոլկիցը ետ չմնացի,
. . .
6/21—Գյուլլեն գցեց ինձի հալեն,
22—ում 23 տողը.
23—ում՝ մորս ու քրոջս ...
24 Նրանց, թե պլեն եմ։

գ) «Կերչ քաղաքը քար ու քոա»։ Բնագիրը գտնվում է ՀԱԻԲԱ, FF II։ 0563։ Երգել է Վ. Սանասարյանը, Կոտայքի շրջանի էլառ գյուղից։ Գրի է առել Էդ. Թոփչյանը հավանաբար պատերազմի տարիներին։

1, 2 20 տները՝ նշված հաջորդականությամբ։
Բնագրային տարբերություններ.
20/79 Մերս ու քուրս ...
80 Փորփա բալես ...
81 Սիրած յարիս ...

դ) «Կերչ քաղաքը քար ու քոա»։ Բնագիրը գտնվում է ՀԱԻԲԱ, FF II։ 0525։ Երգել է 17-ամյա Ս. Կարապետյանը Վաղարշապատի (Էջմիածնի) շրջանի Խաթունարխ գյուղից։ Գրի է առել Ա. Ղանալանյանը հավանաբար պատերազմի տարիներին։ Կա նշում. «Երգվում է «Հասան-Ղալա» հին երգի եղանակով»։

1, 17, 13, 16 տները նշված հաջորդականությամբ։
Բնագրային տարբերություններ.
1/3 Ոտիս վերքը ...
13/ —Տխուր գրի այս ...
Սիրեցի չառա փափագս։

ե) «Կերչ քաղաքը քար ու քոա»։ Բնագիրը գտնվում է ՀԱԻԲԱ, FF II։ 0569—0570։

Երգը Ա. Ղանալանյանին է հանձնել Արտաշատի բնակչուհի Ա. Հարությունյանը հավանաբար պատերազմի տարիներին։

1, 7, 5, 21, 20 տները նշված հաջորդականությամբ։

Բնագրային տարբերություններ.

1/3—Գյուլլի յարեն ...
4—Պատմիր նամակ ...
20/79—Առավոտվա ...
81—Ազիզ բալես ...

զ) «Կերչ քաղաքը քար ու քոա»։ Բնագիրը գտնվում է ՀԱԻԲԱ, FF II։ 500։

Երգել է 11-ամյա բնիկ վաղարշապատցի Ռիմա Սարգսյանը։ Գրի է առել Ա. Ղանալանյանը հավանաբար պատերազմի տարիներին։ Ասացողն, ըստ բանահավաքի, «ունի փոքր, դուրեկան կրծքային-լիրիկական ձայն»։

1, 17, 5, 30, տները նշված հաջորդականությամբ։

Բնագրային տարբերություններ.

1/3—Թևիս յարեն ...
5/19—Շատուրը կորան ...

է) «Կերչ քաղաքը քար ու քոա»։ Բնագիրը գտնվում է ՀԱԻԲԱ, FF II։ 0503։

Ասել է վաղարշապատցի Գ. Մխիթարյանը։ Գրի է առել Ա. Ղանալանյանը, հավանաբար պատերազմի տարիներին։

1, 5, 17 31 տները նշված հաջորդականությամբ։

Բնագրային տարբերություններ.

1/2— . միջին ...
3 Ջեռքիս յարեն ...
5/17 ... ջուրը աղի,
19 Շատ մարդիկ մեռան ...

ը) «Կերչ քաղաքը քար ու քոա»։ Բնագիրը գտնվում է ՀԱԻԲԱ, FՐ II։ 0532—0533։

Երգել են Երևան քաղաքի Կագանովիչի անվան դպրոցի աշակերտները հավանաբար պատերազմի տարիներին։ Այլ տվյալներ չկան։

7, 20 տները, նշված հաջորդականությամբ։

Բնագրային տարբերություններ.

20/79 Մերս ու քուրս ...
80-ում 81, փիչխո բալես ...
81—80՝ անփոփոխ
82 ... յարալու եմ։
1/4— ... յարալու եմ։

թ) «Կերչի հողը քար ու քոա» Բնագիրը գտնվում է ՀՍՍԱ. Հր. Հովհաննիսյան, «Թալինի կենցաղը, 1969 թ., Մաստարա», տեղը։

1, 20 տները նշված հաջորդականությամբ։

Բնագրային տարբերություններ.

1/4—Ասեք մորս ...
20/79—Մայրս է նայում ...
81—Քորփա բալես ..
82—Ասենք մորս ...

ժ) «Քաֆուր կերլը քար ու քոտա»։ Բնագիրը գտնվում է ՀԱԻԲԱ, FF II։ 0570։ Այլ տվյալներ չկան։

Միայն 1-ին տունը

Բնագրային տարբերություններ.

1/1—Քաֆուր կերլը . —
3—Կովողներից շատը հայ ա,
4—Յանա-յանա, դիլխոր բան ա։

ժա) «Կերլ քաղաքի գլխի լալեն»։ Բնագիրը գտնվում է ՀԱԻԲԱ, FF II։ 0547—0548։

Երգել է մի վիրավոր տղա, «որի մոտ հենց այս կարմիր մարտիկը ծանր վիրավոր ժամանակ երգել է և խնդրել յուր ընկերոջը լսի, եթե բախտ ունենա վերադառնա Դիլիջան, անպայման իր մոր մոտ երգի»։ Գրի է առել Ա. Շահնազարյանը և հանձնել Ա. Ղանալանյանին։

6, 20, 5, 2 տները նշված հաջորդականությամբ։

Բնագրային տարբերություններ.

20/79—Մայրս թողի ...
80— ... յարիս .
81 Ագիզ բալես ...
5/18—Կերակուրն է դառն ու լեղի,
2/6—Վրես թափվեց ...

ժբ). «Կերլա սարի գլխի լալեն»։ Բնագիրը գտնվում է ՀԱԻԲԱ, FF II։ 1780։

Երգել է Ն. Գասպարյանը Կոտայքի շրջանի Ողջարերդ գյուղում 1945 թ.։ Գրի է առել ազգագրագետ Վ. Բդոյանը։

6, 26, 3, 20, 27, 2, 4, 1 նշված հաջորդականությամբ։

Բնագրային տարբերություններ.

6/21—Կերլա սարի ...
22—Մեռնի քոռ Հիալերի
23—Մայրս ու քույրս ...
31/123—Ընկերներ ջան, հավաքվեցեք,
124 Շեփորները հնչել ...
126 «Թառամեցավ» երգն ասացեք։
20/79—Մայրս, քույրս ...
80-ում 81
81-ում 80—Քյորփա բալես ...
27/110 Ձեռք ընկածդ չը խնայես։
2/6—Վրես թափվավ ...
7 Շեկ մազերս ...
4/13—Կերլա ծովի ...
14— ... բալեն

15—Ջդիտեր որ դերեզմանն էր
1/1—Կերչա սարը
2— ... միջին

ժդ) «Ռոստովի գլխի լալեն»։ Բնագիրը գտնվում է ԺՍՏԱ։

Երգել է 22-ամյա Ա. Թովմասյանը Գորիսի շրջանի Շինուհայր գյուղում։ Գրի է առել գրող Ս. Խանզադյանը։ Ասացողը ծառայել է բանակում և զորացրվել։

6, 2, 20, 24, 23, 4, 16, 17, 31 տները նշված հաջորդականությամբ։

Բնագրային տարբերություններ.

6/21—Ռոստովի գլխի ...
23—Ընտանիքս թողեց ...
24—Յանա—յանա, դիլխոր բան ա։
2/5— ... հասա կերչի կողմը.
6—Ջանս ընկավ ...
7—Շեկ մազերս ...
8—Յանա-յանա, դիլխոր բան ա՝
20/79—Մայրս, քույրս ...
80-ում 81՝ Քյորփա բալես ...
82—Յանա-յանա, դիլխոր բան ա։
24/96—Մայրս լալեն ...
97—Բալես անտեր .
98— . դիլխոր բան ա
4/13— ... սառն էր,
15—Ջդիտեր, որ ...
16—Յանա-յանա, դիլխոր բան ա։
16/64—Միտս ընկավ սիրած յարս,
65-ում 64-ը
66 Յանա-յանա, դիլխոր բան ա։
31/123—Ընկերներ ջան, հավաքվեցնք,
124 Ընտանիքս բևրել ...
125 Օտար ... վրա,
126 «Նանա բալես» երգել ...։

ժդ) «Ռոստովի գլխի լալեն»։ Բնագիրը գտնվում է ՀԱԻԲԱ, FF II։ 0409—0410։

Երգը Ք. Սիմոնյանը 1944 թ. արտագրել է իր ընկերուհու՝ 19-ամյա Ն. Բուդաղյանի ձեռագիր երգարանից և հանձնել Ա. Ղանալանյանին։

6, 20, 4, 5, 2, 30 տները նշված հաջորդականությամբ։

Բնագրային տարբերություններ.

6/21 Ռոստովի ...
24 Ինձի տարավ դեպ պատերազմ։
20/79 Մերս ու քույրս ...
81 Քյորփա բալես ...
4/14 Մերս դիտի բալեն ...
15 Ջդիտի, որ հողի տակ է.
16 Ասեք մորս, ...
2/7 Շեկ մազերս ...

30/119 Ես Լևոնն եմ չադալեցի
Ընկա առաջ ու գնացի
121—120-ը
122 Ասեք մորս ...

ժե) «Ռոստովի գլխի լալեն»։ Ինագիրը գտնվում է ԺՍՏԱ. տետր «Նորագույն ժողովրդական երգեր»։ Երգել են 12-ամյա չամուլվեցի Ռ. Ենոքյանը և 13-ամյա Թալարոխցի (այժմ Մեղրաձոր, Հրազդանի շրջ.) Յ. Խաչատրյանը 1946 թ. Երևանում։ Գրի է առել գրող Ս. Խանզադյանը։ Երեխաները երգելով փող էին վաստակում և օգնում ծնողներին։

6, 11, 20, 4, 27, 32, 14, 2, 16, 30 տները՝ նշված հաջորդականությամբ։
Ինագրային տարբերություններ.
6/21 Ռոստովի ....
20/79—Առավոտվա
80 և 81 տողերը տեղափոխված են
4/13 ... ջուրը սառն էր.
15 Օտար երկիր գերեզմանս.
27/107 ... մեռնում եմ ես,
108 ... բաշխում եմ քեզ,
109 ... կընայես,
110—Ձեռքդ ընկած չինայես։
14/56— ... զարկեց, կոխկս
57—Կողքիս զարկողն ...
58—Մորս խաբեք, վիրավոր եմ։
2/5—Երբ որ ...
6—Վրես թափավ
7—Շեկ քյաքյուլս դրին ...
8—Մորս խաբեք ...
16/63—Դիրքում նստած
64—Հայրս-մայրս ընկան միտս,
65—64 տողը
66 Մայրս խաբեք ...
30/120 Կերճա ֆռոնտում գնացի,
121 Հայրենիքի հողի համար,
122 Դիակս զոյ տվեցի։

ժզ) «Ռոստովի գլխի լալեն»։ Ինագիրը գտնվում է ԺՍՏԱ, Ս. Խանզադյանի ֆոնդում։ Երգի վերաբերյալ այլ տվյալներ չկան։

6, 2, 24, 31 տները նշված հաջորդականությամբ։
Ինագրային տարբերություններ.
6/21—Ռոստովի ...
22—Մեռնի ...
23—Հորս ու մորս ...
2/6—Վրես թափեց ...
7—Շեկ մազերս ...
31/123—Ընկերներ չան, հավաքվեցեք,

124—Ընտանիքս բերել ...
125—Օտար երկիր—գերեզմանիս,
126—«Նանա բալես» երգել ...

ժ1) «Ոստովի կլխի լալեն»։ Բնագիրը գտնվում է ՀԱԻԲԱ, FF II։ 6195։
Գրի է առել գրող Ս. Խանզադյանը 1946 թ. Գորիսում։
6, 20, 30 տները՝ նշված հաջորդականությամբ։
Բնագրային տարբերություններ.
6/21—Ոսստովի ..
22—Մեռնի .
23—Երեխեքս
24— ... յարալու եմ։
20/79—Մերս ու քերս ...
80—ում՝ 81-ը. Մանուկ բալաս ...
81—ում՝ 80 անփոփոխ
30/119—Ես Հանեսն եմ խնձորկեցի,
120—Սողնսող առաջ գնացի,
121— .. այնտեղ թողեցի,
122— ասեք սաղ եմ։

ժը) «Ոսստովի գլխի լալեն»։ Բնագիրը գտնվում է ԺՍՏԱ, Ս. Խանզադյանի ֆոնդում երգի վերաբերյալ այլ տվյալներ չկան։
6, 19, 30 տները՝ նշված հաջորդականությամբ։
Բնագրային տարբերություններ.
6/21—Ոսստովի ...
22—Մեռնի ...
23—Մերս ու քիրս ...
24—Ասեք մորս ...
30/119—Ես Գուրգենն եմ զանգեզուրցի,
120—Թշնամու դեմ քաջ կռվեցի,
121—Հայրենիքիս հողի համար,
122—Ոսստովի տակ զոհ գնացի։

ժթ) «Թաղեմ գերմանացու բալեն»։ Բնագիրը գտնվում է ՀԱԻԲԱ, FF II։ 0579։
Երգել է մի Լաիտարիկ երգիչ։ Գրի է առել ուսանողուհի վ. Բաբայանը և հանձնել Ա. Ղանալանյանին հավանարար պատերազմի տարիներին։
6, 20, 1, 5, 18, 2, տները նշված հաջորդականությամբ։
Բնագրային տարբերություններ.
6/21—ում 22-ը
23—Մորս ու քվորս
24—Պատմիր նամակ ...
Հավելյալ —Վիրավոր եմ, դառնալու չեմ.
20/79—Մերս ու քուրս ...
80-ում 81-ը Քորփա բալես ...
81-ում՝ 80-ը
82—Ասեք մորս ...

2/5 Երբ որ ...
8—Ջասեք ...

ի) «Երբ որ հասանք Կերչի հողը»։ Բնագիրը գտնվում է ՀԱԻԲԱ, FF II։ 6179։
Գրի է առել գրող Ս. Խանզադյանը 1946 թ. Գորիսում։
2, 1, 18, 23, 27, տները՝ նշված հաջորդականությամբ։
Բնագրային տարբերություններ.
2/5—Երբ որ հասանք ...
1/1—Կերչի հողն է ...
4—Յանա-յանա, դիլխոր բան ա։
18/71—Ոչինչ չասեք անբախտ ..
72—Խաբար չըտաք դիլխոր ...
73—Մածուկ կասեք ..
74—Յանա-յանա դիլխոր բան ա։
23/91— ... ակը կպավ սրտիս,
93—Ջարչարելով առավ ...
27/108—Ընտանիքից հեռանում եմ,
109—Երեխեքս քեզ թողնում եմ,

իա) «Հենց որ մտա Կերչի հողը»։ Բնագիրը գտնվում է ԺՍՏԱ։
Երգել է 13-ամյա Ս. Բարեղամյանը, Ռնդամալ գյուղից, 1944 թ. Մաղկաձորում։
Գրի է առել գրող Ս. Խանզադյանը։
2, 14, 27, 24, 20 տները նշված հաջորդականությամբ։
Բնագրային տարբերություններ.
2/6— ... լցվեց
7—Շեկ ...
14 Միայն երկու տող, միացած հաջորդ 27 տան հետ ..
14/55—Մտա դիրքը ...
57—Խշտիկ զարկող ...
27/107— ... տունս շահիր,
108—Մանդր բալիքս լավ պահիր,
109—Ձեռը ընկածը մի խնայիր,
Հավելյալ. Մինչև իմ վերադառնալս,
110 ... դժվար բան ա։
24/ —Միայն երկու տող, միացած հաջորդ՝ 20-րդ տան հետ։
96—Կինս լալեն ...

իբ) «Դիրքում նստած ժամանակս»։ Բնագիրը գտնվում է ԺՍՏԱ։
Երգել է նոր բայազետցի, բանակից տուն վերադարձող, 28-ամյա Ս. Բալոյանը Նախիջևան—Երևան գնացքում։ Գրի է առել գրող Ս. Խանզադյանը։ Ասացողը երգը լսել և սովորել է բանակում. «Հայ դինվորները երգել և երգում էն, չկա մեկ հայ որ չերգե այս երգը. բոլորը գիտեն»։
16, 14, 18, 27, 25, 23, 35, 34, 30 տները՝ նշված հաջորդականությամբ։
Բնագրային տարբերություններ.
16/63—Դիրքում նստած ...
64—Միտս ընկավ սիրած յարս,
65—Շատ մրմռաց իմ ջիգյարս,

66 ... յարալու եմ։
14/57 Գյուլե զարկողը չար նախանձ էր,
58 Խափեք մորս, վիրավոր եմ։
18/71—Թոխր նամակ ... տունս,
72—Բան ... ազիզ
73—Խաբար չտաս
74—Կասես մորս, յարալու եմ։
27/108—Հայրենիքից հեռանում եմ,
109—Հայրենիքս քեզ թողնում եմ,
110—Խափեք մորս, յարալու եմ,
23/91-ում 92-ը ... չոքից
92—Ջարա չարալ նա իմ վերքիս,
94—Խափեք մորս, յարալու եմ։
30/119—Ես Գուրգենն եմ բայազեցի,
120—Կամավոր բանակ գրվեցի,
121—Հայրենիքիս պատվի համար,
